

ISSN 1829-1155

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Գագիկ Նարոյթյունյան  
Վահե Սյրեխանյան  
Վոլոդյա Նովիանիսյան  
Վալերի Դոդոյան  
Առաջան Նակոբյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 58-81-71

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

2(90)  
2018

© ԳԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## • ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1361-1384)

- \* ԼԱՌԱ ՄՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Դ» ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1361 - 11 ապրիլի 2017 թվականի).....6
- \* 2013 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄՆԴԻԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻՆԱՄԱՏԱՅԻ ԿՈՆՎԵՆՅՈՒՅՈՒՄ (ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1362 - 18 ապրիլի 2017 թվականի).....14
- \* ԱԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԽԱԶԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, «ՄԼԼ ԻՆԴԱՍԹՐԻԶ» ՄՊԸ-Ի ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 233-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 233.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1363 - 18 ապրիլի 2017 թվականի).....18
- \* «ԿՈՆԳՐԵՍ-ՀԺԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՍՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 163-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1364 - 28 ապրիլի 2017 թվականի) .....36
- \* ՀԱՄԼԵՏ ՉԱՏԻՆՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2, 27, 29 ԵՎ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1365 - 5 մայիսի 2017 թվականի) .....61
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1366 - 25 մայիսի 2017 թվականի) .....70

- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՐԴՅՈՒՆՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԻ  
ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒԻՄ  
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
(ՄԴՈ 1367 - 25 մայիսի 2017 թվականի) .....74
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԲԻՇԿԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ՝ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԾԱԽՄԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ  
ՀԱՐՅԵՐՈՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1368 - 25 մայիսի 2017 թվականի) .....77
- \* 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-ԻՆ ԲԻՇԿԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱԶԱՏ  
ԱՌԵՎՏՐԻ ԳՆՏՈՒ ՄԱՍԻՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ  
ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1369 - 25 մայիսի 2017 թվականի) .....81
- \* ՄԻՇԱ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 160-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ  
ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1370 - 25 մայիսի 2017 թվականի) .....85
- \* ՋՈՒԼԵՏԱ ԵՍԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 1202-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
56-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1371 - 25 մայիսի 2017 թվականի) .....95
- \* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 174-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, 262-ՐԴ  
ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆԸ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1372 - 30 մայիսի 2017 թվականի) .....104
- \* ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՋԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 285-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
(ՄԴՈ 1373 - 13 հունիսի 2017 թվականի) .....117

- \* «ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ  
 ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
 ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ, 117-ՐԴ  
 ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1374 - 20 հունիսի 2017 թվականի).....129
- \* ԱՐՈՒՍՅԱԿ ԱՔՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ  
 ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ԿԵՏԻ «Բ» ԵՆԹԱԿԵՏԻ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1375 - 27 հունիսի 2017 թվականի).....141
- \* ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
 ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 74-ՐԴ ԵՎ 75-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1376 - 12 սեպտեմբերի 2017 թվականի) .....147
- \* ԷԴԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
 336-ՐԴ ԵՎ 349-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1377 - 19 սեպտեմբերի 2017 թվականի).....157
- \* 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԲՈՒՐԳՈՒՄ ԵՎ ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ  
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՆԱՏՕ-Ի ԱՊԱՀՈՎՄԱՆ  
 ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ  
 ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1378 - 19 սեպտեմբերի 2017 թվականի) .....167
- \* 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՍՏՈՆԻԱՅԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ  
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝  
 ԱՌԱՆՑ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ  
 (ՌԵԱԴՄԻՄԻԱՅԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ  
 (ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆՍԳՐՈՒԹՅՈՒՆ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ  
 ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1379 - 19 սեպտեմբերի 2017 թվականի) .....172
- \* ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ  
 ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-ԻՆ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ  
 ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՄԻՍԻՉԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 2» (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԵՎ  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՄԻԱԿԱՆ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԲԱՆԿԻ  
 ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ  
 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ-ԾՐԱԳԻՐ 3» (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ)  
 ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱՄԱԿ-ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1380 - 19 նոյեմբերի 2017 թվականի) .....176

\* 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ  
 ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ  
 ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1381 - 10 հոկտեմբերի 2017 թվականի) .....180

\* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԿԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
 ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
 ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 52-ՐԴ ԳԼԽԻ 451, 453, 455, 457,  
 458 ԵՎ 459-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ 1382 - 24 հոկտեմբերի 2017 թվականի) .....187

\* ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
 ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 104-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
 ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1383 - 7 նոյեմբերի 2017 թվականի).....199

\* ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
 «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 64-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
 3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՎԱՆԱԶՈՐ  
 ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն  
 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ  
 (ՄԴՈ 1384 - 10 նոյեմբերի 2017 թվականի).....217



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԱՌԱ ՍՈՎՍԵՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 27-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ 2-ՐԴ ԵՆԹԱԿԵՏԻ «Դ» ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Լ. Մովսեսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լառա Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լ. Մովսեսյանի՝ 2016 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի մայիսի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2010 թվականի հունիսի 9-ին և ուժի մեջ է մտել 2010 թվականի հունիսի 26-ից:

Օրենքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Ապահովագրական ընկերության հետադարձ պահանջի իրավունքը» վերտառությամբ 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասը սահմանում է.

«1. Ապահովագրական ընկերությունը հետադարձ պահանջի (սուբրոգացիայի) իրավունք ունի՝ ... 2) վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ (ապահովադրի) նկատմամբ, եթե ... դ. ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել ապահովագրական ընկերությանը ապահովագրության ռիսկայնության աստիճանը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների վերաբերյալ, եթե այդ հանգամանքները հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել ապահովագրական ընկերությանը մինչև ապահովագրական պատահարը»:

Ընդունումից ի վեր օրենքում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Դիմելով դատարան՝ «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ն Լառա Մովսեսյանից գումար բռնագանձելու հետադարձ պահանջ է ներկայացրել: Երևանի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի՝ 02.03.2016 թվականի վճռով հայցը բավարարվել է: Հիշյալ վճռի դեմ վերաքննիչ բողոք է ներկայացվել, որը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 16.06.2016 թվականի որոշմամբ մերժվել է և առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի հիշյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացվել, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 17.08.2016 թվականի որոշմամբ վերադարձվել է և

սահմանվել ժամկետ՝ վճարել բողոքի ձևական սխալը շտկելու և այն կրկին բերելու համար: Կրկին անգամ ներկայացված վճարել բողոքի առնչությամբ վճարել բողոքի վարույթ ընդունելը մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասը հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 3-րդ, 5-րդ, 6-րդ, 23-րդ, 28-րդ, 39-րդ, 60-րդ, 61-րդ, 63-րդ և 78-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը դիմողը փաստարկում է նրանով, որ վիճարկվող դրույթով նախատեսված պահանջը «... գուրկ է իրավական սկզբունքներից, միակողմանիորեն պաշտպանում է Ընկերության և ամբողջովին ոտնահարում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ շահերը»: Ըստ դիմողի վիճարկվող դրույթում «ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել» եզրույթը «...մարդու նկատմամբ առաջադրվող անհիմն մեղադրական եզրույթ է», «...դրանում առհասարակ բացակայում է ապացուցման հիմքեր պարունակող պահանջը», և «...ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ ֆինանսական անհիմն հետևանք է ստեղծվում»: Այս համատեքստում դիմողը նշում է, որ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը սեփականության իրավունքով պատկանող ավտոտրանսպորտային միջոցն այլ անձին շահագործման նպատակով հանձնելն օրենքով թույլատրված է: Սակայն, երբ հանձնման պայմանավորվածությամբ ավտոմեքենան շահագործվելու է անձնական նպատակով, բայց շահագործողն օրվա ընթացքում որոշում է ավտոմեքենան շահագործել նաև որպես տաքսի ծառայություն մատուցող ավտոմեքենա, ապա օրինական չէ, որ օրենքով ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջն «ակնհայտ սուտ տեղեկություններ հայտնող» որակել և նրա վրա ակնհայտ չհիմնավորված ֆինանսական պարտավորության բեռ դնել:

Բացի դրանից, դիմողը, վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշ իրավական դիրքորոշումներ, նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի մի շարք դրույթներ, նշում է, որ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը գտել է, որ պայմանագիր կնքելիս ապահովադիրը պարտավոր է չհայտնել սուտ տեղեկատվություն, քանի որ դա վնասում է ավտոտրանսպորտային ռիսկերի ճիշտ և օբյեկտիվ գնահատման գործընթացին, ինչը, իր հերթին, բերում է նյութական վնասի առաջացման, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանը վերահաստատել է այդ իրավական դիրքորոշումը և առաջին ատյանի դատարանի վճիռը թողել անփոփոխ:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ օրենքի վիճարկվող դրույթը չի հակասում ՀՀ Սահմանադրությանը:

Իր դիրքորոշումը պատասխանողը փաստարկում է նրանով, որ վի-



ճարկվող նորմն ապահովագրական ընկերության համար երաշխիք է սահմանում այն անբարեխիղճ անձանց նկատմամբ, ովքեր ԱՊՊԱ պայմանագիրը կնքելիս կանխամտածված կերպով, ապահովագրության ռիսկայնության աստիճանը թաքցնելու նպատակով տրամադրում են իրականությանը չհամապատասխանող, այլ կերպ ասած՝ ակնհայտ սուտ տեղեկություններ, քանի որ ապահովագրական ընկերության կողմից սեփական ռիսկերի գնահատումն իրականացվում է ապահովագրության ռիսկայնության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա: Այս կապակցությամբ պատասխանողը թե՛ տեսականորեն, թե՛ գործնականորեն բացառում է այնպիսի իրավիճակի առաջացումը, երբ սեփականատերը չիմանա՝ իր կողմից ավտոմեքենայի շահագործման դեպքում՝ սեփական, իսկ լիազորված վարորդի կողմից ավտոմեքենայի շահագործման դեպքում՝ նրա նպատակը: Միաժամանակ պատասխանողը գտնում է, որ սեփականատերը ևս շահագրգռված պետք է լինի լիազորված վարորդի կողմից այն շահագործելու իրական նպատակի բացահայտման հարցում, և օբյեկտիվորեն նման տեղեկատվություն տրամադրողը չի կարող այդ տեղեկատվությանը լիարժեք չտիրապետել:

Վկայակոչելով հետադարձ պահանջի (ռեգրեսի) իրավունքն ամրագրող ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1074-րդ հոդվածը՝ պատասխանողը գտնում է, որ այն երաշխավորում է սեփականատիրոջ իրավունքների պաշտպանությունն այն դեպքում, երբ լիազորված վարորդը, այնուամենայնիվ, չարաշահելով սեփականատիրոջ վստահությունը կամ խախտելով կողմերի միջև սահմանված պայմանները, համապատասխան ավտոմեքենան օգտագործում է ոչ թե նախապես որոշված, այլ մեկ ուրիշ նպատակով:

Միաժամանակ, վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը, ՀՀ սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշումը, արձանագրելով, որ դիմումը հիմնավորված չէ և դիմումում ըստ էության բարձրացված է օրենքի կիրառման իրավաչափության հարց, պատասխանողը խնդրել է կարճել գործի վարույթը:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորում է այնպիսի իրավիճակով, երբ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն ավտոտրանսպորտային միջոցն օգտագործման է հանձնում այլ անձի, որն էլ առանց ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ գիտության ավտոտրանսպորտային միջոցն օգտագործում է այլ նպատակով, քան այն նպատակն է, որը նշվել է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ և ապահովագրական ընկերության միջև կնքված պայմանագրում:

Այս կապակցությամբ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենքի վիճարկվող նորմից բխում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ **պարտականությունը**՝ ապահովագրական պայմանագիրը կնքելիս ապահովագրական ընկերությանը **հայտնել պայմանագրի էական պայմանների վերաբերյալ իրականությանը համապատասխանող տեղեկություններ**, որոնցից մեկն էլ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակն է: Օրենքի «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության գծով ապահովագրավճարների հաշվարկման մեթոդաբանություն» վերաառությամբ հավելվածի 3.3-րդ կետի վերլուծությունից բխում է, որ ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակը հանդիսանում է ռիսկայնության գործոն, որը հետագայում դրվում է բազային ապահովագրավճարի հաշվարկման բանաձևի տարր հանդիսացող ռիսկայնության գործակիցների հիմքում: Ի թիվս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակի, վերը նշված 3.3-րդ կետի համաձայն՝ ռիսկայնության գործոններ են հանդիսանում նաև տրանսպորտային միջոցի շահագործման տարեկան ինտենսիվությունը, տրանսպորտային միջոցի տիպը, տրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրը, տրանսպորտային միջոցի հզորությունը, ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի անհատական, մասնավորապես՝ տարիքային հատկանիշները, ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի վարորդական ստաժը, ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի առողջական վիճակի հետ կապված գործոնները, որոնք կարող են ազդել ապահովադրի և (կամ) ապահովագրված անձի վթարավտանգության աստիճանի վրա: Ընդ որում, պայմանագիրը կնքելիս ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակի մասին տեղեկությունը վերաբերում է **ոչ միայն պայմանագրի կնքման պահին առկա նպատակին, այլև պայմանագիրը կնքելուց հետո ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման նպատակին**: Այսինքն՝ պայմանագիրը կնքելիս ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը պարտավորվում է **պայմանագրի գործողության ողջ ընթացքում ավտոտրանսպորտային միջոցն օգտագործել ապահովագրական պայմանագրում նշված նպատակով**:

Մահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նման դեպքերում առկա է լինում երկու գործարք: Մի գործարքը կնքվում է ապահովագրական ընկերության և ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ միջև, մյուս գործարքը կնքվում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ և ավտոտրանսպորտային միջոցը շահագործողի միջև (ավտոտրանսպորտային միջոցի օգտագործման վերաբերյալ գործարք): Տվյալ դեպքում, փաստորեն, ապահովագրական ընկերությունը և ավտոտրանսպորտային միջոցը շահագործողը միմյանց հանդեպ

չունեն որևէ պայմանագրային պարտավորություն և մեկը մյուսի հանդեպ չեն կրում պայմանագրային պարտավորության չկատարմամբ պայմանավորված որևէ պատասխանատվություն: Ընդհակառակը, ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը գտնվում է պարտավորական հարաբերությունների մեջ ինչպես ապահովագրական ընկերության, այնպես էլ ավտոտրանսպորտային միջոցը շահագործողի հետ: Այսինքն, եթե ավտոտրանսպորտային միջոցը շահագործողի մեղքով տեղի է ունենում ԱՊՊԱ պայմանագրով ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ ստանձնած պարտականության խախտում, ապա ապահովագրական ընկերության առջև պատասխանատվություն է կրում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը: Իր հերթին, համապատասխան պահանջ ապահովագրական ընկերությունը ներկայացնում է ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջը, իսկ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն էլ՝ ավտոտրանսպորտային միջոցը շահագործողին: Ինքնանպատակ չէ այն հանգամանքը, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվում են հետադարձ պահանջի՝ սուբրոգացիայի և ռեգրեսի ինստիտուտները: Այսինքն, եթե ապահովագրական ընկերությունը ձեռք է բերում սուբրոգացիայի իրավունք ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ նկատմամբ, ապա ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերն էլ ձեռք է բերում ռեգրեսի իրավունք ավտոտրանսպորտային միջոցը շահագործողի նկատմամբ: Դրանք քաղաքացիաիրավական հարաբերություններում բացասական հետևանքներից խուսափելու երաշխիքներ են:

Հաշվի առնելով վերոգրյալը և այն համադրելով սույն գործով ներկայացված փաստարկների հետ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, ապահովագրական ընկերության առջև ստանձնելով պայմանագրի գործողության ողջ ընթացքում ավտոտրանսպորտային միջոցն անձնական նպատակով օգտագործելու պարտականություն, պարտավոր է իր այդ պարտականությունը չխախտելու համար այդ մասին տեղեկացնել ավտոտրանսպորտային միջոցը շահագործողին: Բոլոր դեպքերում, ինչպես արդեն նշվեց, ավտոտրանսպորտային միջոցն օգտագործողն ավտոտրանսպորտային միջոցն ապահովագրական պայմանագրում նշված նպատակով չշահագործելու դեպքում պատասխանատվություն է կրում ոչ թե ապահովագրական ընկերության, այլ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ առջև, իսկ վերջինս՝ ապահովագրական ընկերության առջև, որի ընթացքում գործում են սուբրոգացիայի և ռեգրեսի ինստիտուտները:

Միաժամանակ, պայմանագրի ազատության և քաղաքացիաիրավական հարաբերություններում կողմերի իրավահավասարության սկզբունքներից բխում է հանրային իշխանության մասնավոր հասարակական հարաբերությունների իրավակարգավորման ոլորտում միջամտության

աստիճանը նվազագույնի հասցնելու պարտականությունը: Կոնկրետ դեպքում՝ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ և օգտագործողի միջև վստահության վրա հիմնված հարաբերություններում օրենսդրի խնդիրը չէ սահմանել ավտոտրանսպորտային միջոցն օգտագործողի անմիջականորեն ապահովագրական ընկերության առջև պատասխանատվությունը: Պայմանագրային պարտավորություն ստանձնելիս ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը, որպես առավել վտանգի աղբյուրի սեփականատեր, պարտավոր է այն ապահովել՝ անկախ նրանից, թե ով է շահագործում ավտոտրանսպորտային միջոցը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն դիրքորոշումները, որ օրենքի վիճարկվող դրույթը միակողմանիորեն պաշտպանում է ապահովագրական ընկերության և ամբողջովին ռոտահարում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ շահերը, կամ որ ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ վրա ակնհայտ չհիմնավորված ֆինանսական պարտավորության բեռ է դնում:

Այսուհանդերձ, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմողը պարզապես թվարկելով օրենքի՝ վեճի առարկա դրույթի ՀՀ Սահմանադրության մեկ տասնյակից ավելի հոդվածներին ենթադրյալ անհամապատասխանության հանգամանքը, դրանց առնչությամբ հիմնավոր փաստարկներ չի ներկայացնում և հիմնականում բարձրացնում է վիճարկվող նորմի կիրառման իրավաչափության հարցը: Բացի դրանից, օրենքի վիճարկվող դրույթի «ակնհայտ սուտ տեղեկություններ է հայտնել» եզրույթից հետևում է, որ այն քաղաքացիաիրավական վեճի շրջանակներում յուրաքանչյուր կոնկրետ գործով ենթակա է դատարանի կողմից գնահատման՝ գործի փաստական հանգամանքների համադրման արդյունքում և ինքնին սահմանադրականության խնդիր չի առաջացնում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 69-րդ հոդվածի 7-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. «Լառա Մովսեսյանի դիմումի հիման վրա՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի «դ» մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

11 ապրիլի 2017 թվականի  
ՍԴՈ-1361



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2013 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄՆԻԿԻ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՄԻՆԱՄԱՏԱՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ  
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարար Ա. Մինասյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2013 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի մարտի 22-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիան (Կոնվենցիա) ստորագրվել է 2013 թվականի հոկտեմբերի 10-ին՝ Ճապոնիայում:

Կոնվենցիայի 30-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը կատարել է հետևյալ հայտարարությունը.

«Կոնվենցիայի հավելվածներում կատարված ցանկացած փոփոխություն Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ կմտնի միայն վավերացման, միանալու, ընդունման և հաստատման մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո»:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) չթույլատրել սնդիկի առաջնային հանքարդյունաբերություն, եթե այն արդեն իսկ չի իրականացվում Հայաստանի Հանրապետության տարածքում Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտնելու պահին,

2) փորձել հայտնաբերել սնդիկի կամ սնդիկի միացությունների առանձին պաշարներ, որոնք գերազանցում են 50 մետրիկ տոննան, ինչպես նաև սնդիկի մատակարարման աղբյուրներ, որոնք առաջացնում են տարեկան 10 մետրիկ տոննան գերազանցող պաշարներ Հայաստանի Հանրապետության տարածքում,

3) չթույլատրել սնդիկի ներկրում այն ոչ անդամ կողմից, որին Հայաստանի Հանրապետությունը տալիս է իր գրավոր համաձայնությունը, եթե ոչ անդամ կողմը չի ներկայացնում հավաստագիր առ այն, որ սնդիկը, Կոնվենցիայի համաձայն, անթույլատրելի ճանաչված աղբյուրներից չէ,

4) ձեռնարկել միջոցներ՝ կանխելու համար հավաքովի արտադրանքում սնդիկի հավելիչներով այնպիսի արտադրանքի ներառումը, որոնց արտադրությունը, ներկրումը և արտահանումը թույլատրելի չէ Կոնվենցիայի համաձայն,

5) չխրախուսել առևտրում սնդիկի հավելիչներով ապրանքների արտադրությունը և տարածումը, որոնց վրա չի տարածվում սնդիկի հավելիչներով արտադրանքի որևէ հայտնի կիրառություն նախքան Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ մտնելը, եթե միայն սովյալ արտադրանքի ռիսկերի և առավելությունների գնահատումը չի ապացուցում, որ առկա են առավելություններ շրջակա միջավայրի և մարդու առողջության համար,

6) չխրախուսել որևէ արդյունաբերության զարգացում, որում կօգտագործվեն այլ արտադրական գործընթացներ սնդիկի կամ սնդիկի միացությունների դիտավորյալ կիրառությամբ, որոնք չեն եղել Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց առաջ, բացառությամբ Կոնվենցիայով նախատեսված դեպքերի,

7) համապատասխան աղբյուրներ ունենալու դեպքում ձեռնարկել միջոցներ արտանետումները վերահսկելու համար,

8) ձեռնարկել միջոցներ և ապահովել, որպեսզի Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության համար թույլատրելի օգտագործման ենթակա սնդիկի և սնդիկի միացությունների միջանկյալ պահեստավորումը կատարվի շրջակա միջավայրի համար անվտանգ եղանակով՝ հաշվի առնելով ուղեցույցները և Կոնվենցիայի պահանջները,

9) ջանքեր գործադրել սնդիկով կամ սնդիկի միացություններով վարակված տեղանքներ հայտնաբերելու և դրանք գնահատելու նպատակով համապատասխան ռազմավարություն մշակելու համար, ինչպես նաև նման տեղանքների հետ կապված ռիսկերի նվազեցման համար ձեռնարկվող որևէ գործողություն իրականացնել շրջակա միջավայրի համար վտանգ չներկայացնող եղանակով՝ ներառելով, ըստ անհրաժեշտության, դրանց պարունակած սնդիկի կամ սնդիկի միացությունների՝ մարդու առողջությանը և շրջակա միջավայրին սպառնացող ռիսկերի գնահատում,

10) խթանել սնդիկից և սնդիկի միացություններից աշխատանքային ազդեցության մասին գիտականորեն հիմնավորված կրթական և կանխարգելիչ ծրագրերի մշակումն ու իրականացումը,

11) ստեղծել և հզորացնել, պատշաճ կարգով, ինստիտուցիոնալ և առողջապահական պրոֆեսիոնալ կարողություններ սնդիկի և սնդիկի միացությունների ազդեցությանն առնչվող առողջապահական ռիսկերի կանխարգելման, ախտորոշման, բուժման և դիտարկման ոլորտում:

3. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին, և այն նպատակաուղղված է պաշտպանել մարդու առողջությունը և շրջակա միջավայրը սնդիկի ու սնդիկի միացությունների անթրոպոգեն արտանետումներից և արտազատումներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.



1. 2013 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված՝ «Մնդիկի վերաբերյալ» Մինամատայի կոնվենցիայում (կից հայտարարությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 ապրիլի 2017 թվականի  
ՍԴՈ-1362



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԽԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ, «ՄԼԼ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ»  
ՍՊԸ-Ի ԴԻՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 233-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՍԱՍԻԵՎ 233.1-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՍԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողներ

Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի,

«ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Կարեն Կարապետյանի, Հայկ Սահակյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի, «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումների հիման

վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասին 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի՝ 2016 թվականի նոյեմբերի 30-ին և «ՄԼԼ Ինդասթրիզ» ՄՊԸ-ի՝ 2017 թվականի փետրվարի 21-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի մարտի 14-ի ՄԴԱՈ-20 աշխատակարգային որոշմամբ որոշել է վերընշված դիմումների հիման վրա քննության ընդունված գործերը միավորել:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՊԱՐԶԵՑ**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքը վերադարձնելը» վերտառությամբ 233-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է. «Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները: Վճռաբեկ բողոքը կրկին ներկայացվելու դեպքում ժամկետները հաշվարկվում են վերստին»:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը» վերտառությամբ 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է. «Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ ... բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել»:

Օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը գործող խմբագրությամբ շարադրվել է, իսկ օրենսգիրքը 233.1-րդ հոդվածով լրացվել է «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-49-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 10.06.2014 թվականին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 21.06.2014 թվականին և ուժի մեջ է մտել 03.07.2014 թվականից:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի դիմումի մասով.  
դիմողները ժառանգության փաստացի ընդունման հետ կապված հայց են ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, որի՝ 09.11.2015 թվականի վճռով հայցը մերժվել է (ԵԿԴ/3466/02/15 քաղաքացիական գործ):

Դիմողների վերաքննիչ բողոքը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 26.02.2016 թվականի որոշմամբ մերժվել է, և առաջին ատյանի դատարանի վճիռը թողնվել է օրինական ուժի մեջ:

Դիմողները ներկայացրել են վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 04.05.2016թ. որոշմամբ վերադարձվել է և սահմանվել է որոշումն ստանալու պահից հնգօրյա ժամկետ վճռաբեկ բողոքի ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Դիմողների կողմից կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 01.06.2016թ. որոշմամբ թողնվել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ դիմողները վերացնելով ՀՀ վճռաբեկ դատարանի 04.05.2016թ. որոշմամբ արձանագրված ձևական սխալները՝ միևնույն ժամանակ թույլ են տվել նոր սխալ, այսինքն՝ կրկին նույն հիմքով ներկայացրել են վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

բ) «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումի մասով.

«ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ներկայացրել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2016թ. որոշմամբ բողոքը վերադարձվել է և սահմանվել է որոշումը ստանալու պահից եռօրյա ժամկետ վճռաբեկ բողոքի ձևական սխալը շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար (ԵԿԴ/0020/04/15 սնանկության գործ):

Դիմողի կողմից կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը ՀՀ վճռաբեկ դատարանի 24.08.2016թ. որոշմամբ թողնվել է առանց քննության այն պատճառաբանությամբ, որ դիմողը վերացնելով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.07.2016թ. որոշմամբ արձանագրված ձևական սխալը՝ միևնույն ժամանակ թույլ է տվել նոր սխալ, այսինքն՝ կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

3. Ըստ դիմողներ Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի՝ ՀՀ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների դրույթներին հակասող ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթների առկայության պայմաններում իրենք գրկված են իրենց գործի քննության իրավունքից, քանի որ առկա է օրենքով նախատեսված իրական արգելք, որը խոչընդոտում է դատարանի մատչելիությանը:

Դիմողների պնդմամբ՝ իրենց կողմից վերացվել էին ՀՀ վճռաբեկ դատարանի 04.05.2016թ. որոշմամբ մատնանշված խախտումները և նոր բողոքին

կից ներկայացվել էին «ՀԱՅՓՈՍՍ»-ի անդորրագիրը և էլեկտրոնային կրիչը: Սակայն ՀՀ վճարեկ դատարանը 01.06.2016թ. որոշմամբ անտեսել է, որ իրենք վերացրել են թերությունները, վկայակոչել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթը և դրանով խոչընդոտվել է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված արդար դատաքննության իրավունքը:

Դիմողները նշում են, որ ՀՀ վճարեկ դատարանն իր՝ 01.06.2016թ. որոշմամբ իրենց վճարեկ բողոքը թողել է առանց քննության բացառապես միայն այն պատճառով, որ «ՀԱՅՓՈՍՍ»-ի թիվ 0009 փոստային բաժանմունքում ք.Երևան - 0010 Հանրապետության 32/29 հասցեի փոխարեն գրվել է ք. Երևան - 0010 Հանրապետության 23/29 հասցեն այն դեպքում, որ իրենք նամակի վրա նշել են ճիշտ հասցեն, և պատասխանող կողմն ստացել է նամակը: Ստացվում է այնպես, որ «ՀԱՅՓՈՍՍ»-ի սխալ աշխատանքի պատճառով իրենք զրկվում են իրենց սահմանադրական իրավունքից:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողները խնդրել են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթը համարել հակասող ՀՀ Սահմանադրության 10, 28, 61, 63 և 73-րդ հոդվածներին և ճանաչել անվավեր:

Ըստ դիմող «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի՝ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի ապահովման համար վճարեկ դատարանը պարտավոր է պահպանել դատարանի մատչելիության սկզբունքի ապահովման նպատակով ամրագրված դատավարական նորմերը: Նշված նորմերի հիման վրա վճարեկ դատարանն աջակցում է պաշտպանություն հայցող անձին՝ մատնացույց անելով բողոքում առկա թերությունները և սահմանելով նոր ժամկետ՝ մատնանշված թերությունները վերացնելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Այդ նորմերի խախտման դեպքում խախտվում է նաև անձի դատական պաշտպանության իրավունքը: Դիմողի գնահատմամբ՝ այն դեպքում, երբ վճարեկ դատարանը բողոքի ընդունելության հարցը լուծելիս թերանում է բողոքում առկա թերություններն ամբողջությամբ նշելու հարցում, ապա դատարանի նման անգործության բացասական հետևանքը չպետք է դրվի բողոք բերող անձի վրա: Վերը նշված գործով ՀՀ վճարեկ դատարանը վճարեկ բողոքը վերադարձնելիս նշել էր. «Տվյալ դեպքում բողոք բերած անձը չի ներկայացրել վճարեկ բողոքի պատճենը գործին մասնակից Ընկերության սնանկության գործով ժամանակավոր կառավարչին ուղարկելու մասին ապացույցը՝ փոստային անդորրագիրը»: Դիմողն արձանագրում է, որ որևէ այլ սխալ վճարեկ դատարանի կողմից չէր նշվել վճարեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ, ավելին՝ ՀՀ վճարեկ դատարանը չունի նաև նոր սխալ վկայակոչելու՝ օրենքով սահմանված լիազորություն: Ընկե-

րությունը վերացրել էր վճարելի դատարանի կողմից բողոքը վերադարձնելիս նշված միակ թերությունը (վճարելի բողոքն ուղարկվել էր սնանկության գործով ժամանակավոր կառավարչին և համապատասխան փոստային անդորրագիրը կցվել էր կրկին ներկայացված վճարելի բողոքին) և վճարելի բողոքը սահմանված ժամկետում կրկին ներկայացրել էր վճարելի դատարան: Ստանալով կրկին ներկայացված վճարելի բողոքը վճարելի դատարանը ներկայացված բողոքում գտել էր նոր սխալ և որոշել էր վճարելի բողոքը թողնել առանց քննության:

Դիմողի գնահատմամբ՝ օրենսգրքի 233.1-րդ հոդվածի իրավակարգավորմանն ուղղված նպատակն է սահմանել այն սխալների շրջանակը, որոնց առկայության դեպքում առհասարակ բացառվում է վճարելի բողոքը քննության առնելու հնարավորությունը: Վճարելի բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում: Վճարելի բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ որևէ անդրադարձ չի կատարվում և չի էլ կարող կատարվել վճարելի բողոքի հիմքերին, քանի որ այն դեռևս չի դարձել քննության առարկա: Հետևաբար, վճարելի բողոքում նշված հիմքով նույն գործով վճարելի դատարանի որոշում գոյություն ունենալ չի կարող: Եթե վճարելի դատարանն առաջնորդվի նույն տրամաբանությամբ և վճարելի բողոքը վերադարձնելու մասին որոշումը համարի որպես բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում, ապա վերջինս պարտավոր կլինի առանց քննության թողնել նույնիսկ կրկին ներկայացված այն վճարելի բողոքը, որում պահպանված են օրենսգրքի՝ վճարելի բողոքին ներկայացվող բոլոր պահանջները:

Ելնելով վերոգրյալից, դիմողը խնդրել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկան այնքանով, որքանով չի ապահովում վճարելի բողոքը վերադարձնելիս բողոքում առկա բոլոր թերությունների մատնանշումը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, ճանաչել ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր այնքանով, որքանով վճարելի բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճարելի դատարանի կողմից չմատնանշված և կրկին ներկայացված բողոքում չվերացված թերությունները դիտվում են որպես բողոքն առանց քննության թողնելու հիմք, ինչպես նաև այնքանով, որքանով վճարելի բողոքը վերադարձնելու մասին որոշումը դիտվում է որպես բողոքում նշված հիմքով նույն գործով կայացված որոշում և բողոքն առանց քննության թողնելու հիմք:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքանով են արդյունավետ անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Ըստ պատասխանողի՝ վճռաբեկ վարույթի առաջացումը կախված է մի կողմից՝ անձի մոտ վճռաբեկ բողոքարկման իրավունքի առկայությունից, մյուս կողմից՝ այդ իրավունքի իրացման դատավարական օրենքով սահմանված կարգից: Սա նշանակում է, որ վճռաբեկ վարույթի հարուցման համար բավարար չէ ունենալ բողոքարկման իրավունք, անհրաժեշտ է նաև սահմանված կարգով այն իրացնել:

Պատասխանողի կարծիքով՝ պետությունը կոնկրետ դեպքում սահմանել է դատական ակտի տեխնիկական սխալները վերացնելու հնարավորություն, բողոքը դատարանի կողմից վերադարձնելու, բողոքաբերի կողմից թույլ տրված սխալները ուղղելու և նորից ներկայացնելու իրավական հնարավորություն, ինչը կոչված է ապահովելու դատարանի մատչելիության սկզբունքի գործնական իրացումը:

Ըստ պատասխանողի օրենսդիրն օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասում ՀՀ վճռաբեկ դատարանի համար պարտականություն է սահմանել բողոքը վերադարձնելու դեպքում նշել «առկա թերությունները»: Վերջինս, ելնելով իրավակարգավորման նպատակից, ակնհայտորեն ընդգրկում է բողոքում առկա բոլոր թերությունները նշելու՝ դատարանի պարտականությունը:

Ինչ վերաբերում է վերոգրյալ դրույթների կիրառման պրակտիկային, ապա պատասխանողը գտնում է, որ եթե դատարանը դիմումի ընդունելության հարցին անդրադառնալիս չի նկատել որևէ թերություն, հետագայում այդ թերության նկատումը չի կարող անձին գրկել դատական պաշտպանության իրավունքից: Հակառակ տրամաբանությունը կարող է ստեղծել մի այնպիսի իրավիճակ, երբ անգամ վարույթ ընդունած գործերով դատարանը գործը վարույթ ընդունելուց հետո նկատի որևէ տեխնիկական սխալ և այդ պատճառաբանությամբ գործի քննության հետագա ընթացքը բացառող որոշում կայացնի՝ անձանց գրկելով արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքի գործնական իրացումից:

Պատասխանողի պնդմամբ՝ պրակտիկայում, եթե վճռաբեկ դատարա-

նի վերադարձրած բողոքը չի ուղղվում, այն դատարանի կողմից առանց քննության է թողնվում՝ պատճառաբանելով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել: Նույն-իսկ այն դեպքում, ըստ պատասխանողի, երբ սահմանված ժամկետում թերություններն ուղղվում են և նորից բողոք է ներկայացվում, մինչև նույն է, ձևական առումով արդեն իսկ նույն հիմքով նույն գործով առկա է լինում վճռաբեկ դատարանի որոշում: Հետևաբար՝ տեսականորեն այս դեպքում ևս դատարանը կարող է առանց քննության թողնել բողոքը:

Պատասխանողի կարծիքով, թեև բողոքն առանց քննության թողնելու նշված հիմքը տեսականորեն խնդրահարույց է, սակայն այն գործնական իրավական խնդիրներ չի առաջացնում, քանի որ բոլոր դեպքերում նույն սխալով վերադարձված բողոքի ներկայացումը վարույթ ընդունելը և քննելը բացառող հանգամանք է՝ անկախ այդ որոշման անվանումից, իսկ սխալի շտկման դեպքում բոլոր գործերով վարույթ ընդունելու որոշում է կայացվում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը կարծում է, որ «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը դատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ այնքանով, որքանով վճռաբեկ բողոքը վերադարձնելու դեպքում վճռաբեկ դատարանի կողմից կոնկրետ մատնանշված բոլոր թերությունները վերացնելով և բողոքը կրկին ներկայացվելուց հետո այլ թերություններ հայտնաբերվելու պայմաններում անձը գործնականում գրկվում է դատական ակտը բողոքարկելու իր իրավունքից, հակասում է ՀՀ Սահմանադրության պահանջներին»:

5. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել հետևյալ հարցադրումներին

- արդյո՞ք Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ վճռաբեկ բողոքի հետ կապված բոլոր թերությունները չնշելը խախտում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը,

- արդյո՞ք վճռաբեկ բողոքի հետ կապված Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները վերացնելուց հետո սահմանված ժամկետում կրկին ներկայացված բողոքում նոր թերություններ հայտնաբերելը և այդ հիմքով բողոքն առանց քննության թողնելը չի խոչընդոտում ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված անձի՝ դատական պաշտպանության իրավունքն



այնքանով, որ անձը զրկված լինի արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունից,

-արդյոք ք վճռաբեկ բողոքը վերադարձնելու և բողոքն առանց քննության թողնելու՝ Վճռաբեկ դատարանի որոշումների համակարգային հարաբերակցությունը՝ իրավակիրառական պրակտիկայում տրված մեկնաբանությանը համապատասխան, ապահովում է վճռաբեկության կարգով բողոքարկումների անհրաժեշտ հավասարակշռությունը՝ ապահովելով անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում վիճարկվում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը՝ «նշելով առկա թերությունները» դրույթի մասով, ինչպես նաև 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանի արդեն իսկ կայացված որոշում համարելու մասով, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև վերոհիշյալ հոդվածների համապատասխան դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանը:

6. Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի՝ վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանի որոշմամբ վերադարձվում է, եթե այն չի համապատասխանում օրենսգրքի 231-րդ հոդվածի պահանջներին:

Օրենսգրքով վճռաբեկ բողոքի ներկայացման նախապայմաններն ըստ էության դասակարգվում են երկու խմբի:

Առաջինն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքի բովանդակությանը ներկայացվող պահանջներին և ներառում են այն տեղեկությունների ցանկը, որոնք պետք է արտացոլվեն վճռաբեկ բողոքում: Մասնավորապես, բողոքում ներառվում են՝ դատարանի անվանումը, որին հասցեագրվում է բողոքը, բողոք բերող անձի անունը (անվանումը), ազգանունը, հայրանունը (անձը հաստատող փաստաթղթում առկայության դեպքում), դատավարական կարգավիճակը, դատական ակտ կայացրած դատարանի անվանումը, գործի համարը, դատական ակտի կայացման տարին, ամիսը, ամսաթիվը, գործին մասնակցող անձանց անունները (անվանումները), վեճի առարկան: Բողոքում պետք է արտացոլվի նաև բողոք բերող անձի պահանջը՝ օրենքների, այլ իրավական ակտերի վկայակոչմամբ, ինչպես նաև բողոքում պետք է լինի նշում այն մասին, թե նյութական կամ դատավարական իրավունքի որ նորմերն են խախտվել կամ սխալ կիրառվել, կամ որոնք են նոր երևան եկած կամ նոր հանգամանքների հետևանքով գործի վերանայման հիմքերը և դրանց հիմնա-

վորումները: Բացի դրանից, բողոքում պետք է բերվեն օրենքով նախատեսված հիմնավորումները, ինչպես նաև բողոքը պետք է ստորագրված լինի ու նշում պարունակի կցվող փաստաթղթերի ցանկի մասին:

Երկրորդն այն պայմաններն են, որոնք վերաբերում են բողոքին կցվող նյութերի ցանկին:

Օրենսգրքի համաձայն վճարել բողոքին պետք է կցվեն՝

1) օրենսգրքով սահմանված կարգով ձևակերպված ներկայացուցչի լիազորագիրը, եթե բողոքը ներկայացվում է ներկայացուցչի կողմից.

2) օրենքով սահմանված կարգով և չափով պետական տուրքի վճարած լինելը հավաստող փաստաթուղթը: Այն դեպքերում, երբ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու կամ դրա չափը նվազեցնելու հնարավորություն, ապա վճարել բողոքին կցվում է կամ բողոքում ներառվում է դրա վերաբերյալ միջնորդությունը.

3) բողոքի պատճենը՝ գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց ուղարկելու մասին ապացույցները.

4) վճարել բողոքի էլեկտրոնային կրիչը:

Վերոհիշյալ պահանջների չպահպանումը հիմք է վճարել բողոքը վերադարձնելու համար:

Դիտարկելով օրենսգրքով սահմանված վճարել բողոքի վերադարձման կանոնակարգումները սույն գործով վեճի առարկայի շրջանակներում անհրաժեշտ է հաշվի առնել, որ

**նախ** բողոքը վերադարձնելու մասին որոշումը Վճարել դատարանը կայացնում է մեկ ամսվա ընթացքում,

**երկրորդ**՝ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ նշվում են **առկա** թերությունները,

**երրորդ**՝ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ Վճարել դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճարել բողոքը կրկին ներկայացնելու համար:

Հարկ է նշել, որ ինչպես բողոքի հետ կապված թերությունները հայտնաբերելու և մատնանշելու, այնպես էլ բողոքաբերի կողմից մատնանշված թերությունները վերացնելու համար օրենսդիրը սահմանում է մինչև մեկ ամիս ժամանակահատված:

Ընդ որում, երկու դեպքում էլ համապատասխան գործողությունների համար կոնկրետ ժամանակահատվածների որոշումը գտնվում է Վճարել դատարանի հայեցողության ներքո: Օրենսդիրը չի սահմանում անգամ նվազագույն ժամկետ վերադարձված բողոքի հետ կապված թերությունները շտկելու և բողոքը կրկին ներկայացնելու համար: Նշելով թերությունները Վճարել դատարանն իր կողմից մատնանշված թերությունների ծավալից և բնույթից ելնելով որոշում է դրանք շտկելու համար ողջամիտ ժամկետը:

Վերոհիշյալից ելնելով, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի կողմից մինչև մեկ ամիս ժամկետ նախատեսելը բավարար պայման է վճռաբեկ բողոքի հետ կապված բոլոր թերությունները հայտնաբերելու և դրանք մատնանշելու համար, իսկ օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի «վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին վճռաբեկ դատարանը կայացնում է որոշում՝ գործը վճռաբեկ դատարանում ստանալու պահից մեկ ամսվա ընթացքում՝ նշելով առկա թերությունները» դրույթը ենթադրում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է մատնանշվեն բողոքի ներկայացման հետ կապված բոլոր այն թերությունները, որոնք բողոքի վերադարձման հիմք են հանդիսանում:

Վճռաբեկ բողոքի ընդունմանը խոչընդոտող առկա **բոլոր թերություններ**ի մասին նշելը բխում է ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածով սահմանված և արդար դատաքնության իրավունքի տարրը հանդիսացող՝ գործի ողջամիտ ժամկտում քննության անհրաժեշտությունից:

7. Անդրադառնալով դիմողների կողմից բարձրացված հարցին՝ արդյո՞ք վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը կարող է դիտվել բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանի արդեն իսկ կայացրած որոշում, ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Վճռաբեկ դատարանի կողմից ներկայացված բողոքների կապակցությամբ ընդունվող որոշումների իրավակարգավորումներին, ինչպես նաև դատական պաշտպանության իրավունքի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումներին:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ բաժնում ամրագրված դրույթների՝ վճռաբեկ բողոքների վերաբերյալ (բացի միջանկյալ դատական ակտերի բողոքարկման դեպքերից) Վճռաբեկ դատարանը կայացնում է երկու տեսակի որոշումներ:

Առաջինն այն որոշումներն են, որոնք կայացվում են առանց բողոքն ըստ էության քննելու: Դրանք են՝

- 1) բողոքը վերադարձնելու մասին (օրենսգրքի 233-րդ հոդված),
- 2) բողոքն առանց քննության թողնելու մասին (օրենսգրքի 233.1-րդ հոդված),
- 3) բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին (օրենսգրքի 233.2-րդ հոդված),
- 4) բողոքը վարույթ ընդունելու մասին (օրենսգրքի 234-րդ հոդված):

Երկրորդն այն որոշումներն են, որոնք Վճռաբեկ դատարանը կայացնում է բողոքը վարույթ ընդունելու և քննելու արդյունքում՝ իրացնելով օրենսգրքի 240-րդ հոդվածով սահմանված իր լիազորությունները:

Հարկ է նշել, որ բողոքը վերադարձնելու մասին, բողոքն առանց քննության թողնելու մասին և բողոքը վարույթ ընդունելու մասին որոշումները,

ի տարբերություն մյուս որոշումների, չեն կայացվում հանուն Հայաստանի Հանրապետության: Նման որոշումներ կայացնելիս Վճռաբեկ դատարանը չի անդրադառնում բողոքում նշված հիմքերի քննարկմանը:

Ըստ օրենսգրքի 226-րդ հոդվածի՝ վճռաբեկ բողոք բերելու հիմքերն են՝

1) դատական սխալը՝ նյութական կամ դատավարական իրավունքի այնպիսի խախտումը, որը կարող էր ազդել գործի ելքի վրա.

2) նոր երևան եկած կամ նոր հանգամանքները:

Այդ առումով ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, չի վերաբերում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմանն այն պատճառով, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ չի կարող անդրադարձ կատարվել վճռաբեկ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում:

«Բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել» ձևակերպման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում իր ՍԴՈ-709 որոշման մեջ, այն է՝ «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» և «նույն գործով» ձևակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միննույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման»:

ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված իրավական դիրքորոշումներից ակնհայտ է, որ խոսքը վճռաբեկ բողոքում բարձրացված հարցերի վերաբերյալ արտահայտված որոշման մասին է, քանզի Սահմանադրական դատարանը հստակ շեշտել է՝ «որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ»:

Ավելին, ըստ Սահմանադրական դատարանի՝ Վճռաբեկ դատարանը բողոքն առանց քննության պետք է թողնի այն դեպքում, երբ արդեն իրաց-

վել է վճռաբեկ բողոք բերելու անձի իրավունքը, և **բողոքում ներկայացված հարցերի առնչությամբ վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:**

Հակառակ դեպքում, գործին մասնակցող տարբեր անձանց կողմից ինքնուրույն, սակայն նույն հիմքով բողոք բերելու պարագայում, եթե որևէ մեկի՝ վերադարձնելուց հետո նոր թերություններով ներկայացված բողոքի վերաբերյալ կայացվի բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում այն հիմնավորմամբ, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, ապա հաջորդ բողոքաբերների՝ նույն հիմքով ներկայացրած բողոքները նույնպես պետք է թողնվեն առանց քննության, քանի որ կհամարվի, որ ներկայացված հիմքով արդեն իսկ առկա է Վճռաբեկ դատարանի որոշումը: Նման իրավիճակը դատական պաշտպանության իրավունքի լուրջ սահմանափակում կհանդիսանա:

Բացի դրանից, ՄԴՈ-719 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ. «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով»:

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ պատասխանողն իր գրավոր բացատրությամբ հայտնել է, որ քննարկվող խնդրին այլ լուծում է տրվում ՀՀ քաղաքացիական դատավարության նոր օրենսգրքի նախագծով, որը 2016թ. սեպտեմբերի 13-ին ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի և չորսօրյա նիստերի օրակարգ:

8. Կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի հետ կապված թերություններ հայտնաբերելու և այդ հիմքով բողոքն առանց քննության թողնելու արդյունքում անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների ապահովման տեսանկյունից ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել իր՝ 2016 թվականի մարտի 10-ի ՄԴՈ-1257 որոշմամբ վերահաստատված նախորդ մի շարք, մասնավորապես՝ ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190 և ՄԴՈ-1222 որոշում-

ներում արդար դատաքննության և դատարանի մատչելիության իրավունքների առնչությամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին: Մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներից բխող՝ անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության շրջանակներում Սահմանադրական դատարանը գտել է, որ. «... որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրել էլ ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ»:

Անդրադառնալով վճռաբեկության կարգով դատական ակտերի վերանայման խնդիրներին Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1192 որոշման մեջ արձանագրել է հետևյալը. «Վճռաբեկ դատարանի կողմից ստորադաս դատարանների դատական ակտերը վերանայելու լիազորությունների իրականացման համար, ի թիվս այլնի, կարևոր երաշխիք է նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը՝ նյութական և ընթացակարգային օրենսդրական այնպիսի կարգավորմամբ, որն ապահովի անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը: Նշված համատեքստում սահմանադրական դատարանը կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը, ինչն անհրաժեշտ է դատական պաշտպանության իրավունքի իրացման լիարժեքությունն ինչպես այլ, այնպես էլ վճռաբեկ վարույթում գնահատելու առումով»:

Սահմանադրական դատարանը նաև նշել է, որ՝ «Վճռաբեկ բողոքի ընդունելիության պայմանները սահմանելիս պետք է գերակայեն վճռաբեկ դատարանի մատչելիության և արդյունավետ բողոքարկման իրավունքի ապահովման երաշխիքները: Վճռաբեկ դատարանի՝ որպես ընդհանուր իրավասության դատարանների համակարգում բարձրագույն մարմնի կառուցակարգային կարգավիճակը չի կարող խոչընդոտել օրենքով նրան վերապահված իրավասության լիարժեք իրականացմանը և այդ բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացմանը, եթե ստեղծվում են դրա համար անհրաժեշտ նաև իրավական ու կառուցակարգային երաշխիքներ»:

Սահմանադրական դատարանը կարևոր է համարում նաև ՀՀ դատական դեպարտամենտի 10.04.2017թ. թիվ ԴԴ-1 Ե-2446 պատասխան գրության մեջ ներկայացված վիճակագրական տվյալները, որտեղ, մասնավորապես, նշվել է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենս-

գրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին համապատասխան՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է բողոքն առանց քննության թողնելու մասին թվով 88 որոշում, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածին համապատասխան՝ 2016 թվականի ընթացքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից կայացվել է բողոքը վերադարձնելու մասին թվով 150 որոշում:

9. Դիտարկելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու, ինչպես նաև բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումների համակարգային փոխկապակցվածությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել հետևյալը.

**նախ**՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին, ինչպես նաև բողոքն առանց քննության թողնելու մասին որոշումները որպես դատական ակտեր վերջնական են, ուժի մեջ են մտնում ընդունման պահից և ենթակա չեն բողոքարկման: Այդ առումով բացակայում է վերանայման ճանապարհով այդ որոշումները փոփոխելու բողոքաբերի հնարավորությունը,

**երկրորդ**՝ բողոքը վերադարձնելու նպատակը թերությունները վերացնելն է և սահմանված ժամկետում կրկին ներկայացնելու դեպքում երաշխավորելը, որ ձևական թերությունների շտկման արդյունքում դիմողը բաց չի թողնի բողոքարկման ժամկետը,

**երրորդ**՝ բացակայում է օրենսդրորեն սահմանված ուղղակի արգելք կրկին ներկայացված բողոքի հետ կապված նոր թերություններ հայտնաբերելու դեպքում բողոքը նորից վերադարձնելու հնարավորության համար: Այսինքն, օրենսգիրքը դեռևս չունի այնպիսի դրույթ, որն ուղղակիորեն պարտադրի կրկին ներկայացված բողոքի հետ կապված նոր թերություններ հայտնաբերելու դեպքում բողոքն առանց քննության թողնելու վերաբերյալ,

**չորրորդ**՝ վերադարձված բողոքը կրկին ներկայացվելուց հետո հայտնաբերված նոր թերությունները ոչ բոլոր դեպքերում է, որ կարող են թույլ տրված լինել բողոքաբերի մեղքով, և այդ պարագայում բողոքն առանց քննության թողնելը կարող է անարդարացիորեն զրկել բողոքաբերին դատական պաշտպանության իր իրավունքների լիարժեք իրականացման հնարավորությունից:

Միաժամանակ հարկ է հաշվի առնել, որ վճռաբեկ բողոքի բազմակի վերադարձման պայմաններում կարող է արհեստականորեն ձգձգվել բողոքարկվող դատական ակտի ուժի մեջ մտնելը, ինչը բացասական հետևանքներ կարող է առաջացնել շահագրգիռ անձանց համար: Այս առումով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ օրենսդրի խնդիրն է նախատեսել այնպիսի կարգավորումներ, որոնք չսահմանափակելով անձի՝ վճռաբեկ բողոք ներկայացնելու արդյունավետ հնարավորությունը, միևնույն ժամանակ ապահովեն բողոքարկվող դա-

տական ակտի ուժի մեջ մտնելու հետ կապված խնդիրների լուծումը և բացառեն հնարավոր չարաշահումները:

10. Վերոհիշյալ խնդիրների լույսի ներքո ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերահաստատել իր կողմից արտահայտված դիրքորոշումները, որոնց համաձայն՝

- «նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ և, անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն» (ՄԴՈ-690),

- անդրադառնալով վերադաս դատական ատյանում դիմումի թույլատրելիության պահանջներին ՀՀ սահմանադրական դատարանը նշել է, որ. «Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (ՄԴՈ-719):

Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ որոշակի դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, որոնց համաձայն.

- պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «...պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի այդ, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000),

- սահմանափակումները չեն կարող համապատասխանել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին, եթե չեն հետապնդում իրավաչափ նպատակ կամ բացակայում է ընտրված միջոցների և հետապնդվող իրավաչափ նպատակի միջև պատճառական կապը (Case of Marini v. Albania, application no. 3738/02, 18/12/2007):

ՄԻԵԴ-ը բազմաթիվ վճիռներում նշել է, որ վճռաբեկ դատարան տրվող գանգատին ներկայացվող պահանջները կոչված են ապահովելու արդա-



րադատության լավագույն կառավարում, սակայն ազգային դատարանների կողմից գանգատների ձևակերպման նկատմամբ **չափազանց ձևական մոտեցումը** վճռաբեկ գանգատների ընդունման հարցում կարող է հանգեցնել դատարանի մատչելիության իրավունքի խախտման: Վճռաբեկ գանգատի՝ հստակ ձևակերպված չլինելու հիմքով վարույթ չընդունելը, ըստ ՄԻԵԴ-ի, կարող է հանգեցնել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտման (Case of Reichman v. France, application no. 50147/11, 12/07/2016):

ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքից հետևում է, որ պետք է խուսափել ավելորդ ձևականությունից, «բայց միաժամանակ չլինել չափազանց ճկուն, որպեսզի վճռաբեկ գանգատին ներկայացվող պահանջները չդառնան անիմաստ» (Case of Dumitru Gheorghe v. Romania, application 33883/06, 12/04/2016):

11. Վերոգրյալից ելնելով՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը նպատակ ունի արդեն իսկ ներկայացված բողոքի հետ կապված թերությունները վերացնելու համար պայմաններ ապահովել և դատարանի կողմից սահմանված ժամկետում այդ թերությունները վերացնելու պարագայում համարել, որ բողոքը բերվել է սահմանված կարգով: Այդ իսկ պատճառով, թերությունները պետք է առնչվեն սկզբնական բողոքին, իսկ բողոքաբերը պետք է շտկի վերադարձման որոշմամբ մատնանշված թերությունները:

Սակայն, շտկելուց բացի, բողոքաբերի կրկին ներկայացրած բողոքում այլ փոփոխություններ կատարելու կամ նոր ձևական սխալներ թույլ տալու պարագայում այն պետք է դիտարկվի ամբողջովին նոր բողոք՝ դրա հետ կապված բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Հետևաբար, վերադարձման որոշմամբ մատնանշվածից բացի, այլ փոփոխություններ կատարելու պարագայում բողոքաբերն ստիպված կլինի կրել բողոքարկման ժամկետը բաց թողնելու հետ կապված ռիսկերը:

Վերոհիշյալ տրամաբանությանը համապատասխան, երբ Վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվի վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենն օրենսգրքի 231-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջն անհարկի ծանրաբեռնում է ոչ միայն բողոքաբերին, այլ նաև համապատասխան կողմերին, որոնք ստիպված են լինելու կրկին ուսումնասիրել նույնաբովանդակ բողոքը: Այդ տեսանկյունից վերադարձնելուց հետո կրկին ներկայացված նույն տեքստն ունեցող բողոքի պատճենը կողմերին կրկին ուղարկելը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդ-

վածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից և չի հետապնդում որևէ իրավաչափ նպատակ:

Ամփոփելով վերոգրյալը՝ ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ գործող իրավակարգավորումների շրջանակներում Վճռաբեկ դատարանի կողմից վերադարձված և կրկին բերված բողոքը համարվում է սահմանված կարգով ներկայացված՝ պայմանով, որ բողոքաբերը սահմանված ժամկետում վերացրել է Վճռաբեկ դատարանի մատնանշած բոլոր թերություններն ու ձևական սխալները: Հակառակ պարագայում բողոքը պետք է դիտվի որպես ամբողջությամբ նոր բերված բողոք, որի առնչությամբ Վճռաբեկ դատարանը պետք է կայացնի օրենսգրքով նախատեսված որևէ որոշում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը ստիպված չի լինի կայունության սկզբունքից ելնելով վերադարձնելուց հետո ձևական սխալներով կրկին ներկայացված բողոքի վերաբերյալ ընդունել բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում՝ այն պատճառաբանությամբ, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**:

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն վճռաբեկ բողոքի հետ կապված առկա բոլոր այն թերությունները, որոնք օրենքի համաձայն հիմք են վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար և որոնց շտկելուց հետո բողոքը կհամարվի սահմանված կարգով ներկայացված:

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված Վճռաբեկ դատարանի որոշում:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա դիմողների նկատմամբ կայացված վերջնական

դատական ակտերը նոր հանգամանքների հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման, քանի որ

ա) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասը և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դիմող «ՄԼԼ Ինդասթրիզ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության նկատմամբ կիրառվել են սույն որոշման եզրափակիչ մասի առաջին և երկրորդ կետերում բացահայտված սահմանադրախրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ,

բ) ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դիմողներ Ալվարո Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի երկրորդ կետում բացահայտված սահմանադրախրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

18 ապրիլի 2017թվականի  
ՄԴՈ-1363



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԿՈՆԳՐԵՍ-ՀՅԿ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ  
2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 9-Ի՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՍՓՈՓԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 163-Ա ՈՐՈՇՈՒՄԸ  
ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

28 ապրիլի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ՝

դիմող կողմի ներկայացուցիչներ Լ. Զուրաբյանի, Վ. Գրիգորյանի, Տ. Եգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչներ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տ. Մուկույչյանի, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի քարտուղար Ա. Սմբատյանի և ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Ն. Հովհաննիսյանի,

գործով որպես հարակից պատասխանողներ ներգրավված՝

Հայաստանի Հանրապետության դատախազության ներկայացուցիչներ՝ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Հ. Ասլանյանի, ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության վարչության պետի տեղակալ Կ. Բիշարյանի և նույն վարչության դատախազ Վ. Մկրտչյանի,

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանության ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության շտաբի պետ Հ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի դիմումի հիման վրա՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի՝ 2017 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր 2017 թվականի ապրիլի 18-ի ՄԴԱՈ-29 աշխատակարգային որոշմամբ գործով զեկուցող է նշանակել ՀՀ սահմանադրական դատարանի անդամ Ա. Պետրոսյանին: Հիշյալ որոշմամբ քննության ընդունված գործով որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավվել է ընտրությունների արդյունքներն ամփոփող պետական մարմինը՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը, իսկ որպես հարակից պատասխանողներ են ներգրավվել ՀՀ դատախազությունը և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը:

Հիշյալ որոշմամբ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովից, ՀՀ դատախազությունից, ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունից, ՀՀ դատական դեպարտամենտից, ՀՀ հատուկ քննչական ծառայությունից, ՀՀ քննչական կոմիտեից պահանջվել են այդ մարմինների իրավասությանն առնչվող՝ ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների հետ կապված փաստաթղթեր, տեղեկատվություն:

Լսելով սույն գործով զեկուցողի հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի, հարակից պատասխանողների ներկայացուցիչների բացատրությունները, ուսումնասիրելով նրանց կողմից ներկայացված փաստարկները, ինչպես նաև հետազոտելով դիմումը, գործում առկա մյուս փաստաթղթերը և նյութերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2017 թվականի ապրիլի 2-ին՝ ՀՀ ընտրական օրենսգրքի (ընդունված՝ 25.05.2016թ., ՀՕ54-Ն) 103-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին համապատասխան ՀՀ տարածքում կազմավորվել է թվով 2009 ընտրական տեղամաս, որից 12-ը՝ քրեակատարողական հիմնարկներում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում կազմվել է 13 ընտրական տարածք՝ 4-ը Երևանում, 9-ը՝ մարզերում:

ՀՀ ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան կազմավորվել է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ:

ՀՀ ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում կազմավորվել է ընդհանուր թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը Երևան քաղաքում և 28-ը՝ մարզերում:

ՀՀ Ազգային ժողովի ընտրությունները կազմակերպել և դրա օրինականության նկատմամբ վերահսկողություն իրականացրել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2. ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման և արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել թվով 6 միջազգային կազմակերպությունների (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ), ԵՄԽՎ (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով), ԱՊՀ դիտորդական առաքելություն, ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողով, ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողով, Եվրոպական խորհրդարան) ընդհանուր թվով 650 դիտորդներ, ինչպես նաև 49 տեղական կազմակերպությունների 28.021 դիտորդներ, տեղական 89 զանգվածային լրատվության միջոցների 1244 ներկայացուցիչներ և 31 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցների 80 ներկայացուցիչներ: ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների քվեարկության օրը թվով 2009 ընտրական տեղամասերից 1953 տեղամասերում ընտրական գործընթացին հետևել և քվեարկության սենյակներում ներկա են գտնվել ընդհանուր թվով 28.365 դիտորդ և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչ:

3. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2017 թվականի ապրիլի 9-ին հիմք ընդունելով ընտրական տեղամասերում, ինչպես նաև էլեկտրոնային եղանակով քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունները, կազմել է արձանագրություն (ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր)՝ ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների քվեարկության արդյունքների

վերաբերյալ: Համաձայն հիշյալ արձանագրության՝

- «- ընտրողների ընդհանուր թիվը 2.588.468.
- քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը 1.575.786.
- տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ինքնասունձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը 2.685.277.
- տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը 2.740.000.
- ընտրողներից ստացված տեխնիկական սարքավորմամբ տպված կտրոնների ընդհանուր թիվը 1.569.147.
- ընտրողներից ստացված համարակալված քվեարկության կտրոնների ընդհանուր թիվը 4.546.
- ընտրողներից ստացված կտրոնների ընդհանուր թիվը 1.573.693.
- չօգտագործված համարակալված կտրոնների ընդհանուր թիվը 2.733.223.
- չօգտագործված ինքնասունձվող դրոշմանիշերի ընդհանուր թիվը 1.109.778.
- անվավեր քվեաթերթիկների թիվը 6.675.
- անճշտությունների գումարային չափը 2.052»:

Քվեաթերթիկներում ընդգրկված հինգ կուսակցություններին և չորս կուսակցությունների դաշինքներին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը, ըստ վերոհիշյալ արձանագրության, հետևյալն է.

- «Ելք» կուսակցությունների դաշինք՝ 122.065.
- «Ազատ դեմոկրատներ» կուսակցություն՝ 14.739.
- «Հայկական վերածնունդ» կուսակցություն՝ 58.265.
- «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք՝ 428.836.
- «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինք՝ 25.950.
- Հայաստանի Հանրապետական կուսակցություն՝ 770.441.
- Հայաստանի կոմունիստական կուսակցություն՝ 11.741.
- «Օհանյան-Բաֆֆի-Օսկանյան» կուսակցությունների դաշինք՝ 32.508.
- «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն՝ 103.048:

Հիմք ընդունելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքների վերաբերյալ» թիվ 162-Ա որոշումը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովն իր 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին»

թիվ 163-Ա որոշմամբ որոշել է, որ ՀՀ Ազգային ժողովն ընտրվել է և մանդատները բաշխվում են՝

- 1) Հայաստանի Հանրապետական կուսակցություն - 58 մանդատ.
- 2) «Ծառուկյան» կուսակցությունների դաշինք - 31 մանդատ.
- 3) «Ելք» կուսակցությունների դաշինք - 9 մանդատ.
- 4) «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցություն - 7 մանդատ:

4. Դիմող կողմը վիճարկելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի թիվ 163-Ա որոշումը՝ ՀՀ սահմանադրական դատարանին խնդրում է այն անվավեր ճանաչել:

Դիմողը գտնում է, որ 2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները՝ ազատությունը, արդարությունը, հավասարությունը: Բացի դրանից, էական ազդեցություն է գործադրվել ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման վրա, համատարած խախտվել է քվեարկության գաղտնիության իրավունքը, ինչպես նաև քվեարկության իրավունք ունեցող անձանց ընտրելու իրավունքը:

Ըստ դիմողի՝ ընտրությունների գործընթացն անց է կացվել ՀՀ Սահմանադրության, միջազգային պայմանագրերի, գործող մի շարք օրենքների կոպիտ և բացահայտ խախտումներով, որոնք կրել են կազմակերպված, զանգվածային, պարբերական ու համակարգված բնույթ՝ էապես ազդելով ինչպես առանձին տարածքներում քվեարկության, այնպես էլ ընտրությունների արդյունքի վրա և բացառելով ժողովրդի ազատ կամաարտահայտությունը: Դիմողն ընդգծում է, որ այդ խախտումները կարող էին և ազդել են քվեարկության արդյունքների վրա, որի պատճառով հնարավոր չէ պարզել քվեարկության իրական արդյունքները:

Դիմողը գտնում է նաև, որ անգամ վերաքվեարկություն նշանակելու միջոցով հնարավոր չէ պարզել ընտրությունների իրական արդյունքները, հետևաբար՝ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն անհրաժեշտ է ճանաչել անվավեր: Որպես փաստարկներ դիմողը, մասնավորապես, նշում է պետական գործառույթների և կուսակցական շահերի միահյուսումը, բարձրաստիճան պաշտոնատար անձանց նախընտրական քարոզարշավին մասնակցությունը, ինչպես նաև դպրոցների և մանկապարտեզների տնօրենների՝ որպես հանրային ծառայողների, իրենց պաշտոնական դիրքի չարաշահման միջոցով հոգուտ Հանրապետական կուսակցության իրականացված գործողությունները, տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցների մասնակցությունը քարոզարշավին, ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման իրավունքի խախտումները, այդ թվում՝ «ընտրակաշառքի» զանգվածային



բաժանումը, քվեարկության գաղտնիության խախտումները, ընտրողներին ուղղորդելը և նրանց կուտակումները, քվեաթերթիկների դուրս/ներս բերելը կամ փորձը, ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ոչ իրավաչափ մասնակցությունը և միջամտությունն ընտրական հանձնաժողովների գործունեությանը, ընտրողների ստորագրված ցուցակների սկանավորված տարբերակների հրապարակման և դրանց մատչելիության հետ կապված խնդիրները, ընտրողների էլեկտրոնային գրանցման սարքավորումների հետ կապված խնդիրները, իրական ժամանակում տեղամասերից տեսանկարահանման և հեռարձակման բացակայությունը, քվեարկության ընթացքում քարոզչության դեպքերը, այլ անձի փոխարեն քվեարկության, դրա փորձի և/կամ այլ անձի փոխարեն ընտրացուցակներում ստորագրելու, քվեարկության ծրարներում տեղադրվող տարբեր գրառումներով թղթերի և տարբեր գույնի գրիչների կիրառման դեպքերը, քվեարկության արդյունքների ամփոփման կարգի խախտումն ու կեղծումը:

Դիմողը վերը նշվածները փաստելու համար ներկայացնում է, մասնավորապես, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների արձանագրած դեպքերը:

Դիմողն ընդգծում է նաև, որ ընտրողների կամքի ազատ ձևավորման և արտահայտման վրա ներգործության բազմաթիվ օրինակներ բարձրաձայնվել են ընտրության մասնակից սուբյեկտների կողմից, սակայն դրանք անտեսվել են համապատասխան կառույցների՝ իրավապահ մարմինների, ընտրական հանձնաժողովների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից, որի հետևանքով «նման դեպքերը ստեղծված անպատժելիության և թողտվության պայմաններում ավելի մեծ թափ են առել և դարձել անթաքույց և համատարած մասնավորապես քվեարկության օրը և դրան նախորդող օրերին»:

Դիմողը նշում է նաև, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովը չի գործել որպես անկողմնակալ և անաչառ մարմին և չի ապահովվել արտադատական կարգով իրավական պաշտպանության միջոցի իրավունքը:

5. Պատասխանող կողմը՝ առարկելով դիմողի փաստարկներին, գտնում է, որ 2017 թվականի ապրիլի 9-ի թիվ 163-Ս որոշումը կայացնելիս ղեկավարվել է ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներով:

Պատասխանող կողմը փաստում է, որ 2017 թվականի ապրիլի 7-ին ստացել է «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված դիմում՝ 2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքները և/կամ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին: Ըստ պատասխանողի՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-

ի թիվ 162-Ա որոշմամբ ամրագրվել է, որ հիշյալ դիմումը հիմնագուրկ է և դրանում վկայակոչված դատողությունները կամ հայտարարությունները չեն կարող հիմք հանդիսանալ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու համար: Փաստվում է նաև, որ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված դիմումին կից չի ներկայացվել որևէ պատշաճ ապացույց: Ավելին, «... դիմումատուի կողմից 1825 տեղամասերում նշանակված են եղել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, դիմումատուն հազարից ավելի տեղամասերում ունեցել է վստահված անձինք: Մակայն ներկայացված դիմումում առկա չէ որևէ նկատառում՝ արտահայտված նշված անձանց կողմից»:

Պատասխանող կողմն անդրադառնալով դիմողի այն կարծիքին, որ խախտվել են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի հիմնական սկզբունքները՝ ազատությունը, արդարությունը, հավասարությունը ու քվեարկության գաղտնիությունը, խաթարելով ընտրողների կամքի ազատ արտահայտությունը, պնդում է, որ այդ մտեցումը խիստ սուբյեկտիվ բնույթ է կրում, հիմնված է բացառապես դիմողի կամայական մեկնաբանությունների, իրականության հետ որևէ աղերս չունեցող դատողությունների վրա, իսկ իբրև ապացույց ներկայացված թղթակցություններից և որևէ մեկը չունի առաջնային նշանակություն, դրանք այլ անձանց դիտարկումների վերարտադրության արդյունք են:

Անդրադառնալով Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի իրավական հիմնավորումներին՝ պատասխանող կողմը նշում է, որ դիմող կողմը որևէ իրավանորմի խախտման վերաբերյալ կոնկրետ որևէ փաստարկ ու հիմնավորում չի ներկայացրել:

Պատասխանողը փաստում է նաև, որ ընտրական ցուցակներում ընդգրկված է եղել «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի 119 թեկնածու, հիշյալ դաշինքն ունեցել է 1688 վստահված անձ, 3 լիազոր ներկայացուցիչ՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովում, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովներում Հայ ազգային կոնգրեսի (ՀԱԿ) կողմից նշանակված են եղել 153 նախագահ, 152 քարտուղար և 1582 անդամ: Հիշյալ իրավասուբյեկտների անունից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումում առկա չէ որևէ փաստաթուղթ, որևէ վկայակոչում, որևէ խախտման փաստի արձանագրում, որևէ հատուկ կարծիք կամ որևէ դիմում-բողոք:

Ըստ պատասխանողի՝ միայն թվով 561 (կամ ընտրական տեղամասերի ընդհանուր թվի 27.9 տոկոսը) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում կատարվել են թվով 1487 գրառումներ՝ քվեարկության օրն արձանագրված ենթադրյալ խախտումների մասին, իսկ թվով 1448 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ: Թվով 2009 տեղամասերից միայն

46-ում (ընդհանուրի 2.2 տոկոսը) քվեարկության արդյունքների արձանագրություններում առկա է նշում հանձնաժողովի անդամի՝ հատուկ կարծիք ունենալու մասին: Տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 16.072 անդամներից միայն 46ն (ընդհանուրի 0.2 տոկոսը) են ներկայացրել հատուկ կարծիք, որոնցից ոչ մեկը ՀԱԿ-ի կողմից նշանակված անդամ չէ:

Պատասխանող կողմը նշում է նաև, որ 2017 թվականի ապրիլի 7-ին բոլոր 38 տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ «2017 թվականի ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ», որոնցով ամրագրվել է, որ 2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրություններում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 02.04.2017թ. արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Պատասխանող կողմը փաստում է, որ 2017 թվականի ապրիլի 2-ի ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում ՀՀ վարչական դատարան են ներկայացվել թվով 4 հայցադիմումներ: Առկա չէ որևէ դատական ակտ, որով փաստվել է անձանց ընտրական իրավունքների խախտում: Դատական ակտերով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները կամ գործողությունները ոչ իրավաչափ չեն ճանաչվել:

Պատասխանող կողմը գտնում է, որ չկան հանգամանքներ, որոնք ազդել են ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների արդյունքների վրա և խնդրում է Սահմանադրական դատարան ներկայացված դիմումը համարել ակնհայտ անհիմն և մերժել այն:

6. Որպես հարակից պատասխանող՝ ՀՀ դատախազությունը նշում է, որ ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում հնարավոր ընտրական իրավախախտումների վերաբերյալ մամուլի և զանգվածային լրատվության մյուս միջոցների հրապարակումների, քաղաքացիների հաղորդումների և ՀՀ գլխավոր դատախազության թեժ գծով ստացված ահազանգերի գրանցման, հաշվառման, ուսումնասիրման, ըստ ենթակայության ուղարկելու, քննարկելու և դրանց հիման վրա նախապատրաստվող նյութերի և հարուցված քրեական գործերի նախաքննության նկատմամբ դատախազական հսկողության արդյունավետությունը բարձրացնելու և այդ ոլորտում ՀՀ դատախազության գործունեությունը համակարգելու նպատակով ՀՀ գլխավոր

դատախազի կողմից 2017 թվականի հունվարի 20-ին ստեղծվել է աշխատանքային խումբ: Ըստ ՀՀ դատախազության տեղեկատվության՝ հիշյալ աշխատանքային խումբն իր տեսադաշտում է պահել առերևույթ ընտրական բնույթի հանցագործությունների վերաբերյալ հասանելի բոլոր հաղորդումները: Այդ հաղորդումներից յուրաքանչյուրի բովանդակությանը համարժեք ձեռնարկվել են օրենքով սահմանված բոլոր միջոցները, դրանց ստուգման գործընթացի նկատմամբ իրականացվել է ամենօրյա պատշաճ դատախազական հսկողություն: Ձեռնարկված միջոցների արդյունքում հարուցվել է 19 քրեական գործ, որոնցից 12-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի հատկանիշներով (մեկից ավելի անգամ կամ այլ անձի փոխարեն քվեարկելու փորձ), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154-րդ հոդվածի հատկանիշներով (քվեարկության գաղտնիությունը խախտելը), 3-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 149-րդ հոդվածի հատկանիշներով (լրագրողի լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը), 1-ը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով (թեկնածուների, կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների), հանրաքվեի քարոզչական նախաձեռնությունների կողմից ընտրողներին կաշառք տալը կամ ընտրողի ազատ կամքի իրականացմանը խոչընդոտելը): Մակայն այդ գործերը կազմում են հաղորդումների ընդհանուր թվի միայն շուրջ երկու տոկոսը:

ՀՀ քրեական օրենսգրքի 34-153-րդ հոդվածի և 149-րդ հոդվածի հատկանիշներով հարուցված քրեական գործերով 10 անձի մեղադրանք է առաջադրվել, 8 քրեական գործեր 21.04.2017թ. դրությամբ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել են ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարաններ, մեկ քրեական գործի վարույթը կարճվել է հանցակազմի բացակայության հիմքով:

ՀՀ դատախազությունը փաստում է, որ ուսումնասիրվել են դիմողի մատնանշած բոլոր հաղորդումները, որոնք վերաբերում են ՀՀ քրեական օրենսգրքի 154.2-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներին: Սահմանադրական դատարան ներկայացված օրինակների զգալի մասը նույնիսկ առերևույթ հանցագործության հատկանիշներ չի պարունակել: Հարակից պատասխանողը, բերված կոնկրետ փաստական նյութի հիման վրա հերքում է դիմողի պնդումներն ընտրական իրավունքի համատարած խախտումների վերաբերյալ:

7. Որպես հարակից պատասխանող ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունն առարկելով դիմողի փաստարկներին՝ ներկայացնում է, որ իրենց կողմից օրենքով սահմանված կարգով ուսումնասիրվել է առերևույթ ընտրախախտման յուրաքանչյուր հաղորդում, և մերժում է դիմողի հարցադրումները ՀՀ ոստիկանության կողմից հնարավոր անգործություն դրսևորելու վերաբերյալ:

ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը փաստում է, որ, մասնավորապես, 2017 թվականի ապրիլի 2-ից մինչև ապրիլի 20-ը ՀՀ ոստիկանությունում գրանցվել է ենթադրաբար քվեարկության օրը կատարված ընտրական իրավունքի դեմ ուղղված հանցագործությունների և վարչական իրավախախտումների, ընտրական գործընթացի հետ կապված բռնի հանցագործությունների մասին, ինչպես նաև ընտրություններին առնչվող այլ թվով 719 հաղորդում: Այդ հաղորդումներից 388-ը ստուգվել են որպես քրեական գործ հարուցելու առիթներ, որոնցից 286-ով նյութերն ուղարկվել են նախաքննության մարմին հետագա ընթացքը որոշելու համար, 91-ով քրեական գործի հարուցումը մերժվել է, 11-ը գտնվում է ստուգման փուլում: Մնացած 331 այլ հաղորդումները գրանցված են եղել ոչ որպես քրեական գործ հարուցելու առիթներ, ուստի ստուգվել են այլ ընթացակարգով:

Հարակից պատասխանողը հատկանշական է համարում այն փաստը, որ դիմող կողմի ներկայացուցիչը կասկածի տակ չդրեց ոչ ոստիկանությունում գրանցված իրավախախտումների թիվը և ոչ էլ դրանց քննության ենթարկված լինելու հանգամանքը:

8. Մույն գործի քննության շրջանակներում ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցերին.

ա/ ՀՀ Սահմանադրությամբ սահմանված լիազորության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դատավարական ընթացակարգերի շրջանակներում որո՞նք են ՀՀ սահմանադրական դատարանում պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշման հետ կապված վեճերի լուծման սահմանադրաիրավական առանձնահատկությունները,

բ/ դիմողի կողմից ի՞նչ բնույթի իրավական վեճ ու ապացուցողական նշանակություն ունեցող ինչպիսի փաստեր ու փաստարկներ են ներկայացվել ՀՀ սահմանադրական դատարան,

գ/ որքանո՞վ է Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումը համապատասխանում ՀՀ ընտրական օրենսգրքի 75-րդ հոդվածի 7-րդ մասի և 95-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

9. ՀՀ սահմանադրական դատարանն ընտրությունների արդյունքներով ծագած վեճերի վերաբերյալ իր նախորդ որոշումներում նույնպես ընդգծել է ընտրական գործընթացներում բողոքարկման հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ պահանջների պահպանման առանձնահատուկ կարևորությունը՝ տվյալ գործընթացի բոլոր փուլերում, որը կայուն իրավական նախադրյալ է ընտրական խախտված իրավունքները սահմանադրական արդարադատական կարգով պաշտպանելու

համար: Գործող իրավակարգավորումների շրջանակներում ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովի Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումները կարող են բողոքարկվել սահմանադրական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի այլ որոշումները, ինչպես նաև գործողությունները (անգործությունը) կարող են բողոքարկվել վարչական դատարան»: ՀՀ ընտրական օրենսգրքի 102-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ազգային ժողովի ընտրությունների արդյունքով սույն օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով, 97-րդ հոդվածի 4-րդ մասով, 99-րդ հոդվածով ընդունված որոշումների վիճարկման մասին դիմումներ սահմանադրական դատարան կարող են ներկայացվել համապատասխան որոշման հրապարակման օրվանից հետո 5-րդ օրը մինչև ժամը 18.00-ն»: Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սույն օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետում ամփոփում է ընտրությունների արդյունքները և ընդունում հետևյալ որոշումներից մեկը.

- 1) Ազգային ժողով ընտրվելու և մանդատների բաշխման մասին.
- 2) Ազգային ժողովի պատգամավորների մանդատների նախնական բաշխման մասին.
- 3) առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն նշանակելու մասին.
- 4) Ազգային ժողովի ընտրություններն անվավեր ճանաչելու և ընտրությունների վերաքվեարկություն նշանակելու մասին.
- 5) Ազգային ժողովի ընտրությունների վերաքվեարկությունն անվավեր ճանաչելու մասին: Այդ դեպքում Հանրապետության նախագահը նշանակում է Ազգային ժողովի նոր հերթական ընտրություն»:

ՀՀ ընտրական օրենսգրքով նախատեսված վերոհիշյալ իրավակարգավորումներից և ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված պահանջից հետևում է, որ.

ա/ ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտները պարտավոր են օրենքով սահմանված ժամկետներում և կարգով իրականացնել ընտրական իրավունքի պաշտպանությանն ուղղված միջոցներն այն դատարանում, որն ունի համապատասխան իրավագործություն,

բ/ հաշվի առնեն, որ ընտրական իրավունքի դատական պաշտպանության հարցերով ՀՀ սահմանադրական դատարանը ոչ թե այլ դատարանների նկատմամբ վերադաս դատարան է, այլ իրականացնում է ՀՀ Սահմանադրությամբ իրեն վերապահված կոնկրետ լիազորություն և Սահմանադրական դատարանի վրա նույնպես տարածվում է ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 6-րդ հոդվածի 1-ին մասի պա-

հանջը: ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով Սահմանադրական դատարանն իրավասու չէ քննության առարկա դարձնել բոլոր այն հարցերը (դիմումները), որոնք նախապես քննության պետք է առնվեն և իրավական լուծում ստանան վարչական (արտադատական) կարգով կամ ՀՀ վարչական դատարանում, որի որոշումներն այդ հարցերում վերջնական են,

զ/ ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը չեն կարող դիտարկվել որպես իրավական նորմի սահմանադրականության վերաբերյալ վեճեր, քանի որ վերջիններիս լուծման համար սահմանադրաիրավական այլ պահանջներ ու ընթացակարգեր են նախատեսված:

ՀՀ սահմանադրական դատարանն իր որոշումներում (մասնավորապես ՄԴՌ-1028) նաև բազմիցս շեշտել ու ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտներին պարզաբանել է, որ ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ գործող 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի պահանջներին համապատասխան ընտրությունների արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշման հետ կապված վեճերով **Սահմանադրական դատարանը պարզում է՝ արդյո՞ք սովյալ որոշման ընդունման ժամանակ իրավական անհրաժեշտ հիմնավորմամբ են առկա եղել ու հաշվի առնվել.**

ա/ քվեարկության արդյունքների վերաբերյալ օրենքով սահմանված կարգով կազմված արձանագրությունը,

բ/ իրավասու դատարանների ընտրական գործընթացին առնչվող ակտերը,

գ/ ընտրական հանձնաժողովներում ստացված դիմումների (բողոքների) քննարկման արդյունքներով ընդունված որոշումները,

դ/ տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ տարածքային ընտրական հանձնաժողովների որոշումները,

ե/ քվեարկության արդյունքների վերաբերյալ ընտրական հանձնաժողովների ընդունած որոշումները:

Սահմանադրական դատարանի խնդիրն է գնահատել, թե իրավական նշանակություն ունեցող վերոթվարկյալ փաստական հանգամանքներն ինչպես են հաշվի առնվել ընտրությունների արդյունքներն ամփոփելիս և արդյունքում՝ որքանո՞վ է իրավաչափ ընտրությունների արդյունքներով ընդունված ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ Սահմանադրական դատարանում վեճի առարկա որոշումը՝ դիմողին առնչվող հարցերով (համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի): Դա ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի պահան-

ջն ու Հայաստանի Հանրապետությունում ընտրական իրավունքի դատական պաշտպանության առանձնահատկություններից է: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 94-րդ հոդվածը սահմանում է, որ՝ «Սահմանադրական դատարանի լիազորություններն ու կազմավորման կարգը սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ գործունեության կարգը սահմանվում է Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով»:

Սահմանադրական դատարանը գտնում է նաև, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով առավել հստակ պետք է սահմանվեն ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 168-րդ հոդվածի 5-րդ կետով նախատեսված գործերի քննության առանձնահատկությունները՝ ընդհուպ սահմանելով վեճի առարկա ակտի սահմանադրականության գնահատման ընթացակարգ:

10. Ընտրական գործընթացներում առավել հաճախ քննարկման ու վեճի առարկա հարցերից է վարչական ռեսուրսների հնարավոր չարաշահումը, ինչին առաջին հերթին անդրադառնում է նաև դիմողը:

Այս խնդրի առնչությամբ տարատեսակ հայեցողական մոտեցումներից խուսափելու համար Սահմանադրական դատարանը կարևոր է համարում Եվրոպայի խորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի /Վենետիկի հանձնաժողով/ և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի մոտեցումները հիմք ընդունելը: Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահմանն առնչվող Վենետիկի հանձնաժողովի 2013թ. CDL-AD(2013)033 զեկույցում վարչական ռեսուրսը բնութագրվում է որպես ընտրությունների ընթացքում գործող պաշտոնատար անձանց, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների՝ մարդկային, ֆինանսական, նյութական և այլ ռեսուրսները, հանրային զանգվածային լրատվության միջոցների նկատմամբ նրանց ունեցած վերահսկողության հանգամանքը, ինչպես նաև իրենց դիրքով պայմանավորված՝ հանրային օբյեկտների և ռեսուրսների նկատմամբ ունեցած հասանելիությունը, ինչը կարող է վերածվել քաղաքական կամ այլ ձևաչափի աջակցության:

Նման մոտեցումը տեղ է գտել նաև «Ընտրական գործընթացների ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահումը կանխելու և դրան արձագանքելու վերաբերյալ» Վենետիկի հանձնաժողովի և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ՝ 2016թ. ընդունված համատեղ ուղեցույցում /<http://www.osce.org/odihr/elections/227506?download=true/>: Վերջինս, մասնավորապես, պահանջում է, որ իրավական կարգավորումները պետք է հստակ պահանջներ նախատեսեն քաղաքացիական ծառայողների համար, այն է՝ ընտրական գործընթացների ամբողջ ընթացքում իրենց պաշտոնական պարտականություններն իրականացնելիս գործել անաչառ: Բացի դրանից, իրավական կարգավորումները պետք է երաշխավորեն քաղաքացիական ծառայութ-



յան չեզոքություն՝ արգելելով քաղաքացիական ծառայողներին քարոզչական գործունեություն իրականացնել իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս՝ ինչպես այն դեպքում, երբ իրենք թեկնածու են հանդիսանում, այնպես էլ այն դեպքում, երբ աջակցում են թեկնածուներին: Միաժամանակ, իրավական կարգավորումները պետք է հստակ նորմեր նախատեսեն այն մասին, թե ինչպես և երբ կարող է քարոզչություն իրականացվել, ինչպես նաև ընտրություններին մասնակցող որոշակի պաշտոնատար անձանց լիազորությունների կասեցման կամ հրաժարականի ներկայացման հնարավորություն նախատեսեն:

Ուղեցույցը, միևնույն ժամանակ, չի բացառում պաշտոնատար անձ թեկնածուների կողմից ընտրություններին մասնակցելու և քարոզչություն իրականացնելու հնարավորությունն աշխատանքային ժամերից դուրս և առանց վարչական ռեսուրսների չարաշահման:

ՀՀ ընտրական օրենսգրքի՝ «Նախընտրական քարոզչությունը» վերտառությամբ 4-րդ գլխում սահմանված են ինչպես նախընտրական քարոզչության հիմնական սկզբունքները, այնպես էլ, ի թիվս այլ պայմանների, հանրային ծառայող հանդիսացող թեկնածուների նախընտրական քարոզչության սահմանափակումները /հոդվ. 23/: Բացի դրանից, ՀՀ ընտրական օրենսգրքի 91-րդ հոդվածի 2-րդ մասն իր հերթին սահմանում է, որ. «Հանրային ծառայող հանդիսացող պատգամավորի թեկնածուներն իրավունք չունեն օգտագործելու իրենց պաշտոնեական կամ ծառայողական դիրքի առավելությունները: Հանրային ծառայողներ հանդիսացող պատգամավորի թեկնածուները **(բացառությամբ Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորների և կառավարության անդամների)** սույն օրենսգրքով սահմանված նախընտրական քարոզչության պաշտոնական մեկնարկի օրվանից մինչև քվեարկության օրն օրենքի ուժով ազատվում են իրենց ծառայողական պարտականությունների կատարումից: Այդ ժամանակահատվածում նշված թեկնածուների բացակայությունն աշխատանքից համարվում է հարգելի՝ առանց վարձատրության պահպանման»: ՀՀ ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով արգելվում է նախընտրական քարոզչություն կատարել և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ինչպես նաև պետական և համայնքային ծառայողներին (բացառությամբ Ազգային ժողովի պատգամավորների), ուսումնական հաստատությունների մանկավարժական կազմի աշխատողներին **իրենց լիազորություններն իրականացնելիս:**

Միաժամանակ, ՀՀ ընտրական օրենսգրքը սահմանել է նաև նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումների դեպքում վարչական կամ դատական կարգով խնդրի լուծման համապատասխան ընթացակարգեր: Սահմանադրական դատարանը բազմիցս անդրադառ-

նալով այս խնդրին՝ շեշտել է, որ նման ընթացակարգերը, որոնք անմիջականորեն առնչվում են ընտրություններին մասնակցող պատգամավորի թեկնածուների կամ կուսակցությունների ընտրական ցուցակի գրանցումն ուժը կորցրած ճանաչելու խնդրին, պետք է օրենքով սահմանված կարգով բողոքարկվեն և լուծույժ ստանան մինչև քվեարկության օրը:

Սույն գործի քննությունը վկայեց, որ դիմողն օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում տվյալ խնդրի առնչությամբ որևէ իրավաչափ գործողություն չի իրականացրել և գործում առկա չէ ապացուցողական նշանակություն ունեցող որևէ փաստական հիմք /մասնավորապես՝ դատական ակտ/ հակառակը վկայելու կամ այդ հարցով դիմողի իրավունքների պաշտպանությանը խոչընդոտելու մասին: Նման բնույթի ենթադրյալ խախտումներն իրավասու մարմինների կողմից օրենքով սահմանված կարգով համարժեք իրավական գնահատական պետք է ստանան, մասնավորապես նաև այն գործերով, որոնք դեռևս քննության առարկա են իրավապահ մարմինների կողմից:

11. Հաշվի առնելով, որ դիմողը քննության առարկա վեճի հիմքում իրավափաստական հանգամանքների փոխարեն ներկայացրել է հիմնականում տեղական առանձին դիտորդական նախաձեռնության դիտարկումների արդյունքները, ինչպես նաև այն, որ 2017թ. ապրիլի 2-ի Ազգային ժողովի ընտրություններում դիտորդական առաքելություն են իրականացրել աննախադեպ մեծ թվով միջազգային դիտորդներ /ընդհանուր թվով 650 դիտորդ/, ովքեր դիտարկում են իրականացրել ընտրական տեղամասերի ավելի քան 70 տոկոսը կազմող տեղամասերում, Մահմանադրական դատարանը կարևորում է՝ նախ ներկայացնել ընտրական գործընթացների առնչությամբ հատկապես ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և Եվրոպայի խորհրդի ու Եվրոպական միության անդամ երկրների դիտորդների, ինչպես նաև Հայաստանում հավատարմագրված միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների ընդհանրացված ու անաչառ որոշ գնահատականներ, մասնավորապես՝

- ընտրությունները եղել են լավ կազմակերպված,
- ընտրության արդյունքները հիմնականում արտացոլում են ժողովրդի իրական կամաարտահայտությունը,
- ընդհանուր առմամբ պահպանվել ու հարզվել են հիմնարար քաղաքական ազատությունները, մասնավորապես՝ հավաքների ազատությունը, խոսքի ազատությունը,
- Հայաստանում չկա որևէ թեկնածուի կամ քաղաքական կուսակցության առաջադրմանը խոչընդոտող վարչական կամ դատական ընթացակարգ: Տարածաշրջանի, ինչպես նաև եվրոպական լայն տարածքի որոշ երկրների հետ համեմատած դա լավ օրինակ է,
- յուրաքանչյուր քաղաքական կուսակցություն կամ կուսակցություն-

ների դաշինք հնարավորություն է ունեցել ՁԼՄ-ների միջոցով ընտրողին փոխանցել իր «ուղերձը»,

- որևէ կուսակցության նկատմամբ չեն կիրառվել ընտրական հավաքները խոչընդոտելու միջոցառումներ,

- ընտրացուցակների ճշգրտությունը բարելավվել է, այլ անձի փոխարեն և կրկնաքվեարկությունները հիմնականում բացառվել են,

- նոր տեխնոլոգիաները, մասնավորապես՝ ընտրողների նույնականացման սարքավորումները, լավ են աշխատել: Ապահովվել է թափանցիկության, քվեարկության գաղտնիության և անանունության պահպանման աննախադեպ բարձր մակարդակ: Շնորհիվ նոր տեխնոլոգիաների՝ զգալիորեն պակասել են անցյալի որոշ վատ դրսևորումներ: Խոսքը վերաբերում է բազմակի քվեարկությանը, լիազորագրով քվեարկությանը և, այսպես կոչված, կարուսելային քվեարկությանը:

**ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործի քննության շրջանակներում դիմողի կողմից բերված փաստարկներն ընդհանրական այս գնահատականների բնույթի ու բովանդակության էական փոփոխության կամ դրանք կասկածի տակ առնելու իրավական հիմքեր չեն տալիս:**

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորում է նաև դիմողի և միջազգային ու տեղական դիտորդական առաքելությունների կողմից բարձրացված մի շարք մտահոգիչ հանգամանքներ:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության հանրային իշխանությունների առաջնահերթ խնդիրն է հաղթահարել այն մտահոգությունները, որոնք հայտնեցին միջազգային և տեղական դիտորդական առաքելությունները, մասնավորապես՝ ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի դրսևորումների առնչությամբ: Ընդհուպ եվրոպական փորձագետների և պաշտոնյաների անունից հնչեցվեց, որ քաղաքական կոռուպցիան անհարիր է իրավունքի գերակայության սկզբունքը որդեգրած երկրի ժողովրդավարական զարգացումներին և երկրի ազգային անվտանգության սպառնալիք է: Դրա արմատախիլ անելը պետական քաղաքականության և երկրի իրավական անվտանգության ամրապնդման օրակարգի առաջնահերթություն պետք է դիտվի: Խնդրի լուծումը համալիր մոտեցում է պահանջում, այդ թվում՝ ՀՀ ընտրական օրենսգրքի ու ընտրակարգի հետագա բարեփոխումների ճանապարհով, որով հնարավոր կլինի հաղթահարել ընտրական գործընթացում քաղաքական կոռուպցիայի հնարավոր դրսևորման իրավական ռիսկերը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ խնդրի արմատական լուծումը պահանջում է առավել ակտիվ ու հետևողական քայլերի իրականացում տնտեսական, վարչական և քաղաքական ներուժի

սերտաճումը հաղթահարելու, «գործատու-վարձու աշխատող» փոխհարաբերություններն իրավունքի գերակայության սկզբունքի պահանջներին համապատասխան որակապես նոր աստիճանի բարձրացնելու և այդ փոխհարաբերություններում վարձու աշխատողին լիարժեք ու իրավական առումով հուսալիորեն պաշտպանված իրավասուբյեկտ դարձնելու, ընտրական գործընթացի բոլոր փուլերում քաղաքական ու գործարար շահերի միահյուսման հնարավորությունը հաղթահարելու ուղղությամբ: Դրանց վրա իր որոշումներում ու տարեկան հաղորդումներում բազմիցս հատուկ ուշադրություն է հրավիրել ՀՀ սահմանադրական դատարանը: Մասնավորապես, ՀՀ սահմանադրական դատարանն իր 10.06.2007թ. ՄԴՈ-703, 08.03.2008թ. ՄԴՈ-736, 14.03.2013թ. ՄԴՈ-1077 որոշումներում արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի իրավական պետության համար ելակետայինն ընտրական գործընթացներում հասարակության քաղաքական շահերի գերակայության օրենսդրական ու կառուցակարգային այնպիսի երաշխիքների ապահովումն է, որը «... կբացառի առաջնային մանդատով օժտված իշխանության ներկայացուցչական մարմինների ձևավորման գործում քաղաքական և գործարար շահերի անմիջական միահյուսման որևէ հնարավորություն»: Հայաստանի քաղաքական համակարգի համար այս խնդրի լուծումը շարունակում է հրատապ մնալ, մասնավորապես պահանջելով նաև օրենսդրական առավել հստակ կարգավորում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ լուրջ ուշադրության առարկա պետք է դառնան նաև դիմողի և դիտորդական առաքելությունների արտահայտած այն մտահոգությունները, որոնք վերաբերում են բաց քվեարկության, խմբային քվեարկության, ուղղորդված քվեարկության դեպքերին և ընտրող կամ դիտորդ չհանդիսացող այլ անձանց ներկայությունը տեղամասերում, ինչպես նաև հանրային պաշտոնյաների կամ նույնիսկ մասնավոր ընկերությունների կողմից տեղ գտած ճնշումներին: Հավասարապես կարևոր է նաև նման բոլոր դեպքերով օրենքով նախատեսված կարգով ընտրական իրավունքի պաշտպանության գործընթացի նախաձեռնումը, որով նաև սահմանադրաիրավական անհրաժեշտ ու լիարժեք նախադրյալներ կատեղծվեն Սահմանադրական դատարանում ընտրության արդյունքների արդյունավետ քննության և գնահատման համար:

Մասնավորապես՝ դիմողի կողմից դիմումին կից ներկայացված նյութերը վկայում են, որ «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների կողմից խմբակային և ուղղորդված քվեարկության դեպք է արձանագրվել թվով 88 ընտրական տեղամասերում, ինչը կազմում է ընտրական տեղամասերի ընդհանուր թվի 4.4 տոկոսը, բաց քվեարկության դեպք՝ թվով 8 տեղամասերի առնչությամբ /0.4%/, ընտրող կամ դիտորդ չհան-

դիսացող այլ անձանց ներկայություն տեղամասում՝ 27 /1.3%/, քվեարկության գաղտնիության խախտում՝ 177 /8.8%/, կուտակումներ՝ 44 /2.1%/, տեխնիկական սարքավորումների խափանում՝ 129 դեպք /6.4%/:

Ըստ գործի նյութերի՝ թվով 217 դիտորդների կողմից, ինչը կազմում է «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտորդների ընդհանուր թվի մոտ 5 տոկոսը, արձանագրված տարբեր իրավախախտումներ գրանցվել են տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում /շուրջ 190 դեպք/, 17 փաստով առկա են լուսանկարներ կամ տեսագրություններ, 9 փաստով կազմվել է արձանագրություն:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ որքան էլ որ դիմողի կողմից ներկայացված այդ դեպքերը, թեկուզ և ամբողջությամբ, չգնահատվեն որպես հավաստի, ինչը պնդեցին քննության առարկա գործով պատասխանող և հարակից պատասխանող կողմերը, միաժամանակ՝ թիվ 10/03 ընտրական տեղամասի առնչությամբ դիմողի ներկայացուցչի պնդումները «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 10-րդ մասի հիմքով գնահատելով հավաստի, այնուամենայնիվ, դրանք ընտրական տեղամասերի 5-7 տոկոսին վերաբերելով հանդերձ, միևնույն է, նվազեցնում են հանրային վստահությունն ընտրական գործընթացի ու սահմանադրական բարեփոխումների արդյունքում երկրում ժողովրդավարական զարգացումների ուղղությամբ ձեռնարկված հետևողական քայլերի առնչությամբ: Ուստի ոչ մի ընտրախախտում չպետք է անուշադրության մատնվի: Խնդիրը պետք է վերաբերի դրանց իսպառ վերացմանը, իրավախախտների նկատմամբ օրենքով նախատեսված պատասխանատվության անխուսափելիությանը և դրանց հետ կապված՝ հնարավոր շահարկումների հաղթահարմանը:

12. Գործի քննության արդյունքներով Մահմանադրական դատարանը նաև արձանագրում է, որ ընտրական գործընթացում առկա խնդիրների բացահայտման ու դրանց նկատմամբ հանրային անհանդուրժողական մթնոլորտ ձևավորելու առումով առավել հետևողական են գործել քաղաքացիական հասարակության ինստիտուտները: Ըստ ԿԸՀ կողմից ներկայացված տեղեկատվության՝ Հայաստանի Հանրապետությունից թվով 49 հասարակական կազմակերպություն սահմանված կարգով գրանցվել և դիտորդական առաքելություն է իրականացրել՝ ներգրավելով ընդհանուր թվով ավելի քան 28 հազար դիտորդ: Միայն «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնությունը, որի դիտարկումներն են հիմնականում դրվել Մահմանադրական դատարան ներկայացված դիմումի հիմքում, ներգրավել է 4400-ից ավելի դիտորդ, ինչը կազմում է հասարակական կազմակերպությունների՝ սահմանված կարգով գրանցված դիտորդների ընդհանուր թվի 15.8 տոկոսը: Նրանցից, ըստ գործի նյութերի, «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության շուրջ 580 դիտորդի /ընդհանուր թվի 13.2 տոկոս/ կողմից

են ներկայացվել տարբեր տեղեկություններ շուրջ 500 ընտրական տեղամասերի առնչությամբ:

Անկախ նրանից, որ քննության առարկա վեճի իրավական բնույթի առումով քաղաքացիական հասարակության դիտորդների դիտարկումներն ինքնին ապացուցողական նշանակություն չունեն /քանի դեռ չեն հաստատվել բողոքարկման՝ օրենքով նախատեսված ընթացակարգերի արդյունքում/, այդուհանդերձ, միայն նրանց ու լրատվամիջոցների օգնությամբ է հնարավոր եղել բացահայտել Հայաստանի Հանրապետությունում ընտրական գործընթացում դեռևս առկա որոշակի բացերն ու խնդիրները:

Ակնհայտ է նաև, որ անբավարար են քաղաքական ուժերի, մասնավորապես՝ Սահմանադրական դատարան դիմած կուսակցությունների դաշինքի կողմից օրենքով իրենց վերապահված իրավական լծակների գործադրումը՝ իրենց ընտրական իրավունքի պաշտպանության հարցում: ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ գործող ընտրական օրենսգիրքն այս հարցում քաղաքական ուժերին առավել լայն հնարավորություններով է օժտել: **Դրանց իրավաչափ գործադրումը ոչ միայն իրավունք, այլև պարտականություն է:** Մինչդեռ ՀՀ սահմանադրական դատարան սույն գործով դիմած կուսակցությունների դաշինքն ընտրական գործընթացներում ունեցել է կոնկրետ իրավասուբյեկտների քանակական լուրջ ընդգրկվածություն: 2009 ընտրական տեղամասերում դաշինքի մաս կազմող ՀԱԿ-ը տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակել է 1582 հանձնաժողովի անդամ, 305 հանձնաժողովի նախագահ կամ քարտուղար /ընդգրկելով ընտրական տեղամասերի շուրջ 94 տոկոսը/: Դաշինքն ունեցել է նաև թվով 1688 վստահված անձ: Ըստ գործի նյութերի՝ նրանք օրենքով նախատեսված կարգով ու ժամկետներում գրեթե որևէ իրավական գործընթաց չեն ձեռնարկել իրենց իսկ դիմումում ներկայացվող բացասական դրսևորումների դեմ իրավական պայքար ծավալելու ուղղությամբ:

ՀՀ ընտրական օրենսգիրքը նախատեսել է հնարավոր ընտրախախտումների բացահայտման ու բողոքարկման որոշակի ընթացակարգ՝ հաշվի առնելով, որ այդ գործընթացը սահմանափակված է ժամանակի մեջ, ինչպես նաև հստակեցված է այդ հարցում ընտրական գործընթացին բոլոր մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները: Մասնավորապես, ՀՀ ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանվում է, որ. «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված

թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին»:

Բացի դրանից, նույն հոդվածի 14-րդ մասով սահմանված է, որ «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն»:

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված տեղեկատվության համաձայն ընտրական գործընթացին մասնակցել են տեղամասային ընտրական հանձնաժողովների 11932 անդամ, նախագահ ու քարտուղար, ինչպես նաև 22416 վստահված անձ: Դրանց կողմից օրենքի պահանջներին համապատասխան ապացուցողական նշանակություն ունեցող նյութերը դիմողի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված փաստերի մեկ տոկոսն էլ չեն կազմում: Ուստի ընտրական գործընթացի արդյունքներով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդունած որոշման հետ կապված վեճը քննելիս Սահմանադրական դատարանն իրավասու չէ ստանձնել քաղաքական ուժերի կողմից ընտրական գործընթացին մասնակցող ավելի քան 34000 կոնկրետ իրավասուբյեկտների հնարավոր չիրացված գործառույթների իրականացումը:

Որքան էլ որ դիմող կողմը պնդի, թե այս հանգամանքի վրա ուշադրություն դարձնելը ձևական մոտեցում է, այսուամենայնիվ, սա է օրենքի պահանջը, և այն անտեսելը գրկում է ընտրական գործընթացի մասնակցին իր իրավունքների արդյունավետ պաշտպանությունից: Միաժամանակ, եթե նախկին իրավակարգավորումների պարագայում ընտրական վեճի նախաձեռնողները հիմնական խոչընդոտը համարում էին քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակների հրապարակման արգելքը, ապա ներկա քննության առարկա դիմումի շրջանակներում հիմնական պահանջը բոլոր ընտրական տեղամասերում ամբողջական տեսագրումների հատուկ ստուգումների կազմակերպումն է, ինչը ՀՀ ընտրական օրենսգրքի առկա իրավակարգավորումների շրջանակներում Սահմանադրական դատարանը համարում է բավարար չափով չհիմնավորված պահանջ:

Այսուհանդերձ, փաստն այն է, որ, համաձայն գործի նյութերի, ՀՀ սահմանադրական դատարանն դիմած կուսակցությունների դաշինքի անդամ

ՀԱԿ-ի կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 94 տոկոսում նշանակված բոլոր անդամները, առանց բացառության, ստորագրել են քվեարկության արդյունքների վերաբերյալ բոլոր արձանագրությունները ըստ էության վավերացնելով այդ ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների հավաստիությունը: Նրանք չեն ներկայացրել որևէ հատուկ կարծիք: Չեն վիճարկել որևէ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները: Ըստ գործի նյութերի՝ ընտրախախտումներ չեն արձանագրել նաև դաշինքի 1668 վստահված անձանցից 1667-ը: Դաշինքի կողմից դատական կարգով որևէ բողոք չի ներկայացվել:

**Այս իրողությունն աննախադեպ է ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև, թերևս, համապետական ընտրությունների միջազգային պրակտիկայում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման իրավիճակներում Սահմանադրական դատարանում իրավական վեճի նախաձեռնումը ոչ թե ընտրական իրավունքի պաշտպանության խնդիր է հետապնդում, այլ դառնում է ինքնանպատակ ու քաղաքական շահարկումների տեղիք է տալիս:**

Ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումը Սահմանադրական դատարանում վիճարկելու ժամանակ, երբ բացակայում են ընտրակեղծիքի վերաբերյալ օրենքով սահմանված կարգով ու դատական անհրաժեշտ ընթացակարգերով հիմնավորված ապացույցներ ու առկա են տեղամասային ընտրական հանձնաժողովների՝ դիմողի /ՀԱԿ-ի/ նշանակված անդամների կողմից քվեարկության արդյունքների միակարծությամբ վավերացված արձանագրություններ, բացառապես դիտորդների կողմից առերևույթ խախտում բնութագրվող գրառումների հիման վրա հնարավոր չէ արձանագրել ընտրության արդյունքները վիճարկողի իրավունքների խախտման փաստը: Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, մասնավորապես նշելով, որ՝ «...դատարանը չի կարող արձանագրել Թիվ 1 արձանագրության 3-րդ հոդվածի խախտում բացառապես արտաքուստ հիմնավոր բողոքների հիման վրա» (Georgian Labour Party v. Georgia, 9103/04; 08.10.2008; §109-110):

ՄԻԵԴ-ն իր նախադեպային իրավունքում կարևորել է նաև ընտրական օրենսդրության կիրառման հիմնավորվածության և օրինականության նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտի օգտագործումը, գտնելով, որ ընտրական վեճերով դիմումատուի փաստարկների քննությունը դատարանների կողմից կարող էին մեծ նշանակություն ունենալ (Grosaru v. Romania; 78039/01; 02.03.2010; §22,56; Babenko v. Ukraine; 43476/98; dec. 04.05.1999):

ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ընտրական գործընթացների իրավակարգավորման վերջին փոփոխությունները Հա-



յաստանում կարևոր անդրադարձ ունեցան նաև ընտրական իրավունքի դատական պաշտպանության ոլորտում, ինչը, սակայն, դեռևս պատշաճ ձևով չի ընկալվել ու իրացվել ընտրական գործընթացին մասնակից իրավասուբյեկտների կողմից: Օրենքով նախատեսված հնարավորությունների արդյունավետ օգտագործման փոխարեն ընդհանուր բնույթի դատողություններով ու քաղաքական մեղադրանքների ոճով դատական գործընթաց նախաձեռնելն արդյունավետ ճանապարհը չէ քաղաքական ուժի ընտրական իրավունքի պաշտպանության հարցում:

13. Մահմանադրական դատարանը նաև գտնում է, որ չնայած ՀՀ նոր ընտրական օրենսգիրքն ընդունվեց քաղաքական լայն փոխհամաձայնության պայմաններում՝ գործնականում ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների ձայների 3/4-ից ավելիի մեծամասնությամբ, այսուհանդերձ, դրանում տեղ գտած առանձին լուծումներ լիարժեք չեն իրացնում իրավական որոշակիության սկզբունքի սահմանադրական պահանջը և լայն հայեցողության հնարավորություն են թողնում: Մասնավորապես, դավերաբերում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու ինստիտուտի ոչ բավարար հստակությամբ իրավակարգավորմանը, Ազգային ժողովի ընտրված լինելու, պատգամավորներին մանդատների հանձնման և առաջին նստաշրջանի գումարման ժամկետների հստակեցմանը, ինչը հայեցողական մեկնաբանությունների առարկա է դարձել, ինչպես նաև կուսակցությունների համապետական և տարածքային ընտրական ցուցակներով առաջադրված պատգամավորի թեկնածուներից ընտրության արդյունքներով պատգամավորական մանդատ ստանալու հարցում հնարավոր քաղաքական հայեցողության հետագա դրսևորումների բացառմանը: Հետագա բարելավման անհրաժեշտություն ունի նաև վարչական վարույթների իրականացման ու ընտրատարածքային ընտրական հանձնաժողովների կողմից բողոքներին սահմանված կարգով ու ժամկետներում ընթացք տալու համակարգը:

14. Սույն գործով դատաքննության շրջանակներում ընդհանրացնելով անդրադարձը դիմողի կողմից ներկայացված փաստարկներին՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմումին կից ներկայացված փաստարկները, գրեթե առանց բացառության, վերցված են զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներից և «Քաղաքացի դիտորդ» նախաձեռնության դիտարկումների արդյունքներից: Դատաքննության ընթացքում հավելյալ ներկայացվեցին նաև հասարակական այլ կազմակերպությունների դիտարկումներ: «Մահմանադրական դատարանի մա- սին» ՀՀ օրենքի 51-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է, որ «Փաստերի վերաբերյալ կողմերի բացատրություններում ներկայացվող տեղեկությունները ապացուցողական նշանակություն չունեն»: Դրանք պետք է օրենքով նախատեսված իրավական գործընթացի արդյունքում ձեռք բերեն նման նշանակություն:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն, ի թիվս այլնի, ապացուցողական նշանակություն ունեցող տեղեկություն է նաև իրավասու պետական մարմիններից ստացված պաշտոնական տեղեկանքներում ներկայացված տեղեկությունը:

Հաշվի առնելով, որ ՀՀ դատախազությունը և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը պարտավոր են օրենքով սահմանված կարգով ապահովել և պաշտպանել ընտրական իրավունքները, Սահմանադրական դատարանն այդ պետական մարմինների, որպես սույն գործով հարակից պատասխանողների, ներկայացրած նյութերի և դատաքննության ընթացքում տրված բացատրությունների հիման վրա փաստում է, որ.

Ա/ ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությունը ՀՀ Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության փուլում ստացել է ընտրական իրավունքի խախտումներին առնչվող թվով 64 հաղորդում, որոնցից 56-ի ստուգումների արդյունքներով իրավախախտման դեպքեր չեն հայտնաբերվել: Հաղորդումներից թվով 36-ը ՁԼՄ-ների հրապարակումներից են, 21-ը ստացվել են կուսակցություններից, կուսակցությունների դաշինքներից և վստահված անձանցից, 5-ը՝ քաղաքացիներից, 2-ը՝ ոստիկանության ծառայողներից: **«Կոնգրես-ՀՃԿ» կուսակցությունների դաշինքից որևէ հաղորդում չի ստացվել:** Միաժամանակ, ապրիլի 2-ից մինչև ապրիլի 20-ը ոստիկանությունում գրանցվել է թվով 719 հաղորդում: Դրանցից 364-ը ՁԼՄ-ների հրապարակումներ են, 221-ը ստացվել են ոստիկանության ծառայողներից, 80-ը՝ քաղաքացիներից, 20-ը՝ ընտրական հանձնաժողովներից, 16-ը՝ կուսակցությունների դաշինքներից, կուսակցություններից և վստահված անձանցից, 14-ը՝ պետական մարմիններից, 4-ը՝ դիտորդներից: Ընդհանուր հաղորդումներից 299-ով ստուգումների արդյունքում իրավախախտման դեպքեր չեն հայտնաբերվել, մնացածով օրենքով սահմանված գործողությունների իրականացումը շարունակվում է: Երկու հաղորդում ներկայացվել է ՀԱԿ-ի կողմից: Դրանցից մեկով ՀԱԿ-ի ներկայացուցիչը 02.04.2017թ. ժամը 08.55 թիվ 6/26 ընտրական տեղամասից գանգահարել է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Մաշտոցի բաժին և հայտնել, որ ընտրական տեղամասում ոստիկան չկա, ինչն ստուգմամբ չի հիմնավորվել: Երկրորդ դեպքը վերաբերել է թիվ 35/56 ընտրական տեղամասում քվեատուփը դռանը մոտ տեղակայված լինելու ու խմբակային քվեարկության մասին հաղորդմանը, ինչը նույնպես ստուգմամբ չի հիմնավորվել:

Բ/ Համաձայն ՀՀ սահմանադրական դատարան ներկայացրած ՀՀ դատախազության տեղեկանքի՝ «Ինչպես ընտրությունների նախապատրաստման, այնպես էլ՝ քվեարկության օրվա ընթացքում հրապարակված

ընտրական իրավախախտումների վերաբերյալ հաղորդումների ուսումնասիրությունը վկայում էր, որ դրանց ճնշող մեծամասնությունը կրել են ընդհանուր, վերացական բնույթ կամ վերաբերել են նախընտրական քարոզչության սահմանված կարգի խախտումներին, քվեարկության կազմակերպմանը վերաբերող տեխնիկական բնույթի խնդիրներին»: Չանգվածային լրատվամիջոցների հրապարակումներից առանձնացվել են առերևույթ ընտրական բնույթի հանցագործության հատկանիշներ պարունակող 541 հաղորդում, որոնցում նշված հանգամանքներն ստուգելու նպատակով ուղարկվել են ՀՀ ոստիկանություն, ՀՀ քննչական կոմիտեի տարածքային բաժիններ, ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանություն և ՀՀ հատուկ քննչական ծառայություն: Բացի նշված հաղորդումներից, ուսումնասիրման առարկա է դարձել նաև ՀՀ ոստիկանությունում ստացված 309 հաղորդում: Օրենքով նախատեսված ընթացակարգով ուսումնասիրության արդյունքներով 723 հաղորդումների առնչությամբ /ընդհանուր թվի 85.1 տոկոսը/ հաղորդումներում նշված հանգամանքները հերքվել են: Քրեական գործեր են հարուցվել 19 դեպքով /ընդհանուր թվի 2.2 տոկոսը/, որոնցից մեկն ընտրակաշառք տալու հատկանիշներով, թվով 40 հաղորդումների առնչությամբ ստուգողական գործողությունները շարունակվում են: Նույն տեղեկանքում նաև շեշտվում է, որ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից որևէ հաղորդում չի ներկայացվել:

Բացի վերոնշյալներից, ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ սահմանադրական դատարան ներկայացված նյութերը վկայում են, որ ս.թ. ապրիլի 21-ի դրությամբ ՀՀ դատարանների կողմից ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին առնչվող թվով 3 քաղաքացիական և 10 վարչական գործերով դատական ակտեր են կայացվել: Դրանցով դիմողները հիմնականում եղել են առանձին քաղաքացիներ կամ հասարակական կազմակերպություններ: Սույն գործով դիմող՝ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից դատական որևէ հայցադիմում չի ներկայացվել:

Ընդհանուր հետևությունն այն է, որ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից ՀՀ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների գործընթացում օրենքով սահմանված կարգով ու ժամկետներում չեն արձանագրվել ու բողոքարկման առարկա դարձվել իրավախախտումների վերաբերյալ ապացուցողական նշանակություն ունեցող այնպիսի փաստեր, որոնք, ներկայացնելով ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, հիմք կարող էին ծառայել ՀՀ ընտրական օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի այլ կետով որոշում կայացնելու համար:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 3.1-րդ կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 8.**

1. ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 9-ի՝ «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը թողնել ուժի մեջ:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

28 ապրիլի 2017 թվականի  
ՍԴՈ-1364



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՄԼԵՏ ՉԱՏԻՆՅԱՆԻ ԵՎ ԱՅԼՈՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 2, 27, 29 ԵՎ 38-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

5 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողների ներկայացուցիչ Կ. Թումանյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Համլետ Չատինյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 27, 29 և 38-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Համլետ Չատինյանի և այլոց՝ 2016թ. դեկտեմբերի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «**Դատարան դիմելու իրավունքը**» վերտառությամբ 2-րդ հոդվածը սահմանում է.

«Շահագրգիռ անձն իրավունք ունի սույն օրենսգրքով սահմանված կարգով դիմել դատարան՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կամ պայմանագրով նախատեսված իր իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար:

Սույն օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերում այլ անձանց իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի պաշտպանության համար իրավունք ունեն դատարան դիմել այդպիսի պաշտպանությամբ հանդես գալու իրավասություն ունեցող անձինք»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «**Գործին մասնակցող անձանց կազմը**» վերտառությամբ 27-րդ հոդվածը սահմանում է.

«Գործին մասնակցող անձինք են՝

1) կողմերը.

2) երրորդ անձինք.

3) դիմողները՝ սույն օրենսգրքի երրորդ բաժնով նախատեսված գործերով»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «**Կողմերը**» վերտառությամբ 29-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քաղաքացիական դատավարության (այսուհետ՝ դատավարություն) կողմերն են հայցվորը և պատասխանողը:

2. Հայցվորներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք հայց են հարուցել:

3. Պատասխանողներ են քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնց դեմ հայց է հարուցվել:

4. Կողմերն ունեն հավասար դատավարական իրավունքներ և կրում են հավասար դատավարական պարտականություններ»:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների մասնակցությունը գործին» վերտառությամբ 38-րդ հոդվածը սահմանում է.

«1. Համայնքի ղեկավարն իրավունք ունի դատարան դիմել համայնքի գույքային շահերի պաշտպանության հայցով:

2. Հայց հարուցած համայնքի ղեկավարն օգտվում է հայցվորի իրավունքներից և կրում է նրա պարտականությունները»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին. Համլետ Չատինյանը, Նաիրա Զաքարյանը, Ռոզիկ Կոստանդյանը, Մհեր Չատինյանը, Դավիթ Չատինյանը 2009թ. մայիսի 25-ին դիմել են ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Վանաձորի քաղաքապետարանի՝ պահանջելով բռնագանձել 13.875.000 ՀՀ դրամ որպես Վանաձոր քաղաքի Տիգրան Մեծի թիվ 73 կառուցվելիք շենքում 55 քմ մակերեսով բնակարանի շուկայական գնին համարժեք փոխհատուցում: Հակընդդեմ հայցով դիմելով դատարան՝ Վանաձորի քաղաքապետարանը պահանջել է փոփոխել դիմողների և Վանաձոր համայնքի միջև 2007թ. փետրվարի 26-ին կնքված «Հողամասն ազատելու և հետագայում բնակարան հատկացնելու մասին» պայմանագիրը՝ 1.1. կետում՝ բնակարանի հանձնման ժամկետ և 3.1. կետում փոխհատուցման տրամադրման ժամկետ սահմանելով 2012թ. հոկտեմբերի 1-ը: Հայցը բավարարվել է մասնակի, և հակընդդեմ հայցը մերժվել է:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2011թ. մարտի 22-ի որոշմամբ Վանաձորի քաղաքապետարանի վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության: Դատարանի 2011թ. հոկտեմբերի 5-ի վճռով հաստատվել է կողմերի միջև կնքված հաշտության համաձայնագիրը: Հիշյալ վճռի դեմ Վանաձոր համայնքի **ավագանին** ներկայացրել է վերաքննիչ բողոք: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2014թ. ապրիլի 30-ի որոշմամբ Վանաձոր համայնքի ավագանու վերաքննիչ բողոքը բավարարվել է՝ դատարանի 2011թ. հոկտեմբերի 5-ի վճիռը բեկանվել է և գործն ուղարկվել նույն դատարան՝ նոր քննության՝ այն պատճառաբանությամբ, որ «Դատարանի կողմից հաստատվել է համայնքի գույքի օտարման մասին հաշտության համաձայնություն, որով կողմ է հանդիսացել Վանաձորի քաղաքապետարանը և ըստ էության համայնքի համար սահմանվել է դրանում նշված ծավալով համայնքի գույքի օտարման պարտականություն: Այսինքն՝ առաջացել է մի իրավիճակ, երբ Վանաձորի քաղաքապետարանի կամահայտնությամբ (Հաշտության համաձայնության կնքում), առանց իրավասու մարմնի ավագանու որոշման, օտարվել է համայնքի գույքը: Իսկ օրինական ուժի մեջ մտած դատական ակտը, լինելով կատարման համար պարտադիր,

բացառում է համայնքի գույքի օտարման հարցում ավագանու կողմից իր լիազորության իրականացման հարցում որևէ հայեցողություն՝ իմաստազրկելով քննարկվող լիազորության օրենսդրի նպատակը»:

Դիմողների ներկայացուցիչը վերը նշված որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, ի թիվս այլնի, մատնանշելով նաև **Վանաձոր համայնքի ավագանու՝ տվյալ գործով շահագրգիռ անձ չլինելու հանգամանքը**: ՀՀ վճռաբեկ դատարանը **2014թ. օգոստոսի 20-ին** կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում, որով գտել է, որ բողոքում ներկայացված հիմնավորումները բավարար չեն բողոքը քննության ընդունելու և հետևության հանգելու համար:

2015թ. փետրվարի 11-ին Վանաձոր համայնքի ավագանին՝ որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ ներկայացնող երրորդ անձ, հայցադիմում է ներկայացրել դատարան ընդդեմ սույն գործով դիմողների՝ նրանց և Վանաձորի քաղաքապետարանի 2007թ. փետրվարի 26-ին կնքված՝ հողամասն ազատելու և հետագայում բնակարան հատկացնելու մասին պայմանագիրն անվավեր ճանաչելու պահանջով: Դատարանը 2016թ. հունվարի 11-ի վճռով Վանաձոր համայնքի ավագանու հայցը բավարարել է ամբողջությամբ: Դիմողները վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկել են ՀՀ վճռաբեկ դատարան, որը 2016թ. հոկտեմբերի 12-ին կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշում:

3. Դիմողները գտնում են, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 27, 29 և 38-րդ հոդվածները՝ իրավակիրառ պրակտիկայում դատարանների կողմից տրված մեկնաբանություններով, չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածի, 4-րդ հոդվածի, 6-րդ հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին:

Ըստ դիմողների՝ դատարանները վիճարկվող նորմերը կիրառելիս քաղաքացիական դատավարության սուբյեկտ են դիտարկում նաև համայնքի ավագանուն, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրությանը:

Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի վերլուծության արդյունքում դիմողները հանգել են այն հետևությանը, որ տեղական ինքնակառավարման մարմիններն իրավասու են կատարելու համայնքային շահերից բխող ցանկացած լիազորություն, որն ուղղակիորեն արգելված չէ կամ վերապահված չէ հանրային իշխանության այլ սուբյեկտի:

Դիմողները պատճառաբանում են, որ համայնքի երկու մարմիններից մեկին՝ **համայնքի ղեկավարին** օրենսդիրն իրավական հնարավորություն է տվել համայնքի անունից հանդես գալու դատարաններում և այլ մարմիններում ներկայացնելու համայնքի շահերը, իսկ **համայնքի**



**ավագանուն՝** որպես համայնքային մարմնի, Սահմանադրությունն ու օրենքներն իրավական հնարավորություն են ընձեռել իրականացնելու տեղական իրավաստեղծ գործունեություն, իսկ առանձին դեպքերում վերահսկողություն իրականացնելու տեղական ինքնակառավարման մյուս մարմնի համայնքի ղեկավարի գործունեության նկատմամբ:

Դիմողների համոզմամբ, օրենսդիրը, սահմանելով տեղական ինքնակառավարման մարմիններից յուրաքանչյուրի լիազորությունները, դատարան դիմելու և դատարանում որպես դատավարության սուբյեկտ հանդես գալու լիազորություն է սահմանել բացառապես համայնքի ղեկավարի համար և, **չնայած այն հանգամանքին, որ վիճարկվող իրավական նորմերը բավարար չափով հստակ են, այնուամենայնիվ, դատարանները պրակտիկայում դրանք կիրառում են այլ մեկնաբանությամբ:** Իրենց դիրքորոշումը դիմողները հիմնավորում են նրանով, որ ՀՀ քաղաքացիադատավարական օրենսդրությունը որպես հայցվոր կամ պատասխանող է համարում ֆիզիկական կամ իրավաբանական անձին, մինչդեռ համայնքն է հանդիսանում իրավաբանական անձ, այլ ոչ թե համայնքի ավագանին: Ըստ դիմողների՝ համայնքի ավագանին կարող է դատարանում հանդես գալ հայցվորի կարգավիճակով միայն ավագանու անդամի իրավունքների կամ շահերի պաշտպանության նպատակով:

4. ՀՀ Սահմանադրության և «Տեղական ինքնակառավարման մարմինների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթների համադրված վերլուծության արդյունքում պատասխանողը հանգել է այն հետևությանը, որ համայնքի ղեկավարի որոշմամբ համայնքի գույքային շահերի ենթադրյալ խախտման դեպքում համայնքի ավագանին ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի իմաստով հանդես է գալիս որպես «շահագրգիռ անձ» և կարող է քաղաքացիական դատավարության կարգով պաշտպանել համայնքի շահերը:

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի իրավակարգավորմանը, պատասխանողի կարծիքով, այն դեպքերում, երբ համայնքի գույքային շահերը վտանգվում են համայնքի ղեկավարի որոշմամբ, ապա բնական է, որ համայնքի ղեկավարը չի կարող հանդես գալ դատարանում որպես հայցվոր՝ վիճարկելով իր իսկ որոշումը: Նման դեպքերում համայնքի ավագանին օրենքի ուժով պարտավոր է պաշտպանել համայնքի գույքային շահերը՝ ունենալով գործին մասնակցող անձանց բնորոշ և՛ նյութաիրավական, և՛ դատավարական շահ:

Ըստ պատասխանողի՝ ավագանին դատարան դիմում է ոչ թե սեփական ինքնուրույն շահերից ելնելով, այլ որպես տեղական ինքնակառավարման մարմին, որպես համայնք իրավաբանական անձի ներկայացուցիչ, իսկ ավագանու դատարան դիմելու և համայնքի ղեկավարի որո-

շումները վիճարկելու իրավունքներն ուղղակիորեն նախատեսված են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով:

Պատասխանողը, վկայակոչելով դիմողների կողմից ձևականորեն օրենքի դրույթի սահմանադրականության հարցի վիճարկմանը վերաբերող ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշումը, կարծում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 27, 29 և 38-րդ հոդ- վածներով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին, իսկ դիմողներն ըստ էության վիճարկում են նորմերի կիրառման իրավաչափությունը, ուստի գործի վարույթը ենթակա է կարճման:

5. ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ «Սահմանադրությամբ և սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով սահմանադրական դատարան կարող են դիմել

6) յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը»:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անհատական դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որևէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, և որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ այդ դիմումները կարող են սահմանադրական դատարան ներկայացվել ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իր հանդեպ կիրառված դատական ակտի վիճարկման հնարավորությունները սպառելու պահից ոչ ուշ, քան վեց ամիս հետո:

Սահմանադրական դատարանը 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ Սահմանադրությամբ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքով սահմանված ՀՀ սահմանադրական դատարան ներկայացվող անհատական դիմումներին որպես պարտադիր պայման համարվող պահանջներն ինքնանպատակ չեն: Դրանք կոչված են ապահովելու սահմանադրական արդարադատություն իրականացնելու՝ սահմանադրական դատարանի պատշաճ և արդյունավետ գործառույթի իրականացումը՝ դատարանին ձեռքագատելով ինչպես անհիմն դիմումներից և դրանց հետևանքով դա-

տարանն անհիմն ծանրաբեռնելուց, այնպես էլ այն դիմումներից, որոնք չեն ծառայելու կոնկրետ սահմանադրական վերահսկողության նպատակին:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համայնքի ավագանու՝ շահագրգիռ անձ հանդիսանալու վերաբերյալ դիմողների գործով դատական վերջնական ակտ է հանդիսանում ՀՀ վերաքննիչ դատարանի՝ 30.04.2014 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ այդ որոշմամբ է տրվել համայնքային գույքի օտարման հարցում ավագանու դերի իրավական գնահատականը: Նշված որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքի առնչությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 2014թ. օգոստոսի 20-ին կայացրել է վճռաբեկ բողոքը վարույթը նդունելը մերժելու մասին որոշում: Այսինքն՝ 2014 թվականի օգոստոսի 20-ից սկսած դիմողներն սպառել են համայնքի ավագանու՝ շահագրգիռ անձ հանդիսանալու վերաբերյալ հարցով դատական պաշտպանության բոլոր միջոցները, և նրանք կարող էին այդ կապակցությամբ կիրառված դրույթների սահմանադրականությունը վիճարկելու համար Սահմանադրական դատարան դիմել **վերը նշված ամսաթվից սկսած վեցամսյա ժամկետում, ինչը չեն արել, և որպիսի հանգամանքը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 6-րդ կետի և 69-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով հանդիսանում է սույն գործի վարույթը կարճելու հիմք:**

ՀՀ վերաքննիչ դատարանի 2016թ. հուլիսի 22-ի որոշմամբ հղում կատարելով նույն դատարանի՝ 30.04.2014 թվականի որոշմանը՝ վերաքննիչ դատարանը **չի կիրառել** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը և 27-րդ հոդվածի 2-րդ կետը, այլ նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն գտել է, որ վերաքննիչ դատարանը տվյալ գործով իրավասու չէ ստուգելու Վանաձոր համայնքի ավագանու կողմից դատարան դիմելու իրավունք ունենալու՝ օրենքով սահմանված հնարավորության առկայությունը կամ բացակայությունը, քանի որ նույն դատարանի՝ 30.04.2014 թվականի՝ օրինական ուժի մեջ մտած որոշմամբ արձանագրվել է, որ «Վճիռը վերաբերում է ավագանու լիազորություններին, նրա համար սահմանում է պարտականություն, մինչդեռ ավագանին մասնակից չի դարձվել գործի քննությանը»:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ առաջին ատյանի դատարանն իր՝ 2016թ. հունվարի 11-ի վճռում իրավական դիրքորոշում է արտահայտել համայնքի ավագանու՝ շահագրգիռ անձ հանդիսանալու փաստի առկայության վերաբերյալ, ինչը հետագայում բողոքարկվել է ՀՀ վերաքննիչ դատարան, ապա վերաքննիչ դատարանը ոչ թե վերահաստատել է առաջին ատյանի դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումը, որպիսի հանգամանքը հնարավորություն կտար արձանագրելու, որ

վերաքննիչ դատարանն անուղղակիորեն կիրառել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 2-րդ մասը և 27-րդ հոդվածի 2-րդ կետը, այլ, հղում կատարելով նույն օրենսգրքի 14-րդ հոդվածին, գտել է, որ վերաքննիչ դատարանը տվյալ գործով իրավասու չէ ստուգելու Վանաձոր համայնքի ավագանու կողմից դատարան դիմելու իրավունք ունենալու՝ օրենքով սահմանված հնարավորության առկայությունը կամ բացակայությունը, որպիսի հանգամանքը սույն գործի շրջանակներում դիմող կողմի ներկայացրած փաստարկների հիմքով սահմանադրաիրավական վեճի առարկա լինել չի կարող:

6. Սույն դիմումի ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է հետևյալը.

ա/ դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին համապատասխան վիճարկվող դրույթների՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ չի պարունակում: Դիմողների իրավունքների հնարավոր խախտումները պայմանավորված չեն վեճի առարկա նորմերի սահմանադրաիրավական բովանդակությամբ կամ դրանց տրված որևէ կոնկրետ մեկնաբանությամբ: Վիճարկվող իրավակարգավորումները, հանդիսանալով դատավարական նորմեր, որևէ կերպ չեն սահմանափակում դիմողների դատական պաշտպանության՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված իրավունքը և չեն խոչընդոտում այդ իրավունքի իրացմանը,

բ/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ առկա է ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-747 որոշումը, որում ամրագրված են հետևյալ իրավական դիրքորոշումները. «Համաձայն ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի՝ անձի դատական պաշտպանության իրավունքի իրացման անհրաժեշտություն ծագում է այն դեպքում, երբ նա խնդիր ունի վերականգնելու իր ենթադրյալ խախտված իրավունքները: Սահմանադրական այս դրույթի հիմքում ընկած է այն տրամաբանությունը, որ յուրաքանչյուր դեպքում անձն իր՝ դատարան դիմելու իրավունքը կարող է իրացնել միայն այն դեպքում, երբ տվյալ գործի առնչությամբ ունի իրավական շահագրգռվածություն: Սահմանադրական այս դրույթին համահունչ՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի վիճարկվող 2-րդ հոդվածի 1-ին մասը դատարան դիմելու իրավունքը վերապահել է շահագրգիռ անձին, այն է՝ անձին, ում իրավունքները ենթադրաբար խախտվել են:

Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ «շահագրգիռ անձ» հասկացությունը գնահատման ենթակա հասկացություն է, և յուրաքանչյուր կոնկրետ գործով, ելնելով տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, գործը քննող դատարանն է իրավասու գնահատելու այս հասկացությունը և պարզելու, թե արդյո՞ք տվյալ անձը գործի ելքում ունի իրավական շահագրգռվածություն»:

զ/ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 1-ին և 3-րդ կետերը, 29-րդ և 38-րդ հոդվածները դիմողների նկատմամբ չեն կիրառվել: Այս դրույթները վերաբերում են կողմերին՝ հայցվորին և պատասխանողին, ինչպես նաև նույն օրենսգրքի 3-րդ բաժնով նախատեսված գործերով դիմողներին, մինչդեռ դիմողների գործով համայնքի ավագանին հանդես է եկել որպես **վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ** ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի **27-րդ հոդվածի 2-րդ կետի հիմքով:**

Ինչ վերաբերում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածին, ապա այն չէր էլ կարող կիրառվել, որովհետև գործի փաստական հանգամանքներից և դիմողների փաստարկներից բխում է, որ դատարանները **համայնքի ավագանուն են** հնարավորություն ընձեռել դիմելու դատարան, ինչը, ըստ դիմողների, իրենց իրավունքների ենթադրյալ խախտման միակ պատճառն է: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածը վերաբերում է **համայնքի ղեկավարի՝** դատարան դիմելու իրավունքին:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 60-րդ հոդվածի առաջին կետի համաձայն՝ սահմանադրական դատարանը կարճում է գործի վարույթը՝ գործի քննության ցանկացած փուլում, եթե բացահայտվել են նույն օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմքեր:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Համլետ Չատինյանի և այլոց դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 2, 27, 29 և 38-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

5 մայիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1365



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2016 թվականի ևոնյանի 30-ին ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԻ  
ՍԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2000 թվականի ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ  
ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝  
կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի  
(զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նա-  
զարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրա-  
պետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի  
Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազար-  
յանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005  
թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդ-  
վածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին»  
Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի  
նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության  
կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև

«Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի մարտի 27-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց** .

1. «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին համաձայնագիրը /այսուհետ՝ Համաձայնագիր/ ստորագրվել է 2016թ. նոյեմբերի 30-ին՝ Մոսկվայում:

Համաձայնագիրը բաղկացած է նախաբանից և 3 հոդվածներից, որոնք սահմանում են դրույթներ Համաձայնագրին միանալու և դրանից բխող իրավունքներն ու պարտականություններն ամբողջ ծավալով ստանձնելու վերաբերյալ (հոդված 1), Հայաստանի Հանրապետության միանալու հետ կապված Համաձայնագրում անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու՝ Կողմերի պարտավորվածության վերաբերյալ (հոդված 2), ինչպես նաև Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի մասին:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է պարտավորություն **ապահովել**, որպեսզի Հայաստանի Հանրապետության կառավարությունը միանա 2000 թվականի փետրվարի 11-ի՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին համաձայնագրին:

Միանալով այդ Համաձայնագրին՝ Հայաստանի Հանրապետությունն ամբողջ ծավալով ձեռք է բերում դրանից բխող իրավունքները և ստանձնում պարտավորություններ, որպիսիք են, մասնավորապես.

- աջակցել «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծմանը «Պաշտպանական համակարգեր» ռուսաստանյան ֆինանսարդյունաբերական խմբի հիման վրա, բելառուսական ձեռնարկությունների և կազմակերպությունների ընդգրկմամբ՝ դրա ստեղծման մասին պայմանագրով նախատեսված պայմաններով և կարգով (հոդված 1),

- Միջպետական ֆինանսարդյունաբերական խմբի ծրագրերի կատարման շրջանակներում արտադրվող ռազմական և երկակի նշանակության արտադրանքի իրացումն **իրականացնել** Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության օրենսդրություններով սահմանված կարգով (հոդված 4),

- Համաձայնագրի իրագործման ընթացքում **ապահովել** պետական գաղտնիք համարվող տվյալների պաշտպանությունը (հոդված 9):

3. «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրի երկրորդ հոդվածի համաձայն՝ միջպետական ֆինանսարդյունաբերական խմբի ստեղծման հիմնական նպատակն է դրա մասնակիցների գիտատեխնիկական, արտադրական և ներդրումային ներուժի օգտագործումը՝ հակաօդային պաշտպանության, երկակի ու քաղաքացիական նշանակության այլ տեսակների արտադրանքի բարձր տեխնոլոգիական և համաշխարհային շուկայում մրցունակ նմուշների ստեղծման ու արտադրության աշխատանքների կատարման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:



2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1366



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՄՈՄԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՌՈՒՄԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ» ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԽՄԲԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 11-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԵՋ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը<sup>a</sup> կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ՝ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Ա. Նազարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված «Ռուսաստանի Դաշնության

կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի դիմումը սահմանադրական դատարան՝ մուտքագրված 27.03.2017թ.:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին արձանագրությունն ստորագրվել է 2016թ. նոյեմբերի 30-ին՝ Մոսկվայում:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունը համաձայնում է «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու հանգամանքով պայմանավորված՝ դրանում կատարել մի շարք փոփոխություններ և լրացումներ:

3. Համաձայնագրի որոշ դրույթներում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- նշանակել Միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ղեկավարման բարձրագույն մարմնի՝ Կառավարիչների խորհրդի նախագահի տեղակալ,
- կազմակերպել Համաձայնագրի իրագործման ընթացքում ստացվող կամ ձևավորվող գաղտնի տեղեկատվության փոխանցումը և օգտագործումը, և ապահովել դրա պաշտպանությունը, այդ թվում՝ Համաձայնագրի գործողության դադարեցման դեպքում՝ գաղտնի տեղեկատվության փոխադարձաբար պաշտպանության մասին երկկողմ, բազմա-

կողմ միջազգային պայմանագրերին և 2004թ. հունիսի 18-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի կազմակերպության շրջանակներում գաղտնի տեղեկատվության պաշտպանության փոխադարձ ապահովման մասին համաձայնագրին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությանը համապատասխան,

• Համաձայնագրի շրջանակներում համագործակցության ընթացքում ստացված տեղեկատվությունը չօգտագործել ի վնաս Կողմերից յուրաքանչյուրի պետության շահերի և այլն:

4. 2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված դրույթները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի նոյեմբերի 30-ին Մոսկվայում ստորագրված՝ «Ռուսաստանի Դաշնության կառավարության և Բելառուսի Հանրապետության կառավարության միջև «Պաշտպանական համակարգեր» միջպետական ֆինանսաարդյունաբերական խմբի ստեղծման մասին» 2000 թվականի փետրվարի 11-ի համաձայնագրում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1367



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԲԻՇԿԵԿՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 28-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ՝  
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՇԵՏ ԿԱՊԿԱԾ ԾԱԽՍԵՐԻ  
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ԻՐԱԳՈՐԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ Վ. Քոչարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի սեպտեմբերի 16-ին Բիշկեկում ստորագրված՝ Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին 2006 թվականի նոյեմբերի 28-ի համաձայնագիրը՝ պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման հարցերով իրագործելու վերա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՍԿԻՐ ♦ 2(90)2018  
77

բերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան 19.04.2017թ. մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին 2006 թվականի նոյեմբերի 28-ի համաձայնագիրը պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման հարցերով իրագործելու վերաբերյալ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016 թվականի սեպտեմբերի 16-ին Բիշկեկում՝ 2006 թվականի նոյեմբերի 28-ին Մինսկում ստորագրված՝ Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) 28-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների իրագործման կարգը սահմանելու և պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման հարցերն առավել լիարժեք կարգավորելու նպատակով:

Արձանագրությունն ունի 3 հավելված՝ Հավելված 1. «Ծախսերի նախահաշիվ», Հավելված 2. «Ակտ» և Հավելված 3. «Ծախսերի մասին տեղեկություններ» վերտառությամբ:

2. Արձանագրությամբ սահմանվում է Համաձայնագրի 4-րդ հոդվածով նախատեսված պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված ծախսերի ծրագրման, հարցում կատարող Կողմի իրավասու մարմնի կողմից դրանց փոխհատուցման, ինչպես նաև կատարված ֆինանսական և նյութական ծախսերի վերաբերյալ հաշվետու փաստաթղթերը ներկայացնելու կարգը, և այն չի վերաբերում Համաձայնագրի 11-րդ հոդվածի դրույթներն իրագործելիս օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերի փոխհատուցման հարցերին:

3. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինները մյուս Կողմերի իրավասու մարմինների հետ փոխանակեն Համաձայնագրի իրագործման համար անհրաժեշտ պաշտպանության միջոցների կազմակերպման և իրականացման ղրորտում ՀՀ համապատասխան իրավական ակտեր, իրավա-

կիրառ պրակտիկայի վերաբերյալ նյութեր, վիճակագրական տվյալներ և մեթոդական ուղեցույցներ,

- ապահովել, որպեսզի նախքան պաշտպանության միջոցներ իրականացնելու վերաբերյալ հարցում ուղարկելը (այսուհետև՝ Հարցում) ՀՀ իրավասու մարմինները Կողմերի իրավասու մարմինների հետ համաձայնեցնեն նախահաշվի նախագիծը՝ հաշվի առնելով հարցվող Կողմի տարածքում գործող գները (սակագները) և հարցվող Կողմի կողմից ազգային օրենսդրությանը համապատասխան կիրառվող նորմատիվները,

- որպես հարցվող Կողմ՝ ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը եռամսյակի ավարտից հետո՝ 45 օրացուցային օրվանից ոչ ուշ, Հարցում ներկայացնող Կողմի իրավասու մարմնին ուղարկի գրություն՝ նշելով փոխհատուցման ենթակա գումարը և այն հաշվի վավերապայմանները, որին պետք է փոխանցվեն դրամական միջոցները, ինչպես նաև գրությանը կցի ծախսերի վերաբերյալ տեղեկությունները,

- որպես հարցվող Կողմ՝ դրամական միջոցների և նյութական արժեքների օգտագործման վերաբերյալ առաջնային փաստաթղթերը, նախահաշիվը և ծախսերի վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, արժույթների պաշտոնական փոխարժեքը հաստատող փաստաթղթերը պահել հինգ տարի՝ Արձանագրության 13-րդ հոդվածով նախատեսված միջոցառումների ավարտի պահից սկսած,

- որպես Հարցում կատարող Կողմ՝ կրել Պաշտպանվող անձի այլ վայր տեղափոխվելու, այդ թվում՝ ուղևորության և անձնական գույքի փոխադրման հետ կապված ծախսերը՝ ներառյալ փաթեթավորման, բեռնման (բեռնաթափման) արժեքը, մինչև հարցվող Կողմի տարածքում պաշտպանվող անձին հանձնելու վայրը և հակառակը, որոնք չեն ներառվում նախահաշվի մեջ,

- որպես Հարցում կատարող Կողմ՝ ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինն Արձանագրության 8-րդ հոդվածում նշված փաստաթղթերն ստանալու օրվանից 45 օրացուցային օրվա ընթացքում իրականացնի դրանց ուսումնասիրությունը և դրամական միջոցները փոխանցի հարցվող Կողմի իրավասու մարմնի հաշվին,

- որպես Հարցում կատարող Կողմ՝ փոխադարձ հաշվարկների համեմատման ակտը կազմել երկու օրինակով և հարցվող Կողմին ուղարկել դրամական միջոցների փոխանցման հետ միաժամանակ՝ հարցվող Կողմի նկատմամբ ունեցած պարտքը պաշտպանության միջոցի դադարեցման օրվա դրությամբ մարելու նպատակով,

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի 28-րդ հոդվածի իրագործման հետ կապված՝ ՀՀ իրավասու մարմնի և Կողմերի իրավասու մարմինների միջև հաշվարկները կատարվեն հարցվող Կողմի ազգային արժույթով, եթե այդ Կողմի հետ առանձին միջազգային պայմանագրերով այլ բան սահմանված չէ,

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

• որպես հարցվող Կողմ՝ անցկացված ստուգումների արդյունքում համատեղ ուսումնասիրություն պահանջող հարցեր առաջանալու դեպքում (նյութերից քաղվածքները) Հարցում կատարող Կողմին ուղարկել նյութերն այն մասով, որը նրան է վերաբերում:

4. Սույն Արձանագրությամբ ստանձնված պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով նախատեսված պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2016 թվականի սեպտեմբերի 16-ին Բիշկեկում ստորագրված՝ Քրեական դատավարության մասնակիցների պաշտպանության մասին 2006 թվականի նոյեմբերի 28-ի համաձայնագիրը պաշտպանության միջոցների իրականացման հետ կապված ծախսերի փոխհատուցման հարցերով իրագործելու վերաբերյալ արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՄԴՈ-1368





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2016 թվականի Հունիսի 7-ին Բիշպեյնիս ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԱԶՍՏ  
ԱՌԵՎՏՐԻ ԳՈՏՈՒ ՄԱՍԻՆ 2011 թվականի ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի  
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՊԵՏԱԿԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ  
ՄԱՍԻՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,

Մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Կ. Թամազյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2016 թվականի հունիսի 7-ին Բիշպեյնիս ստորագրված՝ Ազատ առևտրի գոտու մասին 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի մասնակից պետությունների միջև պետական գնումների կարգավորման կանոնների եւ ընթացակարգերի մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորություն-

81  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

ների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017 թվականի ապրիլի 13-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Քննության առարկա արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2016թ. հունիսի 7-ին՝ Բիշկեկում, որի նպատակը Սանկտ Պետերբուրգում 2011թ. հոկտեմբերի 18-ին ԱՊՀ շրջանակներում ստորագրված «Ազատ առևտրի գոտու մասին» պայմանագրի (ՀՀ Ազգային ժողովի կողմից վավերացվել է 11.09.2012թ.) մասնակից պետությունների միջև ծառայությունների եւ ապրանքների ազատ տեղաշարժման համար պայմաններ ստեղծելն է:

2. Արձանագրության համաձայն Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է հետեւյալ հիմնական պարտավորությունները.

- ապահովել գնումների համար հատկացվող միջոցների արդյունավետ օգտագործումը (1-ին հոդված),

- ապահովել գնումների հրապարակայնությունը եւ թափանցիկությունը, այդ թվում՝ համացանցային կայքի ստեղծման, գնումների մասին տեղեկատվության, անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանը (այդ թվում՝ ռուսերենով) համացանցային կայքում հրապարակելու (տեղադրելու) միջոցով, գնումների մասին նորմատիվ իրավական ակտերի՝ համացանցային կայքում (այդ թվում՝ ռուսերենով) հրապարակելու (տեղադրելու) եւ այլ միջոցներով (3-րդ հոդված, մաս 20),

- ապահովել Արձանագրության մասնակից պետությունների պոտենցիալ մատակարարների համար էլեկտրոնային ձեռագրավոր անցկացվող գնումներին մասնակցելու անարգել եւ հավասար հասանելիություն՝ Արձանագրության մասնակից ցանկացած պետության օրենսդրությանը համապատասխան պատրաստված էլեկտրոնային ստորագրությունը ճանաչելու միջոցով (1-ին հոդված),

- ապահովել գնումների ոլորտում կարգավորող եւ վերահսկող իշխանության լիազոր մարմինների առկայություն (1-ին հոդված),

- սահմանել պատասխանատվություն՝ Արձանագրության մասնակից պետությունների օրենսդրության խախտման համար (1-ին հոդված), ձեռնարկել միջոցներ այդ խախտումները կանխելու եւ հայտնաբերելու նպատակով (4-րդ հոդված),

- գնումների մասին օրենսդրությամբ նախատեսել անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանի կազմման եւ վարման մասին նորմեր՝ Արձանագրության 3-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն,

- գնումների մասին օրենսդրությամբ սահմանել արգելք՝ պոտենցիալ մատակարարներին ներկայացվող գնումների պայմաններում քանակապես անհաշվելի որեւէ պահանջի ներառման, գնումների փաստաթղթային պահանջներին չհամապատասխանող պոտենցիալ մատակարարների՝ գնումներին մասնակցության թույլտվության, գնումների անցկացման մասին ծանուցման եւ (կամ) գնումների մասին փաստաթղթերով չնախատեսված հիմքերով պոտենցիալ մատակարարների՝ գնումների ընթացակարգին մասնակցության թույլտվությունը մերժելու համար (3-րդ հոդված, մաս 7րդ),

- գնումների մասին օրենսդրությամբ սահմանել գնումներին մասնակցելու հայտի ապահովման եւ գնումների մասին պայմանագրի (համաձայնագրի) կատարման ապահովման ձեւերը, գնման մասին պայմանագրի հետ կապված կարգավորումները՝ Արձանագրության 3-րդ հոդվածի համաձայն:

3. Արձանագրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Արձանագրությունն իրագործվելու է հետեւյալ փուլերով.

- առաջին փուլ՝ մինչեւ 2018թ. հունվարի 1-ը մասնակից յուրաքանչյուր պետության օրենսդրության մեջ փոփոխությունների կատարում՝ ուղղված մասնակից յուրաքանչյուր պետության օրենսդրության ներդաշնակեցմանը Արձանագրությանը, եթե մասնակից պետությունների օրենսդրության դրույթներն ունեն Արձանագրությամբ սահմանված իմաստից տարբերվող իմաստ,

- երկրորդ փուլ՝ մինչեւ 2019թ. հունվարի 1-ը գնումների տեղեկատվական հասանելիությունը եւ թափանցիկությունն ապահովող տեխնոլոգիաների ներդրում, տեխնոլոգիական հարթակների համատեղելիություն, Կողմերի՝ գնումներին մասնակցելու տեխնիկական հնարավորություն ստանալու նպատակով, ինչպես նաեւ Կողմերի կողմից ազգային ռեժիմի կիրառման պայմանների քննարկում:

4. Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այն ստորագրած Կողմերի՝ ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումն ավանդապահի կողմից ստանալու օրվանից 30 օր անց:

5. Հայաստանի Հանրապետությունն Արձանագրությունն ստորագրել է վերապահումով, համաձայն որի՝ «Պետական գնումների կարգավորման կանոնների եւ ընթացակարգերի մասին 2011 թվականի հոկտեմբերի 18-ի Ազատ առևտրի գոտու մասին պայմանագրի մասնակից պետությունների միջեւ Արձանագրության 3-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներն

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

իրագործելիս գնումների մասին տեղեկատվությունը վեր-պորտալում հրապարակելու (տեղադրելու) մասով Հայաստանի Հանրապետության կողմից կապահովվի միայն գնումների ընթացակարգի կազմակերպման վերաբերյալ հայտարարությունների ռուսերեն հրապարակումը»:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած վերոհիշյալ պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 13-րդ հոդվածի դրույթներին եւ միտված են միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական եւ փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2016 թվականի հունիսի 7-ին Բիշկեկում ստորագրված՝ Ազատ առևտրի գոտու մասին 2011 թվականի հոկտեմբերի 18-ի պայմանագրի մասնակից պետությունների միջեւ պետական գնումների կարգավորման կանոնների եւ ընթացակարգերի մասին արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՄԴՈ-1369



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՄԻՇՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 160-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմող Մ. Պետրոսյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Միշա Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Միշա Պետրոսյանի՝ 2017 թվականի հունվարի 23-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ին:

Օրենսգրքի՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը և վերադարձնելը» վերտառությամբ 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝ ...

5) բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել»:

Օրենսգրքի վիճարկվող դրույթը որևէ փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Մ. Պետրոսյանը հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան (այսուհետ՝ դատարան) ընդդեմ ՀՀ ֆինանսների նախարարության՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը Միշա Պետրոսյանի անձնական օգտագործման գույքն առանց մաքսային վճարի վճարման Հայաստանի Հանրապետություն ներմուծել թույլատրելուն պարտավորեցնելու պահանջի մասին:

20.11.2015 թվականին դատարանը Մ. Պետրոսյանի հայցը բավարարել է և պարտավորեցրել ՀՀ ֆինանսների նախարարությանը թույլատրել Միշա Պետրոսյանի անձնական օգտագործման գույքն առանց մաքսային վճարի վճարման Հայաստանի Հանրապետություն ներմուծելը:

Դատարանի հիշյալ վճռի դեմ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն (այսուհետ՝ Վերաքննիչ դատարան) իր՝ 12.05.2016 թվականի որոշմամբ բավարարել է, բեկանել է դատարանի 20.11.2015 թվականի վճիռը և այն փոփոխել է:

Մ. Պետրոսյանը Վերաքննիչ դատարանի 12.05.2016 թվականի որոշման դեմ ներկայացրել է վճռաբեկ բողոք, որը ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 22.06.2016 թվականի որոշմամբ վերադարձվել է՝ վճռաբեկ բողոքն օրենս-

գրքի 158-րդ հոդվածի պահանջները չբավարարելու պատճառաբանությամբ: Նույն որոշմամբ վճռաբեկ բողոքի հետ կապված սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար սահմանվել է եռօրյա ժամկետ:

Վճռաբեկ դատարանն իր՝ 17.08.2016 թվականի որոշմամբ կրկին ներկայացված վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության, մասնավորապես, հետևյալ պատճառաբանությամբ. «Վերլուծելով վճռաբեկ բողոքը վերադարձնելու և այն առանց քննության թողնելու վերաբերյալ իրավակարգավորումները՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 158-րդ հոդվածով սահմանված վճռաբեկ բողոքի բովանդակությանն առաջադրվող պահանջները չպահպանելը խոչընդոտում է բողոքը քննության առնելուն, և այդ տրամաբանությունից էլ ելնելով՝ օրենսդիրը սահմանել է բողոքի սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին բերելու համար ժամկետ տրամադրելու Վճռաբեկ դատարանի պարտականությունը:

...

Տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 22.06.2016 թվականի որոշմամբ Միշա Պետրոսյանի վճռաբեկ բողոքը վերադարձվել է և միաժամանակ սահմանվել է ժամկետ՝ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար: Մինչդեռ վերջինս, վերացնելով որոշմամբ արձանագրված սխալները, միաժամանակ թույլ է տվել նոր սխալ, մասնավորապես՝ վճռաբեկ բողոքին չի կցել կրկին ներկայացված վճռաբեկ բողոքի պատճենը գործին մասնակցող անձին ուղարկելու վերաբերյալ ապացույցը (բողոքին կցված են նախկին վճռաբեկ բողոքը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձին ուղարկված լինելու վերաբերյալ ապացույցները), այսինքն՝ կրկին նույն հիմքով ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վերաբերյալ Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում կայացրել է:

Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել»:

3. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող դրույթը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) 3-րդ, 18-րդ, 19-րդ, 91-րդ հոդվածներին, քանի որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարելի գնահատել որպես բողոքում նշված հիմքով կայացված որոշում:

Դիմողի գնահատմամբ՝ Վճռաբեկ դատարանի այն մեկնաբանությունը, ըստ որի՝ կրկին օրենքի պահանջների խախտմամբ բողոք ներկայացնելու դեպքում սխալները շտկելու համար վերստին ժամանակ սահմանելը կհակասի իրավական որոշակիության սկզբունքին, անձին զրկում է արդարադատության իրավունքից:

Վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-1363 որոշումը՝ դիմողը նշում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը նպատակ ունի արդեն իսկ ներկայացված բողոքի հետ կապված թերությունները վերացնելու համար պայմաններ ապահովել և դատարանի կողմից սահմանված ժամկետում այդ թերությունները վերացնելու պարագայում համարել, որ բողոքը բերվել է սահմանված կարգով: Այդ իսկ պատճառով բողոքն առանց քննության թողնելն այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, չի վերաբերում վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմանն այն պատճառով, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ չի կարող անդրադարձ կատարվել վճռաբեկ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում:

4. Պատասխանողը, անդրադառնալով Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին մասին, նշում է, որ դատարան դիմելու՝ անձի իրավունքի իրացման լիարժեք երաշխավորումն անձի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները դատական կարգով պաշտպանելու առաջնահերթ իրավական նախապայմաններից է: Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից առաջնահերթ կարևորություն ունի այն հարցի պատասխանը, թե որքանով է հասանելի արդարադատությունը, որքանով են արդյունավետ անձի խախտված իրավունքների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի իրացման պայմանները և գործիքակազմը:

Հղում կատարելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին՝ պատասխանողն արձանագրում է, որ դատարանի մատչելիության իրավունքը կարող է օրենքով ենթարկել իրավաչափ սահմանափակումների, ինչն առկա է, երբ՝

- ա) սահմանափակումը հետապնդում է իրավաչափ նպատակ,
- բ) կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև առկա է ողջամիտ հարաբերակցության հարաբերություն, և՛
- գ) տվյալ սահմանափակման պայմաններում դատարանի մատչելիությունը արդյունավետ է, այն է՝ անձն ունի հստակ և գործնական հնարա-



վորություն բողոքարկելու իր իրավունքները շոշափող դատական ակտը:

Անդրադարձ կատարելով վերադարձված բողոքներն առանց դատարանի կողմից մատնանշված խախտումները վերացնելու դեպքում ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելու որոշումների իրավաչափությանը՝ պատասխանողը նշում է, որ օրենսգիրքն ուղղակիորեն չի սահմանում, թե ինչ լիազորություն է կիրառում վճռաբեկ դատարանն այն դեպքում, երբ անձը սահմանված ժամկետի ընթացքում բողոքը ներկայացնում է այն նույն սխալներով, որոնց կապակցությամբ դատարանը բողոքը վերադարձրել էր: Պրակտիկայում, եթե վճռաբեկ դատարանի վերադարձրած բողոքը չի ուղղվում կամ բողոքաբերը նոր սխալ է թույլ տալիս, այն դատարանի կողմից առանց քննության է թողնվում: Վճռաբեկ դատարանը բողոքը վերադարձնելիս և հայտնաբերված թերությունները ուղղելու համար ժամկետ սահմանելիս կայացնում է որոշում: «Բողոքում նշված հիմքով նույն գործով» ձևակերպումը նպատակ է հետապնդում կանխել անձի կողմից որևէ գործով նույն բողոքարկման հիմքով մեկից ավելի անգամ վճռաբեկ բողոք ներկայացնելու հնարավորությունը: Հետևաբար, «բողոքում նշված հիմք» բառակապակցությունը վերաբերում է բացառապես բողոքաբերի կողմից իր բողոքում մատնանշված հիմքին, որը ՀՀ վճռաբեկ դատարանը քննության է առել, այլ՝ ոչ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից այդ բողոքը վարույթ չընդունելու իրավական հիմքերին: Սա նշանակում է, որ բողոքը վերադարձվելու դեպքում, այն կրկին անձի կողմից ՀՀ վճռաբեկ դատարան ներկայացվելը չի կարող դիտվել որպես բողոքում նշված նույն հիմքով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման առկայություն և հանգեցնել բողոքի՝ առանց քննության թողնելու իրավական հետևանքի: Հակառակ տրամաբանությունը չի բխի քննարկվող դրույթների իրավակարգավորման նպատակից:

Սույն գործի նկատմամբ, պատասխանողի կարծիքով, ամբողջովին կիրառելի են «Ալվարդ Գրիգորյանի և Խաչիկ Գրիգորյանի, «ՄԼԼ Ինդասթրիզ» ՍՊԸ-ի դիմումների հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի և 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով ՀՀ քաղաքացիական դատավարության նույնաբովանդակ դրույթի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2017 թվականի ապրիլի 18-ի ՍԴՈ-1363 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումները:

Պատասխանողը նշում է նաև, որ «Բողոքում նշված հիմքով նույն գործով վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել» ձևակերպման վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է իրավական դիրքորոշում իր ՍԴՈ-709 որոշման մեջ, այն է՝ «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407

հողվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը եզրահանգում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպատակով ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել հետևյալ հարցադրմանը՝

-արդյո՞ք վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ մատնանշված թերությունները վերացնելուց հետո սահմանված ժամկետում կրկին ներկայացված բողոքի հետ կապված նոր թերություններ հայտնաբերելը և այդ հիմքով բողոքն առանց քննության թողնելն այն հիմնավորմամբ, որ Վճռաբեկ դատարանը բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, չեն խոչընդոտում ՀՀ Սահմանադրությամբ, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրականացման հնարավորությանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում վիճարկվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանի արդեն իսկ կայացրած որոշում համարելու մասով, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է գտնում անդրադառնալ վերոհիշյալ հոդվածի համապատասխան դրույթի սահմանադրաիրավական բովանդակությանը՝ հաշվի առնելով ձևավորված իրավակիրառ պրակտիկան:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողի բարձրագրած հարցը մեկ այլ՝ քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսգրքերի շրջանակներում արդեն իսկ քննության է առնվել Սահմանադրական դատարանի կողմից, և նշված հարցի վերաբերյալ առկա են Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներ: Սասնավորապես՝

ա) Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի հուլիսի 20-ի ՄԴՈ-709 որոշման մեջ քրեադատավարական օրենսդրության շրջանակներում խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի՝ վիճարկվող 4-րդ մասում տեղ գտած դրույթը, համաձայն որի՝ բողոքը թողնվում է առանց քննության, եթե վճռաբեկ դատարանն այդ բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ որոշում է կայացրել, իրավագոր պահանջ է, քանզի բողոքն առանց քննության թողնելու նման հիմքի նախատեսումը կոչված է բացառելու կրկին անդրադառնալ այնպիսի հարցերի քննությանը, որոնց կապակցությամբ արդեն իսկ վճռաբեկ դատարանն արտահայտել է իր իրավական դիրքորոշումը, երբ ի հայտ չեն եկել նոր հանգամանքներ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 407 հոդվածի 4-րդ մասում օգտագործվող՝ «բողոքում նշված հիմքով» եւ «նույն գործով» ձևակերպումները ենթադրում են, որ նույնաբնույթ է համարվում կրկին ներկայացված այն բողոքը, որում նույն դիմողը միեւնույն առարկայի վերաբերյալ նույն պատճառաբանություններով ներկայացված բողոքի հիման վրա ձգտում է հասնել նպաստավոր որոշման:

Միջազգային իրավունքում հայտնի սկզբունքը՝ «Դատարանը կրկին չի որոշի արդեն որոշված գործը» (res judicata), ամրագրված է ինչպես միջազգային դատական մարմինների հիմնադիր փաստաթղթերում, այնպես էլ պետությունների՝ քրեական եւ քաղաքացիական արդարադատության վերաբերյալ օրենսդրության մեջ: Այս սկզբունքը ենթադրում է, որ դատական գործով ընդունված վերջնական որոշումը որպես իրավական որոշակիության արդյունք ենթակա է հարգանքի»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ գործով Սահմանադրական դատարանը նկատի է ունեցել Վճռաբեկ դատարանի՝ **գործն ըստ էության լուծող որոշումները**, այլ ոչ թե վճռաբեկ բողոքը վերադարձնելու վերաբերյալ որոշումները,

բ) Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-1363 որոշմամբ անդրադարձ կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233.1-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, որն իր իրավական բովանդակությամբ համարժեք է օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, քաղաքացիադատավարական օրենսդրության շրջանակներում խնդրո առարկա հարցի վերաբերյալ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից բողոքն առանց քննության թողնելն այն հիմքով, որ բողոքում նշված հիմքով նույն գործով Վճռաբեկ դատարանն արդեն իսկ որոշում է կայացրել, չի վերաբերում

վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմանն այն պատճառով, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ չի կարող անդրադարձ կատարվել վճռաբեկ բողոքի հիմքերին, քանի որ դատավարության տվյալ փուլում դրանք գործի քննության առարկա չեն դառնում»:

7. Միաժամանակ, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ 2017 թվականի ապրիլի 18-ի ՄԴՈ-1363 որոշման մեջ Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ, որն իր բովանդակությամբ համարժեք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ մասին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ, որը վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասով համարժեք է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 3-րդ մասին, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող դրույթի հետ համակարգային փոխկապակցվածության մեջ դիտարկել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի դրույթները՝ դրանց նկատմամբ կիրառելով ՄԴՈ-1363 որոշման մեջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները:

Մասնավորապես՝

ա) ՄԴՈ-1363 որոշման մեջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշումը նպատակ ունի արդեն իսկ ներկայացված բողոքի հետ կապված թերությունները վերացնելու համար պայմաններ ապահովել և դատարանի կողմից սահմանված ժամկետում այդ թերությունները վերացնելու պարագայում համարել, որ բողոքը բերվել է սահմանված կարգով: Այդ իսկ պատճառով, թերությունները պետք է առնչվեն սկզբնական բողոքին, իսկ բողոքաբերը պետք է շտկի վերադարձման որոշմամբ մատնանշված թերությունները:

Սակայն, շտկելուց բացի, բողոքաբերի կրկին ներկայացրած բողոքում այլ փոփոխություններ կատարելու կամ նոր ձևական սխալներ թույլ տալու պարագայում այն պետք է դիտարկվի ամբողջովին նոր բողոք՝ դրա հետ կապված բոլոր իրավական հետևանքներով հանդերձ: Հետևաբար, վերադարձման որոշմամբ մատնանշվածից բացի, այլ փոփոխություններ կատարելու պարագայում բողոքաբերն ստիպված կլինի կրել բողոքարկման ժամկետը բաց թողնելու հետ կապված ռիսկերը»:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը հատուկ շեշտել է, որ եթե վճռաբեկ դատարանի մատնանշած թերությունները չեն առնչվում վճռաբեկ բողոքի տեքստին, նույն բողոքի պատճենը գործը քննող դատարան և գործին մասնակցող անձանց կրկին ուղարկելու մասին ապացույցներ ներկայացնելու պահանջը չի բխում ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված՝ անձի՝ արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից,

բ) ՄԴՈ-1363 որոշման մեջ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները. «... վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման մեջ պետք է նշվեն վճռաբեկ բողոքի հետ կապված առկա բոլոր այն թերությունները, որոնք օրենքի համաձայն հիմք են վճռաբեկ բողոքը վերադարձնելու համար և որոնց շտկելուց հետո բողոքը կհամարվի սահմանված կարգով ներկայացված»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ իրավական դիրքորոշումները վերաբերելի են նաև քննության առարկա իրավակարգավորումներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշումը չի կարող համարվել բողոքում նշված հիմքով նույն գործով արդեն իսկ կայացված Վճռաբեկ դատարանի որոշում:

2. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա է վերանայման, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման եզրափակիչ մասի առաջին կետում բացահայտված սահմանադրաիրավական բովանդակությունից տարբերվող մեկնաբանությամբ:

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1370



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՋՈՒԼԵՏԱ ԵՍԱՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 1202-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՆՈՏԱՐԻԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ  
56-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 4-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ Ա. Եղիազարյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ջուլետա Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Ջուլետա Եսայանի՝ 2017 թվականի փետրվարի 8-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998թ. հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999թ. հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «Կտակը վերացնելը, փոփոխելը և լրացնելը» վերտառությամբ 1202-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կտակարարն իրավունք ունի կտակ կազմելուց հետո ցանկացած ժամանակ վերացնել, փոփոխել կամ լրացնել իր կտակը, ընդ որում, նա պարտավոր չէ նշել կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու պատճառները:

2. Կտակարարն իրավունք ունի նոր կտակի միջոցով՝

1) ամբողջությամբ վերացնել նախկին կտակը.

2) փոփոխել նախկին կտակը դրանում պարունակվող առանձին կտակային կարգադրությունները վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու կամ կտակը նոր կարգադրություններով լրացնելու միջոցով:

3. Ավելի ուշ արված և նախորդ կտակի կամ դրա առանձին կարգադրությունները վերացնելու մասին ուղղակի նշումներ չպարունակող կտակը նախկին կտակը վերացնում է իրեն հակասող մասով:

4. Կտակը վերացնող կամ փոփոխող ավելի ուշ կտակն անվավեր ճանաչվելու դեպքում վավեր է համարվում նախկինում կազմված կտակը:

5. Հետագա կտակով ամբողջովին կամ մասնակիորեն վերացված կտակը չի վերականգնվում, եթե կտակարարն ամբողջությամբ կամ համապատասխան մասով վերացրել է նաև հետագա կտակը:

6. Կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին դիմումը պետք է ներկայացվի կտակ կազմելու համար՝ սույն օրենսգրքով սահմանված ձևով:»:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 19-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2016թ. նոյեմբերի 12-ին ստորագրված և 2016թ. նոյեմբերի 26-ին ուժի մեջ մտած ՀՕ-181-Ն ՀՀ օրենքով կատարվել է փոփոխություն: Մասնավորապես, դիտարկվող հոդվածի 6-րդ մասում «հայտարարությունը պետք է արվի» բառերը փոխարինվել են «դիմումը պետք է ներկայացվի» բառերով:



«Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2001թ. դեկտեմբերի 4-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2001թ. դեկտեմբերի 27-ին և ուժի մեջ է մտել 2002թ. մարտի 1-ին:

Օրենքի՝ «Կտակի վավերացումը» վերտառությամբ 56-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է.

«Կտակը կարող է վերացվել կամ փոփոխվել կտակարարի կողմից՝ համապատասխան դիմում տալու կամ նոր կտակ կազմելու ձևով: Կտակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև կտակը վերացնելու մասին դիմումը վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը, բացառությամբ նոտարին փոխարինելու և պաշտոնից ազատելու դեպքերի»:

Օրենքի վերոնշյալ հոդվածում ՀՀ Ազգային ժողովի կողմից 2016թ. հոկտեմբերի 19-ին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 2016թ. նոյեմբերի 12-ին ստորագրված և 2016թ. նոյեմբերի 26-ին ուժի մեջ մտած ՀՕ-180-Ն ՀՀ օրենքով կատարվել է փոփոխություն: Մասնավորապես, վերաշարադրվել է դիտարկվող հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը: Մինչ այդ, դիտարկվող հոդվածի 4-րդ մասի երկրորդ նախադասությունը շարադրված է եղել հետևյալ խմբագրությամբ. «Կտակի վերացումը կամ դրանում փոփոխություններն ու լրացումները վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Ջուլետա Եսայանը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Գեորգի Լևոնի Մկրտչյանի և Շենգավիթ նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի՝ 04.03.2011թ. վավերացված կտակն անվավեր ճանաչելու պահանջի մասին: Առաջին ատյանի դատարանի դատական ակտով հաստատվել է, որ առկա են երկու վավերացված կտակներ: Մասնավորապես՝

ա/ «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի կողմից 13.01.2011թ. վավերացված կտակի համաձայն՝ Մերյոժա Եսայանն իրեն պատկանող ամբողջ գույքը հավասար բաժիններով կտակել է Արման Թովմասի Թադևոսյանին և Անուշ Թովմասի Նիկոլայանին,

բ/ «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի կողմից 04.03.2011թ. վավերացված կտակի համաձայն՝ Մերյոժա Եսայանն իրեն պատկանող ամբողջ գույքը կտակել է Գեորգի Լևոնի Մկրտչյանին:

Դատարանի 21.12.2015 թվականի թիվ ԵՇԴ/3377/02/14 վճռով հայցը բավարարվել է, և անվավեր է ճանաչվել «Շենգավիթ» նոտարական տարածքի նոտար Աստղիկ Մազմանյանի կողմից 04.03.2011թ. վավերացված կտակը:

Դատարանն իր վճիռը հիմնավորել է հետևյալով. «Օրենսդիրը թույլատրում է կտակը կազմելիս և նոտարի կողմից վավերացվելիս կտակարարի ցանկությամբ ներկա գտնվել վկային, եթե կտակարարն ի վիճակի չէ անձամբ կարդալ կտակը: Վիճարկվող դեպքում վկայի անհրաժեշտությունն չի եղել և պատասխանողն էլ ներկա գտնվելով կտակի կազմանը, վկայի կարգավիճակում չի գտնվել, որպես ներկա գտնվող անձ իր ներկայությամբ խախտել է կտակի կազման համար օրենսդրի կողմից սահմանված կարգը: Վիճարկվող դեպքում չի պահպանվել նաև օրենսդրի կողմից սահմանված կտակի վերացումը կամ դրանում փոփոխություններն ու լրացումները հիմնական նոտարի կողմից կատարված լինելու կանոնը, որոնք երկուսը միասին վերցված, կտակն անվավեր ճանաչելու հիմք են հանդիսանում, քանի որ հակասում են օրենսդրի կողմից սահմանված կտակի կազման, կտակը վերացնելու, փոփոխելու, լրացնելու կարգին ու պայմաններին»:

Նշված վճռի դեմ պատասխանողի անունից բերվել են վերաքննիչ բողոքներ, որոնք ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ 05.05.2016 թվականի որոշմամբ բավարարվել են՝ վճիռը բեկանվել և փոփոխվել է՝ հայցը մերժվել է:

Վերաքննիչ դատարանն իր որոշումը հիմնավորել է հետևյալով. «Դատարանը Կտակն անվավեր ճանաչելու մասին պահանջի բավարարման հիմքում դրել է նաև ՀՀ քաղ. օր.-ի 1202-րդ և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածների վկայակոչմամբ արված այն հետևությունը, թե «չի պահպանվել նաև օրենսդրի կողմից սահմանված կտակի վերացումը կամ դրանում փոփոխություններն ու լրացումները հիմնական նոտարի կողմից կատարված լինելու կանոնը» (թերևս, այստեղ առկա է վրիպակ, և Դատարանը նկատի է ունեցել «հիմնական կտակը վավերացրած նոտարին»՝ ինչպես նշված է «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածում): Այն փաստը, որ 04.03.2011թ. Կտակը վավերացվել է ոչ այն նոտարի կողմից, ով վավերացրել էր նույն կտակարարի 13.01.2011թ. կտակը, անվիճելի է, սակայն այդ փաստը որպես Կտակի անվավերության հիմք որակվել չի կարող առնվազն այն պատճառով, որ պայմանականորեն կտակի վավերացման՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգի խախտման մասին վկայող փաստ համարվելու դեպքում անգամ այն չի կարող մեկնաբանվել որպես կտակարարի կամքի արտահայտության ըմբռնման վրա ազդած հանգամանք և ՀՀ քաղ. օր.-ի 1211-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով հիմք չէ Կտակն անվավեր ճանաչելու համար: Բացի այդ, ՀՀ քաղ. օր.-ի՝ կտակը վերացնելը, փոփոխելը և լրացնելը կանոնակարգող 1202-րդ հոդվածը չի պարունակում նոր կտակը վավերացնող նոտարի վերաբերյալ որևէ այնպիսի վերապահում կամ սահմանափակում, ինչպիսին պարունակվում է «Նո-

տարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում, և այս անհամապատասխանությունն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի և 24-րդ հոդվածի ուժով պետք է լուծվի հոգուտ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ տվյալ դեպքում կիրառելի դարձնելով բացառապես այդ օրենսգրքի 1202-րդ հոդվածը և թույլ տալով ձեռնպահ մնալ Կտակն այլ նոտարի կողմից վավերացված լինելու փաստը որպես կտակի վավերացման կարգի խախտում որակելուց:

Այսպիսով, Կտակը չէր կարող անվավեր ճանաչվել նաև «կտակի վերացումը հիմնական կտակը վավերացրած նոտարի կողմից կատարվելու կանոնը պահպանված չլինելու» պատճառաբանությամբ»:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր՝ 03.08.2016 թվականի որոշմամբ մերժել է Ջուլետա Եսայանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

Վճռաբեկ դատարանն իր որոշումը, ի թիվս այլնի, հիմնավորել է նաև նրանով, որ բողոքաբերը բերված վճռաբեկ բողոքում թեև վկայակոչել է ՀՀ վճռաբեկ դատարանի 21.12.2006 թվականի թիվ 3-2504(ՏԴ), 05.09.2007 թվականի թիվ 3-1224(ՎԴ), 26.12.2008 թվականի թիվ ԿԴ3/0026/02/08, 12.03.2010 թվականի թիվ ԵԴԴ/0272/02/08 որոշումները, ՀՀ սահմանադրական դատարանի 25.02.2014 թվականի ՄԴՈ-1140 որոշումը, սակայն չի մեջբերել դրանց և բողոքարկվող որոշման ենթադրյալ հակասող մասերը, չի կատարել համեմատական վերլուծություն՝ բողոքարկվող դատական ակտի և վերոգրյալ դատական ակտերում կիրառված միևնույն նորմերի՝ իրար հակասող մեկնաբանության վերաբերյալ: Այդ կապակցությամբ Վճռաբեկ դատարանը կատարել է հետևություն, որ բերված բողոքում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքը հիմնավորված չէ:

3. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի 1202-րդ հոդվածը հակասում է ՀՀ Սահմանադրության 1, 3, 10, 28, 29, 60, 61 և 63-րդ հոդվածներին: Դիմողը գտնում է նաև, որ օրենսգրքի 1202-րդ հոդվածը և օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասը՝ իրավակիրառ պրակտիկայում այս երկու օրենքների անհամապատասխանության վերաբերյալ տրված մեկնաբանությամբ, հակասում են իրավական որոշակիության սկզբունքին:

Իր տեսակետը հիմնավորելու համար դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերի միջև առկա հակասությունը պայմանավորել է իրավական անորոշության առկայությունը, ինչն, իր հերթին, հանգեցնում է ՀՀ Սահմանադրության 60, 61, 63-րդ հոդվածներով նախատեսված՝ սեփականության իրավունքի, դատարանի մատչելիության և արդար դատաքնության իրավունքների խախտման: Ըստ դիմողի՝ այդ հակասությունը խախտում է նաև ՀՀ Սահմանադրության 1-ին, 3-րդ հոդվածները:

Դիմողն արձանագրում է, որ հին կտակը վերացնելուն վերաբերող իրավահարաբերությունները կանոնակարգող նորմը բաժանվել է երկու մասի:

Մի դեպքում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի վիճարկվող հոդվածով չի նախատեսվում կտակը կազմած նոտարի կողմից հին կտակը վերացնելուն և նոր կտակ կազմելուն ուղղված գործողությունների կատարման պարտականություն, մյուս դեպքում՝ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող նորմով նախատեսվում է, որ կտակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև կտակը վերացնելու մասին դիմումը վավերացնում է հիմնական կտակը վավերացրած նոտարը, բացառությամբ նոտարին փոխարինելու և պաշտոնից ազատելու դեպքերի:

Դիմողը նաև նշում է, որ դատարանի, մասնավորապես՝ Վերաքննիչ դատարանի, կողմից պետք է կիրառվեր «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը և ոչ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ գործի վարույթը ենթակա է կարճման: Պատասխանողն իր դիրքորոշումը հիմնավորում է հետևյալով.

**նախ**՝ օրենսգրքի և օրենքի վերլուծության հիման վրա պատասխանողն արձանագրում է, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված է կտակի վերացման երկու եղանակ՝ նոր կտակ կազմելու միջոցով, որի կարգավորումներն իրականացվում են օրենսգրքի 1202-րդ հոդվածով, և դիմում տալու միջոցով, որի կարգավորումներն իրականացվում են օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասով:

Պատասխանողը գտնում է, որ բացառապես նախկին կտակը վավերացրած նոտարի կողմից կտակի մեջ կատարվող հետագա փոփոխությունները, լրացումները կամ նախկին կտակը վերացնող փաստաթուղթը վավերացնելու պահանջը վերաբերում է միայն այն դեպքին, երբ կտակարարն իր այդ իրավունքն իրացնում է համապատասխան դիմում տալու, այլ ոչ թե՛ նոր կտակ կազմելու միջոցով: Իսկ եթե կտակարարը կազմում է նոր կտակ, ապա այդ դեպքում կիրառելի են օրենսգրքի 1202-րդ հոդվածի պահանջները, որում նույն նոտարի մոտ վավերացնելու պահանջ առկա չէ:

Նշված վերլուծության արդյունքում պատասխանողը գտնում է նաև, որ օրենսգրքի և օրենքի վիճարկվող դրույթների միջև առկա չէ որևէ հակասություն և դրանով պայմանավորված՝ իրավական անորոշություն, վիճարկվող դրույթները հստակ և լիարժեք կարգավորում են յուրաքանչյուրն իր բովանդակության մեջ ներառված իրավահարաբերությունների ողջ ծավալը՝ նախատեսելով միմյանցից տարբեր ընթացակարգեր նույն հետևանքն առաջացնող երկու տարբեր իրավաբանական փաստերի՝ նոր կտակի և կտակը վերացնող դիմումի առնչությամբ: Արդյունքում, հղում կատարելով ՍԴՈ-864 որոշման մեջ իրավունքի բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումներին, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող նորմերը համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

**Երկրորդ`** վերլուծելով գործի փաստական հանգամանքները, այն, որ Ջուլետա Եսայանը դատարաններում վիճարկել է ավելի ուշ կազմված կտակը` հրաժարվելով ըստ օրենքի ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու հայցապահանջից, պատասխանողը գտնում է, որ վերջինս այլևս չէր կարող պահանջել անվավեր ճանաչել ավելի ուշ կազմված կտակը, քանի որ ավելի վաղ կազմված կտակի պայմաններում հնարավոր չէ պատշաճ հիմնավորել, թե ինչու և ինչ հիմքերով է դրսևորվում իր իրավունքների խախտումը: Այս կապակցությամբ վկայակոչելով իրավական շահագրգռվածության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան իրավական դիրքորոշումները` պատասխանողը կարծում է, որ դատական ակտերով համապատասխան նորմերի կիրառումը դիմողի նկատմամբ չեն կարող միանշանակորեն գնահատվել որպես դիմողի իրավունքների խախտում` այն պատճառով, որ համապատասխան հիմնավորումներ չեն ներկայացվել դիմողի իրական և օրինական շահի առկայության վերաբերյալ, որը գոյություն ունի կամ կարող էր ծագել ավելի ուշ կազմված կտակն անվավեր ճանաչվելու պարագայում:

5. Դիմումի ուսումնասիրությունից բխում է, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումը պայմանավորում է կտակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև կտակը վերացնելու առնչությամբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի համապատասխան իրավակարգավորումների միջև ենթադրյալ հակասությամբ պայմանավորված իրավական անորոշությամբ, այն իմաստով, թե կտակում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, ինչպես նաև կտակը վերացնելու մասին դիմումը պետք է վավերացնի հիմնական կտակը վավերացրած նոտարը, թե` այլ նոտար:

Հաշվի առնելով վերոգրյալը` սույն գործի քննության շրջանակներում ենթակա են պարզման հետևյալ հարցադրումները.

- արդյո՞ք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի և «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի միջև քննության առարկա հարցի առնչությամբ առկա է հակասություն,

- եթե առկա է, ապա արդյո՞ք օրենսդրությամբ նախատեսվում է տվյալ հակասության հաղթահարման որևէ կառուցակարգ:

Օրենսգրքի 1202-րդ հոդվածը` կարգավորելով կտակի փոփոխման, վերացման կամ լրացման հետ կապված իրավահարաբերությունները` չի պարունակում համապատասխան դիմումը **կոնկրետ նոտարի** կողմից վավերացվելու պահանջ: Օրենսգրքի 1202-րդ հոդվածի 6-րդ մասը պարզապես սահմանում է, որ կտակը վերացնելու, փոփոխելու կամ լրացնելու մասին դիմումը պետք է ներկայացվի կտակ կազմելու համար` ՀՀ քաղաքացիական օրենսգրքով **սահմանված ձևով**: Իսկ օրենսգրքի` «Կտակի

ձևը» վերտառությամբ 1203-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ կտակը պետք է կազմվի գրավոր՝ նշելով այն կազմելու վայրը և ժամանակը, անձամբ ստորագրվի կտակարարի և **վավերացվի նոտարի կողմից**: Ընդ որում, ընդունումից ի վեր օրենսգրքի 1203-րդ հոդվածի 1-ին մասը փոփոխությունների չի ենթարկվել, իսկ օրենսգրքի 1202-րդ հոդվածի 6-րդ մասում կատարված միակ փոփոխությունը չի վերացրել այդ մասով սահմանված դրույթի տրամաբանությունը: **Այսինքն՝ ընդունումից ի վեր օրենսգրքը կտակի փոփոխման, վերացման կամ լրացման առնչությամբ չի պարունակում համապատասխան դիմումը կոնկրետ նոտարի կողմից վավերացվելու պահանջ:**

Մինչդեռ «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող հոդվածի 4-րդ մասը՝ կարգավորելով կտակի փոփոխման, վերացման կամ լրացման հետ կապված իրավահարաբերությունները, պարունակում է համապատասխան դիմումը **կոնկրետ նոտարի**, այն է՝ **հիմնական կտակը վավերացրած նոտարի կողմից վավերացվելու պահանջ**: Ընդ որում, օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասում կատարված միակ փոփոխությունը չի վերացրել այդ մասով սահմանված դրույթի տրամաբանությունը: **Այսինքն՝ ընդունումից ի վեր օրենքը կտակի փոփոխման, վերացման կամ լրացման առնչությամբ պարունակում է համապատասխան դիմումը կոնկրետ նոտարի**, այն է՝ **կտակը վավերացրած նոտարի կողմից վավերացվելու պահանջ**:

Համապատասխան իրավակարգավորումների միջև վերը նշված հակասության առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 1-ին մասի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությունը կազմված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից և քաղաքացիական իրավունքի նորմեր պարունակող այլ օրենքներից: Այլ օրենքներում պարունակվող քաղաքացիական իրավունքի նորմերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին:

Համաձայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 6-րդ մասի՝ «Օրենսգրքերի կարգավորման իրավահարաբերությունների ոլորտում Հայաստանի Հանրապետության մյուս բոլոր օրենքները պետք է համապատասխանեն օրենսգրքերին»:

Նշված իրավանորմերից ելնելով՝ իրավակիրառական պրակտիկայում օրենսգրքի և օրենքի հակասության դեպքում նախապատվությունը տրվում է օրենսգրքին: Այսինքն՝ հաշվի առնելով նշված նորմերը, ինչպես նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջները, օրենսդրորեն կարգավորված է դիտարկվող իրավական ակտերի միջև առկա հակասության հաղթահարումը, որպիսի հանգամանքը բացա-

ռում է խնդրո առարկա հարցում որևէ իրավական անորոշություն: Անձը կարող է իր վարքագիծը համապատասխանեցնել իրավական նորմերի պահանջներին՝ հիմք ընդունելով իրավական ակտերի միջև առկա հակասության հաղթահարման՝ վերոնշյալ օրենսդրական կառուցակարգը:

Բացի դրանից, դիմողը նշում է, որ Վերաքննիչ դատարանի կողմից պետք է կիրառվեր «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքը և ոչ թե՛ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը: Այսինքն՝ դիմողը բարձրացնում է իրավանորմերի ոչ թե սահմանադրականության, այլ կիրառման իրավաչափության հարց: Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումն ակնհայտ անհիմն է: Դիմողը չի ներկայացրել վիճարկվող նորմերի և իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման միջև պատճառահետևանքային կապը: Իսկ առկա հակասությունն էլ լուծված է օրենսդրական տեխնիկայի շրջանակներում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին և 6-րդ կետերով, 60-րդ հոդվածի 1-ին կետով, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ջուլետա Եսայանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1202-րդ հոդվածի, «Նոտարիատի մասին» ՀՀ օրենքի 56-րդ հոդվածի 4-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

25 մայիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1371



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՔՐԵՄԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 174-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, 262-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

30 մայիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018



կան դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի, 262-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2017 թվականի հունվարի 26-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

**Օրենսգրքի՝ «Ժամկետը բաց թողնելու հետևանքները և դրա վերականգնման կարգը» վերտառությամբ 174-րդ հոդվածի համաձայն.**

«1. Ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում:

2. Իր կողմից բաց թողնված ժամկետի վերականգնման համար դիմողը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները կամ ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում են վարույթն իրականացնող մարմնին: Այն որոշման կատարումը, որը բողոքարկված է սահմանված ժամկետի բացթողումով, նշված անձի միջնորդությամբ կարող է կասեցվել մինչև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը:

3. Հարգելի պատճառով բաց թողնված ժամկետը պետք է վերականգնվի վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ: Ընդ որում, ժամկետը վերականգնվում է այն բաց թողած անձի համար, այլ ոչ ուրիշ անձանց, եթե վարույթն իրականացնող մարմնի համապատասխան որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

4. Բաց թողնված ժամկետը վերականգնելուց հետաքննության մարմնի կամ քննիչի հրաժարումը կարող է բողոքարկվել հսկող դատախազին: Բաց թողնված ժամկետը վերականգնելուց հսկող դատախազի հրաժարումը կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Բաց թողնված

Ժամկետը վերականգնելուց դատարանի հրաժարումը կարող է բողոքարկվել վերադաս դատարան»:

Օրենսգրքի 174-րդ հոդվածը փոփոխությունների և լրացումների է ենթարկվել 2016 թվականի դեկտեմբերի 6-ի ՀՕ-214-Ն օրենքով, ըստ որի՝ նշված հոդվածի 2-րդ մասի «բաց թողնված» բառերը փոխարինվել են «իր կողմից բաց թողնված» բառերով, իսկ «շահագրգիռ անձը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում է» բառերը՝ «դիմողը, տուժողը, քաղաքացիական հայցվորը, նրանց օրինական ներկայացուցիչները կամ ներկայացուցիչները, կասկածյալը, մեղադրյալը, նրանց օրինական ներկայացուցիչները, պաշտպանը, քաղաքացիական պատասխանողը կամ նրա ներկայացուցիչը միջնորդությամբ կամ խնդրանքով դիմում են» բառերով, իսկ հոդվածի 4-րդ մասը շարադրվել է ներկա խմբագրությամբ:

**Օրենսգրքի՝ «Քննիչի գործողությունները քրեական գործով վարույթը կարճելուց և քրեական հետապնդումը դադարեցնելուց հետո» վերտառությամբ 262-րդ հոդվածի համաձայն.**

«1. Քննիչը քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման պատճենն ուղարկում է կասկածյալին, մեղադրյալին, պաշտպանին, ինչպես նաև տուժողին, նրա ներկայացուցչին, քաղաքացիական հայցվորին, քաղաքացիական պատասխանողին կամ նրանց ներկայացուցիչներին, ինչպես նաև ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչին, որոնց հայտարարության հիման վրա հարուցվել է քրեական գործը:

2. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը և վարույթը կարճելու ու քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշման բողոքարկման կարգը:

3. Սույն հոդվածի առաջին մասում նշված անձինք իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով ծանոթանալ կարճված գործի նյութերին»:

Օրենսգրքի 262-րդ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել 2006 թվականի մայիսի 25-ի ՀՕ-91-Ն օրենքով: Կատարված փոփոխություններն ու լրացումները, սակայն, չեն վերաբերում սույն գործով բարձրացված հիմնախնդրին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2015 թվականի ապրիլի 27-ին Ա. Ավագյանի հաղորդման հիման վրա նախապատրաստված նյութերով ՀՀ քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է քրեական գործ, որի վարույթը կարճվել է 2015 թվականի հունիսի 27-ի որոշմամբ:

2015 թվականի հուլիսի 2-ին Ա. Ավագյանն ստացել է վերը նշված որոշ-

ման պատճենը, իսկ 2015 թվականի հուլիսի 3-ին Ա. Ավագյանի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել գործը քննած քննիչին գործի նյութերին ծանոթանալու համար, որին ի պատասխան՝ քննիչը բանավոր պարզաբանում է տվել այն մասին, որ քրեական գործն ուղարկվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազություն:

Հետագայում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունից նույն նպատակով քրեական գործն ուղարկվում է Երևան քաղաքի դատախազություն:

2015 թվականի օգոստոսի 17-ին Երևան քաղաքի դատախազի որոշմամբ քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացվում է, իսկ 2016 թվականի հունիսի 29-ին կրկին որոշում է կայացվում քրեական գործի վարույթը կարճելու մասին:

2016 թվականի հուլիսի 2-ին Ա. Ավագյանն ստացել է վերը նշված որոշման պատճենը, իսկ 2016 թվականի հուլիսի 4-ին Ա. Ավագյանի ներկայացուցիչը միջնորդություն է ներկայացրել գործը քննած քննիչին գործի նյութերին ծանոթանալու համար, որին ի պատասխան՝ քննիչը բանավոր պարզաբանում է տվել այն մասին, որ քրեական գործն ուղարկվել է Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազություն:

Հետագայում Ավան և Նոր Նորք վարչական շրջանների դատախազությունից նույն նպատակով քրեական գործն ուղարկվում է Երևան քաղաքի դատախազություն:

2016 թվականի նոյեմբերի 14-ին Ա. Ավագյանի ներկայացուցիչը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի կարգով բողոք է ներկայացրել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան, ի թիվս այլնի, խնդրելով վերականգնել քրեական գործի վարույթը կարճելու մասին 2016 թվականի հունիսի 29-ի որոշումը բողոքարկելու համար իր և իր վստահորդի կամքից անկախ բաց թողնված ժամկետը:

2016 թվականի նոյեմբերի 15-ին որոշում է կայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանում ստացված՝ վերը նշված բողոքը տարածքային ընդդատության կարգով Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ դիմող) վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում և ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1215 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, տուժողի կողմից նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-1008 որոշման մեջ ամրա-

գրված իրավական դիրքորոշումները, գործի նյութերը դատախազի պահանջով վերջինիս անհապաղ ուղարկելու դատավարական կարգի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1236 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ.

- 1) օրենսգրքի 174-րդ հոդվածն իրավական անորոշության պատճառաբանությամբ հակասում է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին,
- 2) օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը հակասում է իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի առնչությամբ դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ դիտարկվող դրույթից պարզ չի դառնում, թե նախապես պետք է որոշում կայացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, թե պետք է ներկայացնել բողոքը և միաժամանակ՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը՝ համատեղ քննարկելու համար:

Դիմողն իր մտահոգությունը հիմնավորում է Ա. Ավագյանի գործով ձևավորված իրավակիրառական պրակտիկայով, որի շրջանակներում Ա. Ավագյանի ներկայացուցիչը, վկայակոչելով օրենսգրքի 174-րդ հոդվածի 1-ին մասը (ժամկետն անցնելուց հետո կատարված դատավարական գործողությունները համարվում են անվավեր, եթե ժամկետը չի վերականգնվում), գտնում է, որ օրենքի տեսանկյունից առանց բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու բողոք ներկայացնելն առ ոչինչ գործողություն է, իսկ դատախազը գտնում է, որ բողոքը և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը պետք է ներկայացվեն միաժամանակ:

Ըստ այդմ էլ դիմողը գտնում է, որ վերը նշված իրավական անորոշության հետևանքով դատարանը չի կարող որոշում կայացնել բողոքը հիմնավորված կամ անհիմն լինելու, համապատասխանաբար նաև բողոքը մերժելու կամ բավարարելու մասին:

Միաժամանակ, օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ դիմողն իր դիրքորոշումը հիմնավորում է նրանով, որ, ի տարբերություն նախաքննության ավարտման այլ ձևերի, գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննության ավարտման պարագայում գործի նյութերին post factum ծանոթանալու դեպքում տուժողը զրկվում է.

- օրենսգրքի 59-րդ հոդվածով նախատեսված մի շարք իրավունքներից,
- չի կարողանում օրենքով նախատեսված ժամկետում ծանոթանալ գործի նյութերին և, ըստ այդմ, պատշաճ իրացնել իր իրավունքների պաշտպանության եզակի միջոց հանդիսացող՝ գործի վարույթը կարճելու մասին որոշման բողոքարկման իրավունքը:

Այս կապակցությամբ արձանագրելով, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի

3-րդ մասում «սույն օրենսգրքով սահմանված կարգով» և «կարճված գործի նյութերին» նորմատիվ պահանջների միջև առկա է ներքին հակասություն, դիմողը գտնում է, որ տուժողի կողմից նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի ՄԴՈ-1008 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները պետք է հավասարապես կիրառելի լինեն գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կողմից գործի նյութերին ծանոթանալու իրավունքի նկատմամբ:

4. Պատասխանողը, հղում կատարելով իրավական որոշակիության սկզբունքի հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, գտնում է, որ գործնականում օրենքի որևէ դրույթի միմյանց հակասող մեկնաբանությունների փաստի առկայությունը պետական առանձին մարմինների, քաղաքացիների, դատական մարմինների կողմից ինքնին չի կարող հակասել իրավական որոշակիության սկզբունքին:

Միաժամանակ, ըստ պատասխանողի բաց թողնված ժամկետները հարգելի ճանաչելու և բողոքարկման ինստիտուտների էությունից բխում է, որ բողոքարկման օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու համար անհրաժեշտ է բողոքարկման գործնականում իրացված ցանկություն, այն է՝ բողոքի առկայություն, որին կցվում է միջնորդություն բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին: Այդ տրամաբանությունն ընկած է դատավարական բոլոր գործողությունների և դատական ակտերի, այդ թվում՝ վճիռների և դատավճիռների բողոքարկման իրավակարգավորումների հիմքում, իսկ հակառակը կհանգեցնեք ռեսուրսների անհիմն վատնման:

Պատասխանողի կարծիքով, օրենսգրքի 174-րդ հոդվածի դրույթն ամբողջությամբ համապատասխանում է իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության և օգտագործվող ձևակերպումների հստակության, բավարար մատչելիության, սուբյեկտների կողմից իրենց վարքագիծն օրենքին համապատասխանեցնելու պահանջներին:

Օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հետ կապված պատասխանողն անհրաժեշտ է համարում նկատել, որ այն կարճված գործի նյութերին ծանոթանալու կարգի հարցում հղում է կատարում օրենսգրքի այլ դրույթների իրավակարգավորումներին: Մասնավորապես՝ 59 և 75-րդ հոդվածների 1-ին մասերի 9-րդ կետերով, 77-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով և 79-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով շահագրգիռ անձանց համար իրավունք է սահմանվել **նախաքննության ավարտման պահից** ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի տեղեկություններ: ՀՀ սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1008 որոշմամբ

արդեն իսկ անդրադարձ է կատարել խնդրո առարկա իրավակարգավորմանը և օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետի նախաքննության ավարտման պահից դրույթը ճանաչել է ՀՀ Սահմանադրությանը համապատասխանող: Պատասխանողը գտնում է, որ ՄԴՈ-1008 որոշման 7-րդ կետում արտահայտված դիրքորոշումները կիրառելի են նաև քրեական գործի վարույթը կարճելով նախաքննությունն ավարտելու դեպքում:

Ինչ վերաբերում է դիմողի բարձրացրած այն խնդրին, թե գործնականում քրեական գործի նյութերն ուղարկվում են դատախազին քրեական գործի կարճման որոշման օրինականության ստուգման նպատակով և տուժողը զրկվում է այդ նյութերին ծանոթանալու և բողոքարկման իր իրավունքն իրացնելու հնարավորությունից, պատասխանողն անհրաժեշտ է համարում նկատել, որ այդ խնդիրը ոչ թե նորմատիվային, այլ բացառապես կազմակերպչական-տեխնիկական է. գործի նյութերը դատախազին ուղարկելու պայմաններում տուժողների համար գործի նյութերին ծանոթանալը հնարավոր է ապահովել դրանք նախապես պատճենահանելու, թվայնացնելու կամ այլ եղանակներով:

Ըստ պատասխանողի՝ դատարանները, որպես նախնական քննության նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող դատական աստյան, իրավակիրառական պրակտիկական վերջնական ձևավորող մարմին են, հետևաբար, կոնկրետ դրույթների ճիշտ մեկնաբանմամբ և կիրառմամբ կարող են բացառել իրավունքների խախտումները:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը կարծում է, որ օրենսգրքի 174-րդ հոդվածով և 262-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին:

5. Սույն գործի շրջանակներում առաջադրված սահմանադրաիրավական վեճը Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում քննության առնել օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց՝ կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, նրա ներկայացուցչի, քաղաքացիական հայցվորի, քաղաքացիական պատասխանողի կամ նրանց ներկայացուցիչների, ինչպես նաև ֆիզիկական անձի կամ իրավաբանական անձի ներկայացուցչի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանության, իրավունքի գերակայության սկզբունքի երաշխավորման տեսանկյունից՝ հաշվի առնելով քրեական գործերի կարճման ձևով նախաքննությունն ավարտվելու դեպքում այդ անձանց գործի նյութերին ծանոթանալու իրավունքի իրականացման անհրաժեշտությունն ու առկա իրավակիրառ պրակտիկան:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

ա) օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառման կապակցությամբ գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճենն ստանալու պահից տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների գործի նյութերին ծանոթանալու ու բողոքարկման իրենց իրավունքն իրացնելու և միննույն ժամանակ նույն գործի նյութերին ծանոթանալու ու որոշման օրինականությունն ստուգելու դատախազական հսկողության իրականացման միջև հավասարակշռության ապահովման տեսանկյունից՝ մարդու իրավունքների պաշտպանությանը նախապատվության տալու երաշխավորվածությունը,

բ) օրենսգրքի 174-րդ հոդվածով նախատեսված դրույթի կիրառման վերաբերյալ ձևավորված իրավակիրառ պրակտիկան այն մասով, թե բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու հարցի լուծման նպատակով օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մասնակիցները, մասնավորապես, տուժողը՝ պետք է բողոքի հետ միաժամանակ իրավասու մարմնին կամ անձին ներկայացնի բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու միջնորդություն, թե պետք է նախապես միջնորդություն ներկայացնի բաց թողնված ժամկետը հարգելի ճանաչելու մասին և նոր իրավունք ստանա կատարելու համապատասխան գործողություն:

6. Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 174-րդ հոդվածում ենթադրյալ իրավական անորոշության վերաբերյալ դիմողի բարձրացրած հարցը սերտորեն կապված է գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննության ավարտման պարագայում օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց, մասնավորապես՝ տուժողի կողմից գործի նյութերին ծանոթանալու իրավունքի հետ, ուստի Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, նախնառաջ, անդրադառնալ վիճարկվող օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթի սահմանադրականության հարցին:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տուժողի որպես դատավարության մասնակցի կողմից նախաքննության ավարտին գործի նյութերին ծանոթանալու վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանն արտահայտել է համապատասխան իրավական դիրքորոշումներ իր ՍԴՈ-1008 որոշման մեջ: Մասնավորապես, օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված՝ քրեական գործի նյութերին ծանոթանալու՝ տուժողի իրավունքի իրացման պահի հատակեցմանն ուղղված՝ նույն օրենսգրքի «Նախնական քննության ավարտը» վերտառությամբ 196-րդ, «Մեղադրական եզրակացություն կազմելուց առաջ գործի նյութերին ծանոթացնելը» վերտառությամբ 265-րդ և «Քրեական գործի նյութերին ծանոթանալու կարգը» վերտառությամբ 266-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում Սահմանա-

դրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «գործի նյութերին՝ շահագրգիռ սուբյեկտների, այդ թվում՝ տուժողի կողմից ծանոթանալու ժամանակահատվածը կազմում է նախաքննության ինքնուրույն մաս, նախորդում է նախաքննության ավարտին, և, հետևաբար, տուժողը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված՝ գործի նյութերին ծանոթանալու իր իրավունքն իրացնում է մինչև նախաքննության ավարտը»:

Նույն որոշման շրջանակում Սահմանադրական դատարանը նաև արձանագրել է, որ. «...իրավակիրառական պրակտիկան ևս զարգացել է նշված ուղղությամբ, միաժամանակ կարևորում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «նախաքննության ավարտման պահից» ձևակերպման մեկնաբանումը և կիրառումը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 196-րդ, 265-րդ և 266-րդ հոդվածների տրամաբանությանը համապատասխան: Նախաքննության փուլում տուժողի վերոհիշյալ իրավունքների, նախաքննություն իրականացնող մարմինների համապատասխան պարտականությունների համադրված վերլուծության հիման վրա, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև մեղադրական եզրակացություն կազմելը, այն է՝ նախաքննության ... ավարտին նախորդող ժամանակահատվածում՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները չեն խոչընդոտում տուժողի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությանը»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հիշատակված որոշման շրջանակում դատավարության մասնակցի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի վերաբերյալ վերը նշված իրավական դիրքորոշումները վերաբերում են մեղադրական եզրակացություն կազմելու միջոցով նախաքննության ավարտման դեպքին, այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված անձանց, մասնավորապես, տուժողի՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքի նկատմամբ:

Ըստ այդմ էլ, հիշյալ իրավական դիրքորոշումների համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նաև նրան, որ գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների՝ գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:



7. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը» դրույթը դիտարկել վիճարկվող դրույթների հետ համակարգային փոխկապակցվածության մեջ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը» դրույթի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ **գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողին կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցներին՝ գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը պարզաբանելու պարտականությունը կատարվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:**

8. Վիճարկվող դրույթների իրավակիրառական պրակտիկայի գնահատման շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև հետևյալը.

**առաջին՝** առկա է «Կարճված և կասեցված քրեական գործերը ՀՀ գլխավոր դատախազություն ուղարկելու մասին» ՀՀ գլխավոր դատախազի՝ 1999 թվականի փետրվարի 4-ի թիվ 15/2-2 ցուցումը, որը տրվել է, ի թիվս այլնի, ՀՀ Սահմանադրության (1995 թվականի խմբագրությամբ) 103-րդ հոդվածի և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարումն ապահովելու, դատախազական հսկողությունն ուժեղացնելու նպատակով,

**երկրորդ՝** ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1236 որոշման եզրափակիչ մասի 1-ին կետում ամրագրել է հետևյալը. «... ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է հետևյալին ... մինչդատական վարույթում հետաքննության մարմնից, քննիչից պահանջված նյութերը, փաստաթղթերը, քրեական գործը հսկողության նպատակով դատախազին տրամադրելու վերաբերյալ վերջինիս պահանջի կատարումը պետք է իրականացվի անհապաղ»:

Վերը շարադրված պայմանների հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ձևավորվել է մի իրավակիրառական պրակտիկա, որի շրջանակներում օրենսդիրը և՛ հսկող դատախազի, և՛ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մասնակիցների, այդ թվում տուժողի համար սահմանել է 7-օրյա ժամկետ գործի նյութերն ուսումնասիրելու համար:

Հաշվի առնելով գործի նյութերի ուսումնասիրության կարևորությունը, առանց որի հնարավոր չէ գործի վարույթը կարճելու մասին որոշման հիման վրա ամբողջական կարծիք կազմել տվյալ որոշման իրավաչափության վերաբերյալ, Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ **ձևավորված իրավակիրառական պրակտիկայում՝ հանրային սուբյեկտի (դատախազի) լիազորությունը և մասնավոր սուբյեկտի (դատավարության մասնակցի) իրավունքն ամրագրող քրեադատավարական նորմերի միջև մրցակցության պայմաններում՝ տուժողի և դատավարության մյուս մասնակիցների իրավունքների պաշտպանությունը նախապատվություն տալու փոխարեն, լուծման առաջնահերթությունը վերապահվել է հսկող դատախազի համապատասխան լիազորության իրականացմանը:**

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև օրենսգրքի 174-րդ հոդվածով՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու ինստիտուտի ամրագրումն ուղղված է հենց մասնավոր սուբյեկտների, տվյալ դեպքում՝ տուժողի և դատավարության մյուս մասնակիցների համապատասխան իրավունքի իրացմանը, այդուհանդերձ, հիշյալ իրավակարգավորումը չի սահմանում այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր, ինչը ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ 75-րդ հոդվածի պահանջն է:

Այդ կապակցությամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսգրքի 174-րդ հոդվածով սահմանված՝ բաց թողնված ժամկետը վերականգնելու իրավունքի արդյունավետ իրականացման կառուցակարգերի ու ընթացակարգերի արդյունավետությունը պետք է պայմանավորված լինի, մասնավորապես, օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի սահմանադրաիրավական բովանդակության տրամաբանությամբ ու նշանակությամբ, որն արդեն իսկ բացահայտված է սույն որոշման նախորդ կետերում:

9. Անդրադառնալով օրենսգրքի 174-րդ հոդվածի սահմանադրականության հարցին՝ դրանում ենթադրյալ իրավական անորոշության առկայության տեսանկյունից՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած հարցին է առնչվում նույն օրենսգրքի 174-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «...Այն որոշման կատարումը, որը բողոքարկված է սահմանված ժամկետի բացթողումով, նշված անձի միջնորդությամբ կարող է կասեցվել մինչև բաց թողնված ժամկետի վերականգնման հարցի լուծումը»:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ նշված դրույթում՝ «այն որոշման կատարումը, որը բողոքարկված է»

բառակապակցության առկայությունը վկայում է հետևյալի մասին, այն է՝ **բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը պետք է ներկայացվի համապատասխան բողոքի հետ միասին:** Այս հիմնավորմամբ պայմանավորված՝ Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում օրենսգրքի 174-րդ հոդվածում իրավական անորոշության կամ res judicata սկզբունքի որևէ խախտման վերաբերյալ դիմողի փաստարկները:

10. Սույն գործում առկա նյութերի շրջանակում Սահմանադրական դատարանն ի գիտություն է ընդունում, որ ըստ Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի 2017 թվականի մայիսի 15-ի 05/12/9334-17 թվակիր գրությամբ ներկայացված տեղեկանքի՝ «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի 2015 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 134-Լ հրամանով հաստատված կարգի 2-րդ կետի համաձայն՝ 2016 թվականի հունվարի 11-ից հետո բոլոր քրեական գործերի նյութերը ենթակա են թվայնացման տասնհինգ օրը մեկ պարբերականությամբ, իսկ նախաքննությունն ավարտելու դեպքում՝ դատավարության մասնակիցներին քրեական գործի նյութերը ծանոթացնելուց առաջ: Ուստի, մինչև դատախազի կողմից քրեական գործի կարճման օրինականությունը ստուգելը, երբ կարճված քրեական գործը գտնվում է դատախազությունում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված անձանց նրանց դիմումների հիման վրա, քննիչը ծանոթանալու համար կարող է տրամադրել քրեական գործի նյութերի թվայնացված տարբերակը: Բացի այդ, վերոնշյալ կարգի 11-րդ կետի համաձայն պահանջի դեպքում քրեական գործի թվայնացման նյութերը հսկող դատախազին ուղարկվում են էլեկտրոնային կրիչով կամ լազերային սկավառակով»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը ներկայացվում է համապատասխան բողոքի հետ միասին:

2. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 262-րդ հոդվածի 3-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ **գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողի կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցների գործի նյութերին ծանոթանալու իրավունքն իրացվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:**

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 174-րդ հոդվածի և 262-րդ հոդվածի 3-րդ մասի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ նույն օրենսգրքի 262-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Սույն հոդվածի առաջին մասում նշված անձանց պարզաբանվում է գործի նյութերի հետ ծանոթանալու նրանց իրավունքը» դրույթը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ **գործի վարույթը կարճելու միջոցով նախաքննությունն ավարտելիս տուժողին կամ օրենսգրքի 262-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարության մյուս մասնակիցներին՝ գործի նյութերին ծանոթանալու նրանց իրավունքը պարզաբանելու պարտականությունը կատարվում է մինչև գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնելը, այն է՝ նախաքննության ավարտին նախորդող ժամանակահատվածում:**

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

30 մայիսի 2017 թվականի  
ՄԴՈ-1372



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՁԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 285-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

13 հունիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ ՀՀ գլխավոր դատախազության հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Ա. Մանուկյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018  
117

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ գլխավոր դատախազի՝ 2017 թվականի մարտի 7-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի՝ «Կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունների քննումը» վերտառությամբ 285-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Քննելով միջնորդությունը՝ դատավորը որոշում է կայացնում մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին: Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններիս չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց: Որոշումը ենթակա է անհապաղ կատարման»:

Օրենսգրքի 285-րդ հոդվածը փոփոխության և լրացման է ենթարկվել ՀՀ Ազգային ժողովի կողմից 25.05.2006 թվականին ընդունված, ՀՀ Նախագահի կողմից 20.06.2006 թվականին ստորագրված և 08.07.2006 թվականին ուժի մեջ մտած՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով, որով, ի թիվս այլնի, օրենսգրքի 285-րդ հոդվածի վերնագիրը «ընտրելու» բառից հետո լրացվեց «կամ կալանավորման ժամկետը երկարացնելու» բառերով, ինչպես նաև վերոհիշյալ հոդվածի հինգերորդ մասի առաջին նախադասությունը «ընտրելու» բառից հետո լրացվեց «կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու» բառերով, իսկ երկրորդ նախադասությունը փոխարինվեց հետևյալ խմբագրությամբ՝ նախադասություններով. «Որոշումը կայացնելու օրը դատարանը այն ստորագրությամբ հանձնում է կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը

երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին, իսկ դատական նիստին վերջիններին չներկայանալու դեպքում՝ պատշաճ ձևով ուղարկում է նրանց: Որոշումը ենթակա է անհապաղ կատարման»:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

2016 թվականի հուլիսի 22-ին ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննվող թիվ 58203216 քրեական գործով Լուսինե Ջանինյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 203-րդ հոդվածի 1-ին մասով և 178-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով:

2016 թվականի հուլիսի 22-ին Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի /այսուհետ՝ դատարան/ կողմից Լ. Ջանինյանի նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

2016 թվականի սեպտեմբերի 13-ին նախաքննական մարմնի կողմից Լ. Ջանինյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություն է ներկայացվել դատարան:

2016 թվականի սեպտեմբերի 13-ին դատարանի թիվ ԵԿԴ/0151/06/16 որոշմամբ քննիչի միջնորդությունը բավարարվել է՝ թիվ 58203216 քրեական գործով մեղադրյալ Լուսինե Ջանինյանին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացվել է 2 ամիս ժամկետով՝ մինչև 2016թ. նոյեմբերի 20-ը: Մեղադրյալ Լուսինե Ջանինյանի միջնորդությունը բավարարվել է նրա նկատմամբ որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառվել է գրավը, գրավի գումարի չափը սահմանվել է նվազագույն աշխատավարձի հազարապատիկի՝ 1.000.000 /մեկ միլիոն/ ՀՀ դրամի չափով:

Թիվ ԵԿԴ/0151/06/16 գործով դատարանի 13.09.2016թ. որոշումը Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում ստացվել է 2016թ. սեպտեմբերի 15-ին:

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնից թիվ 42/14304-16 գրությամբ դատարանի 13.09.2016թ. որոշումը Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազությունն ստացել է 2016թ. սեպտեմբերի 16-ին:

2016թ. սեպտեմբերի 22-ին /սեպտեմբերի 21-ը եղել է ոչ աշխատանքային օր/ դատարանի 13.09.2016թ. որոշման դեմ ՀՀ վերաքննիչ քրեական դատարան /այսուհետ՝ Վերաքննիչ դատարան/ է մուտք եղել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների դատախազության դատախազ Ն. Խաչատրյանի՝ ԵԿԴ/0151/06/16 գործով Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

ջին ատյանի դատարանի 13.09.2016թ. որոշման դեմ վերաքննիչ բողոքը:

2016թ. սեպտեմբերի 28-ին Վերաքննիչ դատարանի կողմից որոշում է կայացվել ԵԿԴ/0151/06/16 գործով դատարանի 2016թ. սեպտեմբերի 13-ի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքն առանց քննության թողնելու մասին՝ նշված բողոքը ժամկետանց լինելու պատճառաբանությամբ:

Նշված որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը ՀՀ վճռաբեկ դատարանի 2017թ. փետրվարի 3-ի որոշմամբ մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության /2005 թվականի փոփոխություններով/ 103-րդ հոդվածին այնքանով, որքանով տվյալ իրավանորմը՝ իրավակիրատ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, դատախազին հնարավորություն չի տալիս, ի թիվս այլ լիազորությունների, իրականացնել ՀՀ Սահմանադրության հիշյալ հոդվածով նախատեսված՝ հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու և դատարանի վճիռները, դատավճիռները և որոշումները բողոքարկելու իր լիազորությունը, այն է՝ որպես մեղադրանքի կողմ ստանալ քննիչի կողմից ներկայացված միջնորդության վերաբերյալ դատարանի կայացրած որոշումը՝ այն հետազայում բողոքարկելու իր գործառույթն իրականացնելու նպատակով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համակարգային վերլուծության արդյունքում դիմողը եզրակացնում է, որ քրեական դատավարության շրջանակներում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություններ ներկայացնելու իրավունքն օրենսդիրը վերապահել է և՛ քննիչին, և՛ դատախազին, մինչդեռ համապատասխան միջնորդության քննարկման արդյունքում դատարանի կողմից կայացված որոշման դեմ բողոք բերելու իրավունք ունի միայն դատախազը, իսկ դատարանի կողմից կայացված համապատասխան որոշումը հանձնվում է միջնորդություն հարուցած անձին, մեղադրյալին, պաշտպանին և տուժողին:

Դիմողը՝ նշելով, որ օրենսգրքում նախատեսված չէ որևէ նորմ, որը կպարտավորեցնեք քննիչին դատարանի համապատասխան որոշումն ուղարկել հսկող դատախազին, միևնույն ժամանակ ընդգծում է, որ համապատասխան միջնորդությունը քննած դատարանը դատական ակտն այն բողոքարկելու լիազորությամբ օժտված սուբյեկտին ուղարկելու պարտականություն չի կրում:

Դիմողի կարծիքով՝ օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասում «միջնորդություն հարուցած անձ» հասկացության ներքո պետք է ընկալել դատախազին՝ ոչ միայն այն դեպքում, երբ նման միջնորդություն ներկայացրել



Է անմիջականորեն վերջինս, այլ նաև այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրել է քննիչը, ինչպես նաև բոլոր դեպքերում վերը նշված դատական ակտերը դատարանների կողմից պետք է հանձնվեն (ուղարկվեն) դատախազին, ինչն էլ կհանդիսանա դատախազին վերապահված լիազորության իրականացման անհրաժեշտ և բավարար նախադրյալ: Ըստ դիմողի՝ հակառակ դեպքում, եթե դատախազի կողմից չի ներկայացվում կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը և դատարանի կողմից դատախազին չի հանձնվում (չի ուղարկվում) որոշումը, ապա դատախազը հիշյալ որոշումը կարող է ստանալ միայն քննիչից, իսկ տվյալ դեպքում որոշումը քննիչի կողմից դատախազին փոխանցելը կպահանջի որոշակի ժամանակ, ինչն էլ կարող է հանգեցնել մեղադրյալի իրավունքների խախտման:

Ի հիմնավորումն իր վերոգրյալ դիրքորոշումների՝ դիմողը վկայակոչում է Սահմանադրական դատարանի արտահայտած մի շարք իրավական դիրքորոշումներ:

Վերոշարադրյալի լույսի ներքո դիմողը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի ոչ համակարգային վերլուծությունը և դատարանների կողմից դրան տրված իրավակիրառ պրակտիկայի վերը նշված ձևավորումը կհանգեցնեն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 103-րդ հոդվածով նախատեսված՝ դատախազի կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության գործառույթի և դատարանի որոշման բողոքարկման իրավունքի ոչ իրավաչափ սահմանափակմանը:

4. Պատասխանող կողմը գտնում է, որ՝ «...ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված դրույթները չեն համապատասխանում ՀՀ Սահմանադրության պահանջներին այնքանով, որքանով չեն ապահովում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդություններով դատարանի որոշումների անմիջական ուղարկումը բողոքարկման սուբյեկտ դատախազին»:

Իր դիրքորոշումը փաստարկելու համար՝ հղում կատարելով դատարանի մատչելիության վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին, պատասխանողը կարծում է, որ դրանք հավասարապես կիրառելի են նաև դատախազների կողմից դատական ակտերի բողոքարկման սահմանադրական լիազորության իրացման դեպքում:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք օրենսգրքի գործող իրավակարգավորումներն ապահովում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը

երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատարանի որոշումները դատախազի կողմից բողոքարկվելու լիարժեք մեխանիզմ, պատասխանողը, հղում կատարելով օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասին, օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, Սահմանադրական դատարանի մի շարք իրավական դիրքորոշումների, գտնում է, որ քննիչների համար օրենքով սահմանված չէ քննարկվող դատական ակտերը դատախազին ուղարկելու պարտականություն, ոչ էլ ՀՀ Սահմանադրության մեջ կամ օրենքներում որևէ իրավական հիմք է առկա, որի պայմաններում ՀՀ դատախազությունը կարող է նորմատիվ համապատասխան ակտով քննիչների համար սահմանել քննարկվող դատական ակտերը բոլոր դեպքերում որոշակի ժամկետում ՀՀ դատախազություն ուղարկելու իրավական պահանջ: Ըստ պատասխանողի՝ դատախազը միայն կոնկրետ գործի հսկողության շրջանակներում կարող է քննիչից պահանջել գործի նյութերը, համապատասխան դատական ակտը, իսկ գործող իրավակարգավորումների պայմաններում դատախազն անգամ կարող է չիմանալ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու համապատասխան միջնորդություն քննիչի կողմից ներկայացնելու, դատարանի կողմից դրանց վերաբերյալ որոշում կայացնելու և քննիչի կողմից այդ որոշումն ստանալու մասին, հետևաբար՝ օբյեկտիվորեն չի էլ կարող ժամանակին պահանջել այդ որոշումն իրեն հանձնել, թեև դրա իրավունքն ունի:

Պատասխանողը կարևորում է նաև այն, որ՝ «...դատական ակտը հրապարակելուց, այն հասցեատիրոջն ուղարկելուց մինչև հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալն օբյեկտիվորեն անցնում է որոշակի ժամանակահատված, որը կարող է ավելի երկարաձգվել պայմանավորված նաև սուբյեկտիվ գործոններով: Նման պայմաններում անձն իր տնօրինության ներքո հաճախ չի ունենում բողոքարկվող դատական ակտը, հնարավորություն չի ունենում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները կազմել օրենքով դրանց ներկայացվող պահանջներին համահունչ, ինչն իրավաչափորեն հիմք է հանդիսանում վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները համապատասխանաբար՝ առանց քննության թողնելու կամ վերադարձնելու համար»:

Ամփոփելով՝ պատասխանողն արձանագրում է, որ՝ «...կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշումների իրավակիրառական պրակտիկայում ստացումը դատախազի կողմից քննիչից կախվածության մեջ է դնում դատախազի՝ ՀՀ Սահմանադրությամբ և Օրենսգրքով սահմանված դատական բողոքարկման իրավունքի իրացումը քննիչների հայեցողությունից»: Հետևաբար, ըստ պատասխանողի՝ «...բողոքարկման

նման մեխանիզմը արդյունավետ չէ և լիարժեքորեն չի կարող ապահովել դատախազների կողմից ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով սահմանված դատական ակտերի բողոքարկման լիազորության իրականացումը»:

5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողն օրենքի բաց է դիտարկում օրենսդրության մեջ դատարանի կողմից համապատասխան դատական ակտը դատախազին ուղարկելու պարտականության և քննիչի կողմից համապատասխան դատական ակտի մասին դատախազին իրազեկելու իրավաբանական պարտականության բացակայությունը: Դիմողը գտնում է, որ որպես իր կողմից առաջ քաշված օրենսդրական բացը վերացնելու միջոց, օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասում «միջնորդություն հարուցած անձ» հասկացության տակ պետք է ընկալել դատախազին՝ ոչ միայն այն դեպքում, երբ նման միջնորդություն ներկայացրել է վերջինս, այլ նաև այն դեպքում, երբ միջնորդությունը ներկայացրել է քննիչը:

Միաժամանակ, պատասխանող կողմը նույնպես ընդունում է դիմողի հիմնական փաստարկները և գտնում է, որ առկա իրավակարգավորումները և ձևավորված իրավակիրառական պրակտիկան խոչընդոտում են դատախազության սահմանադրական լիազորությունների արդյունավետ իրականացմանը:

Հաշվի առնելով դիմող և պատասխանող կողմերի փաստարկները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել.

- որքանո՞վ է հնարավոր դիմողի կողմից առաջ քաշված հիմնախնդրի լուծումը՝ գործող իրավակարգավորումների համակարգային վերլուծության և իրավունքի գերակայության սկզբունքից ելնելով օրենքի միատեսակ կիրառում ապահովելու ճանապարհով,

- սահմանադրաիրավական ինչ չափորոշիչներ պետք է հիմք ընդունվեն իրավակարգավորումների լիարժեքությունը երաշխավորելու, դատախազական հսկողությունն արդյունավետ իրականացնելու, ինչպես նաև անձի շահերի դատական պաշտպանությունը երաշխավորելու և իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքները կանխելու ուղղությամբ:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

ա/ ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 103-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերի համաձայն՝ «Դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ... 5) բողոքարկում է դատարանների վճիռները, դատավճիռները և որոշումները, 6) «հսկողություն է իրականացնում պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ»,

բ/ օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են միջնորդություն ներկայացնել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Դրանք են դատախազը կամ քննիչը:

Օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնց հանձնվում կամ ուղարկվում է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը: Դրանք են՝ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդություն հարուցած անձը, այսինքն՝ դատախազը կամ քննիչը, ինչպես նաև մեղադրյալը, պաշտպանը և տուժողը,

գ/ օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է այն անձանց շրջանակը, որոնք իրավասու են վերաքննիչ բողոք բերել կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու, ինչպես նաև կալանքի տակ գտնվելու ժամկետը երկարացնելու կամ երկարացնելուց հրաժարվելու վերաբերյալ դատավորի որոշման դեմ: **Դրանք են՝ դատախազը, մեղադրյալը, նրա պաշտպանը կամ օրինական ներկայացուցիչը:** Ընդ որում, օրենսգրքի 288-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ որոշման օրինականության և հիմնավորվածության դատական ստուգումը կատարվում է դռնփակ նիստում՝ **դատախազի և պաշտպանի մասնակցությամբ,**

դ/ օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Դատական նիստին իրավունք ունի մասնակցել դատախազը, եթե անհրաժեշտ է համարում անձամբ պաշտպանել միջնորդությունը: Դատախազն իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը»,

ե/ միաժամանակ, քննիչի լիազորությունների առնչությամբ օրենսգրքի 55-րդ հոդվածի 4-րդ մասի 24-րդ և 26-րդ կետերի համաձայն՝ «Քննիչը, մասնավորապես, լիազորված է. «դիմել դատարան՝ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու և մեղադրյալին կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով» /24/, «հսկող դատախազի գրավոր ցուցումների կամ որոշումների վերաբերյալ գրավոր առարկություններ ներկայացնել վերադաս դատախազին՝ չկասեցնելով դրանց կատարումը» /26/: Իսկ օրենսգրքի 55-րդ հոդվածի 5-րդ մասում ընդգծվում է, որ՝ «Քննիչը պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները»:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծությունից հետևում է, որ, մի կողմից՝

- նշված իրավանորմերի տառացի մեկնաբանության պարագայում առկա չէ որևէ դրույթ, ըստ որի՝

ա/ քննիչը պարտավոր է մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի միջնորդություն ներկայացնելուց առաջ տեղեկացնել դատախազին,

բ/ դատավորը պարտավոր է քննիչի միջնորդությամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին դատարանի որոշումը քննիչից բացի տրամադրել նաև դատախազին,

մյուս կողմից՝

- օրենսդիրը համապատասխան դատական ակտի հասցեատեր դիտարկելով նաև քննիչին և տուժողին, միևնույն ժամանակ, նրանց չի ճանաչում որպես այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք ունեցող սուբյեկտ: Օրենսդիրը, ի թիվս մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի, այդ դատական ակտը բողոքարկելու իրավունք վերապահում է դատախազին: Այսինքն՝ դատախազն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով իրավասու է մասնակցելու նաև այն դատական նիստին, որում քննության առարկա է քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից ներկայացված միջնորդությունը: Ավելին՝ իրավունք ունի հետ վերցնել ներկայացված միջնորդությունը կամ այն անձամբ պաշտպանել: Ասվածի համատեքստում, նման օրենսդրական կարգավորման պայմաններում՝ տուժողի շահերի միակ պաշտպանը, վերոնշյալ սահմանադրական լիազորությունների շրջանակներում, դատախազն է,

- եթե օրենսգրքի 278-րդ հոդվածով հստակեցվում է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտն ամբողջությամբ, ապա օրենսգրքի 285 և 287-րդ հոդվածները վերաբերում են բացառապես կալանքի հետ կապված իրավահարաբերությունների կանոնակարգմանը և դատախազի, մեղադրյալի, նրա պաշտպանի կամ օրինական ներկայացուցչի բացառիկ իրավասությանը՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ չընտրելու վերաբերյալ դատական որոշման բողոքարկման առնչությամբ: Այսինքն՝ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին քննիչի միջնորդության վերաբերյալ դատարանի որոշումն օրենսգրքի 287-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա կարող է բողոքարկել ոչ թե քննիչը, այլ դատախազը,

- օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակիրառ պրակտիկայից բխում է, որ վիճարկվող նորմով նախատեսված համապատասխան դատական ակտի հասցեատերերի շրջանակում դատախազը ներառված է

միայն այն պարագայում, երբ անձամբ է հանդես եկել մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին միջնորդությամբ: Իսկ այն դեպքում, երբ համապատասխան միջնորդությամբ հանդես է եկել քննիչը, ապա մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու, կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու կամ միջնորդությունը մերժելու մասին դատական ակտը հանձնվում կամ ուղարկվում է, ի թիվս այլոց, քննիչին, այլ ոչ թե նաև դատախազին:

Նման պայմաններում, երբ դատախազը ժամանակին ու պատշաճ ձևով իրազեկված չի լինում քննչական գործողություններ կատարելու և դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու մասին քննիչի կողմից դատարան միջնորդություն ներկայացնելու կամ դատարանի կողմից ընդունված որոշման մասին, ապա՝

ա/ հնարավոր չի դառնում արդյունավետ իրացնել օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի և 287-րդ հոդվածի 1-ին մասի հիմքերով դատախազին վերապահված իրավասությունը,

բ/ վտանգվում է և՛ անձի շահերի պաշտպանության իրավունքը, և՛ դատախազական հսկողության արդյունավետ իրականացման սահմանադրաիրավական պահանջը:

Այս հանգամանքները նկատի ունենալով, ինչպես նաև հաշվի առնելով, որ դատական պրակտիկայի համար մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը և իրավունքի գերակայության սկզբունքի իրացումը դեռևս ենթադասվում են իրավանորմերի տառացի ընկալմանը, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Ազգային ժողովը պարտավոր է վերոնշյալ իրավակարգավորումներում կատարել այնպիսի հստակեցումներ, որոնք իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի պահանջներից և սույն գործով Սահմանադրական դատարան իր իսկ կողմից ներկայացված բացատրություններից ելնելով՝

ա/ կապահովեն մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ դատախազական հսկողության լիարժեք իրականացումը,

բ/ կերաշխավորեն կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշումը դատախազի կողմից բողոքարկելու լիազորության պատշաճ իրացումը:

7. Դիմող և պատասխանող կողմերի դիրքորոշումները հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, մինչև օրենսդրական համարժեք փոփոխությունները, վեճի առարկա խնդրին լուծում կարող է տրվել նաև առկա իրավակարգավորումների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման ու դրան համարժեք իրավակիրառական պրակտիկա ձևավորելու շրջանակներում: Մասնավորա-

պես, ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 103-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ դատախազությունն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով՝ ... հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ:

Սահմանադրական նշված դրույթի իրացմանն են ուղղված, մասնավորապես, ՀՀ ՔԴՕ-ի «Դատախազի լիազորությունները մինչդատական վարությամբ» վերտառությամբ 53-րդ հոդվածով նախատեսված իրավակարգավորումները:

**ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոշարադրյալ իրավանորմերով նախատեսված լիազորությունների արդյունավետ իրականացման և իրավունքի գերակայության երաշխավորման շահերը պահանջում են, որպեսզի քննիչը դատարան ներկայացնելուց առաջ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդության մասին իրազեկի հսկող դատախազին:** Նման գործելակերպը կապահովի անձին կալանավորելու հարցով դատախազական հսկողության գործառույթի արդյունավետ իրականացումը, այն է՝ դատախազը, նախապես իրազեկված լինելով քննիչի մտադրության մասին, տեղեկացված է լինում նաև խնդրո առարկա հարցով դատական նիստի, կայացվելիք դատական ակտի մասին և հնարավորություն է ստանում իրացնել օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասով իրեն վերապահված իրավասությունը, ինչպես նաև սահմանված ժամկետում դատական ակտի դեմ ներկայացնելու վերաքննիչ բողոք՝ երաշխավորելով նաև անձի շահերի դատական պաշտպանությունը:

Բացի դրանից, եթե դատախազն իրավասու է օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ քննիչի միջնորդությունն օրենսգրքի 283-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով հետ վերցնել կամ անհրաժեշտ է համարում այն անձամբ պաշտպանել, ինչպես նաև ոչ թե քննիչը, այլ դատախազն է իրավասու բողոքարկել տվյալ հարցով դատարանի որոշումը, ապա՝

ա/ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու վերաբերյալ դատարանի որոշման մասին պետք է պատշաճ ձևով իրազեկվի նաև դատախազը,

բ/ իրավակիրառ պրակտիկայում ընթացակարգային նորմերին տարբեր հիմնավորումներով ու պատճառներով չպետք է ցուցաբերվի ձևական մոտեցում, ինչը կարող է հանգեցնել ՀՀ Սահմանադրության 80-րդ հոդվածի պահանջի անտեսմանը՝ չերաշխավորելով հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սահմանադրական դրույթների էության անխախտելիությունը:

Միայն այս ճանապարհով է հնարավոր տվյալ իրավահարաբերություններում ապահովել անձի շահերի դատական պաշտպանությունը և կանխել իրավական անվտանգության հնարավոր սպառնալիքները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

13 հունիսի 2017 թվականի  
ՍԴՈ-1373





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎՐՈՊԱ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ  
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 115.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՍԱՍԻ,  
117-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՍԱՍԻ՝ ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

20 հունիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի ներկայացուցիչ՝ Տ. Եգորյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումների հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասի, 117-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

Գործի քննության առիթը «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության 2017 թվականի մարտի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

ՀՀ սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 4-ի ՍԴԱՌ-24 աշխատակարգային որոշմամբ որոշվել է «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասի, 117-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը և «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպության դիմումի հիման վրա՝ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ դատական օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ դատական օրենսգիրքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի փետրվարի 21-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի ապրիլի 7-ին և ուժի մեջ է մտել 2007 թվականի մայիսի 18-ին:

ՀՀ դատական օրենսգրքի՝ «Որակավորման գրավոր քննությունը» վերտառությամբ 115.2-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 10-րդ մասը սահմանում է.

«10. Հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն, ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը: Հոգեբանական թեստի արդյունքները, դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո, ենթակա են ոչնչացման»:

ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածն օրենսգրքում լրացվել է 2013 թվականի հունիսի 20-ի ՀՕ-90-Ն ՀՀ օրենքով և գործող խմբագրությամբ շարադրվել է 2014 թվականի հունիսի 10-ի ՀՕ-47-Ն ՀՀ օրենքով:

ՀՀ դատական օրենսգրքի՝ «Դատավորների թեկնածությունների ցուցակի կազմումը և հաստատումը» վերտառությամբ 117-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 5-րդ մասը սահմանում է.

«5. Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցած ան-

ձինք իրավունք ունեն դիմելու և Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքների ամփոփումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ստանալու սույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան իրենց վերաբերյալ կազմված զեկույցը»:

ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածը գործող խմբագրությամբ օրենսգրքում շարադրվել է 2013 թվականի հունիսի 20-ի ՀՕ-90-Ն և 2014 թվականի հունիսի 10-ի ՀՕ-47-Ն ՀՀ օրենքներով:

2. Միավորված գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

ա) 2015 թվականի հունվարի 27-ին «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ արդարադատության խորհուրդ խնդրելով տրամադրել ՀՀ դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2014 թվականի դեկտեմբերի 10-12-ին և 2015 թվականի հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի յուրաքանչյուր մասնակցի վերաբերյալ ՀՀ արդարադատության խորհրդի անդամների եզրակացությունը և հատուկ կարծիքները: Դիմողը նաև խնդրել է մանրամասնել, թե ինչ չափանիշներով է իրականացվում մասնակիցների գնահատումն այս փուլում, և տրամադրել հարցազրույցի փուլի մասնակիցների հարցաշարերը, հոգեբանական թեստերն ու դրանց արդյունքները, հարցազրույցի գնահատականները ըստ Արդարադատության խորհրդի առանձին անդամների, ինչպես նաև մնացած բոլոր մրցութային փաստաթղթերը:

ՀՀ արդարադատության խորհրդի՝ 2015 թվականի փետրվարի 11-ի գրավոր պատասխանով մերժվել է հայցվող տեղեկատվությունը:

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության խորհրդի՝ տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցման պահանջով: Հիշյալ հայցը, ՎԴ/0774/05/15 գործով, ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճռով մերժվել է: Հիշյալ վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը թողնվել է անփոփոխ: Հիշյալ որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է,

բ) 2015 թվականի փետրվարի 23-ին «Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը դիմել է ՀՀ արդարադատության խորհուրդ խնդրելով տրամադրել ՀՀ արդարադատության խորհրդի 2015 թվականի հունվարի 26-ի՝ «Դատավորների թեկնածությունների ցուցակի լրացման մասին» թիվ ԱԽ-2-Ո-5 որոշման պատ-

Ճենր, դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով 2015 թվականի հունվարի 26-ին անցկացված որակավորման ստուգման քննության բանավոր փուլի արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո կայացված քվեարկության արդյունքները, մասնավորապես՝ թե հավակնորդներից յուրաքանչյուրը քանի կողմ և քանի դեմ ձայն է ստացել, ՀՀ արդարադատության խորհրդի անդամների հատուկ կարծիքները, եթե այդպիսիք առկա են: Միաժամանակ, խնդրել է պարզաբանել, թե ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածում մատնանշված հոգեբանական թեստերն ինչպես են կազմվում, ում կողմից, ինչպես են գնահատվում և ում կողմից, ինչպես են ընտրվում հոգեբանական թեստը կազմող անձինք, ինչպիսի հարցերի շուրջ և ինչ նյութերի հիման վրա են կազմվում հոգեբանական թեստերը:

ՀՀ արդարադատության խորհրդի՝ 2015 թվականի մարտի 5-ի գրավոր պատասխանով մերժվել է հայցվող տեղեկատվությունը:

«Իրավունքի Եվրոպա միավորում» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը հայցով դիմել է ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ արդարադատության խորհրդի տեղեկատվություն տրամադրելու պարտավորեցման պահանջով: Հիշյալ հայցը, ՎԴ/1169/05/15 գործով, ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճռով մերժվել է: Հիշյալ վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք: ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի 2016 թվականի ապրիլի 27-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժվել է և ՀՀ վարչական դատարանի 2015 թվականի հոկտեմբերի 19-ի վճիռը թողնվել է անփոփոխ: Հիշյալ որոշման դեմ բերվել է վճռաբեկ բողոք: ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի օգոստոսի 17-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է:

3. Դիմողը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը և 117-րդ հոդվածի 5-րդ մասը հակասում են ՀՀ Սահմանադրության 31, 34, 42, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ Արդարադատության խորհրդում հարցազրույցի և արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո անցկացված քվեարկության արդյունքների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման մերժումը որևէ իրավաչափ նպատակ չի հետապնդում:

Դիմողը նշում է նաև, որ վիճարկվող դրույթները չեն բավարարում իրավական որոշակիության պահանջը, քանի որ չեն պարունակում հստակ կարգավորումներ այս կամ այն տեղեկատվությունը տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու հայեցողության, մերժելու իրավասության և հիմքերի վերաբերյալ, ուստիև հանգեցնում են ՀՀ Սահմանադրությանը ոչ համահունչ մեկնաբանության և կիրառման:

Դիմողը պնդում է, որ «...քննության բանավոր փուլի արդյունքների վերաբերյալ ամփոփիչ քննարկման ավարտից հետո կայացված քվեար-

կույթյան արդյունքները, մասնավորապես, տեղեկություններն առ այն, թե հավակնորդներից յուրաքանչյուրը քանի կողմ և քանի դեմ ձայն է ստացել, թեև վերաբերում են Արդարադատության խորհրդի անդամներին և հարցազրույցի մասնակիցներին, բայց դրանք չեն կարող դիտարկվել վերջիններիս անձնական կյանքի բաղադրիչներ և պաշտպանվել անձնական կյանքի նկատմամբ հարգանքի իրավունքի շրջանակներում, քանի որ դրանք առավելապես վերաբերում են հանրային իշխանության տիրույթում իրականացվող գործունեությանը, պայմանավորված են այդ անձանց խնդրո առարկա գործընթացներին, իրենց զբաղեցրած պաշտոնների կապակցությամբ ընդունված որոշումներին և իրականացված գործունեությանը և/կամ մրցույթի մասնակիցների մասով այդ գործընթացին մասնակցելու իրենց հայտերով և չեն կարող դուրս գալ հանրային վերահսկողության տիրույթից և հանրային ռեսուրսի հաշվին իրականացվեն և դիտարկվեն մասնավոր կյանքի տիրույթում»:

Իր փաստարկների կապակցությամբ դիմողը վկայակոչում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ընդունված մի շարք վճիռներ:

Դիմողը գտնում է նաև, որ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված հոգեբանական թեստի արդյունքների հրապարակման արգելքը, ինչպես նաև թեստի արդյունքները ոչնչացնելու պահանջը չեն բխում դատավորների նշանակման գործընթացների նկատմամբ վերահսկողության, այդ թվում՝ հանրային վերահսկողության ապահովման անհրաժեշտությունից, ինչպես նաև արտահայտվելու ազատության, այդ թվում՝ տեղեկություններ փնտրելու և տարածելու իրավունքի սահմանափակման համաչափության սահմանադրական սկզբունքից:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանող կողմը վկայակոչելով, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 1-ին, 31, 34, 42, 78, 79, 80 և 81-րդ հոդվածների, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 8 և 10-րդ հոդվածների, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 3, 4 և 5-րդ հոդվածների, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի իրավակարգավորումները, ինչպես նաև ՀՀ սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-278, ՍԴՈ-997, ՍԴՈ-1010, ՍԴՈ-1234 որոշումներով արտահայտած իրավական դիրքորոշումները, նշում է, որ անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, ներառյալ իրեն վերաբերող տեղեկատվության պաշտպանության և ազատ արտահայտվելու, այդ թվում՝ տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքները բացարձակ չեն և ենթակա են իրա-

վաչափ սահմանափակումների: Ըստ պատասխանողի՝ դատավորների հոգեբանական թեստի արդյունքների հրապարակման արգելքը հստակ սահմանված է ՀՀ դատական օրենսգրքով, այն իրավաչափ նպատակ է հետապնդում ոչ միայն պաշտպանելու դատավորների՝ որպես անհատների մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքը, այլև իրենց մասնագիտական գործունեության պատշաճ կատարման համար օբյեկտիվ նախադրյալներ ստեղծելը:

Պատասխանող կողմը փաստում է, որ օրենսդիրը գտել է երկու սահմանադրական արժեքների՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության և տեղեկություններ ստանալու և տարածելու իրավունքների միջև ողջամիտ հարաբերակցություն, ինչն ամրագրել է վերոհիշյալ իրավակարգավորումներով:

Ըստ պատասխանողի՝ դիմողի այն պնդումը, որ վիճարկվող դրույթները, դատական պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունների շրջանակներում, չեն համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, հիմնագուրկ են, քանի որ ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասում հստակ արգելք է սահմանվում քննարկվող տեղեկատվության հրապարակման, այն է՝ երրորդ անձանց հասանելի դառնալու իրավական հնարավորության վերաբերյալ: Պատասխանողը կարծում է, որ սույն գործով դիմողի նկատմամբ կիրառվել է միայն ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված տեղեկատվությունը հրապարակելու ընդհանուր արգելքը, սակայն ոչ նույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված բացառությունն այդ տեղեկատվությունը հարցազրույցին մասնակցած անձին տրամադրելու վերաբերյալ:

Նկատի ունենալով վերոգրյալը՝ պատասխանող կողմը ձեռնպահ է մնում ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությանն իրավական գնահատական տալուց:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրականության հարցի շրջանակներում, հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի պահանջները, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, պարզել և գնահատել.

ա) որքանո՞վ են, մի կողմից, վիճարկվող դրույթները վերաբերում անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության, անձնական տվյալների պաշտպանության իրավունքներին, և, մյուս կողմից՝ որքանո՞վ են դրանք առնչվում հանրային գործառույթ իրականացնող անձի՝ տվյալ գործառույթի համար նախատեսվող համատեղելիության պահանջներին և ժողովրդավարական հասարակությունում կարող են ենթակա լինել հանրային վերահսկողության՝ կարծիքի արտահայտման, այդ թվում՝ տեղեկություն-

ներ փնտրելու, ստանալու և տարածելու սահմանադրական իրավունքի իրականացման շրջանակներում,

բ) վիճարկվող դրույթները բավարարու՞մ են, արդյոք, համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքների պահանջը, մասնավորապես, տեղեկատվություն տրամադրելու կամ դրա տրամադրումը մերժելու սահմանափակման համար ընտրված միջոցի անհրաժեշտության ու համարժեքության և բավարար չափով որոշակիության տեսանկյունից:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը, չսահմանափակվելով դիմողի դիրքորոշումներով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող դրույթները դիտարկել նաև ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածում ամրագրված ժողովրդավարական և իրավական պետության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կայացման համատեքստում՝ հաշվի առնելով հասարակական կազմակերպությունների, հանրային վերահսկողության դերը պետության և հասարակության կյանքում:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով ՀՀ դատական օրենսգրքի վիճարկվող դրույթները գնահատելիս նկատի առնել նաև դատական իշխանության ձևավորման վերաբերյալ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններում ամրագրված նոր մոտեցումները: Համաձայն դրանց, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության՝ «Դատարանները և Բարձրագույն դատական խորհուրդը» վերտառությամբ 7-րդ գլուխը դատական իշխանության ձևավորման հարցում հայեցակարգային առումով առանձնակի կարևորություն է տալիս մրցակցության և հանրային վերահսկողության ինստիտուտներին:

6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը ներառում է նաև տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունը: Այս համատեքստում Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 2012 թվականի մարտի 6-ի ՍԴՈ-1010 որոշմամբ արտա- հայտած այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ «... Հանրային տեղեկատվության մատչելիությունը ժողովրդավարության և հանրության առջև պատասխանատու պետական կառավարման թափանցիկության էական նախապայմաններից է: Հասարակական կարծիքի միջոցով իրականացվող ժողովրդավարական վերահսկողությունը խթանում է պետական իշխանության գործողությունների թափանցիկությունը և նպաստում պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հաշվետու գործունեությանը»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել նաև, որ սահմանադրական այս իրավունքը բացարձակ իրավունք չէ և կարող է

սահմանափակվել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված հիմքերով և կարգով:

Սահմանադրական վերոհիշյալ արժեքի հարաբերակցությունն այլ սահմանադրական արժեքների հետ, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածում ամրագրված՝ մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունքի և 34-րդ հոդվածում ամրագրված՝ անձնական տվյալների պաշտպանության իրավունքի հետ, որոշում է դրա հնարավոր սահմանափակումների բնույթը:

**Այս հանգամանքը հաշվի առնելով օրենսդիրը պարտավոր է դատավորի պաշտոնի հավակնորդների որակավորման քննության ու հանրային գործառույթ իրականացնելու պիտանելիության գնահատման իրավակարգավորման հիմքում դնել այնպիսի տեղեկատվություն, ինչը, մի կողմից, կհամարվի անհրաժեշտ մրցույթ իրականացնելու և ընտրություն կատարելու համար, մյուս կողմից՝ վերաբերելով թեկնածուների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, մատչելի կլինի հասարակության համար ու կբարձրացնի պետաիշխանական լիազորություն ստանձնողի նկատմամբ հանրային վստահությունը:**

Առաջնորդվելով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման նկատմամբ հանրային վերահսկողությունը, հանրային իշխանության գործողությունների թափանցիկությունը, հաշվետու գործունեությունը, հանրային-իրավական պատասխանատվությունն ապահովելու նկատառումներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատավորների թեկնածությունների ցուցակի կազմմանը և հաստատմանը նախորդող գործընթացներում հավակնորդի կողմից ներկայացված, հավակնորդի վերաբերյալ կազմվող/ստացվող փաստաթղթերը, տեղեկությունները, դիտարկվող գործընթացների արդյունքները (դրանց վերաբերյալ տեղեկությունները), **ՀՀ Սահմանադրությամբ սահմանված սահմանափակումների նպատակները** հաշվի առնելով, պետք է լինեն բաց, թափանցիկ: Դրանք պետք է վերաբերեն ոչ թե թեկնածուների միջանձնային հարաբերություններում դրսևորվող անձնական կյանքին, այլ նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման պիտանելիությունը գնահատող որակներին: Ուստի նման տվյալները պետք է ներառվեն հավակնորդի, հետագայում՝ դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկված անձի անձնական գործում, ենթակա լինեն տրամադրման հավակնորդներին, երրորդ անձանց, այդ թվում՝ կանոնադրական համապատասխան իրավասությամբ օժտված հասարակական կազմակերպություններին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս մոտեցումը կարևոր նշանակություն պետք է ունենա «Դատական օրենսգիրք» նոր սահմանադրական օրենքի մշակման և ՀՀ Սահմանադրության /2015թ. փոփոխություններով/ դրույթների հետևողական իրացման տեսանկյունից:



7. Վերլուծելով գործող ՀՀ դատական օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումները՝ ՀՀ սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրում է, որ հոգեբանական թեստի արդյունքների հրապարակման, երրորդ անձանց տրամադրման ոչ ենթակա լինելու, ինչպես նաև այդ արդյունքների ոչնչացման ենթակա լինելու հանգամանքները նույնպես պետք է վերախմաստավորվեն իրավական որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքների համատեքստում՝ հաշվի առնելով վերոշարադրյալ իրավական դիրքորոշումները:

Ըստ առկա իրավակարգավորումների՝

- հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն (115.2-րդ հոդվածի 10-րդ մաս),

- հոգեբանական թեստի արդյունքները ենթակա չեն հրապարակման և տրամադրվում են միայն Արդարադատության խորհրդի անդամներին՝ խորհրդում հարցազրույցի անցկացումից հետո մինչև ամփոփիչ քննարկումը (115.2-րդ հոդվածի 10-րդ մաս),

- հոգեբանական թեստի արդյունքները, դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո, ենթակա են ոչնչացման (115.2-րդ հոդվածի 10-րդ մաս),

- հոգեբանական թեստին որակավորման գրավոր քննարկման արդյունքներով անցողիկ միավորներ հավաքած հավակնորդի մասնակցությունը պարտադիր է (115.2-րդ հոդվածի 9-րդ մաս),

- հոգեբանական թեստի արդյունքները տվյալ հավակնորդին տրամադրելու դրույթ ուղղակի ամրագրված չէ,

- հոգեբանական թեստի արդյունքների բողոքարկում սահմանված չէ,

- հոգեբանական թեստի արդյունքները դատավորների թեկնածությունների ցուցակը հաստատող սուբյեկտին, այն է՝ Հանրապետության Նախագահին, տրամադրելու ուղղակի դրույթ ամրագրված չէ,

- հոգեբանական թեստի գնահատման չափանիշներ լիարժեք սահմանված չեն:

Այս հանգամանքները հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հոգեբանական թեստն ուղղված է հավակնորդների պատասխանատվության զգացման, ունկնդրելու կարողության, ինքնատիրապետման, հեղինակության (ազդեցության) չափավոր կիրառման և դատավորի աշխատանքի համար անհրաժեշտ ոչ մասնագիտական այլ հատկանիշների ստուգմանը (115.2-րդ հոդվածի 9-րդ մաս): Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի իրավակարգավորումների՝ Արդարադատության խորհրդում հարցազրույցի նպատակը հավակնորդի ոչ միայն մասնագիտական փորձառության գնահատումն է, այլ նաև նրա՝ պետախիշանական պատասխանատվության ստանձնման համար անհրաժեշտ որոշակի անհատական հատկանիշների գնահատումը (մասնավորապես՝ 116.1-րդ հոդվածի 1-ին մաս):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ առանց հոգեբանական թեստի արդյունքների Արդարադատության խորհուրդը չի կարող լիարժեք իրականացնել ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 95-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված դատավորների թեկնածությունների ցուցակը կազմելու և Հանրապետության Նախագահի հաստատմանը ներկայացնելու իր սահմանադրական գործառույթը: Ինչ վերաբերում է հոգեբանական թեստի արդյունքներին, որոնք վերաբերում են հավակնորդների հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանք, առնվազն այն հավակնորդների մասով, ովքեր ընդգրկվել են դատավորների թեկնածությունների ցուցակում, չտրամադրելը երրորդ անձանց, այդ թվում՝ համապատասխան կանոնադրական նպատակ ունեցող հասարակական կազմակերպություններին, իրավաչափ նպատակ չի հետապնդում: Նման տեղեկատվության տրամադրումն անհրաժեշտ է և ուղղված է դատական իշխանության ձևավորման նկատմամբ հանրային վերահսկողության արդյունավետության ապահովմանը, հանրային իշխանության ինստիտուտների նկատմամբ հասարակության վստահության, քաղաքացիական հասարակության և, մասնա-վորապես, հասարակական կազմակերպությունների դերի բարձրացմանը:

Նման իրավական դիրքորոշման համար կարևոր է նաև այն հանգամանքը, որ թեև ՀՀ դատական օրենսգրքում ուղղակիորեն ամրագրված իրավակարգավորումներով հոգեբանական թեստի արդյունքներն ունեն միայն խորհրդատվական նշանակություն (115.2-րդ հոդվածի 10-րդ մաս), սակայն հիշյալ օրենսգրքի ընդհանուր տրամաբանության շրջանակներում դրանք, այնուամենայնիվ, ունեն գործուն նշանակություն, որի մասին են վկայում նաև ՀՀ դատական օրենսգրքի 116.1-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումները:

8. Իրավական որոշակիության և իրավաչափության գնահատման համատեքստում վերլուծելով ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի իրավակարգավորումները՝ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արձանագրում է՝ հստակ սահմանված է, որ Արդարադատության խորհրդում հարցազրույցին մասնակցած անձինք իրավունք ունեն դիմելու և Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքների ամփոփումից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, ստանալու նույն հոդվածի 4-րդ մասին համապատասխան իրենց վերաբերյալ կազմված զեկույցը: Իսկ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Արդարադատության խորհրդում քվեարկության արդյունքների ամփոփումից հետո հարցազրույցին մասնակցած յուրաքանչյուր հավակնորդի վերաբերյալ խորհուրդը կազմում է զեկույց, որում խորհրդի անդամների կողմից լրացված հարցաթերթերի, ամփոփիչ քննարկման

Ժամանակ արտահայտված կարծիքների և Արդարադատության խորհրդի անդամների կողմից ներկայացված հատուկ կարծիքների հիման վրա ընտրված հավակնորդների պարագայում մանրամասն ներկայացվում են այն հանգամանքները, որոնք պայմանավորել են հավակնորդի ընտրությունը, իսկ հարցազրույցի արդյունքում չընտրված հավակնորդների մասով ներկայացվում են նրանց ընտրությունը մերժելու պատճառները:

ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի վերլուծությունից բխում է, որ վերջինս չի նախատեսում **հարցազրույցի արդյունքները, տվյալ դեպքում՝ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը երրորդ անձանց տրամադրելու ուղղակի ամրագրված արգելք:**

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի՝ «Տեղեկատվության ազատության սահմանափակումները» վերտառությամբ 8-րդ հոդվածը սահմանափակում է այն տեղեկատվության մատչելիությունը, որը պարունակում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի վերաբերյալ տեղեկություն: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը չի ներառում հավակնորդի մասնավոր կյանքի տարր: Առավել ևս, որ խոսքը վերաբերում է պետական պաշտոնի զբաղեցմանը հավակնելուն: Տվյալ պարագայում ժողովրդավարական պետության սկզբունքի շրջանակներում հասարակությունն իրավունք ունի հանրային վերահսկողություն սահմանելու հանրային իշխանության, տվյալ պետական պաշտոնը զբաղեցնելու համար որակավորման ստուգման ընթացակարգի նկատմամբ, այն արդարության և հավասարության պայմաններում անցկացնելու նկատառումներով, իրազեկ լինելու տվյալ պետական պաշտոնի հավակնորդի մասնագիտական ունակություններին:

Վերոգրյալի հաշվառմամբ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը երրորդ անձանց տրամադրելու արգելք սահմանված չէ նաև «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով: Այս առումով իրավակիրառական պրակտիկայի գնահատման տեսանկյունից Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ վարչական դատարանը դիմողի գործերով ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասի նորմին տվել է այլ մեկնաբանություն, մասնավորապես, վկայակոչելով ՀՀ դատական օրենսգրքի 115.1-րդ հոդվածի 3-րդ և 6-րդ մասերը, 117-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասերը, գտել է, որ նշված նորմերից բխում է, որ օրենքը նախատեսում է հարցազրույցի փուլի ավարտին քվեարկության գաղտնիություն և հարցազրույցի արդյունքները երրորդ անձանց տրամադրելու արգելք, այսինքն՝ տեղեկատվություն ստանալու իրավունքի սահմանափակումը նախատեսված է օրենքով:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. ՀՀ դատական օրենսգրքի 115.2-րդ հոդվածի 10-րդ մասը՝ այն մասով, որով դատավորների թեկնածությունների ցուցակ ընդգրկված հավակնորդների հոգեբանական թեստի արդյունքները, որոնք վերաբերում են նրանց հանրային-իրավական պատասխանատվության ստանձնման որակներին, ենթակա չեն հրապարակման, և այդ ցուցակը Հանրապետության Նախագահի կողմից հաստատվելուց հետո ենթակա է ոչնչացման, ճանաչել ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածի 1-ին մասին, մասնավորապես՝ տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությունն ամրագրող դրույթին հակասող և անվավեր:

2. ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը սահմանադրաիրավական այնպիսի բովանդակությամբ, համաձայն որի՝ ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 5-րդ մասը չի արգելափակում երրորդ անձանց իրավունքը «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ստանալու ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված զեկույցը:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 12-րդ մասի հիման վրա՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտերը նոր հանգամանքի հիմքով օրենքով սահմանված կարգով ենթակա են վերանայման:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

20 հունիսի 2017 թվականի  
ՄԴՈ-1374



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐՈՒՍՅԱԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ  
ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ԿԵՏԻ «Բ»  
ԵՆԹԱԿԵՏԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հունիսի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմող Ա. Աբրահամյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արուսյակ Աբրահամյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Արուսյակ Աբրահամյանի՝ 2017 թվականի մարտի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)/2018

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 27-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունվարի 10-ին և ուժի մեջ է մտել 1998 թվականի հունվարի 11-ից:

Օրենքի՝ «Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքի դրույքաչափերը» վերտառությամբ 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետը սահմանում է. «Առաջին ատյանի դատարաններ տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ և վճարեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանի կողմից տրվող փաստաթղթերի պատճեններ (կրկնօրինակներ) տալու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

...  
9. դատարանի դատական ակտերի դեմ բերված վճարեկ բողոքների համար՝

բ) ոչ գույքային բնույթի պահանջի գործերով բազային տուրքի 20-պատիկի չափով...»:

Օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետում ՀՀ Ազգային ժողովի կողմից կատարվել են մի շարք փոփոխություններ և լրացումներ (9-րդ հոդվածը խմբ. 28.12.98 ՀՕ-277, խմբ., փոփ. 12.10.99 ՀՕ-4, փոփ. 13.12.00 ՀՕ-123, լրաց., փոփ. 11.09.01 ՀՕ-219, փոփ. 29.05.02 ՀՕ-358-Ն, լրաց. 07.07.05 ՀՕ-148-Ն, խմբ. 25.12.06 ՀՕ-60-Ն, փոփ. 28.11.07 ՀՕ-282-Ն), որոնցից վերջինը՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-282-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2007 թվականի նոյեմբերի 28-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2007 թվականի դեկտեմբերի 20-ին և ուժի մեջ է մտել 2008 թվականի հունվարի 1-ից:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Անուշ Ղազարյանը դիմելով դատարան՝ պահանջել է ոչ իրավաչափ ճանաչել ք. Երևան, Մանուշյան փողոց թիվ 86 հասցեի նկատմամբ Մակեդոն Ղազարյանի անվամբ տոմարագրելու վերաբերյալ Երևան քաղաքի 26

կոմիսարների անվան շրջանային խորհրդի գործկոմի 31.05.1984 թվականի թիվ 10/10 որոշումը, որպես հետևանք՝ անվավեր ճանաչել նույն գույքի վերաբերյալ Սակեդոն Ղազարյանի և Վահան Գևորգյանի միջև 20.07.1993 թվականին կնքված պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի գրանցումը, Վահան Գևորգյանի և Գևորգ Համբարձումյանի միջև 17.08.1998 թվականին կնքված պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի գրանցումը, Գևորգ Համբարձումյանի և Կարինե Հարությունյանի միջև 13.04.1999 թվականին կնքված թիվ 4-592 առուծախի պայմանագիրը և դրա հիման վրա կատարված իրավունքի գրանցումը, Կարինե Հարությունյանի անվամբ տրված 26.04.2013 թվականի թիվ 765 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Կարինե Հարությունյանի մահից հետո նրա ժառանգներ Արուսյակ և Սարգիս Աբրահամյանների անվամբ տրված 26.11.2014 թվականի թիվ 34216 և թիվ 34217 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրերը, ճանաչել ք.Երևան, Մանուշյան փողոց թիվ 86 հասցեի հողամասի և օրինական կառույցների նկատմամբ հայցվոր Անուշ Ղազարյանի սեփականության իրավունքը:

ՀՀ վարչական դատարանի 30.10.2015 թվականի վճռով հայցը բավարարվել է:

Նշված վճիռը բողոքարկվել է ՀՀ վարչական վերաքննիչ դատարան, իսկ վերջինիս՝ 07.07.2016 թվականի որոշմամբ ՀՀ կառավարության և Արուսյակ Աբրահամյանի, Սարգիս Աբրահամյանի վերաքննիչ բողոքները մերժվել են, և ՀՀ վարչական դատարանի՝ 30.10.2015 թվականի վճիռը թողնվել է անփոփոխ:

Նշված որոշման դեմ Արուսյակ և Սարգիս Աբրահամյանների ներկայացուցչի կողմից վճռաբեկ բողոք է ներկայացվել: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի՝ 14.09.2016 թվականի որոշմամբ ՀՀ վարչական վերաքննիչ դատարան՝ 07.07.2016 թվականի որոշման դեմ բերված վճռաբեկ բողոքը վերադարձվել է պետական տուրքի վճարումը հետաձգելու մասին միջնորդությանը կից ապացույցներ չներկայացնելու հիմքով և, միաժամանակ, սահմանվել է ժամկետ վճռաբեկ բողոքի սխալները շտկելու և այն կրկին բերելու համար:

Սարգիս Աբրահամյանի անունից կրկին վճռաբեկ բողոք է ներկայացվել, որը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր 12.10.2016 թվականի որոշմամբ թողել է առանց քննության՝ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 14.09.2016 թվականի որոշմամբ մատնանշված սխալները մասնակի շտկելու պատճառաբանությամբ, նշելով, որ. «... բողոքաբերը ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 14.09.2016 թվականի որոշմամբ մատնանշված սխալները վերացրել է մասնակի, այն է՝ սույն գործով ներկայացված ընդհանուր 11 պահանջների պարագայում վճարել է միայն մեկ պահանջի համար սահմանված պետա-

կան տուրքի գումարը, և պետական տուրքի չվճարված մասի վերաբերյալ առկա չէ միջնորդություն պետական տուրքի գծով որևէ արտոնություն սահմանելու վերաբերյալ»:

Նույն պահանջով կրկին վճռաբեկ բողոք է ներկայացվել նաև Արուսյակ Աբրահամյանի անունից, որով, միաժամանակ, միջնորդություն է ներկայացվել հարգելի համարել վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետի բաց թողնելը: ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատն իր 16.11.2016 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը թողել է առանց քննության՝ հիմնավորելով, որ. «... բողոք բերած անձի միջնորդությունը դրանում առկա պատճառաբանություններով հիմնավոր չէ, և ենթակա է մերժման, քանի որ բաց թողնված դատավարական ժամկետը հարգելի համարելու վերաբերյալ Արուսյակ Աբրահամյանի ներկայացուցչի կողմից վկայակոչված պատճառները հարգելի չեն»:

3. Դիմողը վիճարկվող նորմի վերլուծության հիման վրա գտնում է, որ այն հակասում է ՀՀ Սահմանադրության (2015 թվականի փոփոխություններով) 1-ին և 63-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար դիմողը նշում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանը համարել է, որ վճռաբեկ բողոքի համար պետական տուրքը ենթակա է գանձման առաջին ատյանի դատարան ներկայացված յուրաքանչյուր հայցապահանջի համար 20.000-ական դրամ հաշվարկով, այսինքն, ըստ դիմողի, վիճարկվող նորմի ձևակերպումը նշանակում է, որ վճռաբեկ բողոք բերած անձը պետք է վճարի ոչ թե յուրաքանչյուր վճռաբեկ բողոքի համար 20.000 դրամ, այլ 20.000-ական դրամ՝ առաջին ատյանի դատարան ներկայացված յուրաքանչյուր հայցապահանջի հաշվարկով:

Դիմողը նշում է նաև, որ օրենքի վիճարկվող նորմը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, քանի որ ընթերցումից բավական բարդ է եզրակացնել, որ պետական տուրքի չափը կախված է լինելու ոչ թե վճռաբեկ բողոքների, այլ դրանցում ներառված հայցապահանջների քանակից:

ՀՀ Սահմանադրության, ՀՀ դատական օրենսգրքի մի շարք դրույթների և ՀՀ սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումների վրա հիմնվելով՝ դիմողը կարծում է, որ վիճարկվող նորմի ձևակերպումը հնարավորություն չի տալիս կանխատեսելու պետական տուրքի վճարման չափը, ինչի արդյունքում խաթարվել են դատարանի մատչելիության և արդար դատաքննության սկզբունքները:

4. Պատասխանողը գտնում է, որ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Հարցը դիտարկելով իրավական որոշակիության տեսանկյունից, վկայակոչելով իրավական որոշակիության վերաբերյալ ՀՀ սահմանադրական



դատարանի՝ 02.12.2014 թվականի ՄԴՈ-1176 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, վկայակոչելով նաև ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.01.2013 թվականի N 129 որոշման 8-րդ կետը, պատասխանողն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ դատարանների կողմից ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.01.2013 թվականի N 129 որոշման 8-րդ կետով սահմանված կարգին չհետևելը վիճարկվող նորմին հակասահմանադրականություն չի կարող հաղորդել: Ըստ պատասխանողի պրակտիկայում իրավական որոշակիությանն առնչվող իրավական ակտերի կիրառման բազմաթիվ դեպքերում խնդիրը կարող է լուծվել ոչ թե դրանց հակասահմանադրական ճանաչման, այլ ողջամիտ մեկնաբանության, օրենքի կամ իրավունքի անալոգիա կիրառելու պարագայում:

Անդրադառնալով դիմողի ներկայացրած իրավիճակին՝ պատասխանողը գտնում է, որ այն իրականում խոսում է ոչ թե դրույթի հակասահմանադրական լինելու, այլ ձևավորված հակասական դատական պրակտիկայի մասին, ինչի վերացմանն էլ ուղղված է ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը: Այս իմաստով, վկայակոչելով ՀՀ սահմանադրական դատարանի՝ 14.03.2017թ. ՄԴՈ-1357 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, պատասխանողը հարկ է համարում ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի կողմից օրենքի պահանջի կիրառման ընթացքում այն այլ ատյանի դատարանների կողմից տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ կիրառելը հիմք չէ հակասական պրակտիկայի ձևավորման մասին խոսելու համար:

Ըստ պատասխանողի՝ այլ հարց է, որ պրակտիկան դեռևս չի տվել այն հարցի պատասխանը, թե մինևույն հայցադիմումի (վերաքննիչ, վճռաբեկ բողոքների) մեջ ինչպիսի հայցապահանջների առկայությունն է գնահատվում որպես առանձին ոչ գույքային պահանջներ: Մասնավորապես՝ մեկնաբանված չէ այն հարցը, թե արդյոք հիմնական և ածանցյալ պահանջների դեպքում առավել նպատակահարմար ու արդյունավետ է նման հայցապահանջները դիտարկել որպես մեկ ամբողջություն, գանձման ենթակա պետական տուրքի չափի որոշման հարցում առաջնորդվել այդ սկզբունքով: Ըստ պատասխանողի՝ վերոնշյալ հիմնախնդիրներն առայժմ տեսության մեջ և պրակտիկայում պատշաճ ուշադրության չեն արժանացել:

5. Դիմումի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողը, բացահայտելով վիճարկվող նորմի բովանդակությունը, իր դժգոհությունն է արտահայտում, որ Վճռաբեկ դատարանը վիճարկվող նորմը կիրառել է իր կողմից տրված մեկնաբանությամբ: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դիմողը բարձրացնում է իրավական նորմի կիրառման իրավաչափության հարց: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել իրավական նորմի

կիրառման իրավաչափության վերաբերյալ իր՝ 2009թ. մարտի 17-ի ՍԴԱՌ-21 աշխատակարգային որոշման մեջ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումը. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ դիմումը չի բավարարում հիմնավորված լինելու պահանջը նաև այն դեպքում, երբ դիմողի հիմնավորումները կապված են ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են պարզապես այդ օրինադրույթի կիրառման իրավաչափության հարցին: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց ... ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ»:

Դիմող և պատասխանող կողմերի վկայակոչումները հակասական դատական պրակտիկայի մասին՝ վեճի առարկա նորմի սահմանադրականության խնդիր չեն բովանդակում: Հնարավոր նման հակասական պրակտիկան պետք է հաղթահարվի ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 92-րդ հոդվածի հիման վրա՝ օրենքի միատեսակ կիրառության ճանապարհով, ինչի ապահովմանն է կոչված ՀՀ վճռաբեկ դատարանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Արուսյակ Աբրահամյանի դիմումի հիման վրա՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 9-րդ կետի «բ» ենթակետի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կարճել:
2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

27 հունիսի 2017 թվականի  
ՍԴՌ-1375



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԱՐՄԱՆ ՍԱՀԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 74-ՐԴ ԵՎ 75-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի ներկայացուցիչ Ս. Խաչատրյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արման Սահակյանի դիմումի հիման վրա ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթն Արման Սահակյանի՝ 2017 թվականի մայիսի 10-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)/2018  
147

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հունիսի 17-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի օգոստոսի 7-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի՝ «**Դատավարական ժամկետների սահմանումը և հաշվարկը**» վերտառությամբ 74-րդ հոդվածը սահմանում է.

«1. Դատավարական գործողությունները կատարվում են սույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված ժամկետներում: Դրանց բացակայության դեպքում դատավարական գործողությունների կատարման ժամկետները սահմանում է դատարանը:

2. Դատավարական գործողություններ կատարելու համար ժամկետները որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով, որի ընթացքում գործողությունը կարող է կատարվել:

3. Տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվվող դատավարական ժամկետի ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի հաջորդ օրվանից, որով որոշված է դրա սկիզբը»:

Օրենսգրքի՝ «**Դատավարական ժամկետների ավարտը**» վերտառությամբ 75-րդ հոդվածը սահմանում է.

«1. Տարիներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին տարվա համապատասխան ամսին և ամսաթվին: Ամիսներով հաշվվող ժամկետը լրանում է սահմանված ժամկետի վերջին ամսվա համապատասխան ամսաթվին: Եթե ամիսներով հաշվվող ժամկետի վերջը համընկնում է այնպիսի ամսվա, որը համապատասխան ամսաթիվ չունի, ապա ժամկետը լրանում է այդ ամսվա վերջին օրը:

Այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

2. Դատավարական գործողությունը կարող է կատարվել մինչև սահմանված ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը»:

Ընդունումից ի վեր օրենսգրքի վերոհիշյալ հոդվածները փոփոխության չեն ենթարկվել:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

19.06.2014 թվականին Արման Սահակյանի, Գրիգոր Գևորգյանի և Հովհաննես Մկրտչյանի հայցի հիման վրա հարուցվել է թիվ ԵԿԴ/2146/02/14 քաղաքացիական գործն ընդդեմ «Իրավունք մեդիա» ՍՊԸ-ի և Հովհաննես Գալաջյանի:

14.05.2015 թվականին ՀՀ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը մասնակի բավարարել է հայցը, և դատարանի վճիռը վերաքննիչ և վճռաբեկ բողոքարկման արդյունքում մնացել է անփոփոխ:

30.03.2016 թվականին Հայկ Բաբուխանյանի կողմից ներկայացվել է վերաքննիչ բողոք այն հիմնավորմամբ, որ ինքը, որպես գործին մասնակից անձ, չի ծանուցվել 29.04.2015թ. դատական նիստի մասին և այդ մասին տեղեկացել է «Datalex.am» կայքից: ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանը 26.05.2016 թվականին բավարարել է վերաքննիչ բողոքը և գործն ուղարկել նոր քննության:

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի որոշումը հայցվորների ներկայացուցչի կողմից բողոքարկվել է Վճռաբեկ դատարան, որն իր՝ 20.07.2016 թվականի որոշմամբ վճռաբեկ բողոքը վերադարձրել է՝ սահմանելով եռօրյա ժամկետ վճռաբեկ բողոքի ձևական սխալը շտկելու և այն կրկին ներկայացնելու համար: Վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշման պատճենն Ա. Սահակյանի, Գ. Գևորգյանի և Հ. Մկրտչյանի ներկայացուցիչ Մարո Խաչատուրյանն ստացել է 19.09.2016 թվականին և 23.09.2016 թվականին կրկին ներկայացրել է վճռաբեկ բողոք՝ «Դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին» կից միջնորդությամբ:

«Դատավարական ժամկետի բացթողումը հարգելի համարելու մասին» միջնորդությամբ Մարո Խաչատուրյանը բերել է հիմնավորումներ այն մասին, որ Վճռաբեկ դատարանի 20.07.2016 թվականի որոշման պատճենն ստացել է 19.09.2016 թվականին, և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու ժամկետի բացթողումը պայմանավորված է դատարանի վրիպա- կով, այն է՝ դատարանը որոշումն ուղարկել է այլ հասցեով, որը գործով որպես պատասխանող ներգրավված Հայկ Բաբուխանյանի ծանուցման հասցեն է:

ՀՀ վճռաբեկ դատարանը 12.10.2016 թվականին կայացրել է «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշում՝ հետևյալ հիմնավորմամբ. «Վճռաբեկ դատարանը, քննարկելով բողոք բերած անձի միջնորդությունը՝ վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի ճանաչելու և բաց թողնված ժամկետը վերականգնելու մասին, ինչպես նաև վճռաբեկ բողոքը քննության ընդունելու հարցը, գտնում է, որ միջնորդությունը ենթակա է մերժման, իսկ վճռաբեկ բողոքը պետք է թողնել առանց քննության... »:

Դատարանն այս որոշումը պատճառաբանել է այն հանգամանքով, որ դիմողները, վերադարձված վճռաբեկ բողոքն ստանալով 19.09.2016 թվականին, այդուհանդերձ, բողոքը կրկին Վճռաբեկ դատարան են ներկայացրել 23.09.2016 թվականին և չեն ներկայացրել որևէ հիմնավորում սեպտեմբերի 22-23-ն ընկած ժամանակահատվածը բաց թողնելու վերաբերյալ:

3. Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 61, 63 և 79-րդ հոդվածներին:

Դիմողը նշում է, որ վիճարկվող նորմերում ամրագրված են դատավարական ժամկետների որոշման չափորոշիչները, համաձայն որոնց՝ վերջիններս որոշվում են օրացուցային ստույգ տարով, ամսով, ամսաթվով կամ որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, բոլոր ժամկետներին տրված է ընդհանուր մոտեցում՝ դրանց սկսման և ավարտման մասով: Բացի դրանից, օրենսդիրն առանձնացրել է «աշխատանքային օր» եզրույթը, ինչը բացառում է ոչ աշխատանքային օրերին որևէ դատավարական գործողություն կատարելը:

Ըստ դիմողի՝ օրերով հաշվարկվող ժամկետների դեպքում խնդիրներ են առաջանում սուբյեկտների համար, քանի որ դրանց հոսքի մեջ ժամանակագրային առումով կարող են ընդգրկվել ոչ աշխատանքային օրեր, որոնք անհնարին են դարձնում համապատասխան վարքագծի դրսևորումը: Դիմողը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի ամրագրում «օրացուցային օր» եզրույթը, սակայն, փաստորեն, ժամկետները հաշվարկվում են այդ եզրույթի համատեքստում՝ իրավունքի հասցեատիրոջ համար առաջացնելով շփոթունք և վարքագծի դրսևորման ոչ հստակություն:

Դիմողի կարծիքով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածները որոշակի չեն այնքանով, որքանով չեն ամրագրում օրերով հաշվարկվող ժամկետների հաշվարկի ընթացքը, չեն ընդգծում դրա հաշվարկը «օրացուցային օր» եզրույթին համապատասխան կատարելը, կանխատեսելի չեն սուբյեկտի համար և չեն ապահովում իրավունքի սուբյեկտի և իրավակիրառողի միատեսակ ընկալումը:

Դիմողն իր դիրքորոշումները հիմնավորելու համար վկայակոչում է նաև ՀՀ սահմանադրական դատարանի դիրքորոշումները, մասնավորապես արտահայտված ՍԴՈ-719, ՍԴՈ-1052 որոշումներում:

4. Պատասխանող կողմն առարկելով դիմողի փաստարկներին՝ գտնում է, որ «Վճռաբեկ վարույթի առաջացումը կախված է մի կողմից՝ անձի մոտ վճռաբեկ բողոքարկման իրավունքի առկայությունից, մյուս կողմից՝ այդ իրավունքի իրացման դատավարական օրենքով սահմանված կարգից: Բողոքարկման իրավունքի իրացման պայմաններից մեկը հենց

բողոքը սահմանված ժամկետում ներկայացնելն է: Այս պայմանի բացակայությունը խոչընդոտում է վճռաբեկ վարույթի հարուցմանը, սակայն չի բացառում այն, քանի որ այն կարող է շտկվել համապատասխան հիմքերի առկայության դեպքում բողոքարկման համար սահմանված ժամկետի բաց թողնելը հարգելի ճանաչելու վերաբերյալ դատարան միջնորդության ներկայացմամբ, ինչը սույն գործով ոչ աշխատանքային օրը բաց թողնելու հետ կապված չի արվել»:

Պատասխանողի կարծիքով՝ ակնհայտ է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթների իրավակարգավորումների պայմաններում օրերով հաշվարկվող ժամանակահատվածի դեպքում ոչ աշխատանքային օրերը չներառելու վերաբերյալ բացառություն սահմանված չլինելու դեպքում գործում է ընդհանուր կանոնը, այն է՝ «ոչ աշխատանքային օրերը ներառվում են սահմանված ժամանակահատվածում, բացառությամբ այն դեպքի, երբ այդ ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա»: Այս առումով քննարկվող ձևակերպումներն օրենսգրքի վիճարկվող դրույթներում բավականաչափ հստակ են, և այս մասով խնդրո առարկա դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են իրավական օրենքին ներկայացվող իրավական որոշակիության, համապատասխան սուբյեկտների կողմից օրենքի պահանջներին չհետևելու դեպքում հնարավոր բացասական իրավական հետևանքների առաջացման կանխատեսելիության պահանջներին:

Դիմողի դիտարկումն առ այն, որ տարով և ամսով որոշվող ժամկետի դեպքում ըստ էության խնդիր չի առաջանում, քանի որ հստակեցված են ժամկետի սկիզբը և ավարտը, որի դեպքում ժամկետի հոսքն անընդմեջ է, իսկ օրերով որոշվող ժամանակահատվածի դեպքում խնդիրներ են առաջանում ոչ աշխատանքային օրերի ներառման հարցում, ըստ պատասխանողի՝ քննադատության չի դիմանում, քանզի ըստ էության կարևոր չէ, թե որևէ դատավարական գործողության կատարման համար անհրաժեշտ ժամանակահատվածն ի՞նչ չափման միավորով է սահմանվում՝ ժամերով, օրերով, շաբաթներով, ամիսներով, թե տարիներով, եթե հստակ սահմանված են տվյալ ժամանակահատվածի հոսքի սկիզբը և ավարտը, և բոլոր դեպքերում ժամկետի հոսքն անընդմեջ է, եթե օրենքը պատճառաբանված հիմքերի առկայության դեպքում հատուկ բացառություն չի սահմանում: Կոնկրետ դեպքում օրենքով հստակեցված են ինչպես տարով և ամիսներով, այնպես էլ օրերով հաշվարկվող ժամկետի սկիզբը և ավարտը:

Ըստ պատասխանողի՝ հիմնագուրկ է դիմողի պնդումն առ այն, որ դատավարական գործողությունների համար օրենքով սահմանված ամենակարճ ժամկետն օրենսգրքում եռօրյա ժամկետն է, հետևաբար՝ ՀՀ վճռաբեկ դատարանը չի կարող սահմանել ավելի կարճ ժամկետ: Օրենքով

որոշված կոնկրետ ժամկետների սահմանման համար օրենսդիրը նկատի է ունենում համապատասխան դատավարական գործողության համար անհրաժեշտ և բավարար ժամանակահատվածը: Դատարանները նույնպես որոշակի ժամկետ սահմանելու դեպքում պարտավոր են հաշվի առնել տվյալ դատավարական գործողության համար սովորական հանգամանքների պայմաններում բավարար ժամանակահատվածը: Օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասով վճռաբեկ դատարանը լիազորված է վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ մինչև մեկամսյա ժամկետ սահմանել ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Այս ժամկետը սահմանելիս վճռաբեկ դատարանը կարող է նաև, ի թիվս այլնի, հաշվի առնել սահմանվող ժամանակահատվածում ոչ աշխատանքային օրերի առկայությունը և ժամկետը սահմանել այդ հանգամանքի հաշվառմամբ:

Պատասխանողի կարծիքով՝ ոչ աշխատանքային օրերն օրերով հաշվարկվող ժամանակահատվածում ներառելու դեպքում անձի դատարան դիմելու, արդարադատության մատչելիության, արդար դատաքննության իրավունքները վնասելու որևէ գործնական ռիսկ առկա չէ, հետևաբար՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ դիմողն ըստ էության վիճարկում է նորմի կիրառման իրավաչափությունը, պատասխանողը միջնորդում է կարճել գործի վարույթը:

5. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախևառաջ արձանագրել, որ դիմողն իր իրավունքների ենթադրյալ խախտումն ըստ էության պայմանավորում է վիճարկվող դրույթներում իրավական անորոշության և օրենսդրական բացի առկայությամբ: Մասնավորապես, դիմողը վկայակոչում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի համանման կանոնակարգումները, որտեղ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի, տարանջատված են «օր» և «օրացուցային օր» եզրույթները, և որտեղ նախատեսված է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, իսկ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը: Բացի դրանից, ըստ դիմողի՝ պարզ չէ, թե քաղաքացիական դատավարության շրջանակներում «օր» եզրույթը ներառում է, արդյոք, ոչ աշխատանքային օրը, թե՛ ոչ:

Ելնելով վերոգրյալից, ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալին.



- արդյո՞ք ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված օրերով հաշվարկվող ժամկետի որոշման կարգը համահունչ է ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածով նախատեսված որոշակիության սկզբունքին, և արդյո՞ք առաջանում է այնպիսի անորոշություն, որը թույլ չի տալիս անձին դրսևորելու համապատասխան վարքագիծ, և ինչի արդյունքում խախտվում են անձի՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

Սահմանադրական կոնկրետ վերահսկողության շրջանակներում դիմողն ըստ էության վիճարկում է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ և 75-րդ հոդվածներով նախատեսված՝ օրերով հաշվարկվող ժամկետների հաշվարկման կարգի սահմանադրականությունը: ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել վերոհիշյալ հոդվածների համապատասխան դրույթների սահմանադրաիրավական բովանդակության բացահայտմանն այդ համատեքստում:

6. Սույն գործի քննության շրջանակներում Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածն ամրագրում է ժամկետների հաշվարկի կարգը՝ նախատեսելով երկու իրավիճակ. առաջին՝ երբ դատավարական ժամկետը հաշվարկվում է ստույգ **օրացուցային** տարով, ամսով և ամսաթվով, երկրորդ՝ որոշակի ժամանակահատվածով: Ընդ որում, օրենսդիրը հիշյալ օրենսգրքով չի մանրամասնել «որոշակի ժամանակահատված» եզրույթի բովանդակությունը, սակայն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 82-րդ հոդվածով ամրագրել է, որ իրավական ակտերով սահմանված ժամկետը որոշվում է **օրացուցային** տարով, ամսով, ամսաթվով կամ տարիներով, ամիսներով, շաբաթներով, օրերով կամ ժամերով հաշվարկվող որոշակի ժամանակահատվածի ավարտով:

Վերոգրյալ երկու իրավական ակտերի համադրված վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշակի ժամանակահատվածով որոշվող ժամկետը, ի թիվս այլնի, կարող է հաշվարկվել **օրերով, որոնցում ներառվում են ոչ աշխատանքային օրերը**: Նման դիրքորոշման համար հիմք է հանդիսանում նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերությունը, որն ամրագրում է՝ այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Այսինքն՝ «օր» եզրույթն **ընդգրկում է նաև ոչ աշխատանքային օրը**:

Բացի դրանից, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածով նախատեսվում է, որ եթե օրենքով կամ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված է ժամկետների հաշվարկման այլ կարգ, ապա տվյալ ակտով կարգավորվող իրավահարաբերությունների ժամանակ կիրառվում է այդ օրենքով կամ իրավահարաբերությունը կարգավորող օրենսդրական ակտով սահմանված ժամկետների հաշվարկման կարգը: Այսինքն՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 85-րդ հոդվածը թույլ է տալիս, պայմանավորված կոնկրետ իրավահարաբերության առանձնահատկություններով, կոնկրետ օրենսդրական ակտով նախատեսել ժամկետների, այդ թվում՝ դատավարական, հաշվարկման այլ կարգ:

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում դատավարական ժամկետների հաշվարկման հատուկ կարգ, ինչպես դա արվել է, օրինակ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում: Մասնավորապես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը, իսկ օրացուցային օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են հանգստյան և օրենքով նախատեսված ոչ աշխատանքային օրերը:

Վերոգրյալի կապակցությամբ ՀՀ սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասին, համաձայն որի՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացությունը սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով»: Այսինքն, «օրեր» հասկացությունը հաշվարկման տեսանկյունից չի կարող տարբեր բովանդակություն ներառել, եթե կիրառվում է **միևնույն իրավական ակտում:**

Այդ առումով, ՀՀ քաղաքացիական դատավարության և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքերում «օրեր» եզրույթը հաշվարկման տեսանկյունից կարող է ունենալ տարբեր բովանդակություն:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չեն իրավական անորոշություն և օրենքի բաց քանի որ, նախ՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում օրենսդիրն ուղղակիորեն նախատեսել է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում ներառվում են նաև ոչ աշխատանքային օրերը, երկրորդ՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում օրենսդիրն անհրա-

ժեշտ չի համարել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նմանությամբ նախատեսել որևէ հատուկ կանոնակարգում դատավարական ժամկետներում ոչ աշխատանքային օրերը չընդգրկելու վերաբերյալ: Այսինքն, ըստ օրենսդրի՝ քաղաքացիական դատավարության շրջանակներում դատավարական ժամկետի ընթացքը հոսում է անընդհատ՝ ներառելով ցանկացած օր՝ աշխատանքային, թե ոչ աշխատանքային:

7. Անդրադառնալով քաղաքացիական դատավարության շրջանակներում հաշվարկվող դատավարական ժամկետների մեջ ոչ աշխատանքային օրերը ներառելու և դատական պաշտպանության ու արդար դատաքննության իրավունքների համադրության հարցին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քաղաքացիական դատավարության շրջանակներում դատավարական ժամկետների մեջ ոչ աշխատանքային օրերը ներառելը չի խոչընդոտում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման հնարավորությանը, քանի որ առկա են օրենսդրական երաշխիքներ: Այսպես, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 233-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ վճռաբեկ բողոքը վերադարձնելու մասին որոշմամբ վճռաբեկ դատարանը սահմանում է մինչև մեկամսյա ժամկետ՝ ձևական սխալները շտկելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար: Այսինքն՝ օրենսդրորեն անձին տրամադրվում է որոշակի ժամանակահատված թույլ տրված սխալներն ուղղելու և վճռաբեկ բողոքը կրկին ներկայացնելու համար:

Օրենսդրական մյուս երաշխիքի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը նաև ամրագրում է, որ այն դեպքում, երբ ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ժամկետի ավարտման օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը: Սա ևս մեկ երաշխիք է դատավարական ժամկետների հաշվարկի արդյունավետ իրացման և անձի կողմից իր պարտականությունների իրացման համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Մ Ե Ց**.

1. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 74-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)/2018  
155

2. ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 75-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

12 սեպտեմբերի 2017 թվականի  
ՄԴՈ-1376



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԷԴԻԿ ՀՈՎՍԵՓՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
336-ՐԴ ԵՎ 349-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի ներկայացուցիչ՝ փաստաբան Ժ. Խաչատրյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Էդիկ Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ և 349-րդ հոդվածների Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Էդիկ Հովսեփյանի՝ 2017 թվականի մայիսի 4-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական օրենսգրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. ՀՀ քրեական օրենսգրքը (այսուհետ՝ օրենսգրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին:

Օրենսգրքի՝ «Ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելը» վերտառությամբ 336-րդ հոդվածը սահմանում է.

«1. Անձին քրեական պատասխանատվության ենթարկելը չհաստատված հանցագործության դեպքով կամ առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող կամ ոչ բավարար չափով հիմնավորող կամ առանց նրա արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների առկայության

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզուգուշությամբ ծանր հետևանքներ է առաջացրել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով:

3. Նույն արարքը, որը դիտավորությամբ ծանր հետևանքներ է առաջացրել՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ կամ երրորդ մասով նախատեսված արարքը, որը զուգորդվել է՝

1) ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության մեջ մեղադրելու հետ,

2) մեղադրանքի արհեստական ապացույցներ ստեղծելով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով»:

Օրենսգրքի՝ «Ապացույցները կեղծելը» վերտառությամբ 349-րդ հոդվածը սահմանում է.

«1. Քաղաքացիական կամ վարչական դատավարության գործով ապացույցներ կեղծելը գործին մասնակցող անձի կամ նրա ներկայացուցչի կողմից

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Քրեական գործով ապացույցներ կեղծելը հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ պաշտպանի կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Մույն հոդվածի երկրորդ մասում նշված անձանց կողմից քրեական գործով ապացույցներ կեղծելը, որը՝

1) կատարվել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների վերաբերյալ գործերով,

2) անզուգուրությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա»:

Օրենսգրքի վիճարկվող հոդվածներից 336-րդ հոդվածը որևէ օրենսդրական փոփոխության կամ լրացման չի ենթարկվել, իսկ 349-րդ հոդվածը փոփոխության է ենթարկվել 09.06.2004թ. ՀՕ-97-Ն ՀՀ օրենքով, որի ուժով օրենսգրքի 349-րդ հոդվածի 3-րդ մասից հանվել է «առաջին կամ» բառերը, լրացվել է 07.07.2005թ. ՀՕ-156-Ն ՀՀ օրենքով, որի ուժով օրենսգրքի 349-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան լրացվել է հետևյալ բառերով. «, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով», փոփոխության է ենթարկվել 01.06.2006թ. ՀՕ-119-Ն ՀՀ օրենքով, որի ուժով օրենսգրքի 349-րդ հոդվածի առաջին մասի սանկցիայից հանվել են «կամ ուղղիչ աշխատանքներով՝ մեկից երկու տարի ժամկետով» բառերը և լրացվել է 05.12.2013թ. ՀՕ-147-Ն օրենքով, որի ուժով օրենսգրքի 349-րդ հոդվածը «քաղաքացիական» բառից հետո լրացվել է «կամ վարչական դատավարության» բառերով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2016 թվականի մարտի 18-ի դատավճռով Է. Հովսեփյանը մեղավոր է ճանաչվել ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով, 336-րդ հոդվածի 1-ին մասով և 38-349-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:

Ամբաստանյալ Է. Հովսեփյանի պաշտպան Ժ. Խաչատրյանի վերաքննիչ բողոքի քննության արդյունքում ՀՀ վերաքննիչ քրեական դատա-

րանը 2016 թվականի հոկտեմբերի 4-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մերժել է՝ օրինական ուժի մեջ թողնելով Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2016 թվականի մարտի 18-ի դատավճիռը:

Ամբաստանյալ Է. Հովսեփյանի պաշտպան Ժ. Խաչատրյանի վճռաբեկ բողոքի քննության արդյունքում ՀՀ վճռաբեկ դատարանը 2017 թվականի փետրվարի 14-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել է:

3. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանություններով, հակասում են ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասին և 79-րդ հոդվածին:

Օրենսգրքի 336-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ դիտարկվող հոդվածի դիսպոզիցիայում առկա է անորոշ ձևակերպում, քանի որ բացահայտված չեն «քրեական պատասխանատվության ենթարկել» հասկացության իմաստն ու բովանդակությունը: Դիմողի պնդմամբ՝ օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ չեն կարող լինել քրեական գործը քննող քննիչն ու գործով մեղադրական եզրակացությունը հաստատող դատախազը, և միայն դատավորը կարող է լինել նշված հանցագործության սուբյեկտ, քանի որ «քրեական պատասխանատվության ենթարկել» նշանակում է անձի նկատմամբ կայացնել վերջնական դատական ակտ, որի իրավասությունը պատկանում է միայն դատարանին, իսկ քրեական դատավարական օրենսգրքով քննիչի և դատախազի լիազորությունները սահմանափակված են քրեական հետապնդում իրականացնելու շրջանակներով:

Օրենսգրքի 349-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը հիմնավորում է նրանով, որ դիտարկվող հոդվածը կարող էր ունենալ նաև 4-րդ մաս, որով պարզաբանված կլիներ «կեղծել» կամ «ապացույց կեղծել» հասկացությունները, ինչը կբացառեր հոդվածի իմաստի տարածական մեկնաբանումը: Մասնավորապես, ըստ դիմողի, իրավակիրառ պրակտիկայում հոդվածի տարածական մեկնաբանման շրջանակներում ապացույցի կեղծում է համարվել նաև ցուցմունք տվող վկային ուղղորդելը, մինչդեռ, դիմողի կարծիքով, վկայի ցուցմունքը հետաքննության և նախաքննության ընթացքում առարկայացվում է օրենքով նախատեսված կարգով կազմված արձանագրությամբ, հետևաբար՝ կեղծվել կարող է վկայի ցուցմունքի արձանագրությունը:

4. Պատասխանողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող հոդվածներով սահմանված դրույթներն ամբողջությամբ համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը: Միաժամանակ, կարծիք հայտնելով, որ դիմողն ըստ էության վիճարկում է նորմի կիրառման իրավաչափությունը, պա-



տասխանողը, վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1375 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, միջնորդում է կարճել գործի վարույթը:

Իր դիրքորոշումը հիմնավորելու համար պատասխանողը, վկայակոչելով իրավական անորոշության վերաբերյալ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-780 որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումները, գտնում է, որ վիճարկվող դրույթներում «քրեական պատասխանատվության ենթարկել» և «ապացույցներ կեղծել» բառակապակցությունների մեկնաբանումը գործնական հարց է, և մեկնաբանման ընթացքում իրավական անորոշություն ստեղծել չի կարող:

Իր դիրքորոշումը պատասխանողը հիմնավորում է նաև վիճարկվող դրույթներում «քրեական պատասխանատվության ենթարկել» և «ապացույցներ կեղծել» բառակապակցություններին տրված մեկնաբանությամբ: Ըստ պատասխանողի՝ «քրեական պատասխանատվության ենթարկել» բառակապակցությունը չի ներառում դատավորին, քանի որ դատավորի համար գործում է օրենսգրքի 352-րդ հոդվածը, իսկ վկաների նկատմամբ անօրինական ազդեցությամբ ցանկալի ցուցմունք ստանալը քրեական հետապնդման մարմինների կողմից հանրորեն վտանգավոր արարք է, և անհրաժեշտաբար պետք է քրեականացվեր օրենսդրի կողմից: Ըստ այդմ էլ՝ պատասխանողը գտնում է, որ «ապացույցներ կեղծել» բառակապակցությունը չի կարող ներառել բացառապես ապացույցներն օբյեկտիվացնող արձանագրությունում առկա տվյալները մեխանիկական ազդեցությամբ փոխելը, այլ նաև պետք է ներառի այդ տվյալների տրամադրման ամբողջ գործընթացը:

5. Դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ դիմողի կողմից օրենսգրքի 336-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին համապատասխանող արարք կատարելու հանգամանքը դատարանի կողմից հաստատվել է հետևյալ կերպ. «...Էդիկ Վահանի Հովսեփյանը, զբաղեցնելով Սյունիքի մարզի դատախազի տեղակալի պաշտոնը և դատավարական ղեկավարում ու հսկողություն իրականացնելով Ալվինա Տատինյանի կողմից վկային սուտ ցուցմունք տալուն հարկադրելու դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Սյունիքի մարզի քննչական բաժնի քննիչ Արման Ենգոյանի վարույթում քննված քրեական գործով, քաջ տեղյակ լինելով, որ փաստացի Ալվինա Տատինյանը հորդորել է Նոնա Հարությունյանին հրաժարվել սուտ ցուցմունքներից և դատարանին հայտնել իրականությունը, այսինքն՝ որ Ալվինա Տատինյանը չի կատարել ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված հանցագործություն, և որ նման հանցագործության դեպք առհասարակ տեղի չի ունեցել, չհաստատված հանցագործության դեպքով քրեական պատասխա-

նատվության է ենթարկել ակնհայտ անմեղ անձ Ալվինա Տատինյանին՝ 2012 թվականի հուլիսի 11-ին հաստատելով վերջինի կողմից վկային սուտ ցուցմունք տալուն հարկադրելու վերաբերյալ քննիչ Արման Ենգոյանի կազմած մեղադրական եզրակացությունը և քրեական գործն ուղարկելով դատարան: Այսինքն՝ Էդիկ Վահանի Հովսեփյանը կատարել է արարք, որը համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներին»:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի ՍԴ/0164/01/12 դատավճռով Ալվինա Անուշավանի Տատինյանը ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացվել է՝ մեղադրողի կողմից մեղադրանքից հրաժարվելու պատճառաբանությամբ:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ դիմողը, ըստ էության, իր համար առաջացած բացասական իրավական հետևանքները պայմանավորում է վիճարկվող դրույթների՝ օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությամբ, ինչը, դիմողի կարծիքով, իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է վիճարկվող դրույթների այնպիսի մեկնաբանման, ըստ որի՝ օրենսգրքի 336-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ են հանդիսանում քրեական գործը քննող քննիչն ու գործով մեղադրական եզրակացությունը հաստատող դատախազը, այլ ոչ թե՝ մեղադրական դատավճիռը կայացրած դատավորը: Իսկ օրենսգրքի 349-րդ հոդվածի շրջանակներում ապացույցի կեղծում է համարվում ցուցմունք տվող վկային ուղղորդելը կամ վկային սուտ ցուցմունք տալուն դրդելը:

Դիմողը վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականության այլ հարցեր չի բարձրացնում:

6. Անդրադառնալով իրավակիրառական պրակտիկայի շրջանակներում օրենսգրքի 336-րդ հոդվածին տրված այնպիսի մեկնաբանությանը, ըստ որի՝ հիշյալ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտ են քրեական գործը քննող քննիչն ու գործով մեղադրական եզրակացությունը հաստատող դատախազը, այլ ոչ թե մեղադրական դատավճիռը կայացրած դատավորը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ ՀՀ քրեական օրենսդրության խնդիրների իրականացման համար օրենսգիրքն ամրագրում է քրեական պատասխանատվության հիմքն ու քրեական օրենսդրության սկզբունքները, որոշում, թե հանրության համար վտանգավոր որ արարքներն են համարվում հանցագործություններ, և սահմանում է պատժի տեսակներն ու քրեաիրավական ներգործության այլ միջոցներ՝ դրանք կատարելու համար: Հետևաբար, քրեական հանցագործությունների սուբյեկտներին

նախատեսելու հարցը գտնվում է բացառապես օրենսդրի իրավասության տիրույթում:

Անդրադառնալով օրենսգրքի 336-րդ հոդվածում «անձին քրեական պատասխանատվության ենթարկել» եզրույթի սահմանման բացակայության հարցին՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել Սահմանադրական դատարանի՝ ՍԴՈ-1143 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումը, ըստ որի՝ «... օրենսդրական բացը չի կարող մեխանիկորեն նույնացվել սոսկ այս կամ այն եզրույթի օրենսդրորեն ամրագրված սահմանման բացակայության հետ: Օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Քննարկման առարկա հոդվածի դիսպոզիցիայից բխում է, որ հանցակազմի օբյեկտիվ կողմը՝

- չհաստատված հանցագործության դեպքով կամ
- առանց դեպքին անձի մասնակցությունը հիմնավորող, կամ
- ոչ բավարար չափով հիմնավորող, կամ
- առանց անձի արարքում հանցակազմը հավաստող փաստական

տվյալների առկայության նրան քրեական պատասխանատվության ենթարկելն է:

Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է այն մասին, որ չհաստատված հանցագործության դեպքը, անձի՝ դեպքին մասնակցությունը հիմնավորված չլինելը կամ ոչ բավարար չափով հիմնավորված լինելը և անձի արարքում հանցակազմը հավաստող փաստական տվյալների բացակայությունը, ի թիվս այլ հանգամանքների, օրենսդրի կողմից ամրագրվել են որպես քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ:

Ընդ որում, օրենսդիրն իրավասու մարմինների համար սահմանել է քրեական դատավարության բոլոր փուլերում քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների հայտնաբերումից բխող համապատասխան պարտականություններ:

Այսպես, օրինակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 3-5-րդ մասերի համաձայն.

«3. Դատախազը, քննիչը, հայտնաբերելով քրեական գործի վարույթը բացառող հանգամանքներ, քրեական գործով մինչդատական վարույթի յուրաքանչյուր փուլում որոշում են կայացնում քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին: Դատախազն իրավասու է քրեական գործի վարույթը կարճելու կամ քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում կայացնել նաև գործը դա-

տարան ուղարկելուց հետո, բայց մինչև դատական նիստում գործի քննությունն սկսվելը:

4. Մեղադրողը, դատարանում հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, պարտավոր է հայտարարել ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին: Ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին մեղադրողի հայտարարությունը դատարանի համար քրեական գործի վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմք է:

5. Դատարանը, հայտնաբերելով քրեական հետապնդումը բացառող հանգամանքներ, լուծում է ամբաստանյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցնելու հարցը»:

Վերոգրյալից հետևում է, որ քրեական գործի վարույթը կամ քրեական հետապնդումը բացառող որոշակի հանգամանքներ հայտնաբերելուց բխող համապատասխան պարտականությունների չկատարումը հանգեցնում է քննարկման առարկա հանցակազմի օբյեկտիվ կողմ հանդիսացող գործողությունների կատարմանը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նկատել նաև, որ օրենսգրքի՝ «Քրեական պատասխանատվությունից ապօրինի ազատելը» վերտառությամբ 351-րդ հոդվածի շրջանակներում օրենսդիրը որպես հանցակազմի սուբյեկտ է համարում դատախազին, քննիչին կամ հետաքննություն կատարող անձին: Իսկ օրենսգրքի՝ «Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելը» վերտառությամբ 352-րդ հոդվածի շրջանակներում օրենսդիրը հանցակազմի սուբյեկտ է դիտարկում ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացրած դատավորին:

Վերոգրյալը վկայում է, որ թեև քննարկման առարկա հոդվածում բացակայում է «անձին քրեական պատասխանատվության ենթարկել» եզրույթի սահմանումը, սակայն, հանցակազմի օբյեկտիվ կողմ կազմող գործողությունների համադրումը քրեաիրավական և քրեադատավարական մի շարք դրույթների հետ, թույլ է տալիս հստակեցնել հիշյալ եզրույթի բովանդակային սահմանները, ինչպես նաև հստակեցնել վիճարկվող դրույթով ամրագրված արարքի սուբյեկտային կազմը: Ըստ այդմ էլ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ «անձին քրեական պատասխանատվության ենթարկել» եզրույթն օրենսգրքի 336-րդ հոդվածի իմաստով ներառում է քրեական գործը քննող քննիչին ու գործով մեղադրական եզրակացությունը հաստատող դատախազին, և չի վերաբերում դատավորին: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ բացակայում է «անձին քրեական պատասխանատվության ենթարկել» եզրույթի բովանդակությունը սահմանող նորմի ամրագրման անհրաժեշտությունը,

մասնավորապես՝ օրենսգրքի 336-րդ հոդվածում: Քրեական պատասխանատվության հիմքը, պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, քրեական պատասխանատվության ընդհանուր պայմանները, անձանց շրջանակը և այլ հարաբերություններին առնչվող իրավակարգավորումները սահմանված են ՀՀ քրեական օրենսգրքով:

Ի լրումն վերոգրյալի՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ ՄԴ3/0101/01/13 քրեական գործով 2016 թվականի մարտի 18-ի դատավճռի շրջանակներում դատավորի կողմից ակնհայտ անմեղ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հարց չէր կարող քննարկվել այն պատճառաբանությամբ, որ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2013 թվականի ապրիլի 19-ի ՄԴ/0164/01/12 դատավճռով Ալվինա Անուշավանի Տատինյանը ՀՀ քրեական օրենսգրքի 340-րդ հոդվածի 2-րդ մասով առաջադրված մեղադրանքում արդարացվել է:

Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ վերոգրյալը չի բացառում քննարկման առարկա եզրույթի բովանդակային սահմանների հստակեցման հնարավորությունն իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում՝ ելնելով օրենքի միատեսակ կիրառումն ապահովելու և հակասական իրավակիրառական պրակտիկան բացառելու նպատակներից:

7. Անդրադառնալով օրենսգրքի 349-րդ հոդվածի ենթադրյալ հակասահմանադրականության հարցին՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա են սույն գործի վարույթն այդ մասով կարճելու հիմքեր՝ հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով և 60-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված իրավակարգավորումները:

Վերոգրյալը պատճառաբանվում է այն հանգամանքով, որ, դիմողը, ըստ էության, բարձրացնում է վիճարկվող դրույթում «ապացույցներ կեղծել» եզրույթի սահմանման օրենսդրական ամրագրման անհրաժեշտության հարց:

Օրենսդիրը, չամրագրելով «ապացույցներ կեղծել» եզրույթի սահմանումը, որոշակի հայեցողություն է տվել համապատասխան իրավասությամբ օժտված իրավակիրառողին՝ կոնկրետ դեպքում որոշելու, թե ինչ է նշանակում ապացույցներ կեղծել, քանի որ եզրույթի հստակ սահմանման առկայության պարագայում հնարավոր են դեպքեր, որոնք դուրս կմնան դրա բովանդակային սահմաններից:

Վերոգրյալը հաստատվում է նաև ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքով: Այսպես, օրինակ, 2004թ. դեկտեմբերի 21-ի՝ Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Busuioc v. Moldova) վճռում ՄԻԵԴ-ի կողմից արձանագրվել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող

է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին, հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է:

Հիշյալ դիրքորոշումը վերահաստատվել է նաև Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես՝ ՄԴՈ-997 որոշման շրջանակներում:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ «ապացույց կեղծել» եզրույթի սահմանման օրենսդրական հնարավոր ամրագրման անհրաժեշտության հարցը գտնվում է օրենսդրի իրավասության տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով, 60, 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց .**

1. ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ հոդվածը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. «Էղիկ Հովսեփյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական օրենսգրքի 336-րդ և 349-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը մասամբ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 349-րդ հոդվածի մասով կարճել:

3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 սեպտեմբերի 2017 թվականի  
ՄԴՈ-1377



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14-ԻՆ ԼՅՈՒՔՍԵՄԵՄԲՈՒՐԳՈՒՄ ԵՎ  
ԲՐՅՈՒՍԵԼՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՆԱՏՕ-Ի ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ  
ՄԻՋԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի առաջին տեղակալ Ա. Զաքարյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հուլիսի 14-ին Լյուքսեմբուրգում և Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման կազմակերպության միջև համագործակցության աջակցության մասին

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 2017թ. օգոստոսի 17-ին Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման կազմակերպության միջև համագործակցության աջակցության մասին համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2017թ. հուլիսի 14-ին՝ Լյուքսեմբուրգում և Բրյուսելում:

Համաձայնագրի նպատակն է Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման կազմակերպության (այսուհետ՝ ՆՄՊՕ) միջև հստակ որոշված ոլորտներում սահմանել համագործակցության աջակցման իրավական շրջանակը և հիմնական սկզբունքները:

Համաձայնագրի նախաբանում նշվում է, որ Համաձայնագիրն ստորագրվում է այն ըմբռնումով, որ Հայաստանի Հանրապետությունն այդ Համաձայնագրով չի ձգտում Հյուսիսատլանտյան պայմանագրի կազմակերպությանն անդամակցության, և որ այդպիսի Համաձայնագրի կնքումը Հայաստանի Հանրապետության համար իրավական հիմք չէ հավակնելու նման կարգավիճակի:

Համաձայնագրով սահմանվում են Համաձայնագրի հետ կապված ֆինանսական կարգավորումները (հոդված 4), Համաձայնագրի մասնակից Կողմերի պատասխանատվության, երաշխիքի կամ ապահովագրության հետ կապված դրույթները (հոդված 5), անվտանգության պահանջները (հոդված 7), սեփականության իրավունքների առարկա հանդիսացող տեխնիկական տեղեկության փոխանակման (հոդված 8), հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների (հոդված 9), անձեռնմխելիության և արտոնությունների (հոդված 10) վերաբերյալ դրույթները, այցելությունների ընթացակարգերը (հոդված 11), Համաձայնագրի դադարեցման և ծագած վեճերի լուծման պայմանները (հոդվածներ 13 և 15):

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- կրել Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.1 կետում նշված գրավոր փաս-



տարթթերի շրջանակներում ՆՄՊՕ-ից պահանջած և վերջինիս տրամադրած աջակցության կամ ծառայությունների ծախսերը, ներառյալ Համաձայնագրի 13-րդ հոդվածով նախատեսված դադարեցման կամ հրաժարման դեպքում առաջացած ծախսերը (հոդված 4, կետ 4.1),

- կրել Համաձայնագրի շրջանակներում ՆՄՊՕ-ի տրամադրած աջակցության կամ ծառայությունների իրականացման հետ կապված ռիսկերը (հոդված 4, կետ 4.2),

- Համաձայնագրի համաձայն, ստանալով նյութական միջոցներ կամ ծառայություններ, հրաժարվել վնասվածքների (ներառյալ մահվան հանգեցրած վնասվածքները), կորստի կամ վնասի համար պահանջներ ներկայացնելուց, եթե այդպիսի վնասվածքը, կորուստը կամ վնասն առաջացել են տվյալ նյութական միջոցների կամ ծառայությունների բնականոն օգտագործումից և/կամ շահագործումից (հոդված 5, կետ 5.1),

- մշակել և իրագործել արդյունաբերական անվտանգության համար համակարգված ծրագիր ՆԱՏՕ-ի անվտանգության քաղաքականության (C-M (2002) 49 և (C-M (2002) 50) և դրան կից Աջակցող հրահանգների հիման վրա (հոդված 7, կետ 7.1),

- միջոցներ ձեռնարկել՝ օգտագործելու համար մյուս Կողմին պատկանող տեղեկությունը միայն Համաձայնագրի 3-րդ հոդվածի 3.1 կետում նշված փաստաթղթերի նպատակներին համապատասխան, ամբողջապես ապահովելու մյուս Կողմին պատկանող տեղեկության գաղտնիությունը և ձեռնպահ մնալու որևէ երրորդ կողմի նմանատիպ տեղեկությունը բացահայտելուց, փոխանցելուց կամ այլ կերպ հասանելի դարձնելուց (հոդված 8, կետ 8.2),

- ՆՄՊՕ-ի ակտիվները, եկամուտը, այլ սեփականությունն ազատել բոլոր ուղղակի և անուղղակի հարկերից, ինչպես նաև պարտադիր այլ վճարներից (այնուամենայնիվ, ՆՄՊՕ-ն չպետք է պահանջի ազատել այն հարկերից, տուրքերից կամ տոկոսադրույքներից, որոնք հանրային ծառայության վճարներ են), ինչպես նաև մաքսային վճարներից ազատել ՆՄՊՕ-ի կողմից պաշտոնական օգտագործման համար ներկրվող կամ արտահանվող ապրանքները և ՆՄՊՕ-ի հրատարակությունները (հոդված 9, կետեր 9.1, 9.2 և 9.3),

- երաշխավորել ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման գործակալության (այսուհետ՝ ՆՄՊԱ) անձնակազմի՝ ՀՀ տարածքում իր գործողությունների կամ բացթողումների հետևանքով ծագած բոլոր իրավական գործընթացներում՝ քաղաքացիական, վարչական կամ քրեական, արտոնություններից, անձեռնմխելիությունից և աջակցությունից օգտվելու իրավունքը, ներառյալ դիվանագիտական անձեռնմխելիությունը, այն չափով, որը սովորաբար տրվում է «Դիվանագիտական հարաբերությունների մասին» 1961թ. ապրիլի 18-ի Վիեննայի կոնվենցիայի համաձայն՝ Հայաստան

նի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների դիվանագիտական անձնակազմի անդամներին (հոդված 10, կետ 10.2),

- Հայաստանի Հանրապետությունում ՆՄՊԱ անձնակազմին ազատել հարկումից՝ կապված ՆՄՊԱ-ից իր ստացած աշխատավարձերի ու այլ վարձատրությունների և Հայաստանի Հանրապետությունից դուրս ստացած որևէ եկամտի հետ (հոդված 10, կետ 10.4),

- ՆՄՊԱ անձնակազմի՝ անձնական կամ պաշտոնական օգտագործման համար Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և/կամ Հայաստանի Հանրապետությունից արտահանվող գույքը (ներառյալ նաև տրանսպորտային միջոցները) ազատել բոլոր հարկերից, տուրքերից և մաքսային գնություններից, իսկ ՆՄՊԱ անձնակազմի կողմից Հայաստանի Հանրապետությունում անձնական օգտագործման համար գնված ապրանքները հարկերից ազատել ՀՀ օրենսդրության համաձայն (հոդված 10, կետ 10.5),

- ՀՀ այն քաղաքացիների նկատմամբ, որոնք տեղում աշխատում են ՆՄՊԱ-ի համար, կիրառվում է ՀՀ օրենսդրությունը: Այնուամենայնիվ, համաձայնելով, որ ՆՄՊԱ-ում աշխատելու ընթացքում նրանք ենթարկվում են միայն ՆՄՊԱ կողմից սահմանված աշխատանքային դրույթներին ու պայմաններին, Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է նրանց համար երաշխավորել ցանկացած քաղաքացիական, քրեական և վարչական վարույթում անձեռնմխելիությունից օգտվելու իրավունք՝ նրանց բանավոր կամ գրավոր ձևով արտահայտած խոսքերի և բոլոր այն գործողությունների կապակցությամբ, որոնք կատարել են՝ ելնելով իրենց պաշտոնական պարտականություններից (հոդված 10, կետ 10.6),

- Համաձայնագիրը դադարեցնող կամ հրաժարվող Կողմ հանդես գալու պարագայում ամբողջությամբ կատարել հանձնառությունները մինչև Համաձայնագրի դադարեցման կամ դրանից դուրս գալու ուժի մեջ մտնելը, իսկ եթե Կողմերը Համաձայնագրի դադարեցումը որոշում են համատեղ, ապա դրա հետ կապված ցանկացած ծախս կրել ՆՄՊՕ-ի հետ համատեղ (հոդված 13, կետեր 13.3 և 13.4):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

1. 2017 թվականի հուլիսի 14-ին Լյուքսեմբուրգում և Բրյուսելում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության և ՆԱՏՕ-ի ապահովման և մատակարարման կազմակերպության միջև համագործակցության աջակցության մասին համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 սեպտեմբերի 2017 թվականի  
ՍԴՈ-1378



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 թվականի Հունիսի 13-ին Երեւանում ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԷՍՏՈՆԻՍՅՔԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ՝ ԱՌԱՆՑ  
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԵՏԸՆԴՈՒՆՄԱՆ  
(ՌԵԱԴՄԻՄԻՍՅՔԻ) ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ  
(ԿԻՐԱՐԿՈՂ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ  
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

19 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն պետական ծառայության պետ Գ. Եզանյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հունիսի 13-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

կառավարության և Էստոնիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին համաձայնագրի» կիրարկման մասին (Կիրարկող արձանագրություն) արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 17.08.2017թ. ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով Արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. Արձանագրությունն ստորագրվել է 2017 թվականի հունիսի 13-ին Երևանում, Կողմերի միջև գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում, 2013 թվականի ապրիլի 19-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) (ՀՀ կողմից վավերացվել է Ազգային ժողովի 2013 թվականի նոյեմբերի 11-ի ԱԺՈ-091-Ն որոշմամբ (ՄԴՈ-1113)) իրականացումը դյուրացնելու նպատակով:

2. Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- ապահովել, որպեսզի Համաձայնագրի 8-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ հարցում ուղարկող ՀՀ իրավասու մարմինը հարցում ստացող էստոնական կողմի իրավասու մարմինն հետընդունման դիմումը ներկայացնի էլեկտրոնային փոստի միջոցով, կամ, բացառիկ դեպքերում՝ ֆաքսի միջոցով (հոդված 5, կետ 1),

- որպես հարցում ստացող Կողմ ապահովել, որպեսզի հարցում ուղարկող էստոնական կողմից ստացված հետընդունման դիմումին պատասխան տրվի Հետընդունման համաձայնագրի 11-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային փոստի միջոցով, կամ, բացառիկ դեպքերում՝ ֆաքսի միջոցով (հոդված 5, կետ 2),

- եթե Համաձայնագրի 1-ին և 2-րդ հավելվածներում թվարկված փաստաթղթերից ոչ մեկը հարցում ուղարկող Կողմը չի կարող ներկայացնել, որպես հարցում ստացող Կողմ հանդես գալու պարագայում, ապահովել, որպեսզի ՀՀ դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունը վերադարձման ենթակա անձի հետ անցկացնի հարցա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

զրույց՝ հետընդունման դիմումն ստանալու ամսաթվից ամենաուշը 5 աշխատանքային օրվա ընթացքում (հոդված 6, կետ 1),

- որպես հարցում ուղարկող Կողմ հանդես գալու պարագայում ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը Հետընդունման համաձայնագրի 5-րդ հավելվածի համաձայն հարցազրույցի անցկացման վերաբերյալ նշում կատարի հետընդունման դիմումի մեջ (հոդված 6, կետ 1),

- այն դեպքում, երբ հարցում ստացող էստոնական կողմի դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցիչները հարցազրույցն անցկացնում են իրենց դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության շենքից դուրս, հոգալ հարցազրույցի հետ կապված փոխադրման ծախսերը (հոդված 6, կետ 4),

- ապահովել, որպեսզի ցանկացած իրավական կամ գործնական խոչընդոտի պատճառով փոխադրման ժամկետի հետաձգման դեպքում հարցում ուղարկող ՀՀ իրավասու մարմինն անհապաղ տեղեկացնի հարցում ստացող էստոնական կողմի իրավասու մարմնին (հոդված 8, կետ 2),

- համաձայնել ուղեկցմամբ փոխադրումների կամ տարանցման համար Արձանագրության 9-րդ հոդվածով նախատեսված պայմաններին,

- ապահովել, որպեսզի տարանցման դիմումը ներկայացվի հարցում ստացող էստոնական կողմի իրավասու մարմնին ֆաքսի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ պլանավորված տարանցումից առնվազն 5 աշխատանքային օր առաջ (հոդված 10, կետ 1.1),

- որպես հարցում ստացող Կողմ հանդես գալու պարագայում ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը պատասխանի տարանցման դիմումն ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում, ֆաքսի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով՝ տեղեկացնելով տարանցմանն իր համաձայնության մասին և տարանցման նախատեսված ժամկետի, նշանակված սահմանային անցակետի, փոխադրման միջոցների և ուղեկցողների մասին (հոդված 10, կետ 1.2),

- եթե հետընդունման ենթակա անձը տեղափոխվում է օդով և ուղեկցմամբ, որպես հարցում ստացող Կողմ ապահովել, որպեսզի ՀՀ իրավասու մարմինը կազմակերպի հետընդունման ենթակա անձի պաշտպանությունն ու օդանավ նստեցնելն իր տարածքում՝ հնարավորության դեպքում էստոնական կողմի աջակցությամբ (հոդված 10, կետ 1.4),

- Արձանագրության 10-րդ հոդվածի 2-րդ կետում նշված դեպքերում, որպես հարցում ուղարկող Կողմ առանց հետաձգման հետ ընդունել հետընդունման ենթակա անձին (հոդված 10, կետ 2),

- որպես հարցում ուղարկող Կողմ, Հետընդունման համաձայնագրի 16-րդ հոդվածի համաձայն՝ կրել Հետընդունման համաձայնագրից բխող՝ հետընդունման և տարանցման գործողությունների հետ

կապված՝ հիմնավորված և ապացուցված տրանսպորտային ծախսերը մինչև վերջնական նպատակակետ պետության սահման՝ եվրոյով, հաշիվապարանքագրի հիման վրա, որը ենթակա է վճարման այն ստանալուց հետո 30 օրվա ընթացքում (հոդված 11, կետ 1):

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 13-րդ հոդվածի դրույթներին և միտված են միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական և փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ու ամրապնդմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63 և 64-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. 2017 թվականի հունիսի 13-ին Երևանում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության և Էստոնիայի Հանրապետության կառավարության միջև «Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև՝ առանց թույլտվության բնակվող անձանց հետընդունման (ռեադմիսիայի) մասին» համաձայնագրի կիրարկման մասին (Կիրարկող արձանագրություն) արձանագրության մեջ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 սեպտեմբերի 2017 թվականի  
ՄԴՈ - 1379



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10ԻՆ ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՄԻՍԶԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻԾՐԱԳԻՐ 2» (ՀԱՏՈՒԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀՅՈՒՄԻՍԶԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳԻԾՐԱԳԻՐ 3» (ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ) ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՆԱՄԱԿՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան 19 սեպտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գ. Գրիգորյանի,  
համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հան-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018  
176



րապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2017 թվականի ապրիլի 10-ին և 2017 թվականի մայիսի 24-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Օրագիր 2» (հատուկ գործողություններ) և Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Օրագիր 3» (ընդհանուր գործողություններ) վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի 2017 թվականի օգոստոսի 17-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց** .

1. Նամակ-համաձայնագիրն (այսուհետ՝ Նամակ-համաձայնագիր) ստորագրվել է 2017 թվականի ապրիլի 10-ին և 2017 թվականի մայիսի 24-ին՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Օրագիր 2» (հատուկ գործողություններ) և «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Օրագիր 3» (ընդհանուր գործողություններ) վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու նպատակով:

Նամակ-համաձայնագրով փոփոխման ենթակա «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Օրագիր 2» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել է 2011 թվականի մայիսի 30-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է հարյուր յոթանասուն միլիոն (170.000.000) ԱՄՆ դոլար վարկ: Այդ համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2011թ. հունիսի 23-ին (ՀՀ Ազգային ժողովի ԱԺՈ-280-Ն որոշմամբ): Համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանը 16.06.2011թ. կայացրել է ՍԴՈ-979 որոշումը:

2014 թվականի հունվարի 21-ին և 2014 թվականի հունիսի 11-ին Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորա-

գրվել է «Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2011 թվականի մայիսի 30-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-**Ծրագիր 2**» վարկային վերոհիշյալ համաձայնագրում (հատուկ գործողություններ) փոփոխություն կատարելու մասին նամակ-համաձայնագիրը (ՀՀ կողմից վավերացվել է 2015թ. նոյեմբերի 13-ին՝ Ազգային ժողովի ԱԺՈ-177-Ն որոշմամբ, իսկ Նամակհամաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշվել է ՀՀ սահմանադրական դատարանի 02.09.2014թ. ՄԴՈ-1158 որոշմամբ: Այդ Նամակհամաձայնագրով վերոհիշյալ վարկային համաձայնագրի կատարման ժամկետը երկարաձգվել է 24 ամսով (2015 թվականի հունիսի 30-ը փոփոխվել է 2017 թվականի հունիսի 30 ամսաթվով):

Նամակ-համաձայնագրով փոփոխման ենթակա «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-**Ծրագիր 3**» (ընդհանուր գործողություններ) վարկային համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրվել է 2014 թվականի մարտի 11-ին, որով Հայաստանի Հանրապետությանը տրամադրվել է հարյուր միլիոն (100.000.000) ԱՄՆ դոլար վարկ: Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից վավերացվել է 2014թ. հունիսի 10-ին՝ ԱԺՈ-118-Ն որոշմամբ, իսկ համաձայնագրում ամրագրված պարտավորությունների սահմանադրականությունը որոշվել է ՀՀ սահմանադրական դատարանի 27.05.2014թ. ՄԴՈ-1152 որոշմամբ:

2. Սույն գործով քննության առարկա Նամակ-համաձայնագրով նախատեսվում է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2» (հատուկ գործողություններ) վարկային համաձայնագրի կատարման (փակման) ժամկետի երկարաձգում 27 ամսով, ինչպես նաև «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3» (ընդհանուր գործողություններ) վարկային համաձայնագրի կատարման (փակման) ժամկետի երկարաձգում 21 ամսով:

3. Նամակ-համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը պարտավորվում է Ծրագիր 2 Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնում **«2017թ. հունիսի 30»** բառերը փոխարինել **«2019թ. սեպտեմբերի 14»** բառերով, իսկ Ծրագիր 3 Վարկային համաձայնագրի 3.05-րդ բաժնում **«2017թ. դեկտեմբերի 31»** բառերը փոխարինել **«2019թ. սեպտեմբերի 14»** բառերով՝ այն հիմնավորումներով, որպիսիք ներկայացված են սույն գործով ՀՀ Նախագահի պաշտոնական ներկայացուցչի կողմից:

4. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից սույն գործով ներկայացված տեղեկանքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունը Նամակ-համաձայնագրով ստանձնում է նաև լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ պարտավճարների մասով:

5. Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը գտնում է, որ Նամակհամաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրությամբ պետության առջև դրված սահմանադրաիրավական խնդիրներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև 2017 թվականի ապրիլի 10-ին և 2017 թվականի մայիսի 24-ին ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 2» (հատուկ գործողություններ) և Հայաստանի Հանրապետության և Ասիական զարգացման բանկի միջև ստորագրված՝ «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր-Ծրագիր 3» (ընդհանուր գործողություններ) վարկային համաձայնագրերում փոփոխություններ կատարելու մասին նամակ-համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

19 սեպտեմբերի 2017 թվականի  
ՄԴՈ-1380



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՄԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ ՄԱՍԻՆ  
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Վ. Միրումյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 և 72-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հանրապետության Նախագահի՝ 28.08.2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցչի գրավոր բացատրությունը և բանավոր պարզաբանումները, հետազոտելով պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների ղեկավարների կողմից 2017 թվականի ապրիլի 11-ին՝ Եվրասիական տնտեսական միությունում միասնական մաքսային կարգավորումն ապահովելու նպատակով:

2. Պայմանագիրը բաղկացած է վեց հոդվածից և երեք հավելվածից: Հավելված 1-ը ներառում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) բաղկացած 9 բաժնից, 465 հոդվածից և 2 հավելվածից: Հավելված 2-ը ներկայացնում է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի ցանկը, որոնց գործողությունը դադարեցվում է Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ: Հավելված 3-ում ներառված է Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այն միջազգային պայմանագրերի դրույթների ցանկը, որոնք ուժը կորցրած են ճանաչվում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու կապակցությամբ:

3. Պայմանագրի թիվ 1 հավելվածում զետեղված Օրենսգրքի համաձայն՝ Եվրասիական տնտեսական միությունում (այսուհետ՝ ԵԱՏՄ) իրականացվում է միասնական մաքսային կարգավորում, որը ներառում է ԵԱՏՄ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման, ԵԱՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս դրանց գտնվելու և օգտագործման կարգի ու պայմանների, ԵԱՏՄ մաքսային տարածք ապրանքների ժամանման, ԵԱՏՄ մաքսային տարածքից դրանց մեկնման, ապրանքների ժամանակավոր պահպանման, դրանց մաքսային հայտարարագրման ու բացթողման հետ կապված մաքսային գործառնությունների, այլ մաքսային գործառնությունների իրականացման կարգի, մաքսային վճարների, հատուկ, հակազնազցման, փոխհատուցման տուրքերի վճարման ու մաքսային հսկողության անցկացման կարգի սահմանումը, ինչպես նաև մաքսային մարմինների և ԵԱՏՄ մաքսային տարածքում կամ դրա սահմաններից դուրս ապրանքների տիրապետման, օգտագործման և (կամ) տնօրինման իրավունքներ իրականացնող անձանց միջև իրավահարաբերությունների կանոնակարգումը:

ԵԱՏՄ-ում մաքսային կարգավորումը հիմնվում է ԵԱՏՄ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխման ժամանակ անձանց իրավահավասարության, մաքսային գործառնությունների իրականացման հստակության, պարզության ու հետևողականության, մաքսային կարգավորման ոլորտում միջազգային պայմանագրերի ու ակտերի մշակման և կիրառման հրապարակայնության և միջազգային իրավունքի նորմերի հետ դրանց ներդաշնակեցման սկզբունքների, ինչպես նաև մաքսային մարմինների գործունեության ընթացքում մաքսային հսկողության ժամանակակից մեթոդների կիրառման ու տեղեկատվական տեխնոլոգիաների առավելագույն օգտագործման վրա:

Մաքսային կարգավորման ոլորտի միջազգային պայմանագրերով ու ակտերով չկարգավորված մաքսային իրավահարաբերությունները, մինչև այդպիսի միջազգային պայմանագրերով ու ակտերով համապատասխան իրավահարաբերությունների կարգավորումը, կարգավորվում են ԵԱՏՄ անդամ պետությունների (այսուհետ՝ անդամ պետություններ) մաքսային կարգավորման վերաբերյալ օրենսդրությամբ:

4. Պայմանագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

1) որպես անդամ պետություն ընդունել Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգիրքը, որը ներկայացված է Պայմանագրի թիվ 1 հավելվածում,

2) Պայմանագրի ուժի մեջ մտնելու կապակցությամբ դադարած համարել Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող Պայմանագրի թիվ 2 հավելվածով սահմանված ցանկով նախատեսված միջազգային պայմանագրերի գործողությունը, ինչպես նաև ուժը կորցրած՝ համարել Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող Պայմանագրի թիվ 3 հավելվածով սահմանված ցանկով նախատեսված միջազգային պայմանագրերի դրույթները,

3) ընդունել, որ Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել անդամ պետությունների փոխադարձ համաձայնությամբ, որոնք ձևակերպվում են առանձին արձանագրություններով,

4) չկատարել որևէ վերապահում Պայմանագրի դրույթների հետ կապված,

5) Պայմանագրի մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորել «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրով սահմանված կարգով,

6) ընդունել, որ Պայմանագիրը գերակայում է մաքսային իրավահարաբերությունները կարգավորող Եվրասիական տնտեսական միության իրավունքի մաս կազմող այլ միջազգային պայմանագրերի նկատմամբ, բացառությամբ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի:

5. Ուսումնասիրելով քննության առարկա միջազգային պայմանագրի՝ որպես իրավական ակտի բնույթը, ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ տվյալ ակտն ըստ էության դասվում է վերազգային իրավունքի աղբյուրների շարքին: Դասական իմաստով միջազգային իրավունքի և վերազգային իրավունքի տարբերությունը հիմնականում այն է, որ վերջինիս նորմերով կարգավորում են ոչ միայն պետությունների միջև **/հորիզոնական/**, այլ նաև պետության ներսում գործող **/ուղղահայաց/** հարաբերություններ:

Սահմանադրական արդարադատության միջազգային պրակտիկան վկայում է, որ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող օրենսդրական ակտերի նկատմամբ նախնական սահմանադրական վերահսկողության իրականացումն օբյեկտիվորեն չի կարող երաշխավորել հետագայում մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների անմիջական գործողության, դրանց սահմանափակման համաչափության և որոշակիության սկզբունքների խախտման, ինչպես նաև այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու սահմանադրական պահանջների ապահովումը:

Բացի դրանից, հաշվի առնելով Օրենսգրքի ուղղահայաց իրավահարաբերությունները, ներառյալ նաև հանրային իրավունքի բնագավառում վարչական իրավահարաբերություններ կարգավորելու առանձնահատկությունը, դրա սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը, ինչը հնարավոր չէ իրականացնել նախնական սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

6. ՀՀ Սահմանադրության /ինչպես 2005թ., այնպես էլ 2015թ. խմբագրությամբ/ և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը վկայում է, որ ՀՀ սահմանադրական դատարանում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության կողմից միջազգային պայմանագրերով ստանձնված **միջպետական /հորիզոնական/** պարտավորություններ նախատեսող նորմերը:

«Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով սահմանվում է միջազգային պայմանագրի հասկացությունը, որը հանգում է նրան, որ «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիրը Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, սույն օրենքով և միջազգային հանրային իրավունքի նորմերով (այսուհետ՝ միջազգային իրավունք) սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության և միջազգային իրավունքի սուբյեկտի,

ինչպես նաև սույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված կազմավորումների միջև ստորագրված և սույն օրենքով սահմանված կարգով ուժի մեջ մտած և Հայաստանի Հանրապետության համար պարտադիր դարձած գրավոր համաձայնություն է, որը տվյալ միջազգային պայմանագրով որոշված կարգավորման առարկայի առնչությամբ պայմանագրի կողմերի համար սահմանում է իրավունքներ և պարտականություններ, փոփոխում կամ դադարեցնում է դրանք:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև ուժի մեջ մտած այն միջազգային պայմանագիրը, որին Հայաստանի Հանրապետությունը միացել է սույն օրենքով և միջազգային իրավունքի նորմերով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագիր է համարվում նաև սույն օրենքով սահմանված կարգով կնքված միջազգային պայմանագրում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին պայմանագիրը»:

Բացի վերոնշյալից, ՀՀ Սահմանադրության և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ օրենքների դրույթների նկատմամբ, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից դրանց ընդունումը, ՀՀ սահմանադրական դատարանը նախնական սահմանադրական վերահսկողություն իրականացնելու իրավասություն չունի:

Սույն պայմանագրով նախատեսվող ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող նորմերն իրենց բնույթով հանդես են գալիս որպես օրենքին բնորոշ դրույթներ, որոնց ընդունումը՝ առանց նախնական սահմանադրական վերահսկողության պայմանի, ՀՀ Սահմանադրությունը վերապահել է օրենսդիր մարմնին:

7. ՀՀ սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադարձ կատարել նաև «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին՝ միանալու մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործով կայացված իր՝ 14.11.2014թ. ՄԴՈ-1175 որոշման մեջ արտահայտած դիրքորոշումներին, որոնք կիրառելի են նաև սույն գործի շրջանակներում:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ. «ՀՀ Սահմանադրության նախաբանում հավաստելով իր հավատարմությունը համամարդկային արժեքներին, սահմանադրական կարգի հիմունքներով արտաքին քաղաքականության իրականացման հիմքում դնելով միջազգային իրավունքի սկզբունքներն ու նորմերը, իրավական, ժողովրդավարական պետության կայացման գործում գերակայություն



վերապահելով միջազգային իրավունքին՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը որևէ սահմանափակում չի նախատեսում միջազգային ու տարածաշրջանային համագործակցության ու այն ապահովող կառույցների իրավաչափ գործունակության ապահովման հարցերում:

Սակայն դրա համար առկա են նաև սահմանադրական հստակ պահանջներ, որոնք բխում են ՀՀ Սահմանադրության թե՛ արժեքանությունից և թե՛ մի շարք կոնկրետ դրույթներից: Դրանք են.

1) պետական, ժողովրդական ու ազգային ինքնիշխանության երաշխավորումը,

2) միջազգային հարաբերությունների իրավահավասարությունն ու փոխշահավետությունը,

3) մարդու իրավունքների միայն այնպիսի հնարավոր սահմանափակումների նախատեսումը, որոնք համարժեք են միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին,

4) Հայաստանի համար վերապետական մարմինների որոշումների գործողության հնարավորությունը միայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության շրջանակներում:

ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ որևէ վերապետական մարմնի կողմից ընդունված ցանկացած որոշում, որը չի համապատասխանում այդ պահանջներին, կիրառելի չէ Հայաստանի Հանրապետությունում»:

8. Վերոգրյալի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրական դատարանում սույն գործի շրջանակներում նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանադրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

9. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից, հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտած իրավական դիրքորոշումները և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին և չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2017 թվականի ապրիլի 11-ին ստորագրված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005թ. փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 հոկտեմբերի 2017 թվականի  
ՍԴՈ-1381



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱՆ ԵՎ ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 52-ՐԴ ԳԼԽԻ 451, 453, 455,  
457, 458 ԵՎ 459-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

24 հոկտեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի (զեկուցող), Ա. Գյուլումյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմողի՝ Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենս-

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)/2018

գրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2017 թվականի հունիսի 15-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ին:

Օրենսգրքի՝ «Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը» վերտառությամբ 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածները սահմանում են.

**«Հոդված 451. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթը**

1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու գործերով նյութերի մինչդատական նախապատրաստումը կատարվում է նախաքննության ձևով:

2. Քննիչը, դատախազը որոշում են կայացնում բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին:

3. Քննչական գործողություններին կարող են մասնակցել պաշտպանը, օրինական ներկայացուցիչը, այն անձը, որի նկատմամբ հարուցված է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նրա հոգեկան վիճակը խոչընդոտում է մասնակցությանը:

4. Եթե անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իր հոգեկան վիճակի պատճառով չի կարող մասնակցել գործով վարույթին, քննիչը կամ դատախազն այդ մասին կազմում են արձանագրություն, որն ուղարկվում է դատավորին՝ համապատասխան անձին անգործունակ ճանաչելու հարցը լուծելու համար:

...

**Հոդված 453. Քրեական գործն անջատելը**

Եթե քրեական գործի ընթացքում պարզվի, որ հանցակիցներից որևէ մեկն արարքը կատարելու պահին գտնվել է անմեղսունակության վիճակում, ապա նրա նկատմամբ գործն առանձնացվում է առանձին վարույթում:

...

**Հոդված 455. Օրինական ներկայացուցիչը**

Այն անձանց գործերով, որոնց նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, քննիչի, դատախազի, դատարանի որոշմամբ որպես օրինական ներկայացուցիչներ գործին մասնակցում են մերձավոր ազգականները կամ այն բժշկական հաստատության ներկայացուցիչը, որտեղ գտնվում է անձը:

...

**Հոդված 457. Անվտանգության միջոցները**

1. Անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման:

2. Այդ անձանց նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառվում են հետևյալ անվտանգության միջոցները՝

1) հսկողության համար հիվանդին հանձնելը ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին.

2) հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը:

**Հոդված 458. Հսկողության համար ազգականներին, խնամակալներին, հոգաբարձուներին հանձնելը**

1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած, սակայն հասարակության համար վտանգ չներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է հանձնվել ազգականների, խնամակալների, հոգաբարձուների հսկողությանը՝ այդ մասին տեղյակ պահելով առողջապահության մարմիններին:

2. Տվյալ միջոցն ընտրելու մասին քննիչը, դատախազը, դատարանը կայացնում են պատճառաբանված որոշում:

**Հոդված 459. Անձին հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը**

1. Քրեական օրենքով չթույլատրված արարք կատարած և հասարակության համար վտանգ ներկայացնող անձի անմեղսունակության փաստը հաստատվելու պահից նա կարող է տեղավորվել հոգեբուժական հաստատությունում:

2. Հոգեբուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ, որը հաստատում է դատարանը»:

Ընդունումից ի վեր օրենսգրքի 451, 453 և 455-րդ հոդվածները փոփոխությունների չեն ենթարկվել, իսկ 457, 458 և 459-րդ հոդվածները փոփոխվել են 25.05.2006թ. ՀՕ-91-Ն ՀՀ օրենքով:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

01.05.2015թ. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը բավարարել է ՀՀ քննչական կոմիտեի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնի ավագ քննիչի միջնորդությունը՝ մեղադրյալ Արամ Մելիքսեթի Գյումուշյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրելով կալանավորումը երկու ամիս ժամկետով:

27.07.2015թ. Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում ստացվել է քրեական գործն ըստ մեղադրանքի Արամ Մելիքսեթի Գյումուշյանի և այլոց:

Դատարանի 11.02.2016թ. որոշմամբ ամբաստանյալ Արամ Մելիքսեթի Գյումուշյանի նկատմամբ նշանակվել է ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն: Համալիր ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության՝ 17.03.2016թ. եզրակացության համաձայն՝ իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Արամ Մելիքսեթի Գյումուշյանը ճանաչվել է անմեղսունակ:

Դատարանի 14.03.2017թ. որոշմամբ ամբաստանյալ Արամ Մելիքսեթի Գյումուշյանի նկատմամբ նշանակվել է կրկնակի ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական համալիր փորձաքննություն: Համալիր ստացիոնար դատահոգեբուժական և դատահոգեբանական փորձաքննության՝ 21.04.2017թ. եզրակացության համաձայն՝ իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Արամ Մելիքսեթի Գյումուշյանը ճանաչվել է անմեղսունակ:

08.06.2017թ. դատական նիստին ամբաստանյալ Արամ Մելիքսեթի Գյումուշյանի պաշտպանը միջնորդություն է ներկայացրել դատարանին՝ խնդրելով ամբաստանյալ Արամ Մելիքսեթի Գյումուշյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը վերացնել և կիրառել անվտանգության միջոց:

12.06.2017թ. դատարանը որոշել է կասեցնել գործի վարույթը և դիմել ՀՀ սահմանադրական դատարան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458 և 459-րդ հոդվածների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով:

3. Դիմողը գտնում է, որ օրենսգրքի վիճարկվող նորմերը հակասում են ՀՀ Սահմանադրության 3, 26, 27, 28, 29, 61, 63, 75 և 79-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նրանով, որ օրենսգրքի վերլուծությունից հետևում է, որ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին գործերով վարույթի կարգը որոշվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխում ընդգրկված կանոններով և օրենսգրքի ընդհանուր կանոններով, որոնք տարածվում են այն դեպքերի վրա, երբ մինչդատական վարույթում է պարզվում, որ անձը քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, և այդ վարույթի կարգով քրեական գործն ուղարկվել է դատարան:

Ըստ այդմ էլ, դիմողն արձանագրում է, որ այն դեպքերում, երբ մեղադրական եզրակացությունն ուղարկվել է դատարան ընդհանուր հիմունքներով քննություն իրականացնելու համար, և դատարանում է պարզվում, որ անձը քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարել է անմեղսունակության վիճակում, ապա նման դեպքերում վարույթի առանձնահատկություններ նախատեսված չեն ոչ օրենսգրքի 52-րդ գլխում, ոչ էլ որևէ այլ գլխում: Ըստ դիմողի՝ միայն օրենսգրքի 361-րդ հոդվածից է անուղղակիորեն բխում, որ այդ դեպքում վարույթը պետք է շարունակվի ընդհանուր կարգով, և եթե դատարանը գտնի, որ անհրաժեշտություն կա անձի նկատմամբ կիրառելու բժշկական բնույթի հարկադրական միջոց, ապա կիրառում է այն:

Դիմողը նշում է նաև, որ այս ընդհանուր մոտեցումներից հետևում է, որ եթե գործն ընդհանուր հիմունքներով է գտնվում դատարանում, և պարզվում է, որ անձը հանցանքը կատարել է անմեղսունակության վիճակում, ապա դատարանն իրավունք չունի որոշում կայացնելու բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին և ըստ այդմ՝ կիրառելու նաև այդ վարույթի շրջանակներում անձի նկատմամբ կիրառվող կանոնները, այդ թվում՝ պաշտպանի միջնորդությամբ նշված անվտանգության միջոցը: Նման միջնորդություն ներկայացնելու իրավունք չունի նաև որևէ այլ սուբյեկտ, քանի որ դատախազը նման որոշում, ըստ օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կայացնում է միայն մինչդատական վարույթի շրջանակներում: Դիմողը նշում է, որ վիճակն է լավելի է բարդացել՝ պայմանավորված այն հանգամանքով, որ փորձագետը եզրակացություն է տվել, որ անձը չի կարող գտնվել կալանքի տակ, բայց, մյուս կողմից էլ՝ վտանգավոր է հանրության համար: Դատարանը, սակայն, ներկա իրավակարգավորումների պատճառով ստիպված է անմեղսունակ անձի նկատմամբ պահպանել խափանման միջոցը, ինչը չի բխում անձի իրավունքներից և օրինական շահերից:

Դիմողն արձանագրում է նաև, որ այն դեպքերում, երբ մինչդատական վարույթի շրջանակներում միջնորդություն է ներկայացվում հատուկ վա-

րույթի շրջանակներում գործը քննելու վերաբերյալ, սակայն գործի դատական քննության փուլում պարզվում է, որ անձը հանցանքը կատարել է մեղսունակության պայմաններում, ապա նման դեպքերում բացակայում է նաև հատուկ վարույթից ընդհանուր վարույթին անցնելու կարգը:

4. Պատասխանողը կարծում է, որ օրենսգրքի 52-րդ գլխի 457-րդ և 459-րդ հոդվածներով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրության պահանջներին: Միաժամանակ, վկայակոչելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի դրույթները՝ պատասխանողը կարծում է, որ դատարանի վարույթում գտնվող գործով կիրառման ենթակա են օրենսգրքի միայն 457-րդ և 459-րդ հոդվածները. դատարանի կողմից օրենսգրքի վիճարկվող՝ 451-րդ, 453-րդ, 455-րդ և 458-րդ հոդվածների մասով դիմումը չի բավարարում «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի պահանջներին, և այդ մասով վարույթը ենթակա է կարճման:

Օրենսգրքի 457-րդ հոդվածի առնչությամբ պատասխանողն արձանագրում է, որ վերջինս կազմված է երկու նախադասությունից, որից առաջինն իմպերատիվ պահանջ է, որ անմեղսունակ անձանց նկատմամբ, անկախ դատավարության փուլից, որևէ դեպքում չի կարող կիրառվել խափանման միջոց, իսկ երկրորդ նախադասությունը վերաբերում է դատական քննության ժամանակ անձի անմեղսունակության փաստը հայտնաբերելու դեպքում դատարանի կողմից խափանման միջոցն անհապաղ վերացնելուն: Ըստ պատասխանողի՝ օրենսգրքի 457-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է անվտանգության միջոցների կիրառման հնարավորություն «այդ անձանց», այն է՝ նույն հոդվածի 1-ին մասի երկու նախադասություններով սահմանված նորմերի հասցեատերերի, այդ թվում՝ այն անձանց նկատմամբ, ում անմեղսունակությունը հայտնի է դարձել դատական քննության փուլում: Պատասխանողը գտնում է, որ **թեև այստեղ օրենսդիրը հատուկ չի նշում, որ դատարանն անցում է կատարում ընդհանուր վարույթից հատուկ վարույթի**, սակայն այն բխում է քննարկվող նորմերի վերոգրյալ մեկնաբանությունից: Այս առումով պատասխանողը հիմնավոր չի համարում դիմողի այն եզրակացությունը, որ «Արդյունքում դատարանը կանգնել է անելանելի վիճակի առջև»:

Պատասխանողը գտնում է նաև, որ օրենսգրքի 457-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը թեև գտնվում է հատուկ վարույթների՝ «Անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթը» վերտառությամբ 52-րդ գլխում, այն կիրառելի է բացառապես այն դեպքում, երբ դատական քննությունն իրականացվում է ընդհանուր վարույթի կարգով, և հայտնաբերվում է, որ անձն անմեղսունակ է: Այս առումով պատասխանողը հիմնավոր չի համարում նաև դիմողի այն եզրակացությունը, որ անձի նկատմամբ խափանման



միջոցը կարող է վերացվել, երբ իրականացվում է բժշկական հարկադրանքի միջոց կիրառելու վարույթ: Ըստ պատասխանողի օրենսգրքի համակարգային վերլուծությունը վկայում է այն մասին, որ **օրենսդիրն ուղղակի դրույթ չի սահմանել անձի անմեղսունակության փաստի հայտնաբերման դեպքում դատական քննության փուլում ընդհանուր վարույթից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հատուկ վարույթի անցման և համապատասխան որոշման կայացման մասին**, սակայն նման հետևությունն ուղղակիորեն բխում է օրենսգրքի 457-րդ հոդվածի իրավակարգավորումներից:

Օրենսգրքի 459-րդ հոդվածի առնչությամբ պատասխանողն արձանագրում է, որ թեև դիտարկվող հոդվածի 1-ին մասն ընդհանուր ձևակերպմամբ սահմանում է, որ անկախ քրեական դատավարության փուլից անձի անմեղսունակության փաստը հաստատվելուն պես նա տեղավորվում է հոգեբուժական հաստատությունում, եթե այդ անձը հասարակության համար վտանգ է ներկայացնում, հոդվածի 2-րդ մասը վերաբերում է բացառապես նախաքննության փուլին, ինչը դեռևս չի բացառում դատական քննության փուլում այդ հարցի լուծման հնարավորությունը՝ **չնայած նման ուղղակի իրավակարգավորումն այդ հոդվածում բացակայում է**: Պատասխանողը կարծում է, որ քննարկվող իրավական խնդրի հաղթահարման հարցում բավարար է ինչպես ՀՀ վճռաբեկ դատարանի, այնպես էլ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական գործիքակազմը մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների սահմանումը:

Միաժամանակ, պատասխանողը հայտնում է, որ ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակված և ՀՀ Ազգային ժողովի նախորդ գումարման ժամանակ ՀՀ Ազգային ժողով ներկայացված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 342-րդ հոդվածի 6-րդ մասում արդեն իսկ ուղղակիորեն նախատեսվում է դատարանի կողմից բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու որոշման կայացման հնարավորություն («Գտնելով, որ մեղադրյալն արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակության վիճակում, կամ հանցագործությունը կատարելուց հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը գրկել է նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ իր գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, դատարանը կայացնում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին որոշում»):

5. Դիմումի ուսումնասիրության արդյունքներով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ դիմողը հատկապես բարձրացնում է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի առանձնահատկություններին առնչվող

խնդիր: Մասնավորապես, շեշտելով մինչդատական վարույթում հիմնախնդրի իրավակարգավորման հստակությունը, դատական քննության փուլում այն համարում է ոչ լիարժեք, քանի որ անձի անմեղսունակությունը գործի դատական քննության փուլում պարզվելու դեպքում դատարանը զրկված է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու հնարավորությունից:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումում բարձրացված հիմնախնդիրները պետք է դիտարկվեն վիճարկվող նորմերի և դրանց հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի այլ նորմերի համակարգային ամբողջականության տեսանկյունից՝ **եյնելով անմեղսունակ ճանաչված անձի և հանրային անվտանգության ապահովման անհրաժեշտությունից:**

Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլուխը նվիրված է անմեղսունակ անձանց նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ կիրառելու վարույթին, և իրենից ներկայացնում է հատուկ վարույթ: Այս գլխում հաջորդաբար շարադրված են դիտարկվող վարույթի հիմնական կանոնները՝ սկսած վարույթի հարուցումից մինչև դատարանի կողմից ընդունվելիք որոշումները: Կարևորվում է հատկապես դիտարկվող գլխի առաջին՝ 450-րդ հոդվածը, որը սահմանում է.

«1. Բժշկական բնույթի հարկադրական միջոցները դատարանը կիրառում է այն անձանց նկատմամբ, ովքեր քրեական օրենքով չթույլատրված արարքը կատարել են անմեղսունակ վիճակում, եթե այդ անձինք շարունակում են վտանգավոր լինել հասարակության համար:

2. Բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին գործերով վարույթի կարգը որոշվում է սույն օրենսգրքի ընդհանուր կանոններով և սույն գլխի հոդվածներով»:

Վերոգրյալից բխում է, որ օրենսդիրը դատարանին հնարավորություն է ընձեռել առաջնորդվել ինչպես օրենսգրքի 52-րդ գլխի կանոններով, այնպես էլ ընդհանուր կանոններով, որոնցից սույն գործի շրջանակներում առավելապես կարևորվում է 361-րդ հոդվածը, համաձայն որի՝

«1. Այն դեպքում, երբ հետաքննության, նախաքննության կամ դատական քննության ժամանակ առաջացել է ամբաստանյալի մեղսունակության կամ գործով վարույթն իրականացնելու պահին նրա կողմից իր գործողությունների համար հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ունակության հարցը, որի կապակցությամբ նշանակվել է դատահոգեբուժական փորձաքննություն, դատարանը պարտավոր է դատավճիռ կայացնելիս այդ հարցը քննարկել ևս մեկ անգամ:

2. Գտնելով, որ ամբաստանյալը արարքը կատարելու պահին եղել է անմեղսունակ վիճակում, կամ հանցագործությունը կատարելուց հետո հիվանդացել է հոգեկան հիվանդությամբ, որը զրկել է նրան իր գործողությ-

յունների համար իրեն հաշիվ տալու կամ այդ գործողությունները ղեկավարելու հնարավորությունից, դատարանն ընդունում է համապատասխան որոշում»:

**Վերոգրյալից բխում է, որ դիտարկվող նորմը թույլ է տալիս դատարանին դատական քննության փուլում թե՛ պարզել ամբաստանյալի մեղսունակության հարցը, թե՛ կայացնել համապատասխան որոշում:** Ընդ որում, դիմողն էլ է նշում դիտարկվող հոդվածի նման կիրառության հնարավորության մասին: Իսկ օրենսգրքի 464-րդ հոդվածն էլ ամրագրում է, թե ինչ որոշում դատարանը կարող է ընդունել խնդրո առարկա իրավիճակում: Օրենսգրքի 464-րդ հոդվածը, մասնավորապես, սահմանում է.

«1. Անձի կողմից քրեական օրենքով չթույլատրված արարքն անմեղսունակության վիճակում կատարելն ապացուցված համարելով՝ դատարանը որոշում է կայացնում անձին քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու ու նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին:

2. Եթե անձը հասարակության համար մեծ վտանգ չի ներկայացնում և կարիք չունի իր նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման, դատարանը կայացնում է գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին որոշում: Եթե արարքը կատարելու պահին անձը գտնվել է անմեղսունակության վիճակում, իսկ դատական քննության պահին առողջացել է, դատարանը նույնպես որոշում է կայացնում գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին»:

**Օրենսգրքի 361, 450 և 464-րդ հոդվածների համադրված վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը եզրահանգում է, որ նշված հոդվածներն իրենց համադրության մեջ թույլ են տալիս դատարանին դատական քննության փուլում պարզելով ամբաստանյալի մեղսունակության հարցը՝ անմեղսունակ անձի նկատմամբ կիրառել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ:**

Առկա իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից նույնպես բխում է, որ երբ դատական քննության փուլում ի հայտ են գալիս բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի հիմքեր, ապա դատարանը՝ կողմերի կարծիքը լսելուց հետո, սեփական նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ կարող է որոշում կայացնել քրեական վարույթը բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման վարույթի փոխակերպելու մասին:

Ինչ վերաբերում է անվտանգության միջոցներ կիրառելուն, ապա օրենսդիրը չի սահմանափակել նման հնարավորությունը դատարանի համար և չի պայմանավորել դրա իրացումը դատախազի կամ քննիչի միջ-

նորոգությամբ կամ որոշմամբ: Օրենսգրքի 457-րդ հոդվածն ամրագրում է, որ անմեղսունակության վիճակում քրեական օրենսգրքով չթույլատրված արարք կատարած անձանց նկատմամբ չեն կարող կիրառվել խափանման միջոցներ: Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ այն ընդհանուր դրույթ է և վերաբերում է թե՛ նախնական քննության փուլին, թե՛ դատական քննության փուլին: Նույն հոդվածն ամրագրում է նաև, որ դատարանի կողմից անմեղսունակության փաստը հաստատվելուց հետո կիրառվող խափանման միջոցը ենթակա է անհապաղ վերացման: Հոդվածը նաև ամրագրում է, որ «Այդ անձանց նկատմամբ անհրաժեշտության դեպքում կիրառվում են հետևյալ անվտանգության միջոցները՝

1) հսկողության համար հիվանդին հանձնելը ազգականներին, հոգաբարձուներին, խնամակալներին՝ իրազեկելով առողջապահության մարմիններին.

2) հոգեբուժական հիվանդանոցում տեղավորելը»:

**Դիտարկվող հոդվածից հետևում է, որ դատական քննության փուլում օրենսգրքի 361-րդ հոդվածի ուժով անձի մեղսունակության հարցը պարզելուց հետո դատարանն արդեն իսկ օրենսգրքի 457-րդ հոդվածի ուժով կիրառում է անվտանգության միջոցներ:**

6. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ սույն դիմումի համար առիթ է հանդիսացել հատկապես բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու առնչությամբ առաջին ատյանի դատարանի համապատասխան լիազորությունների առկայության անհստակությունը: Իսկ վերջինս պայմանավորված է օրենսգրքի 451-րդ հոդվածի, մասնավորապես՝ դրա 2-րդ մասի, իրավակարգավորման բնույթով, համաձայն որի՝ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին **որոշումը կայացնում են քննիչը, դատախազը:**

Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում փաստել, որ օրենսգրքի 451-րդ հոդվածը վերաբերում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մինչդատական վարույթին: Վերաբերելով բացառապես մինչդատական վարույթում անմեղսունակության բացահայտման դեպքերին՝ այս հոդվածը, սակայն, չի ենթադրում, որ դատական քննության փուլում անձի անմեղսունակությունը պարզելու դեպքում ևս անհրաժեշտ է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ հարուցելու մասին քննիչի կամ դատախազի որոշումը: Օրենսդիրը տարանջատել է անմեղսունակների նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթի մինչդատական և դատական փուլերը:

Այսուհանդերձ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքով դատարանին հնարա-

վորություն ընձեռելով իրականացնելու հատուկ վարույթ, այսուհանդերձ, չեն հստակեցվել դատավարական մանրամասները, ինչը կբացառեր իրավակիրառ պրակտիկայում տարաբնույթ մոտեցումները: Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է, որ շատ երկրներում /օրինակ՝ Գերմանիա, Լիտվա, Էստոնիա և այլն/, ինչպես նաև ՀՀ Ազգային ժողով ներկայացված՝ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում հստակ կարգավորվում են բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման առանձնահատկություններն ինչպես մինչդատական, այնպես էլ դատական քննության փուլերում:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ, մինչև օրենսդիր մարմնի կողմից դատական քննության փուլում անմեղսունակ ճանաչված անձի նկատմամբ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կիրառման դատավարական առանձնահատկությունների հստակ կանոնակարգումը, դատարանները, տվյալ անձի և հանրային անվտանգության պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով օրենսգրքի 457 և 464-րդ հոդվածների պահանջները, պետք է որոշում կայացնեն.

ա/ անձի կողմից քրեորեն պատժելի արարքն անմեղսունակության վիճակում կատարելն ապացուցված համարելով՝ նրան քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելու մասին,

բ/ նրա նկատմամբ բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու մասին՝ կաշկանդված չլինելով օրենսգրքի 451-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև 459-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթով, համաձայն որի՝ «Չոգեթուժական հաստատությունում տեղավորելը թույլատրվում է քննիչի պատճառաբանված որոշմամբ...»:

Ինչ վերաբերում է դիմողի մյուս հարցադրմանը (նախնական քննությունն իրականացվել է անձի անմեղսունակության կանխավարկածով, սակայն գործի դատական քննության փուլում պարզվում է, որ անձը հանցանքը կատարել է մեղսունակ վիճակում), Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործի շրջանակներում վերջինս չի կարող դառնալ քննության առարկա: Մասնավորապես, ՀՀ Մահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի և «Մահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի ուժով դատարանը կարող է դիմել Մահմանադրական դատարան իր վարույթում գտնվող կոնկրետ գործով, մինչդեռ դիմողի կողմից բարձրացված տվյալ հարցադրումը դուրս է կոնկրետ գործի շրջանակներից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Մահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ

կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ գլխի 451, 453, 455, 457, 458, և 459-րդ հոդվածները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ ամրագրված իրավական դիրքորոշումների շրջանակներում:

2. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 հոկտեմբերի 2017 թվականի  
ՍԴՈ-1382



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԼԵՎՈՆ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 104-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

7 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի ներկայացուցիչ Ա. Զեյնալյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության խորհրդատու Ս. Թևանյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Լևոն Բարսեղյանի դիմումի հիման վրա «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Լևոն Բարսեղյանի՝ 2017 թվականի հուլիսի 7-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018  
199

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքն (այսուհետ՝ օրենք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի փետրվարի 18-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի մարտի 16-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի դեկտեմբերի 31-ին:

Օրենքի՝ «Ոչ գույքային վնասի հատուցման հիմքերը և կարգը» վերտառությամբ 104-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է. «1. Ոչ իրավաչափ վարչարարությամբ ֆիզիկական անձի ազատությունը սահմանափակելու, նրա անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը խախտելու, նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունն արատավորելու միջոցով ոչ գույքային վնաս պատճառելու դեպքերում այդ անձն իրավունք ունի պահանջելու դրամական միջոցներով հատուցում կամ առաջացած հետևանքների վերացում՝ պատճառված ոչ գույքային վնասին համարժեք չափով»:

Օրենքի վիճարկվող դրույթը ենթարկվել է փոփոխության «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-10-Ն ՀՀ օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի դեկտեմբերի 13-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2005 թվականի հունվարի 5-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 29-ին:

2. Գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

դիմողը և ևս 11 հոգի որոշել են 2011 թվականի սեպտեմբերի 21-ին, որպես բողոքի ակցիա, անցկացնել քայլերթ: Քայլերթն իրականացնելիս ժամը 09:55-ի սահմաններում, ըստ դիմողի, «ոստիկանները թևանցուկ են արել դիմողին և հավաքի մասնակիցներից ևս մեկին, ուժի գործադրմամբ տարել են ՀՀ ոստիկանության Ոստիկանության Երևան քաղաքի վարչության կենտրոնական բաժանմունք: ... Դիմողին Ոստիկանությունում պահել են մինչև 13:05: Դիմողը Ոստիկանությունում գտնվել է փաստացի անազատության մեջ»:

Դիմողի անունից նրա ներկայացուցիչը 2011 թվականի նոյեմբերի 8-ին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ոստիկանության: Վարչական դատարանը ՎԴ/6895/05/11 գործով 2013 թվականի



հուլիսի 15-ի վճռով դիմողի հայցը բավարարել է՝ ճանաչելով դիմողի մի շարք իրավունքների խախտման փաստը և ոստիկանների գործողությունների ոչ իրավաչափությունը:

Վերոնշյալ վճիռը չի բողոքարկվել և մտել է օրինական ուժի մեջ:

Դիմողի անունից նրա ներկայացուցիչը 2014 թվականի նոյեմբերի 10-ին «Վնասի հատուցման պահանջի մասին» դիմում է ներկայացրել ՀՀ ոստիկանություն՝ պահանջելով հատուցել դիմողի կրած գույքային վնասը՝ դատական նիստերին մասնակցելու համար օգտագործված բենզինի գումարը (87.000.00 (ութսունյոթ հազար) ՀՀ դրամ), ներկայացուցչի վարձատրության գումարը (470.000.00 (չորս հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ), դիմողի կրած ոչ գույքային վնասը (2000 (երկու հազար) եվրոյին համարժեք դրամ՝ գումարած դրա վրա հաշվարկվող բոլոր տեսակի հնարավոր հարկերը), ինչը ոստիկանության 09.12.2014 թվականի թիվ 30/20378 գրությամբ մերժվել է:

Այնուհետև դիմողի անունից նրա ներկայացուցիչը 2015 թվականի հունվարի 29-ին հայց է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ոստիկանության՝ վնասը հատուցող վարչական ակտ ընդունելուն պարտավորեցնելու պահանջի մասին, ինչը վարչական դատարանի ՎԴ/0263/05/15 գործով 2016 թվականի մարտի 10-ի վճռով մասնակի բավարարվել է. անվավեր է ճանաչվել ոստիկանության 09.12.2014 թվականի թիվ 30/20378 գրությունը, պարտավորեցվել է ոստիկանությանն ընդունել դիմողի գույքային և ոչ գույքային վնասը հատուցող վարչական ակտ 200.000 ՀՀ դրամի չափով՝ որպես ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում պատճառված ոչ գույքային վնաս, 300.000 ՀՀ դրամի չափով՝ որպես ներկայացուցչի վարձատրության գումար: Մնացած մասով հայցը մերժվել է:

Հայցը մասնակի բավարարելիս Վարչական դատարանը եզրահանգել է. «Փաստորեն անհերքելի է այն փաստը, որ Պատասխանող վարչական մարմնի գործողություններով խախտվել են Լևոն Բարսեղյանի կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները: Անհերքելի է նաև, որ վնասի հատուցման համար Հայցվորը նախ դիմել է վնաս պատճառած մարմնին՝ սույն վարչական գործով Պատասխանողին, որը, սակայն, մերժել է վնասի հատուցման վերաբերյալ դիմումի բավարարումը: Որպիսի հանգամանքը հիմք է վնաս կրած անձի կողմից վնասի հատուցում պահանջելու համար»:

Վերոնշյալ դատական ակտի դեմ վերաքննիչ բողոքներ են ներկայացվել դիմողի ներկայացուցչի և ոստիկանության կողմից, որոնք ՀՀ վարչական վերաքննիչ դատարանի՝ 2016 թվականի նոյեմբերի 15-ի որոշմամբ

մերժվել են՝ անփոփոխ թողնելով վարչական դատարանի 2016 թվականի մարտի 10-ի վճիռը:

Վերաքննիչ դատարանի վերը նշված որոշման դեմ դիմողի ներկայացուցիչը ներկայացրել է վճռաբեկ բողոք, որի վարույթ ընդունելը մերժվել է ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մարտի 7-ի որոշմամբ:

3. Դիմողն օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը վիճարկում է երկու տեսանկյունից՝ օրենքի բացի և օրենքի վիճարկվող նորմում առկա «համարժեք չափ» եզրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված, դիմողի կարծիքով, ոչ իրավաչափ մեկնաբանության տեսանկյունից:

Վկայակոչելով օրենսդրական բացի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները՝ դիմողն օրենքի բացը փաստարկում է նրանով, որ, ի տարբերություն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, օրենքի վիճարկվող նորմում թվարկված են ավելի քիչ իրավունքներ, որոնց խախտման դեպքում անձը ձեռք է բերում ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունք: Դրա հետևանքով, ըստ դիմողի, թեև դատական կարգով հաստատվել էր, որ վարչաիրավական հարաբերություններում վարչական մարմնի կողմից խախտվել էին դիմողի՝ խոսքի ազատության, միավորումներ կազմելու (խաղաղ հավաքների ազատության), ազատ տեղաշարժվելու, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները, սակայն այդ իրավունքներից միայն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման համար է նրան տրամադրվել ոչ նյութական վնասի հատուցում, քանի որ օրենքը չի սահմանել մյուս երեք իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման պայման և կարգ: Մինչդեռ, ըստ դիմողի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան (այսուհետ՝ Կոնվենցիա) և Սահմանադրությունը երաշխավորում են Կոնվենցիայով սահմանված բոլոր իրավունքների խախտման դեպքում ոչ նյութական վնասի հատուցման իրավունք, և պետություններին պարտավորեցնում են իրենց օրենսդրությամբ երաշխավորել, ապահովել և պաշտպանել այդ իրավունքները:

Դիմողի համոզմամբ՝ խոսքի ազատության, խաղաղ հավաքների ազատության և ազատ տեղաշարժվելու իրավունքների մասով ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պայմանների և կարգի սահմանված չլինելն օրենսդրական բաց է և հակասում է ՀՀ Սահմանադրությանը՝ ոչ իրավաչափորեն սահմանափակելով արդյունավետ դատական պաշտպանության, վնասի հատուցման և այն հիմնական իրավունքներն ու ազատությունները, որոնց նկատմամբ միջամտությունը տեղի է ունեցել անկախ այդ իրավունքների խախտումը հանրային իշխանության մարմինների կողմից ճանաչված լինելու փաստից:

Վկայակոչելով վնասի փոխհատուցման վերաբերյալ Մարդու իրա-

վունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) մի շարք իրավական դիրքորոշումներ՝ դիմողն օրենքի վիճարկվող նորմում առկա «համարժեք չափ» եզրույթին իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանության ոչ իրավաչափությունը փաստարկում է նրանով, որ իրավակիրատ պրակտիկայում վիճարկվող նորմում առկա «համարժեք չափով» եզրույթին տրվել է ինքնավար մեկնաբանություն, որն էականորեն տարբերվում է Եվրոպական դատարանի կողմից Կոնվենցիայի 41-րդ հոդվածով սահմանված «արդարացի փոխհատուցում» եզրույթին հաղորդած բովանդակությունից:

Ըստ դիմողի՝ ներպետական դատական ատյանների կողմից վնասների հատուցումը պետք է սահմանվի այնպիսի չափով, ինչպիսին իրավակիրատական պրակտիկայում ձևավորել է Եվրոպական դատարանը Հայաստանի դեմ կայացրած վճիռներով, այլապես անձը կպահպանի «գոհի» կարգավիճակը՝ Կոնվենցիայի 34-րդ հոդվածի իմաստով, ինչպես նաև կունենա Եվրոպական դատարանի դիմելու և արդարացի փոխհատուցում պահանջելու իրավունք:

Դիմողը գտնում է, որ իրավունքների խախտման «համարժեք չափի»- «արդարացի փոխհատուցման» համաչափության մասշտաբը Հայաստանի մասնակցությամբ Եվրոպական դատարանի վճիռներով սահմանված չափն է, հետևաբար «համարժեք չափով» եզրույթը, իրավակիրատական պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ հանդերձ, հակասում է ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածին /համաչափության սկզբունքը/:

4. Պատասխանողն առարկելով դիմողի փաստարկներին և **արձանագրելով ոլորտում իրավական բացի առկայությունը**, խնդրում է գործի վարույթը կարճել:

Իր խնդրանքը հիմնավորելու համար պատասխանողը վկայակոչում է 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցության հարցի վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները և գտնում է, որ իրավունքի բացի հարցը, որը տվյալ դեպքում պայմանավորված է նրանով, որ օրենքով պաշտպանվող ոչ գույքային իրավունքների թվարկումն ավելի նեղ է, քան Կոնվենցիայով նախատեսված իրավունքները, գտնվում է Սահմանադրական դատարանի իրավասությունից դուրս և ենթակա է հաղթահարման օրենսդիր մարմնի կողմից:

Միաժամանակ, պատասխանողն ընդգծում է, որ «... Դիմողն իր խախտված իրավունքների պաշտպանության ինչպես մինչդատական փուլում, այնպես էլ դատական պաշտպանության ընթացքում ոչ գույքային վնասի դիմաց հատուցման ենթակա գումարի չափը չի պայմանավորել առանձին խախտված իրավունքների գույքային համարժեքության գնահատմամբ,

այլ ներկայացրել է մեկ միասնական գումարային պահանջ, որպես իր բոլոր խախտված իրավունքների դիմաց իր համար ընդունելի համարժեք հատուցում»:

Պատասխանողի կարծիքով՝ իրականում դատարանի կողմից դրամական հատուցման չափը նվազեցվել է ոչ թե այն հիմնավորմամբ, որ օրենքի վիճարկվող դրույթը չի նախատեսում հատուցում բոլոր խախտված իրավունքների համար, այլ՝ հիմք ընդունելով գործի փաստական հանգամանքները և դիմողի իրավունքների խախտման ծավալներն ու տևողությունը:

Պատասխանողի գնահատմամբ՝ ակնհայտ է, որ այն պարագայում, եթե դատարանի կողմից հատուցման ենթակա գումարի սահմանված չափը համապատասխաներ դիմողի կողմից ներկայացված պահանջին, ապա վերջինս հազիվ թե բարձրացներ օրենքի վիճարկվող դրույթում իրավակարգավորման բացի առկայության կամ բացակայության հարցը:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը, ինչպես նաև այն հանգամանքները, որ դիմողն իր ոչ գույքային իրավունքների խախտման դիմաց արդեն իսկ ստացել է դրամական փոխհատուցում, և որ դիմողին մտահոգում է ոչ թե մի շարք կոնվենցիոն իրավունքների իրավական պաշտպանության մեխանիզմների բացակայությունը, այլ վերջնական դատական ակտով սահմանված դրամական հատուցման չափը, պատասխանողը գտնում է, որ դիմողը նպատակ է հետապնդում հասնել իր նկատմամբ կայացված դատական ակտի վերանայման: Այդ կապակցությամբ պատասխանողը վկայակոչում է Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՌ-21 որոշման մեջ ամրագրված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց կամ հետապնդում է այլ նպատակներ, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմողի բարձրացրած առաջին հիմնախնդրի՝ օրենսդրական բացի առնչությամբ հարկ է, նախ և առաջ, ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ քաղաքացիաիրավական և վարչաիրավական օրենսդրության վերլուծության համատեքստում պարզել, թե առկա իրավակարգավորման պայմաններում երաշխավորվել է, արդյոք, անձի՝ ոչ նյութական վնասի դիմաց հատուցում ստանալու սահմանադրական իրավունքի իրացումը:

Վնասի (այդ թվում՝ ոչ նյութական) հատուցման իրավունքն իր ամրագրումն է գտել թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրության մեջ: Մասնավորապես, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (կից Արձա-

նագրություններով) սահմանվում են ոչ միայն հիմնական իրավունքներն ու ազատությունները, այլև դրանց խախտման դեպքում արդարացի փոխհատուցման իրավունքը: ՀՀ Սահմանադրության՝ Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատություններն ամրագրող 2-րդ գլխում ամրագրված է նաև վնասի հատուցման իրավունքը: Մասնավորապես, Սահմանադրության 62-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Մինչև 2014 թվականը ՀՀ քաղաքացիական օրենսգրքում բացակայում էին ոչ նյութական վնասի հատուցման հետ կապված իրավակարգավորումները: 2013 թվականի նոյեմբերի 5-ին Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1121 որոշմամբ հակասահմանադրական ճանաչեց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով վերջինս բարոյական վնասը չէր դիտում որպես վնասի տարատեսակ և չէր ապահովում բարոյական վնասի փոխհատուցման հնարավորություն՝ արգելափակելով անձի՝ դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, միաժամանակ խոչընդոտելով Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը:

Նշված որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Միաժամանակ, ելնելով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության և դրանցով պայմանավորված՝ բարոյական վնասի ինստիտուտին առնչվող կանոնակարգումների լիարժեքությունն ապահովելու անհրաժեշտությունից՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ բարոյական վնասի նյութական փոխհատուցման ընդհանուր չափանիշներն ու կարգը պետք է օրենսդրորեն հստակ ամրագրվեն, որպեսզի երաշխավորվի համապատասխան դեպքերում և կարգով անձին պատճառված բարոյական վնասի ողջամիտ և արդարացի փոխհատուցումը, ապահովվի ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացումը և չխոչընդոտվի Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պարտավորությունների բարեխիղճ կատարումը»:

Վերոնշյալից բխում է, որ Սահմանադրական դատարանը բարոյական վնասի հատուցման հնարավորությունը դիտարկել է Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների և ազատությունների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնված միջազգային պար-

տավորությունների բարեխիղճ կատարման տեսանկյունից և չի սահմանափակվել կոնկրետ իրավունքներ նշելով, քանի որ յուրաքանչյուր իրավունքի ամրագրումն արդեն իսկ ենթադրում է ոչ միայն այդ իրավունքի պաշտպանություն ու պատասխանատվության սահմանում դրա խախտումների դեպքում, այլև դրա խախտման արդյունքում պատճառված վնասների հատուցում: Միայն այդ պարագայում իրավունքների և ազատությունների պաշտպանության համակարգը կլինի լիարժեք և արդյունավետ:

Նշված որոշումից հետո, 2014 թվականի մայիսի 19-ի՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-21-Ն ՀՀ օրենքով, ինչպես նաև 2015 թվականի դեկտեմբերի 21-ի՝ «ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-184-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական օրենսգրքում ներդրվեց պատճառված ոչ նյութական վնասի դեպքում դրամական հատուցման պահանջի ինստիտուտը:

Նշված փոփոխություններից հետո ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածով սահմանվում է.

«1. Անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

2. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը»:

Միաժամանակ, նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ ոչ նյութական վնասը ֆիզիկական կամ հոգեկան տառապանք է, որն առաջացել է անձին ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող նյութական կամ ոչ նյութական բարիքների դեմ ոտնձգող կամ նրա անձնական գույքային կամ ոչ գույքային իրավունքները խախտող որոշմամբ, գործողությամբ կամ անգործությամբ:

Նշված հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Անձը, իսկ նրա մահվան կամ անգործունակության դեպքում նրա ամուսինը, ծնողը, որդեգրողը, երեխան, որդեգրվածը, խնամակալը, հոգաբարձուն իրավունք ունեն դատական կարգով պահանջելու պատճառված ոչ նյութական վնասի հատուցում, եթե քրեական հետապնդման մարմինը կամ դատարանը հաստատել է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտվել են այդ անձի՝ Հայաստանի Հանրապետության

Սահմանադրությամբ և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայով երաշխավորված հետևյալ հիմնարար իրավունքները. 1) կյանքի իրավունքը. 2) խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը. 3) անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը. 4) արդար դատաքնության իրավունքը. 5) անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնմխելիության իրավունքը. 6) մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը. 7) հավաքների և միավորման ազատության իրավունքը. 8) իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը. 9) սեփականության իրավունքը»: Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ իրավաչափ վարչարարության հետևանքով պատճառված ոչ նյութական վնասը ենթակա է հատուցման «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքն անձին պատճառված վնասի արդարացի փոխհատուցման իրավունքի իրացման միջազգային իրավական սկզբունքների և դրանց իրացման, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում ՀՀ Սահմանադրությամբ հաստատագրված իրավական մոտեցումներից ելնելով՝ սահմանել է այն իրավունքները, որոնց խախտման դեպքում անձը ձեռք է բերում վնասի փոխհատուցում պահանջելու իրավունք՝ միաժամանակ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման կարգի սահմանումը վերապահելով օրենքի կարգավորմանը: Դրան համապատասխան՝ նշված օրենքի 1-ին հոդվածի և 2-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով են կարգավորվում «...վարչարարությամբ հասցված վնասի հատուցման հետ կապված՝ վարչական մարմինների և ֆիզիկական կամ իրավաբանական անձանց (այսուհետ՝ անձինք) միջև ծագած հարաբերությունները», որպիսի կանոնը տարածվում է նաև վարչական մարմինների կողմից հանրային իրավունքի բնագավառում իրականացվող ցանկացած գործունեության վրա: Իսկ վարչարարությամբ հասցված վնասի հետ կապված անձանց իրավունքների պաշտպանության նպատակով վարչական ակտերի բողոքարկման (այդ թվում՝ դատական ընդհանուր) կարգը նախատեսված է օրենքի 69-րդ, 70-րդ հոդվածներով և 4-րդ բաժնի 10-րդ գլխում սահմանված այլ նորմերով:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անձանց հասցված վնասի (գույքային և ոչ գույքային բնույթի) հետ կապված հարաբերությունները պայմանավորված հանրային իշխանության մարմինների գործունեությամբ, իրավակարգավորման ենթարկելիս առաջնա-

հերթ հիմք են ընդունվել ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածով երաշխավորված՝ այդպիսի վնասի հատուցման իրավունքի բովանդակությունը և դրա իրացման ու պաշտպանության իրավական ընդհանուր սկզբունքները, մասնավորապես.

- անձն ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք,

- վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով,

- անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը,

- վարչական ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

6. Անդրադառնալով վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման վերաբերյալ սույն գործով քննության առարկա իրավակարգավորումների սահմանադրականության խնդրին՝ Սահմանադրական դատարանը կարևորում է «պատճառված վնաս» եզրույթի սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման, դրա ճիշտ, միակերպ և ամբողջական ընկալման անհրաժեշտությունը ոչ միայն նորմատիվ իրավական կարգավորման, այլև իրավակիրառման բնագավառներում: Սահմանադրապես, ինչպես հետևում է օրենքի 7-րդ բաժնի նորմերի համալիր վերլուծությունից, օրենսդիրը նախատեսել է ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցում պահանջելու նախապայման, այն է՝ ոչ իրավաչափ ճանաչել վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որին օրենքի 100-րդ հոդվածի իրավակարգավորումների համաձայն կարող է հետևել վարչարարության հետևանքով վնաս պատճառած մարմնին հատուցման պահանջ ներկայացնելը: Այսինքն, պահանջի իրավունքն անձը ձեռք է բերում վարչական մարմնի իրավական ակտը, գործողությունը կամ անգործությունը, որով անձին վնաս է հասցվել, սահմանված կարգով **ոչ իրավաչափ ճանաչվելու** դեպքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ նման նորմատիվ պայմանը հետապնդում է իրավական հիմնավոր նպատակ և միտված է պատճառված վնասի հատուցման (վարչական կամ դատական կարգով) Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքի իրացման համար իրավական բարենպաստ պայմաններ (նախադրյալներ) ստեղծելուն:

Միաժամանակ, օրենքի վիճարկվող 104-րդ հոդվածի 1-ին մասի նորմից անմիջականորեն բխում է, որ անձը ձեռք է բերում ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու իրավունք, եթե խախտվել են նրա ազատությունը, անձեռնմխելիությունը, բնակարանի անձեռնմխելիությունը, անձնական կամ ընտանե-



կան կյանքի անձեռնմխելիությունը, արատավորվել է նրա պատիվը, բարի համբավը կամ արժանապատվությունը: Այսինքն՝ ոչ իրավաչափ վարչարարության պատճառով ոչ գույքային վնասի հատուցման իրավունքը նախատեսված է սահմանափակ թվով սահմանադրական իրավունքների (ՀՀ Սահմ. 23, 25, 27, 31 և 32-րդ հոդվածներ) խախտման դեպքերում: Այս պարագայում հարց է առաջանում, թե ինչպես պետք է իրացվի անձի՝ վնասի հատուցման իրավունքը, եթե ոչ իրավաչափ վարչարարության պատճառով սահմանադրական այնպիսի իրավունքներ, որպիսիք նախատեսված չեն վիճարկվող նորմում: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասն ամրագրել է առավել թվով այնպիսի իրավունքներ, որոնց՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի որոշման, գործողության կամ անգործության հետևանքով խախտման դեպքերում անձն իրեն պատճառված ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավունք ունի:

Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձին պատճառված վնասի հատուցման, այսինքն՝ նաև այդ վնասի պատճառման արդյունքում խախտված սահմանադրական այլ հիմնական իրավունքների վերականգնման անհրաժեշտ ընթացակարգեր օրենսդիրը քննության առարկա օրենքում և, մասնավորապես՝ վիճարկվող իրավակարգավորման շրջանակներում չի նախատեսել, ինչի արդյունքում չեն երաշխավորվել ՀՀ Սահմանադրության ինչպես 50-րդ, այնպես էլ 62-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների լիարժեք իրացումն ու պաշտպանությունը, որպիսի պարագայում անձն անկարող է ակնկալել ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասում չթվարկված սահմանադրական հիմնական իրավունքների խախտմամբ իրեն պատճառված ոչ նյութական վնասի՝ նաև դատական կարգով հատուցում:

Այսպիսով, Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների արդյունքում էականորեն սահմանափակվում է անձի իր մի շարք հիմնարար իրավունքների խախտման արդյունքում պատճառված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորությունն այն դեպքում, երբ անձին սահմանադրական մակարդակով վերապահված է այդպիսի իրավունք: Հետևաբար, օրենսդրի խնդիրն է օրենքում համապատասխան իրավակարգավորմամբ սահմանել հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ վարչարարության արդյունքում անձանց խախտված սահմանադրական հիմնական իրավունքների վերականգնման, ինչպես նաև պատճառված ոչ գույքային վնասի արդարացի հատուցման ինչպես վարչական, այնպես էլ դատական ընթացակարգեր:

7. Սահմանադրական դատարանը հարկ է համարում վերոնշյալ հիմնախնդիրը դիտարկել նաև Մարդու իրավունքների և հիմնարար ազա-

տությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով (կից Արձանագրություններով) սահմանված արդարացի բավարարման, ինչպես նաև Սահմանադրությամբ ամրագրված և անմիջական գործողություն ունեցող՝ վնասի հատուցման իրավունքի և վիճարկվող նորմի համադրման համատեքստում:

Կոնվենցիայի՝ «Արդարացի բավարարումը» վերտառությամբ 41-րդ հոդվածով սահմանվում է. «Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Վերոնշյալ նորմի վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանը փաստում է, որ այն երաշխավորում է Կոնվենցիայով և դրան կից Արձանագրություններով սահմանված բոլոր իրավունքների խախտման արդյունքում պատճառված վնասի հատուցման իրավունքը (գույքային և ոչ գույքային), ուստի Սահմանադրության 81-րդ հոդվածով (Հիմնական իրավունքներն ու ազատությունները և միջազգային իրավական պրակտիկան) ամրագրված դրույթների ապահովման նկատառումներից ելնելով, հաշվի առնելով սույն որոշման 6-րդ կետում Սահմանադրական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումները, անհրաժեշտ է օրենսդրությամբ ապահովել այն բոլոր իրավունքների խախտման արդյունքում պատճառված վնասի հատուցման իրավունքը, որոնք ամրագրված են նաև Կոնվենցիայով:

ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածից բխում է, որ «վնաս» եզրույթը ներառում է գույքային և ոչ գույքային վնասը, և վնասի հատուցման իրավունքը տարածվում է անձի՝ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների խախտմամբ պատճառված գույքային և ոչ գույքային վնասի նկատմամբ, ուստի բոլոր դեպքերում, երբ տեղի է ունենում Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների խախտում, անձն անվերապահ ձեռք է բերում այդ խախտումների արդյունքում իրեն պատճառված վնասի հատուցում պահանջելու իրավունք: Այդ է վկայում նաև Սահմանադրության 62-րդ և 81-րդ հոդվածների համալիր վերլուծությունը, որի արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությամբ ամրագրված՝ վնասի հատուցման իրավունքը ներառում է ինչպես Սահմանադրությամբ, այնպես էլ միջազգային իրավական ակտերով ամրագրված բոլոր հիմնարար իրավունքների խախտման արդյունքում պատճառված վնասը: Նման եզրահանգումը պայմանավորված է այն հանգամանքով, որ անձի յուրաքանչյուր իրավունքի սահմանմամբ ոչ միայն պետք է երաշխա-

վորվի դրա իրացումը, պաշտպանությունը, խախտման դեպքում՝ իրավական պատասխանատվության անխուսափելիությունը, այլն՝ իրավունքի խախտման արդյունքում անձի կրած վնասների (այդ թվում՝ բարոյական) հատուցման երաշխավորումը: Վնասի հատուցման իրավունքն ամրագրելով հանդերձ, Մահմանադրությունը հատուցման պայմանների և կարգի սահմանումը վերապահել է օրենքի կարգավորմանը, սակայն օրենքով սահմանված յուրաքանչյուր կարգավորում պետք է համահունչ լինի միջազգային և ներպետական օրենսդրությամբ անձին տրված իրավունքներին և ապահովի դրանց խախտման դեպքում պատճառված վնասի հատուցումը, հակառակ պարագայում այդ իրավունքները ձեռք կբերեն զուտ ձևական և հռչակագրային բնույթ:

Ոչ նյութական վնասի հատուցման ինստիտուտի հստակ կանոնակարգման անհրաժեշտությունը բխում է ինչպես մարդու և քաղաքացու՝ ՀՀ Մահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքների ու ազատությունների ընդհանուր բովանդակությունից ու դրանց դատական պաշտպանության սահմանադրաիրավական սկզբունքներից (ՀՀ Մահմ. 61-րդ, 63-րդ հոդվածներ), այնպես էլ Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից, մասնավորապես՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից Արձանագրություններով) դրույթներից և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավակիրառ պրակտիկայից:

Մահմանադրության 81-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Մահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ կայացրած մի շարք վճիռներում (Խաչատրյանը և այլք ընդդեմ Հայաստանի Հանրապետության /գանգատ թիվ 23978/06, 27.11.2012/, Պողոսյանն ու Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի Հանրապետության /գանգատ թիվ 22999/06, 12.06.2012/ և այլն) հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց գործողությունների արդյունքում անձին պատճառված բարոյական վնասի դիմաց նյութական փոխհատուցում չտրամադրելը գնահատել է որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (կից Արձանագրություններով) համապատասխան դրույթների խախտում: Հարկ է նշել նաև, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներով սահմանել է փոխհատուցում այնպիսի իրավունքների խախտման համար, որոնք

նախատեսված չեն սույն գործով վիճարկվող նորմով (օրինակ՝ Սափեյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 35738/03, 13.01.2009, Գասպարյանն ընդդեմ Հայաստանի, գանգատ թիվ 35944/03 և այլ գործերով ՄԻԵԴ-ը սահմանել է փոխհատուցում հավաքների և միավորման ազատության խախտման համար):

Նշվածի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ նաև ՀՀ Սահմանադրության՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերը և ընթացակարգերը» վերտառությամբ 75-րդ հոդվածին, որով, մասնավորապես, սահմանվում է. «Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր»:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորությունը սահմանափակ թվով իրավունքների խախտման հիմքերով սահմանափակված լինելու պայմաններում, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ելնելով ՀՀ Սահմանադրության 62-րդ հոդվածի իրավական բովանդակությունից և դրան համապատասխան վնասի հատուցման ինստիտուտը կիրառելու սահմանադրաիրավական անհրաժեշտությունից, ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման իրավունքն իրավակիրառական պրակտիկայում պետք է ճանաչել իրացնելի թե՛ միջազգային, թե՛ ներպետական օրենսդրությամբ (այդ թվում՝ Սահմանադրությամբ) անձին ընձեռված իրավունքների խախտման դեպքերում:

8. Սահմանադրական դատարանը սույն գործի քննության առարկայի շրջանակներում կարևորում է նաև Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի «Վարչական ակտերի դատական վերանայման վերաբերյալ» թիվ (2004)20 հանձնարարականը, որով սահմանվել են վարչական ակտերի նկատմամբ արդյունավետ դատական վերահսկողության առաջնային նպատակներ ուղղված՝ ա) խախտված օրինականության վերականգնմանը (կետ 87) և բ) իրավունքի խախտման հետևանքով ինչպես նյութական, այնպես էլ բարոյական վնասի հատուցմանը (կետ 89):

Այսպես, հիշատակված հանձնարարականի 87-րդ կետով Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի մասնակից պետություններին առաջարկվում է «... երաշխավորել դատարանի իրավունքը՝ ընդունելու ան-

հրաժեշտ միջոցներ խախտված օրինականության վերականգնման համար: Նկատի են առնվում ապահովման միջոցներ, ընթացակարգային որոշումներ և ըստ էության որոշումներ, այսինքն՝ հնարավոր նյութական վնասը կանխելու լիազորություններ», ընդ որում՝ «... պարտավորեցնել ընդունելու վարչական ակտ կամ որոշում հայեցողության ազատության սահմանափակման դեպքում, ինչպես նաև որոշումների ընդունման հնարավորության կանխում հայեցողության ազատության սահմանափակման դեպքում, եթե վարչակազմը գործել է *ultra vires* (լիազորությունների գերազանցմամբ)»:

Նույն հանձնարարականի 89-րդ կետը սահմանում է, որ՝ «... դատարանն իրավասու է ոչ միայն ըստ էության քննել գործը, այլ նաև **բողոքի բավարարման դեպքում սահմանել փոխհատուցում**: Սկզբունքորեն թույլատրելի է խախտման արդյունք հանդիսացող ինչպես նյութական, այնպես էլ **բարոյական վնասի փոխհատուցումը**: Ընդհանուր առմամբ, որոշման վերացումը ինքնին հանդիսանում է փոխհատուցում»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը՝ վնասի հատուցման սահմանադրաիրավական սկզբունքներին համարժեք կիրառելի է այն դեպքերում, երբ իրավակիրառական պրակտիկայում պահպանվեն Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ (2004)20 հանձնարարականի վերոհիշյալ դրույթները:

9. Օրենքի վիճարկվող նորմում առկա «համարժեք չափ» եզրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Հայաստանի դեմ կայացրած որոշումներին դրա համապատասխանության առնչությամբ դիմողի բարձրացրած հիմնախնդրի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այս հարցում դիմողի հիմնական մտահոգությունը կայանում է նրանում, որ ոչ նյութական վնասի հատուցման չափ սահմանելիս ՀՀ վարչական դատարանը, հիմնավորելով դիմողի վկայակոչած ՄԻԵԴ որոշումների և սույն գործի դատավարական նախապատմության շրջանակներում առկա փաստական հանգամանքների նույնանման չլինելու փաստը, որոշել է որպես հատուցման չափ սահմանել 200.000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ «համարժեք չափ» եզրույթը կիրառված է օրենսդրական տարբեր ակտերում, սակայն դրանցից և ոչ մեկով տրված չէ այդ եզրույթի սպառիչ մեկնաբանությունը: Առհասարակ, «համարժեք» եզրույթը նշանակում է նույն արժեքը կամ նույն նշանակությունն ունեցող: Սակայն կոնկրետ գործով հիմնավոր որոշում կայացնելու համար անհրաժեշտ է «համարժեք չափով» հասկացության իմաստն ու նշանակությունը բացահայ-

տել յուրաքանչյուր կոնկրետ գործի քննության շրջանակներում՝ ելնելով տվյալ գործի հանգամանքներից, որոնց օրենքով սպառիչ թվարկումն օրյեկտիվորեն անհնար է: Նշված եզրույթի մեկնաբանությունը պետք է տրվի իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում, որպիսի հանգամանքը միանշանակ արդարացված է՝ պայմանավորված տվյալ եզրույթի առավելապես իրավագործնական նշանակությամբ: Նման տեսակետը հաստատվում է նաև Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքով: Մասնավորապես, 2004 թվականի դեկտեմբերի 21-ի՝ Բուսույովն ընդդեմ Մոլդովայի (Busuioac v. Moldova) վճռում Եվրոպական դատարանի կողմից արձանագրվել է՝ «...որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին, հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է»:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել նաև, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշում է դատարանը՝ ողջամտության, արդարացիության (equitableness) և համաչափության սկզբունքներին համապատասխան:

Նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված է, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը որոշելիս դատարանը հաշվի է առնում ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառած վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները, ինչպես նաև այլ վերաբերելի հանգամանքներ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանվում է նաև ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափ. մասնավորապես՝ հատուցման չափը չի կարող գերազանցել՝

- նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,
- նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ նույն օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում /հոդվ. 1087.2, 7-րդ մաս/:

Միաժամանակ, նշված հոդվածով սահմանվում է նաև, որ ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել դիտարկվող հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Վերագրյալից բխում է, որ օրենսդիրը դատարանին է վերապահել յուրաքանչյուր կոնկրետ գործով ոչ նյութական վնասի հատուցման համարժեք չափի սահմանումը՝ մինչև ժամանակ ամրագրելով այն առավելագույն չափանիշները (հատուցման առավելագույն չափը), որոնցով պետք է առաջնորդվի դատարանը վնասի հատուցման վերաբերյալ գործ քննելիս: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ոչ նյութական վնասի հատուցման «համարժեք չափի» կոնկրետ բովանդակությունը, ելնելով Սահմանադրության 62-րդ հոդվածի իրավակարգավորումից, պետք է բացահայտվի իրավակիրառ գործունեության արդյունքում:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համատեքստում Սահմանադրական դատարանը միաժամանակ արձանագրում է, որ վիճարկվող օրենքում ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերն ու համապատասխան չափանիշներն ամրագրված չլինելու պայմաններում, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ոչ իրավաչափ վարչարարությամբ անձին պատճառած ոչ նյութական վնասի դրամական հատուցման հարցը քննելիս վարչական մարմինը պարտավոր է հիմք ընդունել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և 1087.2-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել անձին պատճառված ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը որոշելիս:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 102-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը ոչ իրավաչափ վարչարարությամբ պատճառված ոչ գույքային վնասի հատուցման հնարավորությունը պետք է ապահովվի Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերում և ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու **բոլոր** հիմնական իրավունքների խախտման դեպքերում:

2. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասում առկա «համարժեք չափ» եզրույթը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանն այնպիսի սահմանադրաիրավական բովանդակությամբ, համաձայն որի՝ դիտարկվող եզրույթը, մինչև ՀՀ Ազգային ժողովի կողմից համապատասխան իրավակարգավորումների հստակեցումը և իրավակարգավորման բացի հաղթահարումը, ներառում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1 և 1087.2-րդ հոդվածներով սահմանված՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման առավելագույն չափերը, ինչպես նաև համապատասխան չափանիշները, որոնք պետք է հաշվի առնի վարչական մարմինն անձին պատճառած ոչ նյութական վնասի դրամական հատուցման չափը որոշելիս:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտն օրենքով սահմանված կարգով նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման՝ հաշվի առնելով, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները դիմողի նկատմամբ կիրառվել են այլ մեկնաբանությամբ:

4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

7 նոյեմբերի 2017 թվականի  
ՍԴՈ-1383





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 64-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
3-ՐԴ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 69-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՎԱՆԱԶՈՐ  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N 2-Ն, 7-Ն,  
8-Ն, 9-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 նոյեմբերի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Գ. Հարությունյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Վ. Հովհաննիսյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող կողմի՝ ՀՀ Ազգային ժողովի թվով 26 պատգամավորների ներկայացուցիչներ՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ Ա. Զեյնալյանի և Է. Մարությանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ ՀՀ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի իրավաբանական վարչության իրավախորհրդատվական բաժնի գլխավոր մասնագետ Վ. Դանիելյանի,

համաձայն ՀՀ Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 25, 38 և 68-րդ հոդվածների,

դրնքաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ Ազգային ժողովի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 2(90)2018

պատգամավորների դիմումի հիման վրա՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի, Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների 2017 թվականի հունիսի 9-ին ՀՀ սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, դիմող և պատասխանող կողմերի գրավոր բացատրությունները, ինչպես նաև հետազոտելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը, Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումները, գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի մայիսի 7-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հունիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2002 թվականի հունիսի 21-ին:

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-337 օրենքը շարադրվել է նոր խմբագրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-237-Ն օրենքով, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, ՀՀ Նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի դեկտեմբերի 30-ին, ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 1-ին:

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)՝ «Ավագանու նիստերը» վերտառությամբ 64-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 3-րդ և 4-րդ մասերը սահմանում են.

«3. Ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:

4. Ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդով»:

Օրենքի սույն հոդվածը փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

Օրենքի «Ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը» վերտառությամբ 69-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը կարող է վաղաժամկետ դադարեցնել ավագանու լիազորությունները, եթե՝

1) հերթական նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերը երեք ամսից ավելի չեն գումարվում.

2) հերթական նստաշրջանի ընթացքում ավագանին երեք ամսից ավելի իր քննարկած հարցերի վերաբերյալ որևէ որոշում չի կայացնում.

3) ավագանին հերթական նստաշրջանի երեք ամսվա ընթացքում համայնքի ղեկավարի ներկայացրած արտահերթ քննարկման ենթակա նախագծի վերաբերյալ որոշում չի կայացնում»:

Օրենքի սույն հոդվածը փոփոխության կամ լրացման չի ենթարկվել:

«Վանաձոր համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու և Վանաձոր համայնքի ավագանու 2012թ. նոյեմբերի 07-ի թիվ 54-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2-Ն որոշումը Վանաձոր համայնքի ավագանու կողմից ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 11-ին:

«Վանաձոր համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին» N 7-Ն որոշումը Վանաձոր համայնքի ավագանու կողմից ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 11-ին:

«Վանաձոր համայնքի 2017 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» N 8-Ն որոշումը Վանաձոր համայնքի ավագանու կողմից ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 11-ին:

«Վանաձոր համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» N 9-Ն որոշումը Վանաձոր համայնքի ավագանու կողմից ընդունվել է 2017 թվականի մարտի 31-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի ապրիլի 11-ին:

2. Դիմողը գտնում է, որ Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը հակասում են ՀՀ Սահմանադրության 1, 2, 29 և 179-րդ հոդվածներին, 69-րդ հոդվածի 1-ին մասը՝ ՀՀ Սահմանադրության 1, 2, 3, 4, 61 և 63-րդ հոդվածներին, իսկ Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումները՝ ՀՀ Սահմանադրության 1, 2 և 179-րդ հոդվածներին:

Ըստ դիմողի՝ «...ներկայացուցչական մարմինների (ընդհանրապես) անդամների կեսից ավելինի առկայությունն է միայն ապահովում այդ մարմնի ներկայացուցչականությունը և իրավազորությունը, և ինչպես

եզրահանգել է Սահմանադրական դատարանը՝ դրանից պակաս անդամների որևէ այլ թվի պարագայում, ներկայացուցչական մարմինը՝ որպես վարքագծի կանոններ սահմանող մարմին, հանդես գալու իրավագործություն չի կարող ունենալ: Հետևաբար՝ հաջորդ իրավագործության՝ որոշումներ կայացնելու իրավագործության, հարց քննարկելը իմաստազրկվում է: Այլ կերպ՝ «նիստի իրավագործությունը» նախապայման է՝ «որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավագործության» համար»:

Դիմողը գտնում է, որ Օրենքում, մնացած համայնքների համեմատ, Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների նիստերի քվորումի և իրավագործության, ինչպես նաև որոշումների կայացման իրավագործության տարբերակված մոտեցում է առկա, ինչն իրավաչափ հիմնավորում չունի և խտրականություն է: Դիմողը գտնում է նաև, որ Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների նիստերի համար քվորումի, իրավագործության չափորոշիչն օրենսդիրը չի որոշակիացրել, այլ պայմանավորել է որոշում կայացնելու համար ավագանու անդամների անհրաժեշտ թվով, այն է՝ ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդով: Ըստ դիմողի՝ տվյալ դեպքում «նիստ գումարելու իրավագործությունը» դադարել է լինել նախապայման՝ «որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավագործության» համար, այսինքն, ավագանու նիստին ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդի առկայության դեպքում քվորումն առկա է և նիստը՝ իրավագործ, իսկ որոշումը՝ ընդունված, եթե դրա ընդունմանը կողմ են քվեարկել բոլոր ներկաները: Դիմողն ընդգծում է նաև, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթներն իրավակիրառական պրակտիկայում հենց այդպիսի դրսևորում էլ ստացել են:

Դիմողն Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի այն կանոնակարգման առնչությամբ, համաձայն որի՝ ՀՀ կառավարությունը կարող է վաղաժամկետ դադարեցնել ավագանու լիազորությունները, գտնում է, որ օրենսդիրը, ըստ էության, «կարող է» ձևակերպմամբ կառավարությանը վերապահել է «կամայականության հասնող հայեցողություն»: Բացի դրանից, ըստ դիմողի, վիճարկվող իրավակարգավորմամբ չի սահմանվում նաև ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցմանն ուղղված որևէ ընթացակարգ, «հնարավոր կամայականություններից պաշտպանության երաշխիքներ»: Հիշյալ դիրքորոշումը դիմողը հիմնավորում է նաև նրանով, որ ժողովրդի առաջնային մանդատով օժտված մարմնի լիազորությունների դադարեցումը գործադիր իշխանության մարմնին վերապահելը հակասում է ժողովրդավարության, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքներին, արդար դատաքննության իրավունքին:

Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը, մասնավորապես, հիմնավորում է նրանով, որ՝ «Ավագանու

մանդատ ստացած 15 հոգուց բաղկացած խումբը, որպես տեղական ինքնակառավարման տեղական օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավագործություն չի ունեցել, հետևաբար՝ նրա կողմից ընդունված Վանաձորի համայնքի ավագանու 31.03.2017թ. N N 2, 7, 8, 9-Ն որոշումները չեն բխում ժողովրդի շահերից...»:

3. Սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված ՀՀ Ազգային ժողովն իր գրավոր բացատրությամբ գտնում է, որ Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, 69-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթները համապատասխանում են ՀՀ Սահմանադրությանը:

Պատասխանող կողմը նշում է, որ, որպես կանոն, կոլեգիալ ինստիտուտների որոշումների վավերության չափանիշ սահմանվում է քվորումի պահանջը, և այն երկրներում, որտեղ այդ պահանջն առկա է, քվորումը կարող է երկու տարբերակով հանդես գալ՝ մասնակցության քվորում և հավանության քվորում: Պատասխանողը նշում է նաև, որ մասնակցության քվորումը քվեարկության վավերությունը կապում է քվեարկությանը՝ քվեարկելու իրավունք ունեցող անձանց ներկայության որոշակի տոկոսի հետ, իսկ հավանության քվորումը՝ որոշման հաստատումը կապում է կողմ քվեարկածների որոշակի տոկոսի հետ: Դիմողի այն դիրքորոշման կապակցությամբ, որ Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների նիստերի համար քվորումի իրավագործության չափորոշիչն օրենսդիրը չի որոշակիացրել, այլ պայմանավորել է որոշում կայացնելու համար ավագանու անդամների անհրաժեշտ թվով, պատասխանողը գտնում է, որ այն հիմնավոր չէ, «քանզի օրենսդիրը հստակ սահմանել է հավանության քվորումի պահանջ»:

Ըստ պատասխանողի՝ ՀՀ Սահմանադրությունում ուղղակի դրույթ չկա տեղական ինքնակառավարման մարմին ավագանու որոշումների քվորումի պահանջի վերաբերյալ, այն թողնված է օրենսդրի հայեցողությանը: Պատասխանողը նշում է, որ քվորումի ընդհանուր կանոն և դրանից բացառություններ ՀՀ Սահմանադրությունը սահմանել է ՀՀ Ազգային ժողովի համար, ինչը չի տարածվում տեղական ինքնակառավարման կոլեգիալ մարմինների վրա: Իսկ վերջիններիս համար օրենսդիրն Օրենքով սահմանել է քվորումի ընդհանուր կանոն և բացառություն:

Պատասխանող կողմը գտնում է նաև, որ «...առհասարակ քվորումի պահանջի բացակայությունը կարող է սովորաբար ավելի բարձր մասնակցություն ապահովել, սակայն գործնականում հնարավոր է անգամ անհավանական ցածր մասնակցության պարագայում չնչին քանակի ձայներով որոշումներ կայացնել, ինչը լուրջ խնդիրներ կառաջացնի այդ որոշումների լեգիտիմության հետ կապված»: Փաստելով այս խնդիրը, միաժամանակ, պատասխանողն արձանագրում է, որ «մեկ քառորդի չափով հավանության քվորումի սահմանաչափը լուծում է քննարկվող խնդիրները:

Բացի այդ՝ օրենքները պետք է ուղղված լինեն համապատասխան իրավա- կարգավորումներ սահմանելու՝ սահմանադրական ինստիտուտների ան- խափան աշխատանքի համար՝ հնարավորություն չթողնելով քաղաքա- կան դրդապատճառներով այդ աշխատանքների խափանումը: Հետևա- բար, օրենքների հիմքում պետք է լինի ոչ թե հնարավոր քաղաքական բոյկոտների հնարավորությունը պաշտպանելու, այլ դրանք հնարա- վորինս բացառելու տրամաբանությունը»:

Դիմողի այն գնահատականի կապակցությամբ, որ Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների նիստերի քվորումի հարցում տարբերակ- ված մոտեցումն այլ համայնքների համեմատ խտրականություն է, պա- տասխանողը գտնում է, որ կոնկրետ դեպքում սահմանվել է համայնքների ավագանու քվորումի ընդհանուր կանոնից բացառություն՝ հատուկ կա- նոն, ինչն իրավաչափ նպատակ է հետապնդում:

Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման կապակցու- թյամբ պատասխանողը գտնում է, որ ՀՀ կառավարության համար այս հարցում սահմանվել է հայեցողական, այլ ոչ իմպերատիվ լիազորություն, որպեսզի կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ ՀՀ կառավարությունը գնահատի ավագանու անգործության՝ առանց իր միջամտության հաղթա- հարման հնարավորությունները և հնարավորինս զերծ մնա համայնքային ինքնակառավարմանը միջամտելուց: Հետևաբար, նման մոտեցումը, պա- տասխանողի գնահատմամբ, չի հակասում տեղական ինքնակառավար- ման սկզբունքներին, «քանզի այլ արդյունավետ կառուցակարգ հայտնի չէ ավագանու նմանատիպ անգործությունների հաղթահարման համար»:

4. Սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Վանաձոր համայնքի ավագանու թվով 15 անդամների ստորագրությամբ ներկայաց- ված գրավոր բացատրությամբ նշվում է, որ համաձայն Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի, 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ Վանաձոր հա- մայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումներն ընդունվել են ՀՀ օրենսդրության ճիշտ մեկնաբանմամբ, բխել են համայնքի բնակիչների շահերից և չեն հակասում ՀՀ Սահմանադրու- թյան 1-ին, 2, 3, 4, 29, 61, 63 և 179-րդ հոդվածներին:

Վկայակոչելով ՀՀ Սահմանադրության, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի, ինչպես նաև Օրենքի մի շարք դրույթներ՝ վերո- հիշյալ բացատրությամբ նշվում է նաև, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրված ներկայացուցիչների կարգավիճակը պետք է ապահովի նրանց գործառույթների ազատ իրականացումը, և տեղական ինքնակառավարումը պետք է կատարվի համայնքի բնակիչների իրա- վունքներից և շահերից ելնելով:

Բացատրությունն ստորագրած ավագանու անդամները գտնում են, որ, ելնելով Օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի դրույթների «ճիշտ

մեկնաբանությունից, Վանաձոր համայնքի ավագանին ընդունել է որոշումներ, որոնք ուղղված են եղել կարգավորելու հանրային շահից բխող հարաբերությունները, պաշտպանելու համայնքի յուրաքանչյուր բնակչի՝ տեղական ինքնակառավարման մարմիններից ակնկալվող իրենց իրավունքների պաշտպանության երաշխիքները»:

Անդրադառնալով Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորմանը՝ գտնում են, որ այդ իրավակարգավորմամբ «ՀՀ կառավարության համար սահմանվել է կամրնտրական (հայեցողական), ոչ թե հրամայական լիազորություն, այն նպատակով, որ կոնկրետ հանգամանքների հաշվառմամբ ՀՀ կառավարությունը գնահատի ավագանու անգործության՝ առանց իր միջամտության հաղթահարման հնարավորությունները և հնարավորինս զերծ մնա համայնքային ինքնակառավարմանը միջամտելուց»:

Ավագանու նիստերի իրավագործության առնչությամբ բացատրության հեղինակները գտնում են, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված չէ, որ Վանաձորի ավագանու նիստերն իրավագործ են, եթե նիստին ներկա է ավագանու անդամների ընդհանուր թվի առնվազն կեսից ավելին:

Վկայակոչելով Օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումները՝ նշվում է, որ «ավագանու որոշումներ, հայտարարություններ և ուղերձներն ընդունելը, օրենսդիրը թույլ է տվել ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս քան ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդով, որը Վանաձոր համայնքի պարագայում կազմում է 8+1 ձայն»:

Նշվում է նաև, որ Օրենքը, սահմանելով ՀՀ-ում տեղական ինքնակառավարման հասկացությունը, սկզբունքները, մարմինները, միաժամանակ սահմանում է որոշակի բացառություններ, տեղական ինքնակառավարման առանձնահատկություններ Երևան քաղաքում, Գյումրի և Վանաձոր համայնքներում:

Արձանագրվում է նաև, որ՝ «Մի շարք ժամանակակից ժողովրդավարական իրավական համակարգերում, բացի մասնակցության քվորումից, սահմանվում է նաև հավանության քվորումի պահանջ: Ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ հավանության քվորումը զգալիորեն նախընտրելի է մասնակցության քվորումից: Ավագանու որոշումների ընդունման համար հավանության քվորումի սահմանումը ոչ միայն չի հակասում ՀՀ Սահմանադրության պահանջներին, այլև հիմնավոր է սահմանադրական իրավունքի շրջանակներում»:

5. Սույն գործով բարձրացված սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումների և դրանց հիման վրա ընդունված իրավական ակտերի սահմանադրականությունը գնահատել հաշվի առնելով՝

ա) Գյումրի և Վանաձոր համայնքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկությունների և դրանց օրենքով սահմանման սահմանադրաիրավական հիմքերի առկայությունը,

բ) Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանու իրավագործությունը որոշելու օրենսդրական կարգավորման, ինչպես նաև դրա առանձնահատկություններ սահմանելու իրավաչափությունն ու հիմնավորվածությունը,

գ) Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու իրավակարգավորմամբ ՀՀ կառավարությանը վերապահված հայեցողության իրավաչափությունը,

դ) Վանաձոր համայնքի ավագանու սույն գործով վիճարկվող որոշումներն ընդունելու և գործողության մեջ դնելու սահմանադրաիրավական և օրենսդրական կարգի պահպանվածությունը:

6. ՀՀ սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վեճի առարկա իրավակարգավորումների առանձնահատկություններն առաջին հերթին պայմանավորված են ընդհանրապես հանրային իշխանության կոլեգիալ մարմնի և, մասնավորապես համայնքի ավագանու իրավագործության որոշման հստակեցմամբ, ելնելով հատկապես այն մեկնակետից, որ **«քվորումը» հանրային իշխանության կոլեգիալ (ներկայացուցչական) մարմնի կամաարտահայտման իրացման (այս կամ այն լիազորության իրականացման) առաջնահերթ (պարտադիր) իրավական պայմանն է:**

Իրավագիտական առումով «կոլեգիալություն» եզրույթի բնորոշումը հիմնականում հանգում է հետևյալին. **կոլեգիալությունը կառավարման սկզբունք է, որի պայմաններում ղեկավարումն իրականացվում է մի խումբ լիազորված անձանց կողմից: Կոլեգիալության կարգով որոշումների կայացումը ենթադրում է կարծիքների նախնական քննարկում և կոլեկտիվ քննարկման արդյունքում պաշտոնական փաստաթղթի մշակում ու ընդունում:**

Հանրային իշխանության իրականացումն ինչպես միանձնյա, այնպես էլ կոլեգիալ սկզբունքներով սահմանադրաիրավական պայման է, որն անմիջականորեն բխում է ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 2-րդ հոդվածի իրավակարգավորումից և պայմանավորված է կառավարման ժողովրդավարական սկզբունքների շարունակական իրացման անհրաժեշտությամբ: Կոլեգիալ կառավարման անհրաժեշտությունը, մասնավորապես, նպատակ ունի բազմակարծության ապահովման (2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 8-րդ հոդված), սուբյեկտիվիզմի և կամայականության հաղթահարման, ինչպես նաև հանրության օբյեկտիվ շահերի առավել արտահայտման միջոցներով երաշխավորել տվյալ մարմնի առջև Սահմանադրությամբ և օրենքներով առաջադրված հանրային կարևորություն ունեցող գործառույթների արդյունավետ իրականացումը:



Ելնելով այս կամ այն մարմնի իրավական կարգավիճակի (գործառույթների շրջանակի) առանձնահատկություններից հանրային իշխանության բնագավառում կոլեգիալ և միանձնյա կառավարման տարանջատման չափանիշներից են հանրային իշխանության մարմինների կողմից ընդունվող պաշտոնական փաստաթղթերի (որոշումների) ընդունման պայմաններն ու կարգը: Կոլեգիալ մարմինների հանրային-իշխանական գործունեության կարգավորման հիմքում առաջնահերթ կարևորվում են որոշում (կամ պաշտոնական այլ փաստաթուղթ) ընդունելու իրավական անհրաժեշտությունը, իսկ որոշ դեպքերում՝ հրատապությունը, մյուս կողմից օբյեկտիվ պատճառներով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի բոլոր անդամների մասնակցությունն ապահովելու անհնարինության պայմաններում այդ մարմնի բնականոն գործունեությունն ապահովող նվազագույն պայմանների, այն է՝ կոլեգիալ մարմնի անհրաժեշտ նվազագույն թվով անդամների մասնակցությամբ որոշումների ընդունման երաշխավորումը: Ընդ որում, դեպքերից որևէ մեկին նախապատվություն չի կարող տրվել: Անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն նշված դեպքերի միջև այն հաշվով, որպեսզի չխաթարվի ժողովրդավարական պետության էությունը:

Սահմանադրական դատարանի գնահատմամբ այդպիսի հավասարակշռությունը ենթադրում է կոլեգիալ մարմնի նիստերին տվյալ մարմնի անդամների անհրաժեշտ այնպիսի թվաքանակի ներկայություն, որը ճանաչելի կդարձնի տվյալ մարմինը որպես այդպիսին, կերաշխավորի նրա կողմից լեգիտիմ որոշումներ կայացնելու կարողունակությունը: Այսինքն կոլեգիալ մարմնի նիստի իրավագործության առումով կոլեգիալ մարմնի նիստին տվյալ մարմնի անդամների ընդհանուր թվի առնվազն պարզ մեծամասնության ներկայությամբ է պայմանավորվում ժողովրդավարական պետությունում կոլեգիալ մարմնի լեգիտիմ գործունեությունը:

ՀՀ սահմանադրական դատարանն իր նախորդ որոշումներում հստակ իրավական դիրքորոշումներ է արտահայտել կոլեգիալ մարմնի նիստերի իրավագործության վերաբերյալ, որոնք կարևոր նշանակություն ունեն նաև սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման համար: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն իր՝ 2013 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1081 որոշմամբ ամրագրել է, որ. «Ինչպես սահմանադրական իրավունքի միջազգային պրակտիկայում, այնպես էլ մեր երկրում պետական իշխանության մարմնի իրավագործությունը պայմանավորվում է նրա կողմից գործառնական իրավասության իրացման կարողունակությամբ: Դա իր հերթին պայմանավորվում է քվորումի առկայությամբ...»

«Քվորում» եզրույթը լատիներեն ծագում ունի /quorum praesentia sufficit/ և բառացի նշանակում է «որոնց ներկայությունը բավարար է»: Ներկայացուցչական մարմնի պարագայում **բավարար է այն ներկայությունը**, որի

դեպքում տվյալ մարմինն իր սահմանադրաիրավական կարգավիճակին համապատասխան գործունեություն իրականացնելու իրավասություն կունենա: **Քվորումի առկայությունն է տվյալ մարմնի իրավագործության վկայությունը և գործառույթների իրացման իրավաչափության երաշխիքը»:**

Վերոհիշյալ որոշմամբ արձանագրելով, որ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի գործունեության առնչությամբ ամրագրել է օրենսդիր մարմնի իրավագործության որոշման նվազագույն սահմանները, ՀՀ սահմանադրական դատարանը գտել է նաև, որ այդ հարցն ստացել է հստակ ու ամբողջական պատասխան: Այն արտահայտված է ՀՀ Սահմանադրության /2005թ. փոփոխություններով/ 71-րդ հոդվածում, համաձայն որի՝ «Օրենքները և Ազգային ժողովի որոշումները, բացառությամբ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերի, ընդունվում են քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին»: 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 1-ին մասով նույնպես սահմանված է համանման իրավակարգավորում:

Այս և վերջինիս հետ համակարգային առումով փոխկապակցված՝ ՀՀ Սահմանադրության մի շարք այլ հոդվածների համադրված վերլուծության հիման վրա Սահմանադրական դատարանը ՄԴՈ-1081 որոշմամբ եզրահանգել է, որ, մասնավորապես.

ա/ ՀՀ Սահմանադրությունը ՀՀ Ազգային ժողովի համար **սահմանում է քվորումի ընդհանուր կանոն** և դրանից բացառություններ՝ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում /մասնավորապես՝ 72-րդ հոդվածի 1-ին մաս, 74-րդ հոդված, 79-րդ հոդվածի 1-ին մաս, 83.1-րդ հոդվածի 1-ին մաս, 84-րդ հոդվածի 1-ին մաս և այլն/,

բ/ տարբերակվում են նիստի իրավագործության և որոշում կայացնելու (օրենք ընդունելու) իրավագործության փոխկապակցված ինստիտուտները: Ազգային ժողովը կարող է ընդունել օրենք կամ որոշում քվեարկությանը մասնակցած պատգամավորների ձայների մեծամասնությամբ, բայց պայմանով, որ այդ նիստն իրավագործ լինի ճանաչվելու որպես օրենսդիր իշխանության մարմնի նիստ: Իսկ դա առկա է այն դեպքում, երբ քվեարկությանը մասնակցել է պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելին: **Բացառությամբ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված առանձին դեպքերի, պատգամավորների ընդհանուր թվի կեսից ավելիի առկայությունն է ՀՀ Ազգային ժողովի իրավագործության նվազագույն սահմանը:** Դրանից պակաս պատգամավորների որևէ այլ թվի պարագայում, ըստ ՀՀ Սահմանադրության, Ազգային ժողովը որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, հանդես գալու իրավագործություն չի կարող ունենալ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոնշյալ իրավական դիրքորոշումները վերաբերելի են նաև տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմիններին այնքանով, որքանով դրանց իրավական կարգավիճակին համապատասխան այդ մարմինների լեգիտիմ գործունեության իրականացման անհրաժեշտությունից են բխում: Դա առավել ևս վերաբերում է համամասնական կարգով ընտրված ներկայացուցչական մարմիններին, որոնցում քաղաքական փոքրամասնության իրավունքների երաշխավորված պաշտպանությունը ժողովրդավարական պետությունում իրավունքի գերակայության սկզբունքի իրացման կարևոր պայման է:

Այսպիսով, **յուրաքանչյուր ներկայացուցչական մարմին, լինի դա խորհրդարան, թե՛ համայնքի ավագանի, իր լիազորություններն իրականացնելիս, այդ թվում՝ որոշումներ ընդունելիս պետք է առաջնորդվի բացառապես իրավական և ժողովրդավարական պետության սկզբունքներով, իր գործունեությունն իրականացնի այնպես, որ հանրային իշխանության կոլեգիալ մարմնում Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված քվորումի հիման վրա որոշումներն ընդունվեն բազմակարծության երաշխավորման ու տվյալ մարմնի իրավազորության առկայության պայմաններում:** Սահմանադրական դատարանը կարևորում է կոլեգիալ մարմնի գործունեության իրավակարգավորման հիմքում վերոհիշյալ իրավապայմանների առկայությունը, առանց որի կիմաստազրկվի կոլեգիալ կառավարման սահմանադրական սկզբունքի էությունը՝ ընդհանրապես, և «քվորումի» ինստիտուտը՝ մասնավորապես:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս վկայում է, որ, որպես կանոն, այս մոտեցումը բնորոշ է նաև տեղական ինքնակառավարման կոլեգիալ մարմիններին: Մասնավորապես, դրա մասին են վկայում համապատասխան օրենքներով սահմանված իրավակարգավորումները Գերմանիայում, Շվեդիայում, Սլովենիայում, Լիտվայում, Էստոնիայում, Սերբիայում, Բուլղարիայում, Խորվաթիայում, Ռուսաստանի Դաշնությունում, Բելառուսում, Ուկրաինայում և մի շարք այլ երկրներում, որտեղ մունիցիպալ խորհուրդների նիստերն իրավազոր են համարվում, եթե դրանց ներկա է ընտրված անդամների ընդհանուր թվի կեսից ավելին:

Հարկ է արձանագրել նաև, որ Հայաստանի Հանրապետությունում հանրային իշխանության կոլեգիալ մարմինների գործունեությունը կարգավորող մի շարք իրավական ակտերի (մասնավորապես՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 51-րդ հոդված՝ 2015թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համադրությամբ, «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ մաս, 62-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասեր, 80-րդ հոդվածի 11-րդ մաս՝ 2005թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 102-րդ հոդվածի համադրու-

թյամբ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի 5-րդ մաս և 416-րդ հոդված՝ ՀՀ դատական օրենսգրքի 52-րդ հոդվածի 3-րդ մասի համադրությամբ, ՀՀ դատական օրենսգրքի 71-րդ հոդվածի 5-րդ մաս, «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 4-րդ մաս, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ մասեր, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մաս, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մաս՝ նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համադրությամբ, «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 6-րդ մաս՝ նույն հոդվածի 1-ին մասի համադրությամբ, «Հայաստանի Հանրապետության կառավարության և նրան ենթակա պետական կառավարման այլ մարմինների գործունեության կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ Նախագահի 18.07.2007թ. ՆՀ-174-Ն հրամանագրի 82-րդ կետ) իրավակարգավորումների հիմքում ևս դրված է այն տրամաբանությունը, որ.

ա) կոլեգիալ մարմնի **նիստն իրավագոր է**, եթե նիստին մասնակցում է կոլեգիալ մարմնի անդամների ընդհանուր թվի մեծամասնությունը,

բ) կոլեգիալ մարմինը որոշումներ ընդունում է նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ կամ քվեարկության ավելի բարձր շեմով:

7. ՀՀ Սահմանադրության (2015թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածը, սահմանելով իրավական նորմերի աստիճանակարգությունը, հստակ ամրագրել է, որ ՀՀ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ: Հետևաբար, օրենքներ ընդունելիս օրենսդիր մարմնի հայեցողությունը բացարձակ չէ, այն սահմանափակված է ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված հիմնարար սկզբունքներով, իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությամբ և կոնկրետ նորմատիվ պահանջներով: ՀՀ Սահմանադրության անփոփոխելի 1-ին հոդվածում ամրագրված իրավական պետության միջուկն օրինականության սկզբունքն է (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդված), որը որպես ամբողջ հանրային իշխանության իրականացման հիմք սահմանում է ՀՀ Սահմանադրությունը կամ օրենքը: ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածն օրինականության սկզբունքն ընդգրկում է լայն առումով՝ դրանում ներառելով ոչ միայն Ազգային ժողովի կողմից կամ հանրաքվեի միջոցով ընդունվող օրենքը, այլ նաև իրավական նորմերի աստիճանակարգության մեջ բարձրագույն տեղն զբաղեցնող ՀՀ Սահմանադրությունը (5-րդ հոդվածի 1-ին մաս): Նման ամրագրման միջոցով ՀՀ Սահմանադրությունը հանրային իշխանության բոլոր մարմիններին, ներառյալ օրենսդիր իշխանությանը, կաշկանդում է Սահմանադրությամբ (Սահմանադրության գերակայությամբ):

ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մասից բխում է, որ օրենքն իրավական է այնքանով, որքանով որ այն համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը: Բսկ որոշակիության սկզբունքը պահանջում է, որ օրենսդիրը, մասնավորապես, կանխորոշի հանրային իշխանության գործունեությունն այնպիսի ծավալով, որ օրինականության տեսանկյունից հասանելի և գնահատելի լինեն իշխանության մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակին համարժեք գործողությունների էական նախադրյալներն ու բովանդակությունը:

Բացի դրանից, ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և համայնքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ և ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ: Սահմանադրական կարգի հիմունքներում ամրագրված այս դրույթները հիմնարար նշանակություն ունեն հանրային իշխանության ձևավորման և գործունեության համար: Սահմանադիրն Ազգային ժողովին և համայնքների ավագանիներին օժտում է առաջնային մանդատով և հանրային իշխանության համար առանձնահատուկ դերակատարմամբ: Օրենսդիրն այս մարմինների ձևավորման և գործունեության հետ կապված հարաբերությունները կարգավորելիս պարտավոր է ոչ միայն խստորեն պահպանել ՀՀ Սահմանադրության տարբեր հոդվածներում ամրագրված պահանջները, այլ նաև ՀՀ Սահմանադրությամբ ուղղակիորեն չկարգավորված հարցերը կարգավորելիս հաշվի առնել տվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակը, հանրային իշխանության մարմինների համակարգում զբաղեցրած տեղը և դերը: Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությամբ ուղղակիորեն որևէ հարց նորմատիվ կարգավորման առարկա չլինելու պատճառաբանությամբ օրենսդիրը չի կարող բացարձակ հայեցողության շրջանակներում ամրագրել ցանկացած կարգավորում՝ շրջանցելով սահմանադրական ընդհանուր տրամաբանությունը, դիտարկելով այն որպես սահմանադրի կողմից օրենսդիրին վերապահված հայեցողական լիազորություն:

Վերոնշյալը նկատի ունենալով՝ սույն գործի քննության առարկայի տեսանկյունից կարևորվում է երկու հանգամանք:

**Առաջին՝** ՀՀ Սահմանադրության դրույթների /մասնավորապես՝ 103, 115, 118, 153, 157, 170 և 205-րդ հոդվածների/ համադրված վերլուծությունից հետևում է, որ սահմանադրական մակարդակում **կոլեգիալ որոշումների կայացումն ու վերջինիս լեգիտիմությունը ենթադրում են համապատասխան մարմնի իրավազորության առկայություն, ինչը պայմանավորված է որոշման կայացմանը տվյալ մարմնի անդամների կեսից ավելիի ներկայությամբ:** Ուստի Հայաստանի Հանրապետությունում չեն կարող հիմք ընդունվել պատասխանող կողմի /ՀՀ Ազգային ժողովի/ վկայակոչած սահմանադրական մոտեցումները սահմանափակ թվով այլ երկրներում:

**Երկրորդ՝** տեղական ինքնակառավարման բնագավառում ՀՀ Ազգային ժողովի հայեցողությունը սահմանափակված է ՀՀ Սահմանադրության 9-րդ գլխում ամրագրված 179-190-րդ հոդվածներով սահմանված իրավակարգավորումներով: Ընդ որում, ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդրի իրավասությանն է վերապահված ՀՀ ընտրական օրենսգրքով սահմանելու համայնքի ղեկավարի ուղղակի կամ անուղղակի ընտրության կարգը, իսկ ՀՀ Սահմանադրության 187-րդ հոդվածով կոնկրետ պատվիրակվում է օրենքով սահմանել **տեղական ինքնակառավարման առանձնահատկությունները Երևանում:**

8. Համայնքի ավագանու նիստերի իրավագործության և որոշումների կայացման կարգի, դրանց օրենսդրական հետագա զարգացումների իրավահամեմատական վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի հունիսի 30-ի ՀՕ-75 օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվել էր, որ «Ավագանու նիստն իրավագոր է, եթե ներկա է ավագանու անդամների ընդհանուր թվի կեսից ավելին», իսկ նույն հոդվածի 6-րդ մասով նախատեսվել էր, որ «Համայնքի ավագանու որոշումները և ուղերձները ընդունվում են ավագանու նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ»: Համանման իրավակարգավորումներ սահմանվել էր նաև «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքով: Հիշյալ իրավակարգավորումները բացառություն որևէ համայնքի մասով չեն նախատեսել:

Հետագայում «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 2008 թվականի դեկտեմբերի 26-ի ՀՕ-5-Ն օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ «Ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդով, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի»: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանվել է, որ «Ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ: Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում քաղաքապետը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը»:

Համայնքի ավագանու նիստերի իրավագործության և որոշումների կայացման կարգի վերաբերյալ գործող իրավակարգավորումները բոլոր համայնքների մասով միատեսակ չեն: Մասնավորապես Օրենքի 16-րդ

հողվածի 3-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ավագանու նիստն իրավագոր է, եթե նիստին ներկա է ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելին: Եթե կես ժամվա ընթացքում չի ապահովվում նիստի իրավագորությունը, կամ նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը, ապա նիստի չկայացման մասին կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները»: Նույն հողվածի 4-րդ մասի համաձայն՝ «Համայնքի ավագանու որոշումներն ընդունվում են ավագանու՝ նիստին ներկա անդամների ձայների մեծամասնությամբ»: Հիշյալ իրավակարգավորումները վերաբերում են բոլոր համայնքներին, բացառությամբ Գյումրու և Վանաձորի: Այդ բացառությունները սահմանվել են «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-237-Ն օրենքով, սույն գործով վիճարկվող իրավակարգավորումներով:

Հայաստանի Հանրապետությունում տեղական ինքնակառավարման մասին նախկին և գործող օրենսդրական ակտերի համալիր վերլուծության արդյունքում Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը համայնքի ավագանու նիստերի իրավագորության և որոշումների կայացման կարգի հետ կապված դրսևորել է երկակի մոտեցում՝ **ընդհանուր կարգով նիստերի իրավագորության համար սահմանելով ավագանու անդամների՝ օրենքով սահմանված թվի կեսից ավելի ներկայության պահանջ**, իսկ Գյումրու, Վանաձորի և Երևանի համայնքների ավագանիների համար, իրավագորությունը պայմանավորելով որոշումների ընդունման հետ նվազագույն շեմ է սահմանել ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդը:

Մահմանադրական դատարանը պատճառաբանված և հիմնավոր չի համարում սույն գործով ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության ՀՀ սահմանադրական դատարանին ներկայացրած փաստարկները Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների համամասնական ընտրակարգով ձևավորվելու հանգամանքով պայմանավորված ավագանու նիստերի իրավագորության (քվորումի) որոշման առանձնահատուկ կարգի վերաբերյալ: Տեղական ինքնակառավարման մակարդակում ընտրակարգի որևէ առանձնահատկություն չպետք է խաթարի համայնքի ավագանու սահմանադրական կարգավիճակը, հակասի ժողովրդավարության բուն էությանը, իմաստագրկի տեղական ինքնակառավարման ինստիտուտն ընդհանրապես:

Մահմանադրական դատարանը գտնում է, որ նիստի իրավագորության նվազագույն շեմի օրենսդրական սահմանումն անհրաժեշտ է, քանի որ հանրային իշխանության կոլեգիալ մարմնի նիստի իրավագորությունը և

որոշումներ կայացնելու իրավագործությունը նրա գոյության և գործունեության կարևոր բաղադրիչներն են, որոնց վերաբերյալ օրենսդրական կարգավորումները պետք է լինեն հստակ և որոշակի: Մակայն առկա իրավակարգավորմամբ ավագանու նիստի իրավագործության, և որոշումներ կայացնելու համար հիմք ընդունելով ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդը, ավագանու նիստերի և որոշումների կայացման գործում չի ապահովվում ավագանու անդամների մեծ մասի ներգրավվածությունը տվյալ համայնքում ներկայացուցչական ժողովրդավարության գործընթացին: Այդպիսի իրավակարգավորումը համահունչ չէ ՀՀ Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածների պահանջներին, քանի որ ժողովրդավարական և իրավական պետության ներկայացուցչական մարմիններն իրենց գործունեությունն իրականացնելիս, որոշումներ կայացնելիս չպետք է շրջանցեն տվյալ մարմնի անդամների, իսկ արդյունքում նաև համայնքի բնակիչների համապատասխան մասի կամաարտահայտությունը (որպիսի իրավունքը երաշխավորված է ինչպես ՀՀ Սահմանադրությամբ (9-րդ հոդված), այնպես էլ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայով), հետևաբար՝ նաև նրանց ընտրողների մեծամասնության շահը (ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդված):

Բացի դրանից, ելնելով նաև կողմերի փաստարկներից և նկատի ունենալով, որ Գյումրի և Վանաձոր համայնքներում ավագանիների ընտրություններն անցկացվում են համամասնական ընտրակարգով, հիշյալ համայնքներում տեղական ինքնակառավարման գլխավոր առանձնահատկությունը հենց քաղաքական բաղադրիչի կարևորումն է, որպիսի պարագայում ելնելով հանրային իշխանության իրականացման ժողովրդավարական ընդհանուր սկզբունքներից, առաջնահերթ պետք է երաշխավորվեն ու պաշտպանվեն նաև քաղաքական փոքրամասնության իրավունքները: 2015թ. ՀՀ սահմանադրական բարեփոխումների հիմնական նպատակներից մեկն էլ հենց քվորումի շեմի բարձրացման շնորհիվ խորհրդարանական փոքրամասնության արդյունավետ դերակատարության ապահովումն էր, որն իր հետևողական օրենսդրական արտացոլումը չի գտել տեղական ինքնակառավարման բնագավառում:

Բացի դրանից, ՀՀ Սահմանադրությունն օրենսդրին Գյումրի և Վանաձոր քաղաքներում տեղական ինքնակառավարման առանձնահատկություններն օրենքով սահմանելու բացարձակ հայեցողությամբ չի օժտել, ինչը, ինչպես նշվեց, առկա է Երևան քաղաքի պարագայում /ՀՀ Սահմանադրության 187-րդ հոդված/՝ որպես բացառություն ընդհանուր սահմանադրական կանոնակարգումից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ Սահմանադրության 187-րդ հոդվածի իրավական իմաստն ու բովանդակությունն օրենսդրի կողմից չեն կարող ընկալվել որպես այլ համայնքներում ներկայացուցչական ժողովրդավարության իրականաց-



ման այնպիսի առանձնահատկության նախատեսում, որի պարագայում փաստացի սահմանափակվեն համայնքի ավագանու անդամների ՀՀ Սահմանադրության 179-րդ հոդվածի 1-ին մասում երաշխավորված իրավունքները: Միաժամանակ, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-237-Ն օրենքով Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների լիարժեք գործունեությունը խոչընդոտող, ընդհուպ փակուղի տանող դրույթներ են բովանդակում: Այսպես, ինչպես նշվեց, ըստ նոր խմբագրությամբ ընդունված «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 64-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 3-րդ և 4-րդ մասերի իրավակարգավորումների **ավագանու նիստն իրավագործ է, եթե նիստին ներկա են որոշում ընդունելու համար անհրաժեշտ թվով ավագանու անդամներ:** Եթե կես ժամվա ընթացքում նիստին չի ներկայանում համայնքի ղեկավարը կամ նրա առաջին տեղակալը, ապա նիստը վարողի չներկայանալու մասին կազմվում է արձանագրություն, որն ստորագրում են ավագանու նիստին ներկայացած անդամները, **որից հետո նիստը վարում է ավագանու նիստին ներկա տարիքով ավագ անդամը:** Ընդ որում, ավագանու որոշումները, հայտարարությունները և ուղերձներն ընդունվում են նիստին ներկա ավագանու անդամների ձայների մեծամասնությամբ, բայց ոչ պակաս, քան ավագանու անդամների ընդհանուր թվի մեկ քառորդով:

Նման իրավակարգավորման պայմաններում գործնականում Գյումրի և Վանաձոր համայնքներում զուգահեռաբար կարող են գումարվել նույն ավագանու երեքական առանձին նիստեր և ընդունվել միևնույն հարցի վերաբերյալ տարաբնույթ որոշումներ, ինչի մասին են հատկապես վկայում նաև սույն գործով կողմերի բացատրություններում բերված փաստարկները: Այսպիսի իրավակարգավորումն իրավաչափ ու իրավական որոշակիության սկզբունքին (ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 2-րդ մաս) համարժեք գործընթաց չի կարող համարվել և չի կարող երաշխավորել տեղական ինքնակառավարման ժողովրդավարական կառույցների արդյունավետ գործունեությունը:

Այսպիսով, ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի սահմանադրաիրավական բովանդակությանը չհամապատասխանող իրավակարգավորման արդյունքում Գյումրի և Վանաձոր համայնքներում «օրինական» ճանապարհով հիմք է ստեղծվում ավագանու անդամների տարբեր խմբերի միաժամանակյա իրավաստեղծ գործունեության իրականացման հնարավորության համար, ինչն անթույլատրելի է նաև սահմանադրական արժեքանության և իրավունքի գերակայության երաշխավորման տեսանկյունից:

9. Սույն գործի քննության շրջանակներում իրականացնելով նաև համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման կարգավորումների իրավահամեմատական վերլուծություն Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ոչ միասնական օրենսդրական մոտեցում է դրսևորվել նաև այս հարցում: Մասնավորապես՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Եթե համայնքի ավագանու անդամի լիազորությունների դադարեցման (դադարման) հետևանքով անհնարին է դառնում համայնքի ավագանու հետագա նիստերի անցկացումը, ապա ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են ավագանու մնացած անդամները կամ համայնքի ղեկավարը»: Նույն հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ «Ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են նաև, եթե

1) ավագանու անդամների կողմից ավագանու նիստի իրավազորությունը չսպաստիվվելու պատճառով վեց ամիս անընդմեջ ավագանու նիստ չի կայանում.

2) օրենքով սահմանված կարգով համայնքը վերակազմակերպվում է որպես այլ վարչատարածքային միավոր»:

Վերոնշյալ իրավակարգավորումները չեն տարածվում Գյումրի և Վանաձոր համայնքների ավագանիների նկատմամբ: Ընդ որում, այդ իրավակարգավորումները նույնական չեն նաև Երևան քաղաքի համար սահմանված կարգի հետ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ **միննույն** հիմքերի առկայության դեպքում օրենսդիրը հետևողականություն չի ցուցաբերել՝ Գյումրի և Վանաձոր համայնքների մասով ՀՀ կառավարությանը վերապահել է ավագանու լիազորությունները **վաղաժամկետ դադարեցնելու իրավասություն** (Օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ Երևան քաղաքի ավագանու մասով՝ լիազորությունների ժամկետը **կրճատելու իրավասություն** («Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդված):

«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասի դրույթների սահմանադրականության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան նույնպես նախատեսում է տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ վարչական վերահսկողության հնարավորություն՝ **նախանշելով դրա թույլատրելի սահմանները**: Մասնավորապես, Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիայի «Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վարչական վերահսկողությունը» վերտառությամբ 8-րդ

հողվածով սահմանվում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ցանկացած վարչական վերահսկողություն կարող է իրականացվել միայն Սահմանադրությամբ կամ օրենքով նախատեսված ընթացակարգերով և դեպքերում, **այն պետք է ծառայի միայն օրինականությանը և սահմանադրական սկզբունքների ապահովմանը:**

ՀՀ գործող օրենսդրությամբ ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելիս բացառվում է գործադիր իշխանության կողմից հնարավոր կամայականության դրսևորում, քանի որ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասն սպառիչ սահմանում է այն դեպքերը, որոնք հիմք են հանդիսանում ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու համար: Համաձայն դրա համայնքի ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվում են, երբ, ըստ էության, դրսևորվում է համայնքի ավագանու անգործություն, ինչն անհարիր է ժողովրդավարական պետության սահմանադրական սկզբունքներին ու տեղական ինքնակառավարման էությանը և առաջացնում է համայնքի ավագանու սահմանադրական պատասխանատվության հարց: Վերջինս, ի թիվս այլնի, ներառում է նաև համայնքի ավագանու լիազորությունների վաղաժամկետ դադարեցման **հնարավորությունը և անխուսափելիությունը:** Նման իրավակարգավորումը հետապնդում է նաև ՀՀ Սահմանադրության 188-րդ հոդվածի պահանջների հետևողական իրացման նպատակ:

Միաժամանակ, որպես տեղական ինքնակառավարման մարմնի իրավունքների իրավական պաշտպանության կարևոր երաշխիք, ՀՀ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով սահմանվում է, որ իրենց սահմանադրական իրավունքները խախտող նորմատիվ իրավական ակտերի Սահմանադրությանը համապատասխանության հարցով տեղական ինքնակառավարման մարմինները կարող են դիմել Սահմանադրական դատարան, ինչը կարևոր հակակշիռ է ՀՀ կառավարության լիազորության հնարավոր ոչ իրավաչափ իրականացմանը:

10. Դիմող կողմը Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումների սահմանադրականության հարցը վիճարկում է ոչ թե տվյալ ակտերի իրավական բովանդակության, այլ ընդունման իրավասության տեսանկյունից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ.

**նախ՝** ՀՀ Սահմանադրությունը համայնքի ավագանու կողմից նորմատիվ որոշումներ ընդունելու որևէ կարգ չի ամրագրում, ուստի «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասի հիմքով «ըստ ձևի» տվյալ ակտերի սահմանադրականության գնահատումը կարող է տեղի ունենալ դրանց ընդունման պահին գործող օրենսդրական նորմերով ամրագրված ընթացակարգի սահմանադրականության գնահատման համատեքստում,

**Երկրորդ՝** վիճարկվող ակտերն ընդունվել են դրանց ընդունման պահին գործող օրենսդրական նորմերով ամրագրված ընթացակարգին համապատասխան,

**երրորդ՝** դրանց նկատմամբ կիրառելի է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի պահանջը, համաձայն որի՝ «Անվավեր ճանաչված նորմատիվ ակտի կատարումն ապահոված այլ նորմատիվ ակտերի համապատասխան դրույթները կորցնում են իրենց իրավաբանական ուժը՝ վիճարկվող ակտի ուժը կորցնելու հետ միաժամանակ»:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 100-րդ հոդվածի 1-ին կետով, 101-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, 102-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 1-ին, 6-րդ, 9-րդ և 179-րդ հոդվածների պահանջներին հակասող:

2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 64-րդ հոդվածի 4-րդ մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է ՀՀ Սահմանադրությանը՝ սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների շրջանակում:

4. Հաշվի առնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները և վեճի առարկա օրենքի դրույթների՝ դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը, փաստելով սույն որոշման եզրափակիչ մասի 1-ին կետով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչված իրավադրույթի համակարգային առումով փոխկապվածությունը «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 5-րդ գլխի իրավակարգավորումների հետ, ինչպես նաև նկատի ունենալով օրենքի պահանջը՝ իրավական անվտանգությունը չխաթարելու վերաբերյալ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 3-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 68-րդ հոդվածի 15-րդ մասի հիման վրա սույն որոշմամբ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը հակասող ճանաչ-

ված իրավանորմի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2018 թվականի մարտի 31-ը՝ հնարավորություն տալով Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովին «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

5. Վանաձոր համայնքի ավագանու 2017 թվականի մարտի 31-ի N 2-Ն, 7-Ն, 8-Ն, 9-Ն որոշումները կորցնում են իրենց իրավաբանական ուժը «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 11-րդ մասի հիմքով՝ սույն որոշմամբ նախատեսված վերջնաժամկետի ավարտման պահից:

6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (2005 թվականի փոփոխություններով) 102-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

10 նոյեմբերի 2017 թվականի  
ՄԴՈ-1384

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am.  
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 17.07.2018թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 400

ՀՀ ՄԴ տեղեկագիրը ՀՀ  
բարձրագույն որակավորման  
հանձնաժողովի որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈՀ-ի  
ատենախոսությունների հիմնական արդյունքների  
և դրույթների հրապարակման համար ընդունելի  
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 2(90)2018  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 2(90)2018  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 2(90)2018